Սակայն այդպիսի երկբևեռ դեղատոմս, որը ԱՄՀ-ն առաջարկում էր, որպիսի տնտեսությունները ավելի քիչ հակվածություն ունենան ճգնաժամերի նկատմամբ, շուտով տապալվեց: 2002 թվականին Արգենտինայում, որտեղ կենտրոնական բանկը իրականացնում էր արժութային խորհրդի ռեժիմը (արգենտինական պեսոն կապված էր կենտրոնական բանկում դոլարի քանակության հետ) փլուզվեց և Արգենտինայի տնտեսությունը հայտնվեց խորը ճգնաժամի մեջ: Մյուս կողմից, 2003թ. ԱՄՀ-ի զեկույցում զարգացող երկրներին առաջարկվում է ընտրել ազատ լողացող ռեժիմը, քանի որ ֆիքսված արժութային ռեժիմները քիչ օգուտ են տալիս ֆինանսապես այլ երկրների հետ խորը ինտեգրված և ճգնաժամերի ավելի մեծ հակվածություն ունեցող երկրներում: Բայց գործնականում քիչ երկրներ են պատրաստ որդեգրել այսպիսի քաղաքականություն, քանի որ ցանկալի չեն փոխարժեքի անընդհատ տատանումները: Այս երևույթը տնտեսական գրականության մեջ ստացավ «լողալուց վախ» անվանումը¹: Այս երևույթը հատկապես տարածված է զարգացող և անցումային տնտեսություն ունեցող երկրներում, որոնց համար փոխարժեքի տատանումները հատկապես վտանգավոր կարող են լինել: Սակայն զարգացած երկրները նույնպես խուսափում են փոխարժեքի տատանումներից՝ ձգտելով ամրագրված պահել այն:

Այսպիսով, Արգենտինական ճգնաժամից հետո երկրները խուսափում էին կոշտ ֆիքսումով արժութային ռեժիմների ընտրությունից, իսկ «լողալուց վախ»-ի պատճառով երկրները չէին ընտրում ազատ լողացող ռեժիմը: Արդյունքում երկրների կենտրոնական բանկերը սկսեցին ավելի ճկուն արժութային քաղաքականություն վարել՝ ընտրելով դե յուրե մի ռեժիմ, իսկ դե ֆակտո վարելով այլ քաղաքականություն:

¹ Habermeier K., Kokenyne A., Veyrone R., Anderson H., “Revised System for the Classification of Exchange Rate Arrangements”, IMF Working Paper 09/211, September 21, 2009, p. 4

ՀՀ Կենտրոնական բանկը դե յուրե 2010-2019թթ. հիմնականում ընտրել է լողացող արժութային ռեժիմը: Բացառություն են 2014, 2015 և 2019 թվականները: 2014 և 2015 թվականներին ընտրել է սողացող ֆիքսման նման արժութային ռեժիմ, իսկ 2019թ.՝ կայունացված արժութային ռեժիմը: Լողացող արժութային ռեժիմը ենթադրում է փողի շուկային միջամտություն միայն փոխարժեքի տատանումների ամպլիտուդը մեղմելու համար: Աղյուսակ 1-ում ներկայացված են ՀՀ ԿԲ դե յուրե արժութային ռեժիմները 2010-2019թթ.:

Աղյուսակ 1. ՀՀ Կենտրոնական բանկի դե յուրե ընտրած արժութային ռեժիմները 2010-2019 թթ.¹

2010	Կայունացված	2015	Սողացող ֆիքսման նման
2011	Լողացող	2016	Լողացող
2012	Լողացող	2017	Լողացող
2013	Լողացող	2018	Լողացող
2014	Սողացող ֆիքսման նման	2019	Ազատ Լողացող

Սակայն 2010, 2014 և 2016 թվականներին դե ֆակտո ՀՀ ԿԲ վարել է այլ արժութային քաղաքականություն: 2010թ. ՀՀ ԿԲ-ն դե յուրե ընտրել է կայունացված արժութային ռեժիմը, սակայն սահմանափակել է իր դերը որպես արտարժույթի շուկայի մատակարար: Դրանից հետո 2010թ. մարտի 3-ին ԱՄՀ-ում փոխել է իր ընտրած արժութային ռեժիմը՝ դարձնելով լողացող: 2013 թվականի մարտից ՀՀ դրամը արժևորվեց ԱՄՆ դոլարի նկատմամբ 2%-ով, դրանով իսկ լողացող արժութային ռեժիմից փոխվելով սողացող ֆիքսման նման ռեժիմին: 2016 թվականին ՀՀ ԿԲ-ն դե յուրե ընտրելով լողացող արժութային ռեժիմ, որևէ գործողություն չի ձեռնարկել փոխարժեքի տատանումները մեղմելու համար, ուստի դե ֆակտո իրականացրել է ազատ լողացող արժութային քաղաքականություն:


Արժութային ռեժիմների չափանիշների վերլուծությունը ՀՀ-ում

Համաշխարհային տնտեսությունը ներկայումս տեղափոխվել է տնտեսական միջավայրի անընդհատ և կտրուկ փոփոխությունների, ինտեգրվածության բարձր աստիճանի նոր փուլ: Այս փուլում հատկապես զարգացող և անցումային տնտեսություն ունեցող երկրների համար կարևոր է մակրոտնտեսական կայունության ապահովումը, որում իր կարևոր տեղն ունի արժութա-

¹ Annual Report on Exchange Arrangements and Exchange Restrictions, IMF, 2012-2019

յին քաղաքականությունը: Այդ առումով կարևոր է կապիտալի շուկայի զարգացման խոչընդոտների, կապիտալի շարժունակության բարձրացման և դեպի զարգացող ու անցումային տնտեսություն ունեցող երկրներ շարժի մեծացման հնարավորությունների բացահայտումը:

Գծապատկեր 2-ում ներկայացված է զարգացած, զարգացող և անցումային տնտեսություն ունեցող երկրներ հոսած կապիտալի հարաբերությունը ՀՆԱ-ին 1980-2020 թվականների ընթացքում: Վերլուծելով գծապատկերի տվյալները, կարող ենք տեսնել, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում մեծացել է զարգացող և անցումային տնտեսություն ունեցող երկրներ հոսած կապիտալի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ: Իսկ զարգացած երկրների դեպքում նույն ցուցանիշը նվազել է: Սա ցույց է տալիս որ, զարգացած և անցումային տնտեսություն ունեցող երկրներն ավելի են ինտեգրվել կապի-տալի շուկային և մեծացել է դեպի այդ երկրներ կապիտալի




Գծապատկեր 2. Զարգացած, զարգացող և անցումային տնտեսություն ունեցող երկրներ հոսած կապիտալ/ ՀՆԱ հարաբերակցությունը 1980-2020թթ.(տոկոս)¹

Հայաստանի ինտեգրվածությունը կապիտալի համաշխարհային շուկային գնահատելու համար մեկնաբանենք Հայաստան եկած կապիտալի քանակության փոփոխությունները: Գծապատկեր 3-ում ներկայացված են կապի-

¹ World Economic Outlook Database, IMF, 1980-2020

տալի հոսքը դեպի Հայաստան և բանկային ավանդների տոկոսադրույքները 2000-2020 թվականների ընթացքում:




Գծապակեր 3. Հայաստան հոսած կապիտալի քանակը (մլն դոլար) և բանկային ավանդների տոկոսադրույքները 2000-2020 թթ¹.

Գծապատկերից անկհայտ է, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում Հայաստան եկած կապիտալի քանակությունը աճել է և ունի աճի միտում: Գծապատկերում ներկայացված է նաև ՀՀ-ում գործող բանկերի կողմից ներգրավված ավանդների տոկոսադրույքների փոփոխությունը ուսումնասիրվող ժամանակահատվածում: Վերլուծելով գծապատկերում առկա տվյալները, կարող ենք եզրակացնել, որ տոկոսադրույքը և երկիր մտած կապիտալը գրեթե միշտ շարժվել են հակառակ ուղղությամբ: Իսկ հաշվարկելով այս ցուցանիշների միջև կովարացիայի(-2215) և կոռելացիայի(-0.44) գործակիցները կարելի է ասել, որ ցուցանիշների միջև գոյություն չունի գծային կախվածություն, ցուցանիշները միմյանց վրա ազդում են բացասաբար: Հատկաբար երկիր եկող կապիտալն ունի թույլ մոբիլություն և ավելի շատ կախված է այլ գործոնների ազդեցությունից:

Երկրում արդյունավետ արժույթային քաղաքականություն վարելու տեսանկյունից կարևոր է նաև երկրի տնտեսության բացույթյան վերլուծությունը: Երկրի տնտեսության բացույթյունը գնահատող լավագույն ցուցանիշներից են արտահանման, ներմուծման և ընդհանուր առևտրաշրջանառության ծավալները և դրանց տեսակարար կշիռը ՀՆԱ-ում:


¹ ՀՀ միջազգային ներդրումային դիրք, ՀՀ ԿԲ, 1990-2020



Գծապատկեր 4. Արտահանման, ներմուծման և ընդհանուր առևտրաշրջանառության ծավալները 2008-2019 թթ.¹

Գծապատկեր 4-ում ներկայացված է արտահանման, ներմուծման և ընդհանուր առևտրաշրջանառության ծավալները 2008-2019թթ.: Տվյալները վերկայում են, որ և արտահանումը, և ներմուծումը աճի միտում են ունեցել ուսումնասիրվող ժամանակահատվածում, սակայն արտահանումը աճել է ավելի մեծ տեմպերով, քան ներմուծումը: Եթե 2008 թվականին ընդհանուր առևտրաշրջանառության մեջ արտահանումը ունեցել է 19%, իսկ ներմուծումը 80%, ապա 2019 թվականին արտահանումը եղել է ընդհանուր առևտրաշրջանառության 32%, իսկ ներմուծումը՝ 68%: Հաշվարկելով արտահանման ծավալների և դոլարի փոխարժեքի միջև կովարացիայի (249) և կոռելացիայի (0.84) գործակիցները՝ պարզ է դառնում, որ այդ ցուցանիշների միջև գոյություն ունի դրական գծային կախվածությունը: Կարևոր է նաև մեկնաբանել ՀՀ ՀՆԱ-ում արտահանման, ներմուծման և ընդհանուր առևտրաշրջանառության տեսակարար կշիռների փոփոխությունները: Վերլուծելով գծապատկերի տվյալները, կարելի է եզրակացնել, որ ՀՆԱ-ն աճել է ավելի մեծ տեմպերով, քան ընդհանուր առևտրաշրջանառությունը և առևտրաշրջանառություն/ՀՆԱ ցուցանիշը 153.7-ից նվազել է 124.6-ի: Նույնը՝ ներմուծման դեպքում. Ներմուծում/ՀՆԱ ցուցանիշը 124-ից դարձել է 84: Իսկ արտահանման/ՀՆԱ ցուցանիշի դեպքում ստացվել է հակառակ պատկերը՝ 29.6-ից դառնալով 40.3:

¹ ՀՀՎԿ, Տարեգիրք, Արտաքին առևտուր, 2008-2019 թթ.




Գծապատկեր 5. Արտահանում / ՀՆԱ, ներմուծում/ ՀՆԱ և ընդհանուր առևտրաշրջանառություն/ՀՆԱ շարժընթացը ՀՀ-ում 2008-2019թթ.¹

Չնայած առևտրաշրջանառություն/ՀՆԱ ցուցանիշը նվազել է ուսումնասիրվող ժամանակահատվածում, սակայն դա դեռևս բարձր ցուցանիշ է և Հայաստանը համարվում է բաց տնտեսություն ունեցող երկիր: Նույն ցուցանիշով աշխարհում ամենաբարձր բացություն ունեն Լյուքսեմբուրգը (387.1), Հոնգ Կոնգը (376.9), Սինգապուրը (326.9)²: Տարածաշրջանի երկրների հետ համեմատած Հայաստանը ունի ամենամեծ ցուցանիշը³: Եվ քանի որ լողացող արժույթային ռեժիմի պարագայում փոխարժեքը կարող է անկանխատեսելի տատանվել, բաց տնտեսություն ունեցող երկրները ավելի շատ նախընտրում են ֆիքսված արժույթային ռեժիմներ: Արժույթային ռեժիմ ընտրելիս էական է երկրի արտահանման և ներմուծման աշխարհագրական կառուցվածքը: Այն երկրները, որոնց արտաքին առևտրաշրջանառության մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն մեկ կամ մի քանի երկրներ, կամ իրենց արժույթների փոխարժեքը այդ երկրների արժույթների նկատմամբ ֆիքսում են, կամ մտնում են արժույթային միության մեջ: Գծապատկեր 6-ում ներկայացված է ՀՀ արտահանման կառուցվածքը 2009-2019թթ.: Գծապատկերից երևում է, որ արտահանման աշխարհագրական կառուցվածքի մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ունի Ռուսաստանը, և Ռուսաստանի տեսակարար կշիռը ընդհանուր արտահան-


¹ ՀՀՎԿ, Ազգային հաշիվների համակարգ, 2008-2019
² The Global Economy, Business and Economic data, Trade openness, 2019
³ Վրաստան՝ 111.7, Ադրբեյջան՝ 91.6, Թուրքիա՝ 60.1, Ռուսաստան՝ 51.1

ման մեջ գնալով մեծանում է: Մեծ է նաև Գերմանիայի, Բուլղարիայի, Շվեյցարիայի, Նիդերլանդների և Չինաստանի տեսակարար կշիռը:



Գծապատկեր 6. ՀՀ արտահանման աշխարհագրական կառուցվածքը 2009-2019 թթ.¹


Գծապատկեր 7-ում ներկայացված է Հայաստան ներմուծված ապրանքների և ծառայությունների աշխարհագրական կառուցվածքը:



Գծապատկեր 7. Ներմուծման աշխարհագրական կառուցվածքը 2009-2019 թթ.¹

¹ ՀՀՎԿ, Տարեգիրք, Արտաքին առևտուր, 2008-2019 թթ.

Գծապատկերից երևում է, որ ներմուծման աշխարհագրական կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռը պատկանում է Ռուսաստանին՝ ինչպես արտահանման դեպքում: Մեծ է նաև Գեմանիայից, Չինաստանից, Հնդկաստանից, ԱՄՆ-ից, Իրանից և Թուրքիայից ներմուծված ապրանքների և ծառայությունների տեսակարար կշիռը ընդհանուր ներդրումների մեջ: Քանի որ Հայաստանը 2015թ. մտել է ԵԱՏՄ²-ի մեջ, ուսումնասիրվել է ԵԱՏՄ անդամ երկրների տեսակարար կշիռը ընդհանուր առևտրաշրջանառության մեջ: Գծապատկեր 8-ում ներկայացված է ԵԱՏՄ և ԵՄ երկրների տեսակարար կշիռը ընդհանուր առևտրաշրջանառության մեջ:



Գծապատկեր 8. ԵԱՏՄ և ԵՄ երկրների տեսակարար կշիռը ընդհանուր առևտրաշրջանառության մեջ³

Գծապատկերից երևում է, որ մինչև 2015թ. ԵՄ երկրները ավելի մեծ տեսակարար կշիռ են ունեցել ընդհանուր առևտրաշրջանառության մեջ: ԵԱՏՄ-ին անդամակցելուց հետո պատկերը փոխվել է, և երկրների տեսակարար կշիռը աճել է՝ անցնելով ԵՄ երկրների տեսակարար կշռին: Արժույթային քաղաքականության ընտրության չափանիշներից է նաև երկրների գնաճի տեմպերի տարբերությունը: Այդուսակ 2-ում ներկայացված են Հայաստանի և երկրի առևտրային գործընկերներ Բուլղարիայի, ՌԴ-ի, Շվեյցարիայի, Չինաստանի, ԵՄ և աշխարհի ՀՆԱ դեֆլատորները 2000-2019թթ.:

¹ ՀՀՎԿ, Տարեգիրք, Արտաքին առևտուր, 2008-2019 թթ.

² Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Մոլդովա

³ ՀՀՎԿ, Տարեգիրք, Արտաքին առևտուր, 2008-2019 թթ.

Աղյուսակ 2. ՀՆԱ դեֆլատորը Հայաստանում, աշխարհում և առևտրային գործընկեր երկրներում¹


	ՀՀ	Բուլղարիա	ՌԴ	Շվեյցարիա	ԵՄ	Աշխարհ	Չինաստան
2000	-1.37	7.18	37.70	1.50	3.02	4.36	2.06
2001	4.03	6.12	16.48	1.02	3.47	3.73	2.04
2002	2.36	3.77	15.66	-0.25	3.27	3.41	0.60
2003	4.60	2.27	13.66	1.13	2.85	3.93	2.61
2004	6.28	5.65	20.26	0.34	2.71	5.69	6.95
2005	3.21	6.50	19.28	0.69	2.54	5.63	3.90
2006	4.62	6.76	15.12	2.10	2.90	5.51	3.93
2007	4.28	11.08	13.84	2.41	2.97	5.46	7.75
2008	5.99	8.13	18.01	2.03	3.24	7.89	7.79
2009	2.50	4.05	1.97	0.36	1.68	2.35	-0.21
2010	7.77	1.15	14.19	0.32	0.94	4.21	6.88
2011	4.28	5.94	24.46	0.34	1.65	5.79	8.08
2012	5.35	1.53	8.91	-0.17	1.68	3.54	2.34
2013	3.37	-0.67	5.32	0.03	1.28	2.25	2.16
2014	2.31	0.46	7.49	-0.63	0.92	2.01	1.03
2015	1.21	2.44	7.25	-0.63	1.12	2.09	0.00
2016	0.27	2.54	2.84	-0.60	0.86	1.84	1.41
2017	2.15	3.94	5.35	-0.57	1.51	2.90	4.23
2018	2.79	4.01	11.10	0.23	1.79	2.77	3.50
2019	1.46	4.65	3.78	0.40	2.32	2.28	1.58

Աղյուսակի տվյալներից պարզ է դառնում, որ Հայաստանում գնաճը գրեթե համադրելի է ԵՄ երկրների, Չինաստանի, Բուլղարայի և ամբողջ աշխարհի գնաճի մակարդակի հետ: Հայաստանի ամենամեծ առևտրային գործընկեր Ռուսաստանի գնաճի մակարդակի հետ համեմատած Հայաստանը ունի ավելի ցածր գնաճի տեմպ: Սակայն նույնը չի կարելի ասել Շվեյցարիայի դեպքում, որտեղ գնաճի տեմպը գրեթե միշտ չի գերազանցում 1%-ը:

Արժութային քաղաքականության ընտրության չափանիշներից է երկրի դոլարայնացման մակարդակը: Դոլարայնացման բարձր մակարդակ ունեցող երկրներում ավելի նպատակահարմար է ընտրել կոշտ ֆիքսմամբ արժութային ռեժիմ, քանի որ բարձր դոլարայնացման պայմաններում կոշտ ֆիքսումն

¹ World Bank, World Development Indicators, 2000-2019

արտարժույթային ակտիվներ ունեցողների համար վերացնում է արտարժույթային ռիսկը: Գնահատվում է ինչպես տնտեսության իրական, այնպես էլ ֆինանսական հատվածների դոլարայնացման մակարդակը: Սակայն քանի որ դրամավարկային քաղաքականություն իրականացնող մարմինները չեն կարողանում ամբողջությամբ վերահսկել իրենց տնտեսություն շրջանառվող արտարժույթը, հնարավոր չի լինում ճշգրիտ հաշվարկել գործարքներում շրջանառվող դոլարայնացման մակարդակը¹: Ֆինանսական շուկայի դոլարացման մակարդակը գնահատելիս օգտագործվում է արտարժույթային ավանդներ/ընդհանուր ավանդներ և արտարժույթային ավանդներ/M₂X ցուցանիշները:



Գծապատկեր 9. Արտարժույթային ավանդներ/ընդհանուր ավանդներ և արտարժույթային ավանդներ/M₂X ագրեգատ ցուցանիշների դինամիկան 2010-2020 թթ.²


Գծապատկեր 9-ում ներկայացված է արտարժույթային ավանդներ/ընդհանուր ավանդներ և արտարժույթային ավանդներ/M₂X ագրեգատ ցուցանիշների շարժընթացը 2010-2020 թվականներին: Գծապատկերից երևում է, որ երկու ցուցանիշներն էլ ուսումնասիրվող ժամանակահատվածում նվազման միտում են ունեցել: Եթե 2010 թվականի հունվարին արտարժույթային ավանդներ/ընդհանուր ավանդներ ցուցանիշը եղել է 69.9, ապա 2020թ. հունվարին այն եղել է 42.5: Նույնը վերաբերվում է նաև արտարժույթային ավանդ-

¹ А. Холопов, Валютный курс как инструмент макроэкономического регулирования, "Мировая экономика и международные отношения", N 124. 2000

² ՀՀ Կենտրոնական Բանկ, Դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն

ներ/M2X ագրեգատ ցուցանիշին: 2010թ. հունվարին այն եղել է 47.4, ապա 2020թ. հունվարին եղել է 33.8: Չնայաց նրան որ ուսումնասիրվող ժամանակահատվածում երկու ցուցանիշներն էլ նվազել են, սակայն ՀՀ-ում դոլարացման մակարդակը դեռևս բարձր է:

Արժութային քաղաքականության ընտրության կարևոր չափանիշներից է երկրի միջազգային պահուստների ծավալը, քանի որ հատկապես միջազգային պահուստների օգտագործմամբ է երկրի դրամավարկային քաղաքականություն իրականող մարմինը փոխարժեքը պահում որոշակի մակարդակում: Միջազգային պահուստների բացակայության կամ քիչ լինելու պարագայում երկրները հիմնականում իրականացնում են լողացող արժութային քաղաքականություն՝ հավելյալ միջազգային պահուստների օգտագործումից զերծ մնալու համար:




Գծապատկեր 10. ՀՀ միջազգային պահուստների ծավալը 2000-2019 թթ.¹

Գծապատկեր 10-ում ներկայացված է ՀՀ միջազգային պահուստների ծավալը 2000-2019 թվականներին: Գծապատկերի տվյալներից երևում է, որ Հայաստանի միջազգային պահուստները գրեթե միշտ աճել են: Բացառություն են կազմում 2008 թվականը՝ պայմանավորված համաշխարհային ֆինանսա-տնտեսական ճգնաժամով, և 2014 թվականը, երբ ՀՀ ԿԲ-ն որոշում կայացրեց լողացող արժութային ռեժիմից անցում կատարել սողացող ֆիքսման նման արժութային ռեժիմին և դրամը արժևորվեց դոլարի նկատմամբ 2%-ով: Վերլուծությունն ամբողջական դարձնելու նկատառումով վերլուծվել է

¹ World Bank, World Development Indicators, 2000-2019

միջազգային պահուստների/արտաքին պարտք և միջազգային պահուստների/ներմուծման ամսական ծավալ հարաբերական ցուցանիշների շարժընթացը:



Գծապատկեր 11. Պահուստներ/արտաքին պարտք և

պահուստներ/ներմուծման ամսական ծավալ ցուցանիշները 2000-2019 թթ.¹

Գծապատկերի տվյալները փաստում են, որ միջազգային պահուստները 2019 թվականին կազմում են միայն արտաքին պարտքի 24 տոկոսը, իսկ մինչև համաշխարհային ֆինանսա-տնտեսական ճգնաժամը ցուցանիշը կազմել է 54 տոկոս: Այսինքն արտաքին պարտքը աճել է ավելի մեծ տեմպերով քան միջազգային պահուստները: Գծապատկերից կարելի է տեսնել նաև, որ միջազգային պահուստները բավարարում են միայն չորս ամսվա ներմուծման ծածկույթը:

Արժույթային քաղաքականության ընտրության չափանիշներից է երկրի տնտեսության՝ արտաքին և ներքին շուկերից խոցելիությունը: Քանի որ Հայաստանի արտահանման կառուցածքում 30-40%-ը բաժին է ընկնում հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտին, մեծ է կախվածությունը հենց այս ոլորտից²: Իսկ հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտից ստացված արդյունքի գները որոշվում են բորսայում՝ հետևաբար մեծ է վտանգը հենց այս ոլորտից

¹ World Bank, World Development Indicators, 2000-2019

² ՀՀՎԿ, Տարեգիրք, Արտաքին առևտուր, 2019

ստացված արդյունքի բորսայական գների տատանումներից տնտեսական շուկի ենթարկվելը: Գծապատկեր 6 և 7 ցուցանիշներից պարզ դարձավ, որ 2019 թվականին Հայաստանի արտահանման 28%, իսկ ներմուծման 27%-ը բաժին է ընկնում մեկ երկրի՝ Ռուսաստանին: Հետևաբար մեծ է վտանգը նաև, որ Ռուսաստանում տեղի ունեցող անկումային երևույթները մեծապես ազդի նաև Հայաստանի տնտեսության վրա:

Եզրակացություն

Արժութային քաղաքականության ընտրության չափանիշների վերլուծությունից կարող ենք եզրակացնել, որ Հայաստան եկող կալիտալը չունի մոբիլություն, չնայած բանկային ավանդների տոկոսադրույքների աճը ուղեկցվել է երկիր մտած կապիտալի ծավալների աճով: Հետևաբար կապիտալի շարժի վրա դրամավարկային գործիքներից բացի ազդում են նաև այլ գործոններ: Արժութային քաղաքականության ընտրության չափանիշներից մյուսի՝ երկրի բացության մակարդակի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ Հայաստանը ունի տնտեսության բացության բարձր մակարդակ, իսկ արտաքին առևտրաշրջանառություն/ՀՆԱ ցուցանիշով աշխարհում գրավում է 29-րդ տեղը: Արտաքին առևտրաշրջանառության աշխարհագրական կառուցվածքի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ Հայաստանի և՛ արտահանման և՛ ներմուծման աշխարհագրական կառուցվածքի դիվերսիֆիկացման մակարդակը ցածր է: 2019 թվականին Հայաստանի արտահանման 28%, իսկ ներմուծման 27%-ը բաժին է ընկել մեկ երկրի՝ Ռուսաստանին: Գնաճի տեմպի ուսումնասիրությունից և առևտրային գործընկեր երկրների գնաճի տեմպերի հետ համեմատությունից պարզ դարձավ, որ Հայաստանի գնաճի տեմպը գրեթե համապատասխանում է հիմնական առևտրային գործընկեր երկրների գնաճի տեմպերին: Բացառություն են կազմում Ռուսաստանը, որի գնաճի տեմպը բարձր է Հայաստանի նույն ցուցանիշից, և Շվեյցարիան, որի գնաճի տեմպը ցածր է Հայաստանի գնաճի տեմպից: Արժութային քաղաքականության ընտրության կարևոր չափանիշներից մյուսի՝ միջազգային պահուստների մակարդակի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Հայաստանի միջազգային պահուստները, ճիշտ է, աճի միտում ունեն, սակայն դրանք բավարար չեն կոշտ միջազգային քաղաքականություն իրականացնելու համար: 2019 թվականին Հայաստանի միջազգային պահուստներ/արտաքին պարտք

ցուցանիշը ստացվել է 24, իսկ միջազգային պահուստներ/ներմուծման ամսական ծավալները ցուցանիշը՝ 4.2:

«Հ ԿԲ կողմից լողացող արժույթային ռեժիմի ընտրությունը պայմանավորված է նաև միջազգային պահուստների ծավալների սակավությամբ, կապիտալի ոչ մոբիլությամբ և երկրի տնտեսության արտաքին շուկերի նկատմամբ մեծ հակվածություն ունենալով: «Հ արժույթային քաղաքականության արդյունավետության բարձրացմանը խոչընդոտում են առևտրաշրջանառության դիվերսիֆիկացման ցածր աստիճանը և դալարայնացման դեռևս բարձր մակարդակը:

Գրականության ցանկ

1. Mussa, M., Masson, P., Swoboda, A., Jadresic, E., Mauro, P., & Berg, A. Exchange rate regimes in an increasingly integrated world economy (Vol. 193). Washington, DC: IMF, 2000
2. Rogoff, K. S., Husain, A. M., Mody, A., Brooks, R., & Oomes, N. Evolution and performance of exchange rate regimes. Washington, DC, IMF, 2004
3. Ghosh, A. R., Ostry, J. D., & Tsangarides, C. G., Exchange rate regimes and the stability of the international monetary system (No. 270). Washington, DC, IMF, 2010
4. Habermeier K., Kokenyne A., Veyrune R., Anderson H., Revised System for the Classification of Exchange Rate Arrangements, IMF Working Paper 09/211, September 21, 2009
5. А. Холопов, Валютный курс как инструмент макроэкономического регулирования, "Мировая экономика и международные отношения", N 124. 2000
6. Գ. Ավագյան, Արժույթային ռեժիմների ընտրության չափանիշների վերլուծությունը ՀՀ տնտեսության համար, 2012, Երևան
7. Classification of Exchange rate arrangements and Montary policy Frameworks, IMF, June 30 2004
8. Annual Report on Exchange Arrangements and Exchange Restrictions, IMF
9. World Economic Outlook Database, IMF
10. The Global Economy, Business and Economic data, Trade openness
11. World Bank, World Development Indicators
12. ՀՀ միջազգային ներդրումային դիրք, ՀՀ ԿԲ
13. ՀՀՎԿ, Տարեգիրք, Արտաքին առևտուր
14. ՀՀՎԿ, Ազգային հաշիվների համակարգ

Լուսինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ալիկ ԹՈՐՈՍՅԱՆ
Արժույթային ռեժիմների ընտրության չափանիշները և դրանց վերլուծությունը ՀՀ տնտեսության համար

Բանալի բառեր. արժույթային ռեժիմներ, դրամավարկային քաղաքականություն, չափանիշներ, Արժույթի միջազգային հիմնադրամ, պահուսպներ, արժույթ, առևտրային հաշվեկշիռ

Հոդվածում ուսումնասիրվել է արժույթային ռեժիմների տեսակները և դասակարգումը ԱՄՀ-ի կողմից: Ապա ուսումնասիրվել է տարբեր երկրներում արժույթային ռեժիմների ընտրության պատմությունը և թե ինչպիսի դեղատոմս էր առաժարկում ԱՄՀ-ն երկրների կենտրոնական բանկերին ճգնաժամերից խուսափելու համար: Հոդվածում ուսումնասիրվել է նաև արժույթային ռեժիմների ընտրության չափանիշները և կատարվել է դրանց վերլուծությունը Հայաստանում: Այնուհետև կատարվել է եզրակացությունները ՀՀ Կենտրոնական բանկի կողմից ընտրված արժույթային ռեժիմի և արդյոք այն համապատասխանությունը երկրի տնտեսական իրավիճակին:

Лусине АРУТЮНЯН, Алик ТОРОСЯН
Критерии выбора валютных режимов и их анализ для экономики Армении

Ключевые слова: Валютные режимы, денежно-кредитная политика, критерии, Международный валютный фонд, резервы, валюта, торговый баланс

В статье исследуются виды классификации валютных режимов МВФ. Затем была изучена история выбора валютных режимов в разных странах, а также рецепт, выданный МВФ центральным банкам стран, чтобы избежать кризисов. В статье исследуются критерии выбора валютных режимов и анализируются их в Армении. Затем были сделаны выводы: соответствует ли выбранный Центральным банком Армении валютный режим экономической ситуации в стране.

Lusine HARUTYUNYAN, Alik TOROSYAN
Criteria for choosing currency regimes and their analysis for the Armenian economy

Key words: Currency Regimes, Monetary Policy, Criteria, International Monetary Fund, Reserves, Currency, Trade Balance

The article examines the types of currency regimes classification by the IMF. Then, the history of the choice of currency regimes in different countries was studied, what prescription was issued by the IMF to the central banks of the countries to avoid crises. The article studied the criteria for choosing currency regimes and analyzed them in Armenia. Then the conclusions were made whether the currency regime chosen by the Central Bank of Armenia corresponded to the economic situation of the country.

**ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ԲԵՌԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԾԱԽՍԱՅԻՆ
ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Վիլեն ԽԱԶԱՏՐՅԱՆ

ՀՀ ՊԿԱ կառավարման ամբիոնի վարիչ

Կարեն ՍԱՐՈՅԱՆ

ՀՀ ՊԿԱ ասպիրանտ

Բանալի բառեր. հարկային բեռի կառավարում, հարկային օրենսդրության փոփոխություն, եկամտային հարկի համահարթեցում, շահութահարկի դրույքաչափի փոփոխություն, ծախսային բազմարկիչներ

Ներածություն

Հարկային բեռի կառավարման մասին խոսելիս անհրաժեշտ է հաշվի առնել մի կարևոր հանգամանք. հարկային բեռի կառավարման խնդիրն ի հայտ է գալիս այն դեպքում, երբ ակնկալվում է փոփոխություն հարկային բեռի կառուցվածքում, իսկ հարկային բեռի կառուցվածքի փոփոխության, ինչպես նաև դրա տարրերի վրա ազդող հիմնական գործոնը դա հարկային օրենսդրության մեջ կատարվող փոփոխություններն են: Հետևաբար, հարկային բեռի կառավարումը, վերջնաարդյունքում ենթադրում է տնտեսության վրա հարկային օրենսդրության փոփոխության հետևանքների վերլուծություն:

Տնտեսական երևույթների ուսումնասիրության գործում տնտեսագիտական ժամանակակից մտքի մեջ նշանակալի տեղ է հատկացված տնտեսության, դրա առանձին հատվածների, ինչպես նաև տնտեսական գործընթացների վրա տնտեսաքաղաքական որոշումների (այդ թվում՝ հարկային քաղաքականությանը վերաբերող որոշումների) ունեցած ազդեցությունը գրանցող և գնահատող գործիքների ուսումնասիրություններին: Տնտեսական գործընթացների փոխազդեցությունը և փոխկապվածության աստիճանը գրանցող և գնահատող այդպիսի գործիքներից են ֆիսկալ բազմարկիչները:

Գրականության ակնարկ

20-րդ դարի սկզբից, երբ մակրոտնտեսագիտությունը սկսեց ձևավորվել որպես տնտեսագիտական ամբողջական դիսցիպլին, մակրոտնտեսական մեծությունները (համախառն արտադրանք, համախառն առաջարկ և այլն) և դրանց փոխազդեցության մեխանիզմները դարձան քննարկման լայն առարկա: Այդպիսի մեծությունների/երևույթների նկարագրման համար էլ հենց

մշակվեց ֆիսկալ բազմարկիչների գաղափարը՝ սկսելով բազմարկիչների բընույթի վերաբերյալ Քոենանի¹ և Քեյնսի հետազոտություններից ու նոր իմպուլս ստանալով անցյալ դարի 90-ականներին՝ Սիմսի², Բեռնանկեի³, Բլանշարդի և այլոց ուսումնասիրությունների շնորհիվ:

Մեթոդաբանություն

Հարկաբյուջետային փոփոխությունների՝ տնտեսության վրա թողած զուտ ազդեցությունները նույնականացնելու, այսինքն՝ այդ փոփոխությունների՝ տնտեսության վրա ունեցած ազդեցություններն այլ, դրանց հետ ուղղակիորեն չկապված երևույթներից առանձնացնելը գործնականում բարդ խնդիր է: Նախառաջ, հարկային մուտքերի և պետական ծախսերի փոփոխությունները էնդոգեն կերպով են արձագանքում տնտեսության գործարար պարբերաշրջանի (բիզնես ցիկլին): այդ փոփոխությունների մի մասը, ըստ էության, կարող են կապված չլինել ֆիսկալ քաղաքականության սպասված և անսպասելի փոփոխությունների հետ՝ դրանով բարդացնելով ֆիսկալ քաղաքականության բերած տնտեսական փոփոխությունների զուտ ազդեցությունները նույնականացնելու գործը: Դրանից բացի, հարկային եկամուտների և պետական ծախսների փոփոխությունները, սովորաբար, տեղի են ունենում տնտեսաքաղաքական այլ (օրինակ՝ դրամավարկային) փոփոխություններին զուգահեռ, ինչի հետևանքով առավելապես բարդ է դառնում իրարից անջատ երևակելու և գնահատելու այդպիսի փոփոխությունների թողած զուտ ազդեցությունները⁴: Գրականության մեջ էնդոգենության խնդրի հաղթահարման համար օգտագործվող ամենից տարածված մեթոդներից են.

1. Պատմողական (նարատիվ) մոդել⁵:
2. Նորքեյնսյան (DSGE) մակրոտնտեսական մոդելներ:
3. Կառուցվածքային մոդելներ (SVAR):

¹ Coenen G. et al, Effects of Fiscal Stimulus in Structural Model, American Economic Journal: Macroeconomics, Vol. 4, N 1, January 2012, pp. 22-68

² Sims C.A., Macroeconomics and Reality, The Econometric Society, Econometrica, Vol 48, N 1, January 1980, pp. 1-48

³ Bernanke B., Alternative Explanations of the Money–Income Correlation, Carnegie-Rochester Conference Series on Public Policy, Volume 25, Autumn 1986, Pages 49-99

⁴ Մոդելներում ֆիսկալ շուկերի նույնականացման մոտեցումների տարբերությունների արդյունքում հետազոտություններում ֆիսկալ բազմարկիչների արժեքները ստացվում են իրարից նշանակալիորեն տարբեր:

⁵ Մշակվել է Քրիստինա և Դեյվիդ Ռոմերների կողմից

Որոշ մեթոդական առանձնահատկություններ

Ինչպես վերևում արդեն նշել ենք, ֆիսկալ շուկերի թողած զուտ ազդեցությունների նույնականացման խնդիրը հարկաբյուջետային վերլուծությունների ամենակնճոռոտ մասերից մեկն է: Վերլուծաբան Ռեյ Բարեյը փաստում է, որ ֆիսկալ բազմարկիչները հակված են ընդունել փոփոխական արժեքներ՝ կախված ուսումնասիրվող տնտեսության կառուցվածքից և ժամանակահատվածից, թե ինչ միջակայքի (ինտերվալի) համար է փորձ արվում քննարկել հարկաբյուջետային երևույթները¹: Տնտեսական որոշ կառուցվածքային առանձնահատկություններ, ինչպիսին է տնտեսության բացության (արտաքին առևտրի ազատության) մակարդակը, ազդում են տնտեսության՝ ֆիսկալ փոփոխություններին հաջորդող ֆիսկալ շուկերի բնույթի և ծավալների վրա².

• Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2020 թվականին սկսված և լայն տարածում գտած կորոնավիրուսի համաճարակի պայմաններում աշխարհի գրեթե բոլոր երկրները (այդ թվում՝ ՀՀ-ն)՝ ելնելով իրենց ժողովուրդների անվտանգության նկատառումներից, փակեցին իրենց ցամաքային, օդային, ինչպես նաև ջրային սահմանները միմյանց նկատմամբ, 2020թ.-ին և հետագա տարիներին հարկային օրենսդրության մեջ տեղի ունեցող փոփոխությունների՝ ՀՀ տնտեսության վրա ունեցած ազդեցությունը դիտարկելու համար, որպես հիմնական ենթադրություն, դիտարկվել է փակ տնտեսության մոդելը: ՀՀ տնտեսությունը դիտարկելով փակ տնտեսության մոդելով, մեզ համար հնարավոր է դարձել տնտեսության տեսական մոդելն անմասն պահել 2020 թվականի առաջին եռամսյակում ՀՀ-ում համաճարակի բռնկման հետևանքով արտաքին առևտրաշրջանառության կտրուկ կրճատման բերած ֆիսկալ ուղղակի/անուղղակի ազդեցություններին:

• Մինչ 2020 թվականի սկզբին հարկային փոփոխությունների փաթեթի ընդունումը տնտեսության վարքատիպային արձագանքը հարկային հնարավոր փոփոխությունների բերած շուկի պայմաններում պետական ծախսերի, համախառն սպառման և համախառն ներդրման ազդեցությունը տնտեսության վրա գնահատելու համար մեզ անհրաժեշտ պետական ծախսերի, ներդրումային և սպառման բազմարկիչների գնահատման նպատակով մեր աշ-

¹ Barrell R. et al., Fiscal Policy Effectiveness in the Banking Crisis, National Institute Economic Review, Volume 207, January 2009, pp. 43-50

² Nicoletta Batini et al., Fiscal Multipliers: Size, Determinants, and Use in Macroeconomic Projections, IMP, Fiscal Affairs Department, Washington, DC, September 2014

խատության այս մասում մենք օգտագործելու ենք Բլանշարդի և Պերոտի կողմից առաջարկված SVAR մոդելի գործիքակազմը՝ ելնելով մեր հետազոտության յուրահատկություններից՝ մոդելում կատարելով որոշակի փոփոխություններ:

- մոդելում օգտագործվել են ՀՀ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի, պետական ծախսերի, հարկային եկամուտների, համախառն սպառման և համախառն ներդրումների ցուցանիշների լոգարիթմական արժեքները 2003 Q1 – 2019 Q4 ժամանակահատվածի (ինտերվալի) համար:

- մոդելում օգտագործված տվյալները եռամսյակային են:

Վերլուծություն

Ինչպես նշեցինք, մեր աշխատության այս մասում մենք օգտագործել ենք Բլանշարդի և Պերոտի կողմից առաջարկված SVAR մոդելի գործիքակազմը: Կրճատ տեսքի VAR սպեցիֆիկացիան ունի հետևյալ տեսքը՝

$$X_t = A(L)X_{t-1} + U_t, \text{ որտեղ՝}$$

- $X_t = [T_t, C_t, I_t, G_t, Y_t]$ – ն էնդոգեն փոփոխականների՝ համապատասխանաբար հարկային եկամուտների, համախառն սպառման, համախառն ներդրումների, պետական ծախսերի և ՀՆԱ-ի լոգարիթմական արժեքների վեկտորն է ժամանակի t պահին: X վեկտորում էնդոգեն փոփոխականներին տրվել է նման դասավորություն այն տեսական դիտարկմամբ, որ հարկային եկամուտների շոկային փոփոխություններն ունեն համաժամանակյա ազդեցություն սպառման, ներդրումների, պետական ծախսերի և համախառն արտադրության ծավալների վրա,

- $U_t = [t_t, c_t, i_t, g_t, y_t]$ -ն կրճատ տեսքի մնացորդների վեկտորն է, ինչը կարելի է ներկայացնել հարկերի, համախառն արտադրության (ՀՆԱ-ի), համախառն սպառման, պետական ծախսերի և համախառն ներդրումների կառուցվածքային շոկերի գծային կոմբինացիաների տեսքով՝

$$t_t = a_1 y_t + a_2 c_t + a_3 i_t + a_4 e_t^g + e_t^t \quad (1)$$

$$c_t = b_1 i_t + b_2 y_t + b_3 e_t^t + b_4 g_t + e_t^c \quad (2)$$

$$i_t = c_1 c_t + c_2 y_t + c_3 e_t^t + c_4 g_t + e_t^i \quad (3)$$

$$y_t = d_1 t_t + d_2 c_t + d_3 i_t + d_4 g_t + e_t^y \quad (4)$$

$$g_t = f_1 c_t + f_2 y_t + f_3 e_t^t + f_4 i_t + e_t^g \quad (5)$$

Նշված հավասարումներում $e_t^t, e_t^c, e_t^i, e_t^g$ - ն հարկային մուտքերի, համախառն սպառման, համախառն ներդրումների և պետական ծախսերի կառուց-

վածքային շոկերն են, որոնց նույնականացումը և մեր նպատակն է: Հավասարում (1)-ում հարկային մուտքերի չսպասված փոփոխությունը մեկ եռամսյակ ժամանակահատվածում (t_i) բացատրվում է ՀՆԱ-ի (a_{1y_i}), համախառն սպառումների (a_{2c_i}), համախառն ներդրումների (a_{3i_i}) չսպասված փոփոխություններով և պետական ծախսերի (e_i^g) և հարկային մուտքերի կառուցվածքային շոկերով (e_i^t): Հավասարում (2)-ում համախառն սպառման չսպասված փոփոխությունը բացատրվում է համախառն ներդրումների (b_{1i_i}), ՀՆԱ-ի (b_{2y_i}) պետական ծախսերի (b_{4g_i}) չսպասված փոփոխություններով և հարկային մուտքերի ($b_{3e_i^t}$) և համախառն սպառման (e_i^c) կառուցվածքային շոկերով: Նույն տրամաբանությամբ ներկայացվում են հավասարում (3)-ը, (4)-ը և (5)-ը:

Ելնելով այն հանգամանքից, որ վերոգրյալ (1)-(5) հավասարումների համակարգը պարունակում է 5 փոփոխական, կառուցվածքային շոկերի նույնականացման համար մեզ անհրաժեշտ է հավասարումների համակարգում ներմուծել նույնականացման առնվազն 10 պարամետր-սահմանափակումներ¹: Պարամետրերին տրված սահմանափակումների մասին դիտարկումները հետևյալներն են՝

- a_1 պարամետրին, որը հավասարում (1)-ում ցույց է տալիս ՀՆԱ-ի անսպասելի փոփոխությունների ազդեցությունը հարկային եկամուտների վրա ժամանակի t պահին, տրվել է միավոր արժեք՝ ելնելով այն ենթադրությունից, որ համախառն արտադրության ծավալների անսպասելի փոփոխությունները միօրինակ արտահայտում են գտնում հարկային մուտքերում²:

- b_1 պարամետրը, որը հավասարում (2)-ում ցույց է տալիս համախառն ներդրումների ծավալների անսպասելի փոփոխությունների ազդեցությունը համախառն սպառման ծավալների վրա ժամանակի t պահին, որպես այդպիսին, չունի տնտեսագիտական ինտուիցիա, ըստ այդմ՝ նրան վերագրվել է 0 արժեք: Նույն տրամաբանությամբ հավասարում (3)-ում 0 արժեք է տրվել c_1 պարամետրին, որը նկարագրում է համախառն սպառման ծավալների ան-

¹ N թվով փոփոխականների պարագայում անհրաժեշտ է համակարգում ներմուծել $n*(n-1)/2$ թվով սահմանափակումներ:

² Հարկային էլաստիկության միավոր արժեքի ենթադրություն է արվել նաև ԱՄՀ-ի 2014 թվականի հայաստանյան զեկույցներից հետևյալում՝ Pedro Rodriguez, Armineh Manookian, Vahram Janvelyan, Republic of Armenia: Selected issues, IMF Country Report No. 15/66, Washington, D.C, 2015, March 11

սպասելի փոփոխությունների ազդեցությունը համախառն ներդրումների ծավալների վրա ժամանակի t պահին:

• b_2 և c_2 պարամետրը համապատասխանաբար հավասարում (2)-ում և հավասարում (3)-ում, ըստ երևույթին, իրենցից ներկայացնում են սպառման և ներդրման սահմանային հակումները, որոնց վերագրել ենք համապատասխանաբար 0.72 և 0.35 արժեքները՝ հաշվի առնելով Հայաստանի տնտեսության վերաբերյալ BearingPoint-ի հաշվարկած համապատասխան ցուցանիշները և ենթադրելով, որ 2003-2019թթ. (ինտերվալում) այդ երկու սահմանային հակումների մակարդակները մնացել են անփոփոխ¹:

• d_2 և d_3 պարամետրերին հավասարում (4)-ում վերագրվել են միավոր արժեքներ այն տեսական ենթադրությամբ, որ համախառն սպառման և համախառն ներդրման անսպասելի փոփոխությունները (ներկայացված համապատասխանաբար d_{2c} և d_{3i} կոմպոնենտներով) ունեն ՀՆԱ-ի վրա միավոր ազդեցություն:

• b_4 և c_4 պարամետրերին հավասարում (2)-ում և (3)-ում, որոնք ցույց են տալիս համապատասխանաբար պետական ծախսերի անսպասելի փոփոխությունների ազդեցությունը համախառն սպառման և համախառն ներդրման ծավալների վրա ժամանակի t պահին, տրվել են 0-ական արժեքներ այն ենթադրությամբ, որ համախառն սպառման և համախառն ներդրման ծավալների անսպասելի փոփոխությունները պայմանավորված են առավելապես հարկային փոփոխությունների բերած շոկով:

• նշված վերջին կետի տրամաբանությամբ 0-ական արժեքներ են վերագրվել նաև հավասարում (5)-ում f_1 և f_4 պարամետրերին, որոնք նույն հավասարման մեջ համապատասխանաբար ցույց են տալիս համախառն սպառման և համախառն ներդրումների ծավալների անսպասելի փոփոխությունների ազդեցությունը պետական ծախսերի վրա ժամանակի t պահին:

• Հավասարում (1)-ում $a_4e_i^s$ կոմպոնենտը ցույց է տալիս պետական ծախսերի շոկի ունեցած համաժամանակյա ազդեցության ծավալը հարկային եկամուտների վրա ժամանակի t պահին:

• Հավասարում (5)-ում $f_3e_i^t$ կոմպոնենտը, իր հեթին, ցույց է տալիս հարկային շոկի ունեցած համաժամանակյա ազդեցության ծավալը պետա-

¹ King Banaian and Bryan Roberts, Remittances in Armenia II: The impacts of remittances on the economy and measures to enhance their contribution to development, Armenian Journal of Public Policy, January 2007, pp. 229-255

կան ծախսերի վրա ժամանակի t պահին: Հիմք ընդունելով մեր սկզբնական այն ենթադրությունը, որ տնտեսական մեծությունների (ներառյալ պետական ծախսերի) անսպասելի շարժերը հաջորդում են հարկային շոկին, ինչը, ըստ մեր ենթադրության, հարուցվել է զուտ հարկային փոփոխությունների փաթեթով, a_4 կոմպոնենտին վերագրվել է 0 արժեք:

Մոդելի արդյունքները

Հետևելով AIC և FPE ցուցանիշների առաջարկին մոդելում լագերի թիվն ընտրվել է 6-ը:

VAR Lag Order Selection Criteria
 Endogenous variables: CC_SA GG_SA II_SA TT YY_SA
 Exogenous variables: C
 Date: 04/23/20 Time: 00:09
 Sample: 2003Q1 2019Q4
 Included observations: 61

Lag	LogL	LR	FPE	AIC	SC	HQ
0	431.2072	NA	5.87E-13	-13.974	-13.801	-13.9062
1	653.3737	400.6282	9.18E-16	-20.4385	-19.40035*	-20.03163*
2	668.7712	25.2417	1.28E-15	-20.1236	-18.2204	-19.37774
3	690.8206	32.53201	1.47E-15	-20.0269	-17.2586	-18.94196
4	736.386	59.75782	8.14E-16	-20.7012	-17.0677	-19.27719
5	775.9533	45.40509*	5.83E-16	-21.1788	-16.6802	-19.41576
6	811.7172	35.17766	5.16e-16*	-21.53171*	-16.168	-19.42963
7	836.632	20.42193	7.39E-16	-21.5289	-15.3001	-19.08779

* indicates lag order selected by the criterion

LR: sequential modified LR test statistic (each test at 5% level)

FPE: Final prediction error

AIC: Akaike information criterion

SC: Schwarz information criterion

HQ: Hannan-Quinn information criterion

Նկար 1. Լագերի թվի ընտրություն

Հաշվի առնելով նշված ցուցանիշները՝ ստորև ներկայացնում ենք SVAR մոդելի վերջնական արդյունքները.

Vector Autoregression Estimates
 Sample (adjusted): 2004Q3 2019Q4
 Included observations: 62 after adjustments
 Standard errors in () & t-statistics in []

	TT	CC	II	GG	YY
TT(-1)	0.989874 (0.20942) [4.72675]	0.026768 (0.16205) [0.16518]	1.022983 (0.55851) [1.83162]	-0.345150 (0.26905) [-1.28286]	0.295502 (0.17989) [1.64264]
TT(-2)	-0.409883 (0.27762) [-1.47640]	-0.147354 (0.21483) [-0.68591]	-0.377105 (0.74041) [-0.50932]	0.078265 (0.35667) [0.21943]	-0.118763 (0.23848) [-0.49800]
TT(-3)	-0.082977 (0.27231) [-0.30472]	-0.062818 (0.21072) [-0.29812]	-0.764631 (0.72623) [-1.05287]	0.315634 (0.34984) [0.90222]	-0.282250 (0.23392) [-1.20663]
TT(-4)	0.032975 (0.26636) [0.12380]	-0.127170 (0.20611) [-0.61700]	0.987520 (0.71036) [1.39017]	-0.571901 (0.34220) [-1.67127]	-0.167428 (0.22880) [-0.73176]
TT(-5)	-0.276243 (0.28078) [-0.98384]	-0.069195 (0.21727) [-0.31847]	-0.204742 (0.74883) [-0.27342]	-0.091355 (0.36073) [-0.25325]	-0.103999 (0.24119) [-0.43119]
TT(-6)	0.168357 (0.19843) [0.84846]	0.049805 (0.15355) [0.32436]	0.787972 (0.52920) [1.48900]	0.060238 (0.25493) [0.23630]	0.056409 (0.17045) [0.33094]
CC(-1)	-0.594914 (0.29193) [-2.03788]	0.604588 (0.22590) [2.67635]	0.294909 (0.77856) [0.37879]	-0.037120 (0.37505) [-0.09897]	-0.221982 (0.25077) [-0.88520]
CC(-2)	1.095560 (0.39441) [2.77775]	-0.114070 (0.30520) [-0.37375]	1.085867 (1.05187) [1.03232]	-0.114579 (0.50671) [-0.22613]	-0.117855 (0.33880) [-0.34786]
CC(-3)	-0.283372 (0.42474) [-0.66716]	0.663056 (0.32867) [2.01736]	-1.024620 (1.13277) [-0.90452]	0.113008 (0.54568) [0.20710]	0.551764 (0.36486) [1.51226]
CC(-4)	0.061644 (0.47896) [0.12870]	0.189991 (0.37063) [0.51262]	-1.885139 (1.27737) [-1.47579]	0.772468 (0.61534) [1.25536]	0.216426 (0.41144) [0.52603]
CC(-5)	0.472614 (0.44406) [1.06431]	0.303339 (0.34362) [0.88277]	1.297521 (1.18429) [1.09561]	0.056404 (0.57050) [0.09887]	0.393566 (0.38145) [1.03176]

ԱՅԼԸՆՏՐԱՆՔ զիտական հանդես

CC(-6)	-0.453236 (0.34011) [-1.33261]	-0.604178 (0.26319) [-2.29564]	-1.790495 (0.90707) [-1.97394]	-0.005902 (0.43695) [-0.01351]	-0.614684 (0.29216) [-2.10392]
II(-1)	0.089386 (0.08077) [1.10670]	0.064994 (0.06250) [1.03990]	0.331625 (0.21540) [1.53954]	0.067588 (0.10377) [0.65136]	0.083457 (0.06938) [1.20289]
II(-2)	-0.028667 (0.07900) [-0.36286]	-0.156765 (0.06113) [-2.56435]	0.196878 (0.21069) [0.93444]	-0.071961 (0.10150) [-0.70901]	-0.113669 (0.06786) [-1.67498]
II(-3)	-0.081846 (0.09418) [-0.86907]	0.026144 (0.07288) [0.35876]	-0.271169 (0.25116) [-1.07965]	0.039703 (0.12099) [0.32815]	-0.064319 (0.08090) [-0.79505]
II(-4)	0.068304 (0.08847) [0.77208]	0.050021 (0.06846) [0.73068]	0.200844 (0.23594) [0.85125]	-0.049388 (0.11366) [-0.43453]	0.060796 (0.07600) [0.79999]
II(-5)	0.147106 (0.08627) [1.70517]	0.063846 (0.06676) [0.95638]	0.178731 (0.23008) [0.77682]	0.081880 (0.11083) [0.73876]	0.130453 (0.07411) [1.76031]
II(-6)	-0.073162 (0.07363) [-0.99358]	-0.005900 (0.05698) [-0.10355]	-0.369545 (0.19638) [-1.88178]	0.098033 (0.09460) [1.03629]	-0.124887 (0.06325) [-1.97440]
GG(-1)	-0.036667 (0.14430) [-0.25409]	-0.167406 (0.11167) [-1.49916]	0.677550 (0.38486) [1.76053]	0.088598 (0.18539) [0.47789]	0.039632 (0.12396) [0.31971]
GG(-2)	-0.049427 (0.14199) [-0.34809]	-0.102515 (0.10988) [-0.93300]	0.592293 (0.37869) [1.56407]	-0.143434 (0.18242) [-0.78628]	-0.083823 (0.12197) [-0.68722]
GG(-3)	0.004657 (0.14601) [0.03190]	-0.127464 (0.11299) [-1.12812]	-0.204469 (0.38941) [-0.52508]	-0.021776 (0.18759) [-0.11608]	-0.076745 (0.12543) [-0.61188]
GG(-4)	0.263931 (0.13760) [1.91804]	0.289708 (0.10648) [2.72075]	-0.144519 (0.36699) [-0.39380]	0.046979 (0.17678) [0.26574]	0.163114 (0.11820) [1.37993]
GG(-5)	0.027305 (0.14511) [0.18818]	0.080987 (0.11229) [0.72126]	-0.309583 (0.38699) [-0.79998]	0.222923 (0.18642) [1.19580]	0.063533 (0.12465) [0.50970]
GG(-6)	-0.050546 (0.14091)	0.125019 (0.10904)	-0.587491 (0.37580)	0.211796 (0.18103)	0.105752 (0.12104)


ԱՅԼԸՆՏՐԱՆՔ զիտական հանդես

	[-0.35871]	[1.14655]	[-1.56329]	[1.16993]	[0.87366]
YY(-1)	0.459189 (0.28945) [1.58640]	0.023321 (0.22398) [0.10412]	0.599890 (0.77196) [0.77710]	-0.469823 (0.37187) [-1.26341]	0.408813 (0.24864) [1.64417]
YY(-2)	-0.709198 (0.31525) [-2.24966]	0.045091 (0.24394) [0.18484]	-0.611926 (0.84075) [-0.72783]	0.514901 (0.40501) [1.27134]	0.192202 (0.27080) [0.70975]
YY(-3)	0.204794 (0.35432) [0.57799]	0.138075 (0.27418) [0.50359]	0.878690 (0.94496) [0.92987]	0.263262 (0.45521) [0.57833]	0.103722 (0.30437) [0.34078]
YY(-4)	0.318672 (0.30576) [1.04223]	-0.242669 (0.23660) [-1.02563]	1.192717 (0.81545) [1.46264]	-0.419606 (0.39282) [-1.06818]	0.125826 (0.26265) [0.47906]
YY(-5)	-0.403105 (0.33702) [-1.19609]	-0.047615 (0.26079) [-0.18258]	-1.949096 (0.89882) [-2.16851]	0.070743 (0.43298) [0.16339]	-0.306026 (0.28950) [-1.05707]
YY(-6)	0.293647 (0.26544) [1.10627]	0.277079 (0.20540) [1.34896]	0.527364 (0.70792) [0.74495]	0.391097 (0.34102) [1.14685]	0.422617 (0.22802) [1.85345]
C	-0.049606 (0.12240) [-0.40527]	-0.058689 (0.09472) [-0.61962]	-0.034936 (0.32644) [-0.10702]	-0.612015 (0.15725) [-3.89192]	0.001023 (0.10514) [0.00973]
R-squared	0.994558	0.994467	0.874573	0.987498	0.992777
Adj. R-squared	0.989291	0.989112	0.753193	0.975400	0.985786
Sum sq. resids	0.014888	0.008915	0.105896	0.024574	0.010986
S.E. equation	0.021915	0.016958	0.058446	0.028155	0.018825
F-statistic	188.8311	185.7107	7.205211	81.62174	142.0200
Log likelihood	170.3896	186.2874	109.5713	154.8555	179.8117
Akaike AIC	-4.496440	-5.009270	-2.534558	-3.995338	-4.800376
Schwarz SC	-3.432873	-3.945703	-1.470991	-2.931771	-3.736809
Mean dependent	-1.205941	-0.597450	-1.138947	-1.427707	-0.508619
S.D. dependent	0.211767	0.162518	0.117647	0.179508	0.157902
Determinant resid covar. (dof adj.)	3.11E-17				
Determinant resid covariance	9.72E-19				
Log likelihood	845.8512				
Akaike information criterion	-22.28552				
Schwarz criterion	-16.96769				


Նկար 2. SVAR մոդելի արդյունքները

Ինչպես վերևում արդեն նշել ենք, մեր SVAR մոդելի կառուցման առանցքային նպատակը ծախսային շուկերի իմպուլսային արձագանքների ստացումն է, որոնք հնարավորություն են տալիս նույնականացնել ծախսային շուկերի զուտ ազդեցությունները տնտեսության վրա և ստանալ համախառն սպառման, համախառն ներդրումների և պետական ծախսերի բազմարկիչների գնահատված արժեքները: Նշված իմպուլսային արձագանքի ֆունկցիաները ներկայացված են գծապատկեր 1.-ում.


ՀՆԱ իմպուլսային արձագանքը սպառման շուկին



ՀՆԱ իմպուլսային արձագանքը ներդրումների շուկին



ՀՆԱ իմպուլսային արձագանքը պետական ծախսի շուկին



Գծապատկեր 1. ՀՆԱ-ի իմպուլսային արձագանքը ծախսային շուկերին

Ըստ առաջին պատկերում արտացոլված տվյալների՝ ՀՆԱ-ի վրա համախառն սպառման շուկի առավելագույն ազդեցությունը գնահատվել է 0.68 (մաքսիմալ արժեք գրանցող կետը նկարում նշված է սլաքով), որը և հետագա հաշվարկների համար վերցվել է որպես համախառն սպառման բազմարկիչ:

Ըստ երկրորդ պատկերում արտացոլված տվյալների՝ ՀՆԱ-ի վրա համախառն ներդրումների շուկի առավելագույն ազդեցությունը գնահատվել է 0.08 (մաքսիմալ արժեք գրանցող կետը նշված է սլաքով), որը հետագա հաշվարկների համար վերցվել է որպես համախառն ներդրումների բազմարկիչ:

Ըստ երրորդ պատկերում արտացոլված տվյալների՝ ՀՆԱ-ի վրա պետական ծախսերի շուկի առավելագույն ազդեցությունը գնահատվել է 0.04 (մաքսիմալ արժեք գրանցող կետը նկարում նշված է սլաքով), որը և հետագա հաշվարկների համար վերցվել է որպես պետական ծախսերի բազմարկիչ:

Վերոգրյալն ավելի պարզ կարելի է ներկայացնել հետևյալ բանաձևով.

GDP=0.68C+0.08I+0.04G, որտեղ՝ GDP-ն, C-ն, I-ն և G-ն, ՀՆԱ-ի, սպառման, ներդրման և պետական ծախսերի մեծություններն են: Որպեսզի ցույց տանք, թե ինչ հնարավոր ազդեցություն կունենան հարկային օրենսգրքում կատարվող փոփոխությունները տնտեսության վրա, ենթադրենք, որ նշված փոփոխություններն ուժի մեջ մտնելու ժամանակ կառավարությունը որոշում է կայացրել՝ պլանավորել հավասարակշռված (բալանսավորված) բյուջե, այն է՝ պետական ծախսերը համապատասխանեցնել հավաքագրվող եկամուտներին: Տվյալ դեպքում, հարկային եկամուտներում ակնկալվող ցանկացած ավելացում կուղղվի պետական ծախսերին, իսկ նվազեցում՝ կհանգեցնի պետական ծախսերի կրճատման.

GDP=0.68C+0.08I+0.04T, ուր T-ն հարկերի մակարդակն է:

Ինչպես նշեցինք, մինչև 2016թ. հարկային օրենսգրքի ընդունումը երկրում հարկային հարաբերությունները կարգավորվում էին առանձին հարկատեսակների օրենքներով, կառավարության որոշումներով, հարկային մարմնի հրամաններով և նույնիսկ առանձին պարզաբանումներով: Հարկային օրենսգիրքը, ըստ էության, միավորեց հարկային հարաբերությունները կարգավորող մի շարք օրենքներ և որոշակի պարզություն մտցրեց հարկային հարաբերություններում՝ որպես հարկային հարաբերությունները կարգավորող մեկ միասնական նորմատիվ իրավական ակտ: Հաշվի առնելով այն հանգա-

մանքը, որ ներկայումս գործում է ՀՀ հարկային օրենսգիրքը՝ մենք, կիրառելով ծախսային բազմարկիչների գնահատված գործակիցները, կարող ենք պարզել, թե ինչ ազդեցություն կարող են թողնել հարկային օրենսգրքի փոփոխությունները տնտեսության վրա: Հարկային օրենսգրքի ընդունումից հետո արված փոփոխություններից դիտարկենք նրանք, որոնքը, ըստ մեզ, մնացածի համեմատ ավելի ներգործուն ազդեցություն ունեցավ ինչպես ամբողջ հարկային համակարգի, այնպես էլ տնտեսական իրավիճակի վրա: Որպես այդպիսին, կդիտարկենք 25.06.2019թ.՝ ՀՀ ՀՕ-68-Ն օրենքով կատարված փոփոխությունները: Այս օրենքի ընդունումը կարևոր էր նրանով, որ միաժամանակ մի քանի հարկատեսակների մասով ՀՀ հարկային օրենսգրքում նշանակալից փոփոխություններ կատարվեցին, որոնցից ամենաէական փոփոխությունները ներկայացվում են ստորև.

1) Եկամտային հարկի նախկին պրոգրեսիվ դրույքաչափերի փոխարեն՝ 2020թ. հունվարի մեկից աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների նկատմամբ եկամտային հարկը սկսեց հաշվարկվել միասնական 23 տոկոսով, որը մինչև 2023թ. հաջորդաբար նվազելու է՝ դառնալով 20 տոկոս,

2) 2020թ. և հաջորդող տարիների համար ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով ՀՀ -ում գործող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի (մշտական հաստատությանը վերագրվող եկամուտների գծով ձևավորվող հարկման բազայի մասով) հարկման բազայի նկատմամբ շահութահարկը հաշվարկվելու է 18 տոկոսով՝ 20 տոկոսի փոխարեն,

3) ԱՏԳԱԱ դասակարգչի մի շարք ապրանքների նկատմամբ 2020թ.-ից սկսած սկսվեց կիրառվել ակցիզային հարկի ավելի բարձր դրույքաչափ,

4) 2020թ.-ի հունվարի մեկից ուժը կորցրած ճանաչվեց հարկային օրենսգրքի 56-րդ գլխով գործող ընտանեկան ձեռնարկատիրության համակարգը, ինչպես նաև "Ինքնազբաղված անձանց հարկային արտոնությունների մասին" ՀՀ օրենքը և այս երկու համակարգերի միավորումից ուժի մեջ հարկման նոր համակարգ՝ միկրոձեռնարկատիրության համակարգը,

5) 2020թ.-ի հունվարի մեկից ամբողջությամբ ուժը կորցրած ճանաչվեց արտոնագրային համակարգը, իսկ նշված համակարգի շրջանակներում գործող տնտեսավարողները այսուհետ սկսեցին գործել հարկման ընդհանուր և հատուկ համակարգի շրջանակներում, իսկ նախկինում արտոնագրային հարկով հարկվող որոշ գործունեության տեսակներ ներառվեցին "Պետական տուրքի" մասին ՀՀ օրենքով սահմանված գործունեության տեսակների մեջ:

Այստեղ, մենք կդիտարենք, մասնավորապես՝ եկամտային հարկի համահարթեցման և շահութահարկի դրույքաչափի փոփոխության հնարավոր ազդեցությունները: ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի վերլուծությունների արդյունքում եկամտային հարկի համահարթեցման հետևանքով 2020թ.-ին նախատեսվել է հարկային եկամուտների կորուստ, որը ՊԵԿ գնահատականների համաձայն կազմել է 26,2 միլիարդ դրամ: Ելնելով մեր այն ենթադրությունից, որ բյուջեն հավասարակշռված է, կառավարությունը պետք է կրճատի պետական ծախսերը՝ G-ն, 26.2 միլիարդ դրամի չափով: Մյուս կողմից, վերլուծելով եկամտային հարկի համահարթեցման հնարավոր հետևանքները, մենք եկանք այն եզրահանգման, որ դրանից շահում են բացառապես վարձու աշխատողները (ենթադրենք նույն չափով ավելացնելով իրենց սպառումը՝ C-ն): Ունենալով ծախսային բազմարկիչների գնահատված մեծությունները, կարող ենք համադրել կորուստներն ու օգուտները և, քանակապես գնահատել եկամտային հարկի համահարթեցման ազդեցությունն ամբողջ տնտեսության վրա: Այս ամենը կարելի է ներկայացնել հետևյալ բանաձևի միջոցով.

$\Delta GDP = 0.68\Delta C + 0.04\Delta G$, որտեղ Δ -ն ցույց է տալիս նշված ցուցանիշների փոփոխությունը: Տեղադրելով համապատասխան ցուցանիշները բանաձևում, մենք ստանում ենք, որ եկամտային հարկի համահարթեցման արդյունքում ակնկալվում է ՀՆԱ-ի աճ 16,768 միլիարդ դրամի չափով:

Այլ է խնդիրը շահութահարկի դրույքաչափի փոփոխության ժամանակ: ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվական բազայում առկա տվյալների համադրման արդյունքում շահութահարկի դրույքաչափի փոփոխության հետևանքով 2021թ. պետբյուջեի եկամուտների կորուստն ակնկալվում է 14՝ միլիարդ դրամ: Ելնելով մեր այն ենթադրությունից, որ բյուջեն հավասարակշռված է, կառավարությունը պետք է կրճատի պետական ծախսերը՝ G-ն, 14 միլիարդ դրամի չափով: Մյուս կողմից, վերլուծելով շահութահարկի դրույքաչափի փոփոխության հնարավոր հետևանքները, մենք եկանք այն

¹ ՀՀ ՊԵԿ գնահատականների համաձայն՝ շահութահարկի 20 տոկոս դրույքաչափի դեպքում ռեզիդենտ շահութահարկ վճարողների և մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողների կողմից վճարման ենթակա շահութահարկը կանխատեսվում էր 140 մլրդ դրամ, հետևաբար, երբ շահութահարկի դրույքաչափը նվազեց 10 տոկոսով՝ դառնալով 18 տոկոս, նույն չափով նվազեց շահութահարկ վճարողների կողմից վճարման ենթակա ակնկալվող շահութահարկը, որը մոտավորապես կազմում է 14 մլրդ դրամ:

եզրահանգման, որ դրանից շահում են ներդրողները (ենթադրենք նույն չափով ավելացնելով իրենց սպառումը՝ I-ն):

Համադրելով առկա կորուստներն ու օգուտները, կարելի է գնահատել շահութահարկի դրույքաչափի փոփոխության ազդեցությունն ամբողջ տնտեսության վրա: Այս ամենը կարելի է ներկայացնել հետևյալ բանաձևի միջոցով.

$$\Delta GDP = 0.08\Delta I + 0.04\Delta G$$

Տեղադրելով համապատասխան ցուցանիշները բանաձևում, մենք ստանում ենք, որ շահութահարկի դրույքաչափի փոփոխության արդյունքում ակնկալվում է ՀՆԱ-ի աճ 0,56 միլիարդ դրամի չափով:

Ելնելով ծախսային բազմարկիչների գնահատված մեծություններից և հաշվի առնելով մեր կողմից կատարված նախնական սահմանափակումները, կարող են ենթադրել, որ ինչպես եկամտային հարկի համահարթեցման, այնպես էլ շահութահարկի դրույքաչափի փոփոխության արդյունքում ՀՀ տնտեսությունում ակնկալվում է դրական տեղաշարժ՝ ՀՆԱ-ի աճի տեսքով:

Եզրակացություն

Ամփոփելով վերը նշված մտքերը, կարող են եզրակացնել, որ հարկային բեռի արդյունավետ կառավարման նպատակով պետությունը պետք է կատարի քայլերի որոշակի հաջորդականություն, որոնք ենթադրում են .

1. Գնահատել ՀՆԱ-ի ծախսային բազմարկիչները:
2. Վերլուծել հարկային օրենսդրության փոփոխության հետևանքով պետբյուջեի եկամուտների փոփոխությունները (աճը կամ նվազումը):
3. Պարզել, թե հարկային օրենսդրության փոփոխության արդյունքում ծախսային որ բաղադրիչներում է ակնկալվում փոփոխություն և ինչ չափով:
4. Ենթադրելով, որ բյուջեն հավասարակշռված է և համադրելով վերը նշված կետերի արդյունքները, պարզել, թե հարկային օրենսդրության փոփոխությունն վերջնաարդյունքում ինչպես է ազդում ՀՀ տնտեսության վրա:
5. Կիրառել այնպիսի օրենսդրական փոփոխություններ, որոնք կավելացնեն այն ծախսային բաղադրիչները, որոնց բազմարկիչներն ունեն առավել բարձր գործակից կամ որոնք կնվազեցնեն այն ծախսային բաղադրիչները, որոնց բազմարկիչներն ունեն առավել ցածր գործակից:

Վիլեն ԽԱՉԱՏՐՅԱՆ, Կարեն ՍԱՐՈՅԱՆ

ՀՀ հարկային բեռի կառավարման հիմնախնդիրը ծախսային բազմարկիչների գնահատման համատեքստում

Բանալի բառեր. հարկային բեռի կառավարում, հարկային օրենսդրության փոփոխություն, եկամտային հարկի համահարթեցում, շահութահարկի դրույքաչափ

Հարկային բեռի ձևավորման, փոփոխության և դրա արդյունավետ կառավարման հիմքում տվյալ երկրի հարկային համակարգն է, իսկ հարկային համակարգի արդյունավետ գործառնությունը նախևառաջ կախված է երկրում գործող հարկային օրենսդրությունից և դրանում կատարվող փոփոխություններից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս ՀՀ-ում գործում է ՀՀ հարկային օրենսգիրքը, սույն հոդվածում փորձ է արվել պարզել, թե ինչ հնարավոր ազդեցություն կարող են թողնել հարկային օրենսգրքում կատարվող փոփոխությունները երկրի տնտեսության վրա: Այդ նպատակին հասնելու համար հոդվածում խնդիր է դրվել գնահատել ՀՆԱ ծախսային բազմարկիչները՝ կիրառելով SVAR մոդելը:

Вилен ХАЧАТРЯН, Карен САРОЯН

Проблема управления налогового бремени Республики Армении в контексте оценки мультипликатора затрат

Ключевые слова. управление налогового бремени, изменение налогового законодательства, выравнивание подоходного налога, изменение ставки налога на прибыль, мультипликаторы затрат

Налоговая система данной страны является основой для формирования, изменения и эффективного управления налоговым бременем, а эффективное функционирование налоговой системы зависит, прежде всего, от налогового законодательства страны и внесенных в него изменений. Учитывая тот факт, что в настоящее время в РА действует Налоговый кодекс, в данной статье была предпринята попытка выяснить, какое возможное влияние могут оказать изменения в Налоговом кодексе на экономику страны. Для достижения этой цели в данной статье поставлена задача оценить мультипликаторы затрат ВВП с использованием модели SVAR.

Vilen KHACHATRYAN, Karen SAROYAN

The problem of tax burden management in the context of cost multiplier assessment

Key words. tax burden management, change of tax legislation, income tax flattening, change of profit tax rate, cost multipliers

The tax system of the given country is the basis for the formation, change and effective management of the tax burden, and the effective operation of the tax system first of all depends on the tax legislation in the country and the changes made in it. Taking into account the fact that the Tax Code is currently in force in the Republic of Armenia, it has been made an attempt in this article to find out what possible impact the changes in the Tax Code may have on the country's economy. To achieve this goal, in this article we have been set a task to estimate GDP's cost multipliers using the SVAR model

IMPLEMENTATION OF DECENTRALIZED ENERGY NETWORKS IN ARMENIA

Margarita YEGHIAZARYAN

Ph.D. in Economics, Associate Professor, YSU

Hovhannes ZOHRABYAN

YSU Faculty of Mathematics and Mechanics Bachelor

Stepan YAYLOYAN

YSU Chair of GPA Laboratory of PE

Key words: Decentralized Energy Networks, Power Grids, Renewable Energy, Solar Energy

Introduction

Decentralized energy infrastructure has a distributed nature, excluding need for a central energy generator. In the decentralized model of energy network, the sources of energy are spread across the whole grid. To elaborate more, such grid does not rely on single power source which generates substantial amount of the energy, but has many smaller sources, spread in the grid itself generating less amount of power. “Brooklyn Microgrid”, “Powerledger” and “Lumenaza” are remarkable examples of integration of decentralized energy network, in order to create more secure, efficient and clean energy grids. Taking into account the experience of these companies, geopolitical features of Armenia, we find this infrastructure ideal for the implementation in our country. We believe, that this system has a potential to solve multiple national strategic issues for Armenia such as having independent energy sources, infrastructure that is reliable in war situation and finally contribute to the economic factor of having a low-cost energy. This system was designed to implement P2P energy sharing, however the Second Artsakh War forced us to design implementation for such network without P2P component.

Methodology and Literature Review

In this paper we reviewed different papers and articles connected to the topic of decentralization of energy networks. Moreover, three case studies about European companies that implemented system of decentralized energy network have been conducted. Using the experience of those companies, we created a pilot program to be implemented in Yerevan. For the Armenian energy sector two Government decisions about the sector’s strategic development have been used to assess the current problems and future perspectives for Armenia. We used other European research papers on implementations of such networks, energy losses in traditional grids and blockchain technologies.

Structure of decentralized energy network

Decentralized energy networks, most commonly consist of renewable energy sources, particularly solar panels interconnected using microgrids. Microgrids are decentralized groups of electricity sources connected to each other and the main power grid of the area. Solar panels are the most common component in such systems as they do not require additional space around them for the exploitation. Due to that, energy sources no

longer have to be bound by geographical limitations and can be located closer to each other. Due to this fact, such system provides better energy and eco efficiency. Below we will discuss main advantages of decentralization of energy network.

Energy Efficiency

Losses in the energy infrastructure is an important factor that has to be taken into account for the development and management of the grid itself. Modern energy infrastructure requires transmission of the energy for long distances as main power sources are located far from cities to decrease pollution or because of geographical limitations. Non-trivial amount of energy is lost during the process of energy transmission using high-voltage power lines. Energy losses scale parallelly with the length and load of the electrical grid (Emir ALIBAŠIĆ, Boris Fažo, Ivica PETROVIĆ, 2019). These losses are also dependent on voltage, current and weather. But decentralized networks can reduce losses and create more efficient systems as practically each house in the microgrid can be a source of energy itself with use of solar panels. In such distances, short isolated cables can be used between homes instead of powerlines with high voltage and current, as well eliminate effects of weather conditions.

Easier transitioning to renewable resources

One of the biggest problems for modern society is switching to more eco-friendly sustainable energy resources and reducing the use of the fossil fuels to generate electricity. The current situation, requires us to make the transition to the renewable energy as fast as possible before global warming has dramatical effects (Douglas J. Arent, Alison Wise, Rachel Gelman, 2011). Cost of solar panels and their installation is high, which for population of developing countries such as Armenia is not affordable. However, decentralized energy network enables people to share solar energy with consumers who do not own solar panels. In this case, share of reusable energy in the grid will potentially rise faster, as population will prefer low-cost solar energy compared to other expensive sources. Afterall, government funding and plans of companies selling solar panels can help population to install solar panels and become part of the network. For case of Armenia, such system is the best gateway to meeting guidelines of SDG 7.1 (Nations) and ensuring universal access to affordable and modern energy sources.

Review of Armenian Energy Sector

Armenian Government published a plan of “Energy Strategy of Armenia, Accomplishments, Challenges, Next Steps” presented for 2014 and planned up to the year 2020 (Galstyan, 2014). Main energy strategy pillars considered by Ministry of Energy and Natural Resources are Nuclear Energy, Renewable Energy and Regional Integration. Armenia Nuclear Power Plant generates up to 40% of total energy of Armenia (2021). However, by 2023 the investment program will be completed, and will require USD 330 million investment to prolong for three years up to 2026 (Government Decision of RA N

48, 2021). Such big investments are not optimal path to develop infrastructure, so we will consider renewable energy as strategical pillar. Government of RA mainly considered using hydroelectric power and wind power even though solar energy is mentioned as well. Armenia has a big potential of solar energy as we get from 350 to 400 sun hours at summer, and from 100 to 150 of sun hours at winter (2021). Moreover, Yerevan gets about 1690kWh/m² of horizontal surface radiation which varies between seasons (Council, 2016). Based on these facts, we conclude that such big investments can be done on solar energy sector instead of nuclear plant as it is outdated and maintenance costs will keep rising with time. Moreover, solar energy is a technology that has a potential to grow to large scale turning into main energy source for a country (Richard Schmalensee, Vladimir Bulovic, 2015).

Types of decentralized energy networks

Before considering the experience of foreign cases and companies that have implemented decentralized energy infrastructures, different types such networks have to be introduced and discussed. There are two main ways for distribution energy in decentralized infrastructure. First option is based on households, directly sharing/selling energy between each other, each of them is acting both as an energy source and an energy buyer, otherwise named as prosumers. And the second one, includes synchronous operation with the already existing power grid, where users sell the excess energy to the grid system instead of each other. As we have already mentioned above such networks are called microgrids. Not relying on the grid and having households directly connected approaches to the goal of having completely clean and renewable energy. But in order to implement such system majority of nodes involved in the system will be required to have an energy generator (solar panel). Microgrid can be easier to implement but does not provide completely decentralized infrastructure which in case of Armenia can be considered as a crucial point. Moreover, Armenian legislation already allows users to sell their excess energy to the grid. So, first of all, let's talk about the experiences of other companies implementing such system, and then thoroughly examine the implementation patterns and problems for Yerevan and Armenia

Foreign companies' example of implementing p2p network

Multiple foreign companies already implemented systems for p2p energy sharing, some of them giving options to choose between types of systems people may want to join. In our study, we will concentrate on three companies 'Powerledger', 'Brooklyn Microgrid' and 'Lumenaza'. The experience and data collected from them can be invaluable for implementing a decentralized system in Yerevan.

Powerledger uses blockchain to facilitate electricity and environmental commodity trading (Powerledger, 2020). Powerledger is one of the unique companies that provides both structures of network for their customers. With plan 'μGrid' they

allow people to share the energy between each other without using the main grid. And ‘xGrid’ gives the ability to be connected to the grid. They mention that their platform is like a trust-based trading app such as Uber or Airbnb and they rely on blockchain technology in order to establish trust between customers in form of smart contracts and provide safe and non-vulnerable system. In this case, blockchain is the continuation of notion of decentral-ization where system does not have to rely on government, by that keeping indepen-dence from government’s price policy and provide security by not having a node that can shut off the while system. From their case, we can see that, even though grid using platform is not ideal for a sustainable and decentralized city it is yet a crucial component to bring more customers. And blockchain is a preferred technology to use in order to set ‘trust’ between customers and yet keep the system decentralized.

Brooklyn Microgrid is a good example of system directly sharing energy between households (Brooklyn Microgrid, 2020). As we can see from their description, they help people to sell and buy energy, using smart contracts based on blockchain ensuring security and trust between seller and buyer (Agency, 2020). Brooklyn Microgrid was one of the pioneers of energy sharing systems. One of the problems that they have faced is already described above. By law they were not an authorized energy retailer, which limited their selling capabilities. Moreover, they did not manage to solve another big problem, which is implementing market pricing mechanisms and complete user trust.

Lumenaza is Germany based company, and also one of the pioneers of the p2p energy sharing system. Just like in last two cases they provide a software solution, that can handle most of the functionality and electricity grid is supposed to manage system in highly automated manner (Amelang, 2019). Alike other companies they have faced problems with law, and CEO of Lumenaza mentions in articles that law changes preven-ting their development usually come from EU.

Pilot Implementation in Yerevan

The experience of foreign companies illustrates that there are two crucial parts in the implementation of decentralized energy network, preferably Blockchain based soft-ware system, and power infrastructure itself. Moreover, for case of Armenia the legis-lation already provides all significant points for developing such system. Implemen-tation and development of the Blockchain based software for ensuring secure contracts is easy, as blockchain technologies already exist for years and we even have a developed community of blockchain specialists in Yerevan (Armenian Blockchain Forum). The hardest part for such a system is the infrastructure itself, as there are lots of different variables that have to be taken into consideration and problems that have to be solved such as accurate metering, stable connection to servers and non-disrupting data flow. Finally, there already exist companies that sell and produce solar panels, such as Solaron with annual production capacity up to megawatts.

Development of trust factor between people

Before talking about hardware implementation and law requirements for such systems to work, we have to take into consideration human factor. Even though the idea of such system can be great and effective people have to be able to trust the system. As we have already talked the base of the software is blockchain, a technology first developed for Bitcoin contracts (Nakamoto, 2009). Blockchains will be used to enable users having secure smart contracts to sell and buy electricity. However, people who are not interested in IT sphere are most probably not familiar to blockchain. In the same manner, not everyone will be willing to switch to less conventional solar energy sources. To familiarize society with p2p energy sharing will require huge resources and time. There have to be explanation videos on TV and ads, webinars, meetings and clubs to explain the idea between such systems, and security assurances in more understandable manner for general public. Moreover, the progress will be very slow without governments' help. To increase the rates of joining such system, government should define Supportive policies encouraging decentralization of power systems and better utilization of existing grid infrastructure (Agency, 2020).

Implementation with legislation

Another important step before starting to talk about grid and digitalization, we have to understand that such systems, where a person can be selling energy have to be integrated with law. Nowadays, Armenian legislation, requires anyone who wants to sell energy from solar panel, to sell it to grid. This implementation, can help to increase the share of renewable energy in the whole system. However, as we have discussed in section about types of decentralized networks, system integrated with the grid is not the best implementation as it does not provide complete decentralization of infrastructure. The rates of buying and installing solar panels will potentially be low as most will still keep using energy from grid. Secondly, in this way, we will lose the advantage of energy efficiency. As we can conclude, for Yerevan, a good solution can be implementing the idea of microgrids. But this brings to another problem. As in case of Brooklyn Microgrid, they failed because of not being able to setup good, and stable pricing policies .

Implementation of physical grid itself

When all the above steps will be implemented and ready to use, the actual grid system can be created. First and most importantly the electrical system has to be digitalized. Such system will be made out of three layers in case of grid connected system and two in case of microgrids (Physical Layer, Participating Peers and Virtual Layer Platform). Illustrated in the figure below, first layer is responsible, for connection to the grid. The most important part in this layer is to be able to provide accurate metering of the amount of energy provided to the grid by the user. Same data has to be available in mobile applications, for users to track their sells and be able to trust the system.

Second layer, includes users who have installed solar panels and are selling their excess energy. This layer, combined with third layer creates the microgrid we are aiming for. In this layer, homes from neighborhood have to be connected together, with transmission lines, insulated and underground to escape from inefficient transmission and energy losses. This way, we will keep all the advantages of the microgrid system.




Figure 1. Representation of structure of decentralized energy network

Setup of microgrids in border regions using experience from pilot program

Second Artsakh War increased the need of secure energy infrastructure in the border regions. We can use the experience and knowledge gained from the pilot program in Yerevan to implement such systems in regions with minimal time and financial losses. The main difference between a pilot program for Yerevan and in regions is that, system in Yerevan was user based giving people access to the network, enabling them to sell and buy electricity. However, in border regions such infrastructure is a strategical feature and should be implemented without p2p network in order to be more secure and steady as well as avoiding additional unnecessary time losses during development. Creating microgrids in border regions will create an infrastructure hard to completely shut off by enemy, thus creating an important strategical advantage.

Conclusion

As a conclusion for this paper, implementation of decentralized energy networks for Armenia is great choice, solving both strategical and economical factors. We discussed different implementations of decentralization in energy sector, researched overall energy state in Armenia and developed a pilot p2p energy sharing program for Yerevan. The pilot program can later be modified and implemented in border regions to create a strategical advantage. Main modification of pilot program required for the

transition of the system to border region is that in such regions p2p network with secure contracts are redundant.

References

- Adriana ALEXANDRU, Victor VEVERA, Ella Magdalena CIUPERCĂ National Security and Critical Infrastructure Protection [Journal] // National Institute for Research and Development in Informatics. - 2019.
- Agency International Renewable Energy Peer to Peer Electricity Trading [Article]. - 2020.
- Amelang Sören Start-up Lumenaza enables disruptive power trading [Journal]. - 2019.
- Armenia plans to extend operations at Metsamor unit [Online] // World Nuclear News. - 2021. www.world-nuclear-news.org/Articles/Armenia-plans-to-extend-operations-at-Metsamor-uni.
- Average Monthly Hours of Suncshine In Yerevan, Armenia [Online] // Weather and Climate. - 2021. - <https://weather-and-climate.com/average-monthly-hours-Sunshine,yerevan,Armenia>.
- Brooklyn Microgrid Brooklyn Microgrid - About Us [Journal]. - 2020.
- Council Yerevan Elders' Yerevan Sustainable Energy Action Plan [Book Section]. Yer.: 2016.
- Douglas J. Arent, Alison Wise, Rachel Gelman The status and prospects of renewable energy for combating global warming [Journal]. - [s.l.] : Energy Economics, 2011.
- Dylan Yaga, Peter Mell, Nik Roby, Karen Scarfone Blockchain Technology Overview [Book]. - [s.l.] : Natinal Institute of Standards and Technology, 2018.
- Emir ALIBAŠIĆ, Boris Fažo, Ivica PETROVIĆ A New Approach to Calculating Electrical Energy Losses on Power Lines with a New Improved Three-Mode Method [Journal]. - 2019.
- Galstyan Areg Energy Strategy of Armenia, Accomplishments, Next Steps [Report]. - Yerevan : [s.n.], 2014.
- Government Decision of RA N 48 2021 The RoA Energy Sector Development Strategic Program to 2040 [Report]. - 2021.
- Mario Pichler, Marcus Meisel, Andrija Goranovic Decentralized Energy Networks based on Blockchain: [Journal]. - 2018.
- Nakamoto Satoshi Bitcoin: A Peer-to-Peer Electronic Cash System [Report]. - 2009.
- Nations United SDG 7 Indicators [Online] // Sustainable Development Goals. - <https://sdgs.un.org/goals/goal7>.
- Powerledger Powerledger - About Us [Journal]. 2020.
- Richard Schmalensee, Vladimir Bulovic The Future of Solar Energy [Report]. [s.l.]: MIT, 2015.

Margarita YEGHIAZARYAN, Hovhannes ZOHRABYAN, Stepan YAYLOYAN
Implementation of Decentralized Energy Networks in Armenia

Key words: Decentralized Energy Networks, Power Grids, Renewable Energy, Solar Energy

Energy, gas and water infrastructures are key strategical components for country's security and protection as well as nominal social functioning (Adriana ALEXANDRU, Victor VEVERA, Ella Magdalena CIUPERCĂ, 2019). Modern rise of urbanization rises problems that have to be solved with a solid understanding of building principles of sustainable cities. Moreover, Armenia faces national security issues, as it is located in an unstable region where the economic and political interests of the superpowers collide as well as continuing war in Artsakh. This indicates that, Armenia needs energy infrastructure which has power sources non-dependent on the neighbor countries as well as is better secured, which became more relevant problem after Second Artsakh War.

Маргарита ЕГИАЗАРЯН, Оганнес ЗОГРАБЯН, Степан ЯЙЛОЯН
Внедрение децентрализованных энергетических сетей в Армении

Ключевые слова: Децентрализованные энергетические сети, электрические сети, возобновляемые источники энергии, солнечная энергия

В качестве заключения данного исследования было выведено, что применение децентрализованных энергосетей в Армении является отличным выбором, решающим и для стратегических, и для экономических факторов. Мы обсудили различные типы применения децентрализации в энергетическом секторе, исследовали общее состояние энергетики в Армении и разработали P2P пилотную программу энергоснабжения для Еревана. Пилотная программа в дальнейшем может быть модифицирована и применена в приграничных регионах.

Մարգարիտա Եղիազարյան, Հովհաննես ԶՈՐԱԲՅԱՆ, Ստեփան ԵԱՅԼՈՅԱՆ

Հայաստանում ապակենտրոնացված էներգետիկ ցանցերի կիրառման հիմնախնդիրները

Բանալի բառեր. ապակենտրոնացված էներգետիկ ցանցեր, էլեկտրացանցեր, մաքուր էներգիայի աղբյուրներ, արեգակնային էներգիա

Տվյալ հետազոտությունը թույլ տվեց եզրակացնել, որ Հայաստանում ապակենտրոնացված էներգացանցերի գործարկումը գերազանց ընտրություն է, ինչը որոշիչ նշանակություն ունի թե՛ ռազմավարական, թե՛ տնտեսական գործոնների դիտանկյունից: Քննարկել ենք էներգետիկ սեկտորում ապակենտրոնացված ցանցերի տարբեր տեսակները, ինչպես նաև ուսումնասիրել ենք էներգետիկայի ընդհանուր վիճակը Հայաստանի Հանրապետությունում ինչի արդյունքում մշակել ենք պիլոտային P2P էներգամատակարարման ծրագիր Երևանի համար: Պիլոտային ծրագիրը կարող է հետագայում մոդիֆիկացվել և կիրառվել սահմանամերձ շրջաններում՝ ռազմավարական առավելություն ստեղծելու նպատակով:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԳԻ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ՌԻՍԿԵՐԸ

Սուրեն ՊՈՂՈՍՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, ԵՊՀ դոցենտ

Բանալի բառեր. տնտեսություն, ֆինանսական համակարգ, փոխազդեցություն, ֆինանսական հեղափոխություն, պանդեմիա

2008-2009թթ. գլոբալ ռեցեսիան և Covid-19-ի շոկը նորից օրակարգային դարձրեց տնտեսության հետ ֆինանսական համակարգի փոխազդեցության, ֆինանսական համակարգի կայունության հիմնահարցերը: Գլոբալ ռեցեսիայի և պանդեմիայի հաղթահարման պետությունների ջանքերը և նախնական արդյունքները վկայում են, որ ոչ այնքան կարևոր է ֆինանսական համակարգի կառուցվածքը՝ բանկային կամ ֆոնդային, որքան զարգացվածության աստիճանը, ինստիտուցիոնալ միջավայրը և նորամուծական ներուժը:

Ֆինանսական համակարգի և տնտեսության փոխազդեցության անգամ տեսական մասով, չնայած տասնամյակների դիսկուրսի, հարցերը ավելի շատ են, քան պատասխանները: Նորբեյյան մրցանակակիր, Մոդիլյանի-Միլլեր թեորեմի հեղինակ Մերտոն Միլլերը ժամանակին նկատել է. "գաղափարը, որ ֆինանսական շուկաները նպաստում են տնտեսական աճին չափազանց ակնհայտ է, որպեսզի այն լուրջ քննարկման առարկա դառնա"¹: Ռորերտ Լուկասը, նույնպես նորբեյյան մրցանակակիր, հակառակ տեսակետն է արտահայտում, որ տնտեսական զարգացման վրա ֆինանսական համակարգի ազդեցությունը խիստ գերազնահատված է, որ ֆինանսները չպետք է դիտարկել որպես տնտեսական աճի էական դետերմինանտ²:

Ֆինանսական համակարգի և ֆինանսական միջնորդության տնտեսական նշանակությունը հետազոտել են Ա. Պիգուն, Ե. Շոուն, Զ. Հարլին, Բ. Ֆրիդմանը, Հ. Պատրիկը և այլ հեղինակներ: Մասնավորապես նրանց կողմից առաջադրվել է շարքային ներդրողների համար նվազ ռիսկային՝ ֆինան-

¹ Stu Ross Levine FINANCE AND GROWTH: THEORY AND EVIDENCE

https://www.nber.org/system/files/working_papers/w10766/w10766.pdf p.1

² Lucas R. E. On the Mechanics of Economic Development. Journal of Monetary Economics, 1988, n 22, pp.3-42.

սական միջնորդների "երկրորդային պարտավորությունների" տեսությունը, ինչի շնորհիվ հնարավոր է դառնում տնտեսության մեջ լրացուցիչ խնայողությունների ներգրավումը և տնտեսական աճի ֆինանսավորումը: Ջգալի հետաքրքրություն է ներկայացնում նաև Վիլյամ Սիլբերի ֆինանսական նորամուծությունների հիփոթեզը, որը տարբերվում է Շումպետերի տեսությունից: Մասնավորապես Մոշե Բեն-Հորինի հետ համատեղ գրված հոդվածում "ֆինանսական ֆիրմայի" համար ֆինանսական նորամուծությունների, այդ թվում նոր գործիքների թողարկման հիմնական խթաններ են դիտարկվում շուկայական ուժերի և պետական կարգավորման սահմանափակումների հաղթահարումը: Որքան մեծ են արտաքին ճնշումները և ֆինանսական ֆիրմայի օգտակարության նվազումը, այնքան ուժգին կարող է լինել դրա հաղթահարման ինովացիոն ջանքերը¹: Նկատենք սակայն, որ Հայաստանի նման ինստիտուցիոնալ-ֆինանսական առումով թերզարգացած երկրներում, պետական կարգավորման խստացումները ավելի հաճախ հանգեցնում են սովետային ոլորտի ընդլայնմանը և սովետային տրանզակցիաների մեծացմանը: Ֆինանսական համակարգի և տնտեսության փոխազդեցության հիմնահարցի վերլուծության առումով չափազանց նշանակալից է Ռայմոնդ Գոլդսմիթի 1969թ. լույս տեսած "Ֆինանսական համակարգը և զարգացումը" աշխատությունը: Գոլդսմիթը գտնում էր, որ ֆինանսավորման ոլորտում առավել կարևոր հիմնախնդիրներից մեկը, եթե ոչ ամենակարևորը, ֆինանսական կառուցվածքի և զարգացման ազդեցություն է տնտեսական աճի վրա: Հետազոտելով 1860 թվականից մինչև 1963 թվականը 35 երկրների բանկային ոլորտի տվյալները, Գոլդսմիթը հանգեց այն եզրակացության, որ երկրների մեծ մասի դեպքում առկա է տնտեսական և ֆինանսական զարգացման զուգահեռականություն, որ տնտեսության աճի ավելի բարձր տեմպերը, ուղեկցվում են նաև ֆինանսական զարգացման ավելի բարձր տեմպերով: Գոլդսմիթը սակայն չի փորձել պատասխանել այն հարցի, թե կա արդյոք պատճառահետևանքային կապ ֆինանսական համակարգի և տնտեսական աճի միջև: Հավանաբար տվյալների բացակայության պատճառով նա չի դիտարկել նաև արժեթղթերի շուկաների ազդեցության հարցը²: 1980-1990-ական

¹Moshe Ben-Horin, William L. Silber Financial innovation: A Linear programming approach. Journal of Banking & Finance, February 1977, n 1(3), pp. 277-296.
<https://www.researchgate.net/publication/4776187>.

²GOLDSMITH R. Financial Structure and Development. Yale University Press. New Haven, 1969

թվականներին իրականացված հետազոտությունների մեծ մասի տեսադաշտում հետևյալ հարցերն էին.

1. Երկրների զարգացմանը զուգընթաց ինչպես են փոխազդում ազգային տնտեսական և ֆինանսական համակարգերը

2. Ընդհանուր ֆինանսական զարգացումը ազդում է արդյոք տնտեսական աճի վրա

3. Ինչպիսին է ֆինանսական համակարգի կառուցվածքի ազդեցությունը բիզնեսի կառավարման արդյունավետության և տնտեսական աճի վրա:

Տ. Բեկը, Ա. Դեմիրգուլ-Կունտը, Ռ. Լեվինը 1999թ. առաջին անգամ ստեղծեցին 150 երկրների 35 տարվա (1960-1995) ֆինանսական համակարգերի համադրելի տվյալների բազա: Այդ տվյալների վերլուծության հիման վրա նրանք ցույց տվեցին, որ բանկերը, ոչ բանկային ֆինանսական ինստիտուտները, բաժնետոմսերի շուկաները առավել զարգացած են հարուստ երկրներում, որ այս կամ այն երկրում հարստության աճի զուգընթաց զարգանում է և նրա ֆինանսական համակարգը: Եզրակացություններից մեկում ասվում է նաև, որ երկրների հարստացման զուգընթաց, բաժնետոմսերի շուկան՝ բանկային վարկերի շուկաների համեմատ, դառնում է ավելի աշխույժ և արդյունավետ: Աշխատությունում բացի երկրների ֆինանսական կառուցվածքի էվոլյուցիայի փաստաթղթավորումից, գնահատվում է ֆինանսական համակարգերի և իրավական, նորմատիվ, քաղաքական բնութագրիչների փոխկախվածությունը: Մասնավորապես նշվում է, որ ի տարբերություն քաղաքացիական իրավունքի երկրների ընդհանուր իրավունքի երկրներում ավելի լավ է պաշտպանված մինորիտար բաժնետերերի իրավունքները, առկա է հաշվապահական հաշվառման լավ համակարգ, պայմանագրերի կատարողականը ավելի բարձր է, ցածր է կոռուպցիայի մակարդակը և ավելի զարգացած են ֆոնդային շուկաները: 2008թ. նույն հեղինակները արդեն 1960-2007թթ. ընդգրկումով տվյալների բազայի թարմացված և ընդլայնված հրապարակման մեջ ևս, սերտ կապ են տեսնում երկրների հարստության և ֆինանսական համակարգերի զարգացվածության ու խորության միջև: Նշվում է, որ միջինից ցածր շնչային եկամուտ ունեցող երկրները գերազանցում են զարգացած երկրներին միայն դրամական փոխանցումներով և օժշորային ու

ներքին դեպոզիտների հարաբերակցությամբ¹: 1980-ական թվականներից ֆինանսական համակարգի և տնտեսության փոխազդեցությունը մտավ նոր՝ հետարդյունաբերական փուլ, ինչը ենթադրում է դրամական ռեսուրսների և դրանց շրջանառությունը ապահովող ֆինանսական ինստիտուտների ու ազգային ֆինանսական համակարգերի նկատմամբ որակապես նոր պահանջների ձևավորում:

2008-2009թթ. գլոբալ ռեցեսիան և COVID-19-ով պայմանավորված ճնշված մասնաճանաչումը, բացասական ազդեցություններով հանդերձ, սուկ արագացրին տնտեսությունների հետարդյունաբերականացումը և թվային տնտեսության փուլ թևակոխումը: Թվային տնտեսության համար բնութագրական է տնտեսության ոչ հիարխիկ-ցանցային կառուցվածքը, արժեքի ստեղծման միջնորդ օղակների բացառումը, կապիտալի բարձր մոբիլությունը և ստարտափ նախագծերին հակվածությունը, շուկայի թվային հարթակների և ծառայությունների աճը, թվային արժույթների կիրառումը:

1980-ականներից լուրջ փոփոխություններ են արձանագրվել նաև միջազգային ֆինանսական շուկաներում, ինչը հաճախ բնութագրվում է որպես համաշխարհային ֆինանսական հեղափոխություն: Համաշխարհային ֆինանսական համակարգի և ֆինանսական շուկաների վերջին տասնամյակների՝ ֆինանսական գլոբալացման, արժեթղթավորման, ֆինանսական ինժեներիայի միտումներին ավելացել են նորերը, որոնցից կարելի է առանձնացնել ապամիջնորդայնացումը (disintermediation) քրաուդֆանդինգը, ֆինանսների թվայնացումը և ֆինթեք-ի զարգացումը:

G-20-ի կողմից 2009թ. հիմնադրված Ֆինանսական կայունության խորհրդի (Financial Stability Board, FSB) "Ոչ բանկային ֆինանսական միջնորդության գլոբալ մոնիթորինգի մասին զեկույցում" (19 հունվարի 2020 թ.) 2018թ. ավարտին գլոբալ ֆինանսական ակտիվները կազմել են 378,9տրլն. դոլար: Տվյալները վերաբերում են 29 պետությունների (իրավաբեռնիների) ֆինանսական ակտիվներին, որոնց բաժին է ընկնում համաշխարհային ՀՆԱ-ի ավելի, քան 80%-ը:

¹http://documents1.worldbank.org/curated/en/916561468331178510/pdf/776350JRN020100itution_s0and0Markets.pdf

Աղյուսակ 1. Համաշխարհային ֆինանսական ակտիվների կառուցվածքը, 2018թ. ¹

	2018թ. տրլն. դոլար	Ֆին. ակտիվների կառուցվածքը,%	2018թ. աճը, %
Ընդհանուր ֆինանսական ակտիվներ	378,9	100	1,4
Կենտրոնական բանկեր	30,1	7,9	2,5
Բանկեր	147,9	39,0	2,8
Հանրային ֆինանսական ինստիտուտներ	17,3	4,6	3,2
Ոչ բանկային ֆինանսական ինստիտուտներ	183,7	48,5	-0,1

Աղյուսակի տվյալները վկայում են, որ ոչ բանկային ֆինանսական ակտիվները բաժինը՝ 183,7տրլն. դոլար, գերազանցում է բանկային ակտիվներին, թեև 2018թ. նկատվել է նվազում: Ոչ բանկային ակտիվները գերազանցապես ներկայացված են ապահովագրական ընկերությունների, կենսաթոշակային ֆոնդերի, ներդրումային ֆոնդերի ակտիվներով: Ֆինանսական դեզինտերմեդիացի ոչ ինստիտուցիոնալ դրսևորումներից է քրաուդֆանդինգը (crowdfunding): Այն մարդկանց համախմբված գործունեությունն է, որոնք, որպես կանոն, համացանցի միջոցով ինքնակամ միավորում են իրենց գումարները կամ այլ ռեսուրսներ, որպեսզի աջակցեն այլոց՝ սկսել որևէ գործունեություն: Այդ առումով քրաուդֆանդինգը ֆինանսական կոոպերացիայի թվային տարբերակ է:

Ֆինթեքը (fintech) տերմին է, որն օգտագործվում է ֆինանսական տեխնոլոգիաների ոլորտում գործող ընկերությունների նկարագրման համար: Այն վերաբերում է հիմնականում փոքր սկսնակ ընկերություններին, որոնք նորարարական տեխնոլոգիական լուծումներ են մշակում ֆինանսների ոլորտում: Սովորաբար առանձնացնում են ֆինթեք-ի հետևյալ սեգմենտները. թվային վճարումներ, այլընտրանքային ֆինանսավորում, այլընտրանքային վարկավորում, անձնական ֆինանսներ: Կանխատեսվում է, որ 2021թ. ֆինթեքի առավել զարգացած թվային վճարումների (digital payments) ոլորտում վճարում-

¹FSB Global Monitoring Report on Non-Bank Financial Intermediation 2019 19 January 2020. <https://www.fsb.org/wp-content/uploads/P190120.pdf#page=7> P.11 (21.04.2021)

ները կկազմի շուրջ 6,7տրլն. դոլար, ընդ որում 2,9տրիլյոն միայն Չինաստանում: 2021-2025թթ. կանխատեսվող 12% միջին տարեկան աճի դեպքում, 2025թ. թվային վճարումները կկազմի ավելի, քան 10,5տրլն. դոլար¹:

Ֆինանսական համակարգի և տնտեսության համեմատաբար նոր ուղղություն է հակաճգնաժամային փոխազդեցությունը: Զարգացած երկրների մեծ մասում այն ավելի հաճախ հանգում է բոլոր հնարավոր գործիքներով իրացվելիության նկատմամբ բնակչության, բիզնեսի և տնտեսության կարիքների բավարարմանը: Այսպես Covid-19 շոկի հետ կապված գործիքների բազմազանությունը հանգում է պետական ոլորտի ձեռնարկությունների ուղղակի ֆինանսավորումից, վարկերի պետական երաշխավորումից, համավարակից տուժած ոլորտների անմիջական աջակցությունից մինչև բնակչությանը միանվագ դրամական հատկացումները, բիզնեսին հարկային արձակուրդները, ոչ մեծ ձեռնարկություններին արտոնությունների տրամադրումը և այլը: Նախնական գնահատականների համաձայն պանդեմիայի ֆինանսատնտեսական հետևանքների դեմ պայքարելու համար կառավարությունները արդեն տրամադրել են 12 տրլն. դոլար, ընդ որում այդ ավելի, քան 50%-ը բաժին է ընկնում ԱՄՆ-ին և Եվրոմիությանը²: Միայն Գերմանիայում Բունդեստագի կողմից հաստատված պաշտոնական փաթեթը կազմում է 1,3 տրլն. եվրո: Ինչպես նկատում է Գերմանիայի ֆինանսների նախկին նախարար(2009-2017) Վոլֆգանգ Շոյբլեն Գերմանիայում առաջին անգամ պետական պարտքը աճում է վարկյանում ավելի, քան 10 000եվրո(11 900 դոլար), ավելի արագ, քան 2008-2009թթ գլոբալ ճգնաժամի ժամանակ: Շոյբլեն գտնում է, որ անգամ մաստրիխտի չափանիշների բավարարող, բարձր կայուն ֆինանսական համակարգ ունեցող Գերմանիայում կարող է առաջանալ “պարտքային պանդեմիայի” ռիսկ³:


2008-2009 թվականներից “քանակական մեղմացման” բազմատրիլյոն ֆինանսական ներարկումներով ռեկորդներ սահմանող ԱՄՆ-ի պարագայում

¹ Digital Payments Worldwide. <https://www.statista.com/outlook/dmo/fintech/digital-payments/worldwide> (15.04.2021)

² Let the great transition begin. Zia Khan and John McArthur Thursday, January 7, 2021 <https://www.brookings.edu/opinions/let-the-great-transition-begin/>

³ WOLFGANG SCHÄUBLE Are We Risking a Debt Pandemic? Apr 16, 2021 <https://www.project-syndicate.org/onpoint/debt-risks-inflation-and-loss-of-competitiveness-by-wolfgang-schauble-2021-04>

26.04.2021թ. դրությամբ, ազգային պարտքը 28,2 տրլն դոլար է կամ ՀՆԱ-ի 130,11%-ը: Համեմատության համար 2000թ. պարտք/ՀՆԱ-ն 58,21% էր ¹:



Պատկեր 1. ԱՄՆ ԴԴՀ հաշվեկշիռը 2020 մարտ- 2021 ապրիլ, տրլն. դոլար²:

Բ. Քլինթոնի վարչակարգում տնտեսական խորհրդատուների խորհրդի անդամ Նուրիել Ռուբինին և այլ տնտեսագետներ հետպանդեմիայի առանձնացնում են նաև սոցիալական բևեռացման խորացման ռիսկը, բարձր ինֆլացիայի վտանգը և բնականաբար ֆոնդային բորսաներում “ֆինանսական պղպաձանկերի” առաջացումը, հնարավոր նոր ճգնաժամային փլուզումը³:

2020թ. համավարակը և արցախյան պատերազմը հերթական անգամ ի ցույց դրեցին Հայաստանի տնտեսության հետամնաց ազրո-հումքային բնույթը, զարգացման ներուժի բացակայությունը, տնտեսության բարձրտեխնոլոգիական և զարգացման անվտանգային անհրաժեշտությունը: Տնտեսության վերափոխումը պահանջում է զգալի ֆինանսական ռեսուրսների ներգրավում, ինչը անհնար է առանց ֆինանսական համակարգի արմատական վերափոխման և մենաշնորհային բանկային մոդելից հրաժարման: 2021թ. ՀՀ վարկանիշ/ տո-կոսադրույք հարաբերակցության առումով եվրոպարտատմսերի հաջող տեղաբաշխումը և 750 000 մլն. դոլարի ներգրավումը փաստում է, որ խնդիրը ոչ թե ֆինանսների սղության, այլ ռազմավարական նպատակների, ֆինանսների արդյունավետության և հասցեականության մեջ է:

¹[https://www.usdebtclock.org\(26.04.2021\)](https://www.usdebtclock.org(26.04.2021))

² [www.statista.com/statistics/1121416/quantitative-easing-fed-balance-sheet-\(26.04.2021\)](http://www.statista.com/statistics/1121416/quantitative-easing-fed-balance-sheet-(26.04.2021))

³ N. Robini The COVID Bubble Mar 2, 2021 www.project-syndicate.org

Սուրեն ՊՈՂՈՍՅԱՆ

Ֆինանսական համակարգի և տնտեսության փոխազդեցության հիմքերը և հնարավոր ռիսկերը

Բանալի բառեր. տնտեսություն, ֆինանսական համակարգ, փոխազդեցություն, ֆինանսական հեղափոխություն, պանդեմիա

2008-2009թթ. գլոբալ ռեցեսիան և Covid-19-ի շոկը նորից օրակարգային դարձրեց տնտեսության հետ ֆինանսական համակարգի փոխազդեցության, ֆինանսական համակարգի կայունության հիմնահարցերը: Հակաճգնաժամային քաղաքականության նախնական արդյունքները վկայում են, որ ոչ այնքան կարևոր է ֆինանսական համակարգի կառուցվածքը՝ բանկային կամ ֆոնդային, որքան զարգացվածության աստիճանը, ինստիտուցիոնալ միջավայրը և նորամուծական ներուժը: Ակնհայտ է, որ Հայաստանի ֆինանսական համակարգը չի բավարարում այդ պահանջներին:

Сурен ПОГОСЯН

Основы взаимодействия финансовой системы и экономики и возможные риски

Ключевые слова: экономика, финансовая система, взаимодействие, финансовая революция, пандемия.

Глобальная рецессия 2008-2009 гг. и шок Covid-19 вернул на повестку дня вопросы взаимодействия финансовой системы с экономикой, стабильности финансовой системы. Предварительные итоги антикризисной политики показывают, что важна не столько структура финансовой системы - банковская или фондовая, сколько уровень развития, институциональная среда, инновационный потенциал. Очевидно, что финансовая система Армении не отвечает этим требованиям.

Suren POGHOSYAN

The basics of interaction between the financial system and the economy and possible risks

Key words: Economy, financial system, interaction, financial revolution, pandemic

2008-2009 the global recession և the Covid-19 shock brought back to the agenda the issues of financial system interaction with the economy, financial system stability. The preliminary results of the anti-crisis policy show that it is not so much the structure of the financial system - banking or stock, but the level of development, institutional environment, and innovation potential that is important. It is obvious that the financial system of Armenia does not meet these requirements.

ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ

Աշոտ ԶԱԼԻՅԱՆ

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ՀՀ ՊԿԱ պատվավոր պրոֆեսոր

Բանալի բառեր. պետական ծառայող, «մասնագիտական կրթություն», մեթոդ, «մասնագիտական դաստիարակություն», ուսուցում, մասնագիտական զարգացում, մշակույթ, պրեֆեսիոնալ(մասնագիտական) զարգացում, միջազգային փորձ, սկզբունք

Բաժին I. Պետական ծառայողների մասնագիտական դաստիարակության սկզբունքների, գործընթացի բնույթի ու կառուցվածքի շուրջ

Պետական ծառայողների մասնագիտական դաստիարակության գործընթացն այսօր՝ նորացվող աշխարհում հանդես է գալիս առաջնային տեղում: Հաշվի առնելով պետական կառավարման գործընթացների նկատմամբ աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները և պետական ծառայողների մասնագիտական դաստիարակությանը ներկայացվող նորովի պահանջները, մեզ մոտ ծնվեց այս աշխատանքի ներկայացման գաղափարը:

Պետական ծառայողների մասնագիտական դաստիարակության գործընթացում նորագույն տեխնոլոգիաների պարտադրված կիրառման անհրաժեշտությունը, նոր սերնդի դասընթացավարների՝ «պատրաստողների» ձևավորման խիստ կարևոր և արմատավորվող անհրաժեշտությունն արդեն կայացած փաստ է: Երբ աշխարհը, ուզի թե չուզի, անցում է կատարում դաստիարակության հեռավար(ինտերակտիվ) ձևերին, երբ՝ ցավոք սրտի, կրճատվում է մարդկային ուղղակի շփումը «դաստիարակողի» և ունկնդիրների միջև, գտնում ենք, որ կարևոր է ներկայացնել (հիշեցման կարգով) պատմությամբ և պրակտիկ կյանքում փորձարկված այն մեթոդները, որոնց կիրառումը նոր սերնդի դասընթացավարների հնարավորություն կտա ապահովել պետական ծառայողների մասնագիտական արդյունավետ դաստիարակությունը: Աշխատանքում ներկայացվում են այն մոտեցումներն ու սկզբունքները, որոնք հիմնված են մարդկության գիտական մտքի վրա և վաղուց արդեն փորձարկվել են կիրառական պրակտիկայում: Կարծում ենք, որ մարդկային կյանքի և պետության կենսագործունեության ցանկացած իրավիճակում և պայմաններում դաստիարակության գործը պետք է իրականացվի հիմնարար սկզբունքներով ու մեթոդներով, որոնք շարադրված են բազմաթիվ մասնագիտական աշխա-

տություններում: Սույն աշխատանքը չի հավակնում լինել միակ հնարավոր և ամբողջական ճշմարտություն:

Առաջին հայացքից թվում է, որ «մասնագիտական կրթության» և «մասնագիտական դաստիարակության» հասկացությունների բովանդակության միջև տարբերություն չկա: Սակայն դա առաջին հայացքից է, քանի որ աշխարհն արդեն իսկ տարանջատում է «նեղ» մասնագիտական պատրաստվածության բովանդակությունը(էությունը)՝ մասնագիտական առարկաների ուսուցումը քննարկվող խնդրից, որը դիտարկում է անձի՝ իր կողմից մասնագիտական պատրաստվածության գիտելիքահենք կարողությունների – կյանքի կոչման գաղափարա-արժեքային հմտություններն ու մոտեցումները:

Մասնագիտական դաստիարակությունն անձի՝ ինքնուրույն և կամավոր ընտրած մասնագիտությամբ գործունեության գաղափարա-արժեքային սկզբունքներով պատրաստմանն ուղղված գործընթաց է: Մասնագիտական դաստիարակության նպատակները բազմաթիվ են, սակայն իրենց հիմքում դրանք ունեն համընդհանուր եզրեր, ինչպես, օրինակ՝

• մասնագիտական իդեալներին (կատարելատիպերի, մտատիպարների) և արժեքներին տիրապետում,

• հոգևոր հարստացում, հոգևոր մոտիվացիայի և հետաքրքրությունների ընդլայնում,

• բարոյական և գեղագիտական զգացմունքների հարստացում,

• կիրառական հմտությունների ձևավորում, ինքնադրսևորման փորձի և սովորույթների բնազդորեն ընկալման զարգացում և այլն:

Մասնագիտական դաստիարակության կարևոր պայման է ոչ միայն որոշակի մասնագիտական գիտելիքներին և հմտություններին տիրապետումը, այլև մարդու (պետական ծառայողի) անձնային կողմնորոշվածությունը: Մասնագիտական դաստիարակության գործընթացը զուգորդվում է մշակութա-մարդաբանական մոտեցման հետ:

Պետական ծառայողների մասնագիտական դաստիարակության հիմնական բաղադրիչներից են, օրինակ՝

1. Ապագա մասնագետի (պետծառայողի) հոգևոր մշակույթը, այդ թվում՝

✓ **Զգացմունքային (հուզական) դաստիարակությունը**, որը ներառում է անձի անհատական հատկությունների(օրինակ, հոգևոր ոգևորվածության, կարեկցանքի, բարեգթության, անկեղծության, ազնվության, զսպվածության և այլնի) ձևավորումը:

✓ **Էկոլոգիական (բնապահպանական) դաստիարակությունը**, որն ուղղված է բնապահպանական մտածողության և բնության մեջ վարքի հմտությունների, բնության պահպանության և պաշտպանության ցանկության ձևավորմանը:

2. Քաղաքացիական և ազգային դաստիարակությունը, այդ թվում՝

✓ հայրենիքի և նրա պատմության հանդեպ հարգանքի և սիրո դաստիարակումը,

✓ սեփական ժողովրդի պատմության, լեզվի, ավանդույթների նկատմամբ հարգանքի և սիրո դաստիարակումը,

✓ երկրի օրենքների, մարդու իրավունքների և անձի ազատությունների պահպանման նկատմամբ գիտակցական վերաբերմունքի ձևավորումը,

✓ ակտիվ քաղաքացիական դիրքորոշման զարգացումը,

✓ նոր պայմաններին հարմարվելու ունակության ձևավորումը:

3. Ներկայիս և ապագա պետժառայողի բարոյա-գեղագիտական մշակույթի դաստիարակությունը, այդ թվում՝

✓ հոգևոր արժեքների, իմաստասիրության, նրբանկատության, ներդաշնակության մշակույթի որակի ձևավորումը,

✓ անձի, գեղագիտական իդեալների ու վարքի հատկությունների ձևավորումը,

✓ պետժառայողի մասնագիտական էթիկայի (վարվելակերպի, վարվելակարգի) ձևավորումը:

Ներկայիս և ապագա պետժառայողի «մասնագիտական մշակույթը» փոխկապակցված է կրթական և մասնագիտական գործունեության հետ: Պետժառայողի կողմից մասնագիտական մշակույթին տիրապետելու համար անհրաժեշտ են մասնագիտական գիտելիքներ, որոնց կարևոր բաղադրիչներն են անձի մտահորիզոնի և աշխարհայացքի, ինտելեկտուալիզմի¹ և

¹ Փիլիսոփայական իդեալիստական ուսմունք է, որն առաջին պլան է մղում մտքի՝ ինտելեկտի միջոցով ճանաչողությունը և այն տարանջատում է զգայական ճանաչողությունից ու պրակտիկայից:

մասնագիտական համոզմունքների ընդլայնումը: Անձի (պետծառայողի) մասնագիտական որակները սովորաբար ներկայացվում են այնպիսի հատկություններով, ինչպիսիք են կոմպետենտությունը¹, պրոֆեսիոնալ (մասնագիտական) հմտությունը², կիրառման մշակույթը, պատասխանատվությունը, ինքնակրթությունը և այլն: Այսպիսով, մասնագիտական դաստիարակությունը բաղկացած է բաղադրիչների համադրությունից, որոնցից յուրաքանչյուրը կարևոր է պետական ծառայողի անհատականության ձևավորման և դաստիարակության համար:

Պետական ծառայողի պրոֆեսիոնալ (մասնագիտական) դաստիարակության սկզբունքները

Պետական ծառայողի պրոֆեսիոնալ (մասնագիտական) դաստիարակության սկզբունքներն այն հիմնարար գաղափարներ են, որոնց վրա հիմնվում են դաստիարակման գործընթացի բոլոր մասնակիցները: Մասնագիտական դաստիարակության նպատակները դառնում են հասանելի, երբ կազմակերպվող դաստիարակության գործընթացը հիմնվում է որոշակի սկզբունքների վրա՝

✓ **Սոցիալական կողմնորոշման սկզբունքը**, որն ենթադրում է ունկրնդրի գործունեության սոցիալական ակտիվության զարգացում: Սոցիալական կողմնորոշման սկզբունքը հիմնված է հասարակության և ընդհանուր առմամբ՝ պետության զարգացման ռազմավարության վրա: Այն նպատակ ունի բավարարել պետական համակարգի՝ պետծառայողներով հագեցման պահանջը (կարիքը):

✓ **Մասնագիտական դաստիարակության հումանիստական կողմնորոշման սկզբունքը** ենթադրում է հարգանք յուրաքանչյուր ունկնդրի անձի և նրա մասնագիտական ընտրության նկատմամբ:

✓ **Մասնագիտական ուսուցման և դաստիարակության միասնության սկզբունքը** ենթադրում է դաստիարակության և ուսուցման գործընթացների միասնություն և փոխկապակցում. ցանկացած դաստիարակություն փոխկապակցված է ուսուցման (պատրաստման) հետ և՛ հիմնված է դրա վրա: Միա-

¹ Ձեռնհասություն, իրազեկություն, գիտակություն, իրավասություն, լիիրավություն:

² Գործնական հմտությունները ներառում են ճանաչողական, կազմակերպչական, հաղորդակցական և այլ բաղադրիչներ:

ժամանակ, ուսուցման գործընթացն անհրաժեշտություն ունի դաստիարակվածությամբ ամրապնդման:

✓ **Անհատական-անձնային կողմնորոշման սկզբունքը:** Դաստիարակման գործընթացը պետք է կողմնորոշված լինի յուրաքանչյուր ունկնդրի անհատական հնարավորությունների(ունակությունների և կարողությունների) և կարիքների վրա: Դրանից ելնելով՝ անհրաժեշտ է ընտրել կրթության առավել արդյունավետ մեթոդները, ձևերը և միջոցները՝ հիմք ընդունելով պատմության յուրաքանչյուր փուլում պետության և պետական կառավարման համակարգի զարգացման առանձնահատկությունները:

Մասնագիտական դաստիարակության մեթոդներն ու իրականացման եղանակները, դրանց դասակարգումը

Դաստիարակության մեթոդը՝ դաստիարակության խնդիրները լուծելու նպատակով դասընթացավարի («մանկավարժի») և ունկնդրի միջև մասնագիտական փոխգործակցությունն է: Դաստիարակության մեթոդը բաղկացած է իրականացման առանձին եղանակներից: Մեթոդի և իրականացման եղանակի միջև եղած սահմանը շարժունակ է. որոշակի պայմանների առկայության դեպքում մեթոդը կարող է վերածվել եղանակի, իսկ եղանակը՝ մեթոդի: Մեթոդը կրում է հիմնական բեռը, իսկ իրականացման եղանակը՝ օժանդակող:

Մեթոդների դասակարգումը ենթադրում է մեթոդի առանձնացում ըստ որոշակի չափանիշի: Դաստիարակության մեթոդների դասակարգումը հիմնված է մանկավարժական ներազդեցության բնույթի վրա: Ըստ այդ դասակարգման տարբերակվում են **համոզելու, պահանջելու, մարզելու, խրախուսելու մեթոդներ:**

Ինտելեկտուալ դասակարգումը հիմնված է անձնային հատկությունների վրա, որտեղ առանձնացվում է մեթոդների 2 խումբ.

1. **Հայացքներին, տեսակետներին, համոզմունքներին, շարժառիթներին, վարքագծի սովորույթներին ուղղված մեթոդներ**, որոնք հանդիսանում են դաստիարակության հիմնական մեթոդներ, որոնք ունեն որոշիչ դեր պետական պաշտոնյայի՝ որպես անձ դաստիարակության գործում(դրական օրինակ, խրախուսանք և այլն):

2. **Մեթոդներ, որոնք օգտագործվում են անձի անհատական կառուցվածքային բաղադրիչների շտկման և բարելավման համար:** Այս մեթոդներ

րի խումբը կատարում է կարգավորող և ուղղիչ դեր (հավանություն, քննադատում, վերահսկում և այլն):

Կախված ուղղվածությունից, համընդհանուր ընդունված **դասակարգմամբ** մեթոդների ամբողջ բազմազանությունը սովորաբար բաժանվում է 3 խմբի՝

I. Անհատի (պետծառայողի) գիտակցության ձևավորման մեթոդներ:

II. Գործունեության կազմակերպման և սոցիալական վարքի փորձի մեթոդները:

III. Գործունեության շահադրման և վարքագծի ձևավորման մեթոդներ:

Առանձին դիտարկենք վերը նշված մեթոդներից յուրաքանչյուրը:

I. Անհատի (պետծառայողի) գիտակցության ձևավորման մեթոդները

Ա) Համոզման մեթոդը տրամաբանական դատողության, մտքային եզրահանգման գործընթաց է՝ հիմնված գիտակցության և վարքի միասնության սկզբունքի վրա: Գիտակցությունը՝ որպես *գիտելիք*, որպես աշխարհի մասին գաղափարների համախումբ, որոշում է վարքը և ձևավորվում է դրանում:

Մեթոդը ենթադրում է «դաստիարակողի» կողմից որոշակի ծավալի տեղեկությունների տրամադրում և՛ ունկնդրի գիտակցված վերաբերմունք դրան կատարմամբ: Համոզման հիմնական նպատակը բարոյական գիտելիքների, գաղափարների, պատկերացումների, իդեալների(կատարելատիպերի, մտատիպարների) և զգացմունքների ձևավորումն է: Այն հիմնված է ունկնդիրների ինտելեկտի վրա, ներագրում է նրանց կյանքի փորձառության ձևավորման վրա, որի ընթացքում ունկնդիրները հասկանում, գնահատում և վերաիմաստավորում են իրենց տեսակետները, հայացքները, դիրքորոշումները: Համոզման մեթոդը հաճախ դառնում է ինքնահամոզման մեթոդ: Ունկնդիրների՝ արտաքին աշխարհի մասին հայացքների համակարգը ձևավորվում է դասախոսությունների, զրույցների, բանավեճերի և ներշնչման միջոցով:

Համոզումը սովորաբար լրացվում է **ներշնչմամբ**:

Բ) Ներշնչման մեթոդը՝ գիտակցության(զգացմունքների հուզական բաղադրիչի) վրա ազդելու մեթոդ է: Այն խոսքի, գործողությունների և արտահայտիչ շարժումների օգնությամբ կատարվող այնպիսի ներգործություն է, որը շրջանցելով ներշնչվողի գիտակցությունն ու կամքը՝ հանգեցնում է նրա համար ցանկալի գործողությունների, մտքերի, մտապատկերների և համոզմունքների առաջացման:

Ներշնչումն իրականացվում է ինչպես վերբալ¹, այնպես էլ ոչ վերբալ միջոցներով² (ինտոնացիա, դեմքի արտահայտություններ, ժեստեր): Ներշնչման հիմքում ընկած է վստահությունը և ստացվող տեղեկատվության նկատմամբ քննադատող վերաբերմունքի նվազեցումը: Պետք է հիշել, որ մատուցվող տեղեկատվությունը հիմնավոր ներառվում է մարդու գիտակցության մեջ:

Գ) Դրական (գովելի, ընդօրինակելի) օրինակի վրա դաստիարակման մեթոդը օգտագործվում է ունկնդիրների մոտ նրանց անձնային հատկությունների բարելավման կարիք առաջացնելու նպատակով: Դաստիարակման գործընթացում «դաստիարակողը» հիմնվում է գիտնականների, գրողների և հե-րոսների կատարած ցանկացած դրական օրինակների վրա: Օրինակների վը-րա դաստիարակության իրականացումը հիմնված է որևէ մարդու օրինակին՝ վարքին (շարժումներին, գործողություններին, կարողություններին) ի տեսելի վիճակում: Կամ պատմողական ձևով ներկայացումն է, որը մեծ նշանակություն ունի կողմնորոշման կազմակերպման գործում: Այս մեթոդի օգնությամբ դասընթացավարը («դաստիարակողը») կարող է առաջացնել դրական զգացմունքներ (կարեկցանք, հպարտություն), ինչպես նաև բացասական զգացողություններ (զայրույթ, ցասում): Պատմելու օգնությամբ բացահայտվում է բարոյական և գաղափարական նորմերի էությունը և իմաստը:

Ե) Զրույցի մեթոդը դաստիարակության երկխոսական՝ հարց ու պատասխանի մեթոդ է, որի նպատակն իրադարձությունների, հասարակական կյանքի երևույթների գնահատման մեջ ունկնդիրներին ներգրավելն է և, դրա հիման վրա որոշակի երևույթների, մարդկանց և նորմերի նկատմամբ նրանց մոտ դրական վերաբերմունքի ձևավորումն է: Զրույցի բովանդակությունը պետք է լինի համահունչ ունկնդրի ունեցած կյանքի և աշխատանքային փորձի, նրա գործունեության հետ:

Զ) Դասախոսության մեթոդը ենթադրում է սոցիալական, քաղաքական և այլ բովանդակության որոշակի խնդրի էության պատկերավոր նկարագրություն: Միջնադարյան ավանդական դասախոսության կառուցվածքը բաղկա-

¹ Վերբալ հաղորդակցությունը հնչյունների և/կամ բառերի միջոցով գրավոր կամ բանավոր ինքնարտահայտվելու կարողությունն է:

² Ոչ վերբալ հաղորդակցությունը ոչ-լեզվական՝ տեսողական, լսողական, հոտառական, շոշափողական, ֆիզիկական և այլ ազդանշանների միջոցով տեղեկատվության փոխանցման գործընթացն է:

ցած էր չորս մասից: Առաջին մասը ներառում էր դասախոսի կողմից դասընթացի՝ մատուցվող նյութի բարձրաձայն ընթերցանությունը: Դրան հաջորդում էր քննարկման ենթակա տեքստի պարզ մակարդակով վերլուծումը (*divisio textus*¹). Այնուհետև տեղի է ունենում խնդրի լուծման համար ներկայացվող առաջարկությունների քննարկում: Վերջին մասը նվիրվում էր իրական կամ մտացածին բանավեճի միջոցով ներկայացված նյութի հատկապես կարևոր կողմերին²:

Է) Բանավեճի մեթոդը (*լատ. Discussio՝ քննարկում*) խնդրի քննարկումն է, որն ուղղված է ճշմարտությանը հասնելուն՝ ճշմարտությունը վեր հանելուն:

Քննարկման կարևոր բնութագիրը **փաստարկելիությունն** է: Վիճահարույց խնդիր քննարկելիս յուրաքանչյուր կողմ, ընդդիմանալով արտահայտված կարծիքին, փաստարկում է իր դիրքորոշումը: Այս մեթոդի կիրառման նախապայմանը որոշակի հարցերում այլընտրանքային տեսակետների առկայության ապահովումն է:

II. Գործունեության կազմակերպման և սոցիալական վարքի փորձի կուտակման դաստիարակման մեթոդներ

Գործունեության կազմակերպման և սոցիալական վարքի փորձի կուտակման դաստիարակման մեթոդներից են.

Ա) Ընտելացման (վարժեցման) մեթոդը, որի նպատակը բազմակի կրկնօրինակվող գործողությունների միջոցով հմտությունների, ճիշտ վարքի, դրական սովորությունների զարգացումն է: Ընտելացումը, ըստ էության, վարքի սովորական ձևերի վերածման նպատակով գործողությունների կանոնավոր կատարման կազմակերպումն է:

Բ) Վարժանքի մեթոդը որոշակի գործողությունների և արարքների բազմակի կրկնությունն է՝ դրանք սովորության մակարդակի հասցնելու նպատակով: Միևնույն և միանման գործողությունների կրկնությունը պայմաններ է ստեղծում ճիշտ սովորություններ ձևավորելու համար: Լայն իմաստով՝ դա սոցիալական չափանիշներին համապատասխան գործողությունների իրակա-

¹ Տրամասություն (անգլ.՝ discourse, ֆր.՝ discours, բացի տրամասություն տերմինից հայերենում օգտագործվում են նաև քննախոսություն կամ խոսույթ բառերերը) ընդհանուր իմաստով նշանակում է հաղորդակցության գործընթաց կամ խոսքային գործողություն:

² Kenny A., Pinborg J. Medieval philosophical literature // The Cambridge History of Later Medieval Philosophy. — Cambridge University Press, 1982.

նացման և արարքների համար պայմաններ ստեղծող կյանքի և գործունեության կազմակերպումն է:

Գ) Դաստիարակող իրավիճակների մեթոդը բնական կամ միտումնավոր ստեղծված վիճակ(իրավիճակ, միջավայր) է, որում ունկնդիրները պարտավորված են գործել որոշակի ձևով:

Դ) Հանձնարարությունների մեթոդը որոշակի սոցիալական և/կամ պետական նշանակության՝ նախապես ձևակերպված աշխատանքների իրականացման և արդյունքների համար պատասխանատվության ենթարկելու նպատակով ունկնդիրին որոշակի գործառույթների լիազորումն է:

III. Գործունեության իրականացմանը շահադրդելու և հարաբերությունները խթանելու մեթոդները

Պետական ծառայողի **ակտիվության խթանման** մեթոդների նպատակը այնպիսի պայմանների ստեղծումն է, երբ յուրաքանչյուր ունկնդիր ձգտում է ցույց տալ իր կարողություններն ու ունակությունները, հասնել առավել բարձր արդյունքների, քան՝ մյուսները: Այս մեթոդները արտացոլում են գործունեության անհրաժեշտության կարիքա-խթանող(մոտիվացիոն, շահադրդող) բաղադրիչները՝ արարքին հավանություն տալը կամ դատապարտելը, որոնցով ձևավորվում է վարքը(վարքագիծը): Այս մեթոդների հոգեբանական հիմքը հանդիսանում են ունկնդրի ապրումները¹, ինքնագնահատումը, արարքի ընկալումը: Այս մեթոդների խումբը ներառում է՝

¹ «Սուբյեկտիվ երևույթ, գիտակցության հատկանիշ հանդիսացող արտացոլման հոգեբանական ձև», «Սուբյեկտի կողմից զգացմունքային ցանկացած վիճակ և իրականության ընկալում, որն ուղղակիորեն հանում է իր մտքում», «Հույզերով ուղեկցվող զգացողություն», «Գիտակցված զգացմունքային հուզական վիճակ, որն առաջանում է նշանակալից օբյեկտիվ իրադարձության արդյունքում», «Մարդու մարմնի արձագանքը արտաքին կամ ներքին գրգիռներին» և այլն:// Այս մասին առավել մանրամասն տես Ֆ.Ե.Վասիլյուկի, Ռ.Ս.Նեմովի, Մ.Ի.Դյաչոնկոյի, Լ.Ա.Կանդիբովիչի, Լ.Մ.Վեկերի և այլոց աշխատություններում: Տես նաև՝ 14th TEPE (Teacher Education Policy in Europe) Annual Conference on Sustainability and Ethics in Teacher Education and Education Policy. Faculty of Educational Sciences of the University of Helsinki held. May 13-15. 2020. Erika Löfström, Hannele Niemi.; Research on Study Abroad, Mobility, and Student Exchange in Comparative Education Scholarship. Bernhard T.Streitwieser. 2012.; Todd Giedt., Gigi Gokcek, Jayati Ghosh. International Education in the 21st Century: The Importance of Faculty in Developing Study Abroad Research Opportunities.// The Interdisciplinary Journal of Study Abroad. Volume XXVI, Fall 2015.; A. Tamas. Advantages of study abroad from the students' perspective.// International Journal of Teaching and Education Vol. II (No. 4) // www.iises.net/download/Soubory/IJOTE/V2N4/pp67-88_ijoteV2N4.pdf

Ա) Պարթեզը՝ բացասական գնահատման արտահայտություն է, վարքի սոցիալական նորմերին հակասող գործողությունների և արարքների դատապարտումն է, որն էլ ստիպում է ունկնդրին գործել ընդունված նորմերին համապատասխան: Այս մեթոդը շտկում է պահվածքը, հնարավորություն տալիս հասկանալ թույլ տված սխալն ու դրա տեղը, առաջացնում է մեղքի, ամոթի, անհանգստության, դժգոհության զգացում: Այս ամենը նպաստում է վարքի դրական փոփոխությանը: Մեթոդի կիրառումը (պատիժը) պետք է լինի արժանի և ունկնդրի գործողությունների անխուսափելի հետևանք: Այն չպետք է կրի հաճախակի բնույթ, հակառակ դեպքում այն կկորցնի իր դաստիարակչական ուժը. անհրաժեշտ է պահպանել պատժի կիրառման չափի զգացումը:

Բ) Խրախուսելը՝ մարդու կամ մարդկանց խմբի որակների, գործողությունների ճանաչման, վարքի դրական հավանությանն արժանացնելու արտահայտումն է: Այն առաջացնում է բավարարվածության զգացում, ինքնավրստահություն, խթանում է ունկնդրին բարելավել իր պահվածքը և վարքը: Խրախուսանքը ամրապնդում է դրական սովորությունները և հմտությունները, առաջացնում է դրական հույզեր, վստահություն է ներշնչում սեփական ուժերին: Խրախուսման ձևերի շարքում կարելի է ընդգծել գովասանքը, երախտագիտությունը, պարգևատրումը: Այս մեթոդը հանդիսանում է պատժի համակարգը հավասարակշռող մեթոդ:

Գ) Մրցակցության մեթոդը հիմնվում է ունկնդիրների առաջնորդության ձգտման վրա, թույլ է տալիս ձևավորել մրցակցությանը պատրաստ անհատականություն: Մրցակցությունը կարող է տեղի ունենալ աշխատանքի նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքում, արտաքին տեսքում, կարգապահությունում և այլն: Մրցակցություն չի կարելի անցկացնել ուսման առաջադիմության բնագավառում՝ ուսանողների ուսման ունակությունները համեմատելու տեսքով, քանի որ յուրաքանչյուրն ունի իրեն հատուկ ունակություններ:

ԲԱԺԻՆ II. Անձի (պետծառայողի) «բազային կուլտուրան (մշակույթը)», դրա հիմնական բաղադրիչների շուրջ

Անձի «բազային կուլտուրան» (մշակույթը) հասարակության կողմից ընդունված անձի հոգևոր, բարոյա-էթիկական և վարքի իրավական նորմերի էտալոնն¹ է: Անձի «բազային կուլտուրան(մշակույթը)» արտահայտում է մար-

¹ Ստանդարտ, համեմատության չափանիշ:

դու զարգացման և ինքնադրսևորման(ինքնիրացման) մակարդակը, վերաբերմունքը շրջապատի հանդեպ:

Կոմպիտենցիան¹ դա անձնային հատկություններն ու վերաբերմունքն է, որոնք արտահայտում են այս կամ այն ոլոտում մարդու գործունեության ունակությունները:

Անձի «բազային կուլտուրայի»(մշակույթի) դաստիարակության բաղկացուցիչներից են.

- ✓ քաղաքացիական և հայրենասիրական,
- ✓ բարոյական,
- ✓ մտավոր աշխատանքի և գիտական աշխարհայացքի,
- ✓ աշխատանքային և մասնագիտական գործունեության,
- ✓ էկոլոգիական,
- ✓ իրավագիտակցության և հակակոռուպցիոն և այլն:

Ա) Անձի քաղաքացիական կերպարի(քաղաքացիականության) և հայրենասիրական դաստիարակությունը.

Քաղաքացիականության և հայրենասիրության դաստիարակությունը՝ մարդու մեջ բարձր հայրենասիրական գիտակցության, հայրենիքի հանդեպ հավատարմության զգացմունքի և քաղաքացիական պարտքի վեհ գաղափարների ձևավորումն ու արմատավորումն է:

Քաղաքացիականությունն ու հայրենասիրությունը ներառում են փոխշաղկապված այնպիսի բարոյական զգացմունքներ և վարքագիծ, ինչպիսիք են սերը հայրենիքի նկատմամբ, սեփական ժողովրդի և ազգի ավանդույթներին հետևելն ու դրանց զարգացումը, հարազատ երկրի ավանդույթների հարգումն ու ամրապնդումը, խիզախությունը, այլ երկրների ու ժողովուրդների մշակութային ավանդույթների հարգումը և այլն:

Հայ ազգի և ժողովրդի համար քաղաքացիականությունը, դա՝

✓ հայ հասարակության նպատակային գաղափարների համակարգի միջոցով ազգային ինքնագիտակցության, քաղաքացիական պարտքի, արժա-

¹ Տերմինն օգտագործվում է ՀՀ օրենսդրության մեջ: Տես, օրինակ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, հ. 18:

նապատվության, պատասխանատվության, սոցիալական ակտիվության ձեվավորվածությունն է,

✓ իրավունքների և պատասխանատվության իրացման միջոցներին, իրավական մշակույթի հիմունքներին, զարգացման «**հայկական մոդելի**» առաջնահերթություններին տիրապետելը,

✓ քաղաքացիական, քաղաքական, սոցիալ-տնտեսական և իրավական գիտելիքների անհրաժեշտ և բավարար մակարդակով տիրապետումն ու դրանց իրացման աստիճանը:

Քաղաքացիականության դաստիարակման կարևորագույն նպատակներից մեկը՝ անձի մեջ կարգապահության դաստիարակումն է: Բնականաբար, անձի կայացվածությունն իր հերթին, որոշվում է հասարակության իրավական, քաղաքական, բարոյական կուլտուրայի(մշակույթի) մակարդակով:

Բ) Բարոյական դաստիարակությունը մարդու էության վրա անընդհատ դաստիարակող ներազդեցության իրականացումն է, ուղղված բարոյական որակների՝ հումանիզմի¹, պատասխանատվության, վարքի բարձր մշակույթի ձևավորմանը, համամարդկային արժեքների ընկալմանն ու դրանց պահպանման ձգտմանը, գիտական աշխարհայացքի կայունության ամրապլնդմանը և այլն: Մարդու բարոյական կայացման բարձրագույն մակարդակի ապահովման համար նրա վարքի հիմքում մշտապես պետք է ընկած լինեն «**որն է ճիշտ և ինչը՝ սխալ**» բարոյական նորմերի մասին գիտելիքներին տիրապետումը:

Գ) Անձի մտավոր աշխատանքի և գիտական աշխարհայացքի դաստիարակում

Անձի մտավոր աշխատանքի մշակույթի ձևավորումը(դաստիարակումը) ընդհանուր առմամբ նպատակաուղղված է անձի ճանաչողական կարիքների և հետաքրքրությունների բավարարմանը՝ ինքնակատարելագործմանը:

¹ Հումանիզմը՝ 1) ուրիշներին ուղղված բարոյական որակն է, բնութագրում է մարդու՝ այլ մարդկանց հետ իր անմիջական հարաբերություններում իրացվող հատուկ աշխարհայացքը, 2) աշխարհընկալումը, այլ մարդու՝ որպես հասարակության մեկ այլ հավասար անդամի նկատմամբ հարգանքը, ընկերասիրությունն ու բարիկամեցողությունը, օգնելու պատրաստակամությունը, 3) հանդուրժողականությունն և մեծահոգությունը, այլ անձի թույլ կողմերը, դժվարությունները հասկանալու ունակությունն է:

Մտավոր դաստիարակությունն ուղղված է անհատի մտավոր (ինտելեկտուալ¹) մշակույթի, ճանաչողական դրդապատճառներին, մտավոր ուժի, մտածելակերպի զարգացմանը: Այն իրականացվում է աշխարհայացքի ձևավորման հետ սերտ միասնության մեջ և պետք է լուծի այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են, օրինակ, գիտելիքների ձևավորումը՝ որպես մտավոր աճի պայման, մտավոր հմտությունների տիրապետումը, գիտական աշխարհայացքի ձևավորումը և այլն:

Մեկնարկային հայեցակարգային հարցը «ինտելեկտուալ» հասկացության բովանդակության հստակեցումն է, քանի որ ինտելեկտուալի դերում կարող է միաժամանակ հանդես գալ ցանկացած՝ որոշակի «*էթնիկ, կենսակերպ, փիլիսոփայություն, մասնագիտական զբաղմունք ունեցող*» անձ (պետական ծառայող, վարձու աշխատող, հասարակական-քաղաքական գործիչ, ձեռներեց, և այլն): Պարզ է, որ ինտելեկտուալիզմը դուրս է գալիս գիտականության սահմաններից:

Ինտելեկտուալ մշակույթը բովանդակային առումով բարդ հասկացություն է: Դարաշրջանի մտավոր մշակույթը բազմաշերտ է: Այն և «էլիտար» և մասնագիտական մշակույթն է, հասարակության տարբեր մակարդակներում տեղ գտած գաղափարները: Ինտելեկտուալ մշակույթը բաղկացած է առաջնային միջոցներից՝ մտածողության, ընթերցանության, գրելու և խոսելու ձևերը ներառող հաղորդակցման լեզուներից և միջոցներից: Մտավոր մշակույթն

¹ Ինտելեկտ (լատ.՝ intellectus - զգայություն, ընկալում, ըմբռնում, հասկացում, ողջամտություն), հոգեկանի հատկություն, որը հնարավորություն է տալիս հարմարվել նոր իրադրություններին, սովորել փորձի հիման վրա, հասկանալ և կիրառել վերացական հայեցակարգերը, սեփական գիտելիքներն օգտագործել շրջապատող միջավայրը ղեկավարելու համար: Ինտելեկտը անձի՝ դժվարությունները ճանաչելու և հաղթահարելու ընդհանուր կարողությունն է: Այն միավորում է անձի իմացական գործընթացները՝ զգայությունն, ընկալումը, հիշողությունը, մտածողությունը, երևակայությունը:// Տես աղբյուրները՝ Большой латинско-русский словарь. Vocablarivm latinorvssicvm magnvm. Encyclopaedia Britannica; Г. Азимов, А. И. Щукин. Словарь методических терминов, 2002.; Марков А. Эволюция человека. Обезьяны, нейроны, душа. М.:Астрель. 2011.; Хокинс Д., Блейкли С. Об интеллекте. М.:ООО "И. Д. Вильямс, 2007.; Рамачандран В. С. Рождение разума. Загадки нашего сознания. М.: ЗАО «Олимп-Бизнес», 2006.; Кандель Э. В поисках памяти. Возникновение новой науки о человеческой психике. М.:Астрель. 2012.; Еремин А. Л. Ноогенез и теория интеллекта — Краснодар: СовКуб, 2005.; Gottfredson L. S. Mainstream Science on Intelligence // Wall Street Journal. December 13, 1994..

ունի հաղորդակցական բնույթ, իսկ դրա առավել արտահայտման ձևը նրա «սոցիալական շրջանառությունն»¹ է:

Յուրաքանչյուր դարաշրջանում, հասարակության գոյության պայմանների փոփոխմանը զուգահեռ, յուրահատուկ ձևերով են բացահայտվում մարդու բնույթն ու հնարավորությունները², արտաքին աշխարհի հետ նրա հարաբերությունները, սոցիալական փոխազդեցությունները, արժեքային կողմնորոշումը, ճանաչողական առաջնահերթությունները, գերիշխող գաղափարները և մշակույթի զարգացման առաջատար միտումները:

Ինտելեկտուալ զարգացման հետ զուգահեռ և սերտ կապակցված ընթանում է մարդու **գիտական աշխարհայացքի** ձևավորման գործընթացը:

Աշխարհայացքը³ աշխարհի և նրանում իր ուրույն տեղի մասին մարդու հայացքների ամբողջական համակարգ է: Այն ներկայացնում է մարդու հասկացողությունն ու զգացմունքային գնահատումը, նրա գործունեության նշանակությունը, մարդկանց գիտա-փիլիսոփայական, քաղաքական, բարոյական համոզմունքների և իդեալների(պատկերակերպերի) համադրությունը: Աշխարհայացքի ձևավորման վրա ազդող գործոնների շարքին են դասվում, օրինակ, սոցիալ-տնտեսական միջավայրը, պետական քաղաքականությունը և գաղափարախոսությունը, գիտության, տեխնիկայի, կրթության, մշակույթի զարգացումը և այլն:

Դ) Անհատի աշխարհային և մասնագիտական գործունեության դաստիարակությունն ընդգրկում է դաստիարակության գործընթացի աշխատանքային գործողությունները, գործնական հարաբերությունները ձևավորող կողմերը: Դաստիարակության գործընթացում աշխատանքային գործունեությունը հանդես է գալիս և՛ որպես անձի զարգացման առաջատար գործոն, և՛ որպես աշխարհի ստեղծագործաբար տիրապետման ձև, և՛ որպես ընդհանուր կրթության անբաժանելի բաղադրիչ: Աշխատանքային և մասնագիտական դաստիարակության նպատակներից ու խնդիրներից են անձի զարգացումն ու աշխատանքային գործունեությանը նրան նախապատրաս-

¹ «Պատմական մշակույթ» հասկացության բովանդակության ըմբռնման ենթատեքստում տերմինը կիրառել է բրիտանացի պատմաբան Դ. Վուլֆը: // Stu` Woolf D. The Social Circulation of the Past: English Historical Culture 1500– 1730. Oxford, 2003.

² Stu` Кошелева О. Е. Понятие «человек эпохи Просвещения» как историографический конструкт // Историк в меняющемся пространстве российской культуры. Челябинск, 2006.

տումը (կատարելագործումը), աշխատանքային գործունեության նկատմամբ բարեխիղճ, պատասխանատու և ստեղծագործական վերաբերմունքը, **մասնագիտական փորձի կուրսակումը՝ որպես մարդու ամենակարևոր պարտականությունների կատարման պայման:**

Վերոնշյալ խնդիրները լուծելու համար օգտագործվում են տարբեր **մեթոդներ** և կիրառվում բազմաթիվ **միջոցներ**, օրինակ՝

✓ որոշակի գործառնություններ կատարելու համար աշխատանքային հմտությունների (ընթերցելու, միտքը շարադրելու, համակարգչային գիտելիքների և այլն) զարգացման համար մարզում,

✓ մասնագիտական գործունեության կազմակերպման տեխնոլոգիաների և մեթոդների ուսուցանում,

✓ վերահսկողություն ժամանակի և այլ ռեսուրսների ծախսման նկատմամբ,

✓ աշխատանքի արդյունքների հաշվառում և գնահատում (առաջադրանքի որակի, կատարման ժամկետների և ճշգրտության) և այլն:

Այս առումով կարևոր նշանակություն ունի ընտրած մասնագիտության նկատմամբ վստահության ամրապնդումը, որին կարելի է հասնել գիտելիքների խորացման և դաստիարակության միջոցով:

Մասնագիտական դաստիարակությունն օգնում է ընտրած մասնագիտության զարգացմանը, որի շարքում իրենց կարևոր տեղն ունեն կառուցվածքային այնպիսի **բաղադրիչներ**, ինչպիսիք են, օրինակ, մասնագիտական իրազեկումը (տեղեկացվածությունը), մասնագիտական նկարագրությունը, մասնագիտական խորհրդատվությունը, մասնագիտական հարմարեցվածությունը և այլն:

Մասնագիտական իրազեկումը (տեղեկացվածությունը) ունկնդրին զինում է ընտրած մասնագիտության սոցիալ-տնտեսական և հոգեբանական-ֆիզիոլոգիական պայմանների վերաբերյալ առաջնային գիտելիքներով և փորձով: Մասնագիտական կրթության վերջնական փուլում հիմնական ուշադրությունը սևեռվում է տվյալ ժամանակում առավելագույն անհրաժեշտություն ունեցող պետծառայողների վերապատրաստման խթանմանը:

Վերոնշյալի արդյունավետ իրականացման համար բացառիկ դեր ունի **մասնագիտության նկարագրությանը:** Մասնագիտության նկարագրությունը

նր որոշակի աշխատանքի տեսակի(մասնագիտության) համապարփակ, համակարգված, բազմակողմանի ներկայացումն է, որը պետք է ներառի մասնագիտության մասին հետևյալ տեղեկությունները.

1. տվյալ մասնագիտությամբ հնարավոր աշխատանքի հիմնական տեսակները,

2. ընդհանուր և հատուկ գիտելիքները, հմտությունները,

3. մտավոր և հոգեֆիզիոլոգիական գործընթացների առանձնահատկությունները (հիշողություն, ուշադրություն, մտածողություն, խոսք, հուզական-կամային ոլորտ, անհատական տիպաբանական հատկություններ, հոգնածություն, դիմացկունություն և այլն):

Ե) Անհատի էկոլոգիական մշակույթի դաստիարակելու նպատակը «էկոլոգիական անհատականության» ձևավորումն է: Էկոհամակարգային անձն ունի էկոկենտրոն (բնապահպանական) գիտակցության տեսակ, երբ՝

✓ մարդը հոգեբանորեն ներառվում է բնության աշխարհում,

✓ մարդը բնությունից մեկուսացված չէ, այլ հանդիսանում է բնապահպանական հարաբերությունների բարդ համակարգի տարրերից մեկը. նրա ցանկացած գործողություն կարող է ունենալ անկանխատեսելի՝ էկոհամակարգի հավասարակշռությունը խաթարող հետևանքներ: Էկոհամակարգային անհատը ձգտում է շրջակա միջավայրի նկատմամբ լինել զգույշ և չափավոր, քանի որ «բնություն ներված» մարդկային գործունեության թափոնները չեն անհետանում առանց հետքի, այլ այս կամ այլ կերպ վերադառնում են մարդուն և կործանարար ազդեցություն թողնում նրա օրգանիզմի վրա:

✓ «Բնության աշխարհը» ոչ միայն նյութական ռեսուրսների աղբյուր է, այլև գործոն է մարդու անձնական և հոգևոր զարգացման համար:

Բնապահպանական դաստիարակության գլխավոր խնդիրն անհատի մեջ շրջակա միջավայրի գիտակցական ընկալման ձևավորումն է: Այս ընդհանուր խնդիրը կոնկրետացվում է բնապահպանական դաստիարակության երեք հիմնական խնդիրների մակարդակում.

1) Բնապահպանական պատկերացումների ձևավորում, ինչը հնարավորություն է տալիս մարդուն իմանալ, թե ինչ է կատարվում «բնության աշխարհում», մարդու և բնության միջև, և ինչպես պետք է վարվել շրջակա միջավայրի նպատակահարմարության տեսանկյունից:

2) Բնության նկատմամբ համապատասխան վերաբերմունքի դաստիարակում, ինչը որոշում է բնության հետ փոխգործակցության նպատակների բնույթը, դրա դրդապատճառները, այս կամ այն վարքային ռազմավարությունը ընտրելու պատրաստակամությունը, այլ կերպ ասած, խթանում է շրջակա միջավայրի նպատակահարմարության տեսանկյունից գործելը:

3) Բնության հետ փոխգործակցության ունակությունների և հմտությունների (տեխնոլոգիաների) համակարգի ձևավորում. հասկացողությունն ու ձգտումը բավարար չեն, եթե նա չկարողանա դրանք իրականացնել իր գործողությունների համակարգում:

2) Իրավագիտակցության և հակակոռուպցիոն դաստիարակություն

Դաստիարակությունը հանդիսանում է անկյունաքար կոռուպցիայի դեմ պայքարի գործում: Անհրաժեշտ է մշտապես դաստիարակել և հասարակության մեջ ամրապնդել անկաշառության մշակույթը, խթանել ազնվության, ինքնատիրապետման և պետական կարգապահության ոգու հաստատումը պետական ծառայողների մտածողության մեջ:

Օրենսդրության կոլեկտիվ ուսումնասիրության մշտական կազմակերպումը առաջնային դեր է խաղում ամբողջ հասարակության և հատկապես՝ պետծառայողների իրավական իրազեկման բարձրացման գործում, ամրապնդում է քաղաքացիների իրավագիտակցությունը: Պետծառայողները նախ պետք է դաստիարակվեն ամբողջականության ոգով՝ նախքան իրենց պաշտոնները ստանձնելը:

Վերոգրյալի կազմակերպված իրականացման մեջ իր կարևորագույն տեղն ու դերը ունի **հաղորդակցությունը**, ինչը հանդիսանում է մարդու պոտենցիալ հնարավորությունների իրացման և ողջ հոգեկան ոլորտի զարգացման «միջանցիկ մեխանիզմ»: Հաղորդակցությունն էական ազդեցություն է ունենում հոգեբանական գործընթացների և վիճակների վրա. բարելավվում է տեղեկատվության ընդունումն ու վերարտադրությունը, ավելանում է մտածողության ակտիվությունը, ձևավորվում են ավելի հզոր ընդհանրացումներ, ձեվավորվում են մարդուն հատուկ հույզեր և այլն: Գրականության մեջ¹ հաղոր-

¹ Т.Белоусова. Этикет. Полный свод правил светского и делового общения. Как вести себя в привычных и нестандартных ситуациях. -2013г.; Е.Ильин. Психология делового общения. - 2017г.; О.Давтян. Этикет делового письма. – 2017г.; И.Мельников. Кадровик: психологические тесты для тестирования кандидатов. – 2012г.; О.Давтян, И. Арцишевский.

դակցությունը(շփումները) սահմանվում է որպես անհատի սոցիալական զարգացման և դրա արդյունավետ գործունեության միջոց և պայման և դիտարկվում է որպես՝

- մարդու զարգացման հիմնական պայման,
- անհատականության զարգացման կարևորագույն գործոն,
- մարդկային գործունեության հիմնական տեսակներից մեկը, որն ուղղված է այլ մարդկանց միջոցով ինքն իրեն ճանաչելուն և գնահատելուն,
- մարդու կյանքի հիմնական պայմանը և հիմնական եղանակը,
- մարդկանց փոխգործակցությունը, որոնք ուղղված են համակարգված և միասնական ջանքերով ընդհանուր արդյունքի հասնելուն:

Մարդկանց հաղորդակցության ընթացքում զարգացող հարաբերությունները դառնում են ինքնաճանաչման կարևորագույն գործիք: Շփումների անհրաժեշտությունը բխում է մարդու՝ այլ մարդկանց իմանալու և գնահատելու ցանկությունից և, նրանց միջոցով և նրանց օգնությամբ՝ ինքնաճանաչման և ինքնագնահատման: Մարդիկ իրենց և մյուսների մասին **իմանում** են կենսագործունեության տարբեր տեսակների շնորհիվ, քանի որ մարդը դրսևորվում է դրանցից յուրաքանչյուրում և դրա իրականացման ընթացքում:

ԲԱԺԻՆ III. Պատրաստողի (մանկավարժի) մասնագիտական զարգացման մակարդակները. հմտություն, վարպետություն, ստեղծագործականություն, նորարարություն

Մանկավարժական գործունեության տիրապետումը կարող է ունենալ տարբեր մակարդակներ: Կա պարզապես **հմուտ ուսուցիչ**, որը պարզապես դաստիարակում և ուսուցանում է մասնագիտական պարզագույն մակարդակով, և կա ուսուցիչ, որը ցույց է տալիս մանկավարժական հմտություններ ու

Согласно протоколу. 2015г.; Г. Обухова, Г. Климова. Риторика и культура делового общения как элемент успеха в условиях XXI века. Овладение необходимыми коммуникативными умениями при работе с людьми (практические рекомендации). 2019г.; Майкл Соренсен. Услышать и понять. 2017г.; Рональд Майерс. Виртуозное лидерство: как создать собственный репертуар лидерских стилей. 2018г.; James M Wilce. Culture and Communication: An Introduction. 2017.; Tony Schirato, Susan Yell. Communication and Culture. 2000.; (Л.С. Выготский, 1934; М.И. Лисина, 1997; Д.Б. Эльконин, 1971) (А.И. Кулак, 1985;Б.Ф. Ломов, 1975) (А.А. Бодалев, 1983; Е.Д. Божович, 2000; Д. Мацумото, 2002 и др) (Л.М. Шипицына, О.В. Заширинская, А.П.Воронова, Т.А.Нилова, 2003) М.И.Лисина (1986); Е.О. Смирнова, (Бодалев А.А. 2002, Горелов И.Н., Седов К.Ф., 2001) Исследователи Н.И. Лепская 1997; М.И. Лисина 1986; А.Г.Рузская 1986; Е.О.Смирнова 2002; Л.М. Шипицына, О.В. Заширинская, А.П.Воронова, Т.А.Нилова, 2003; А.Г. Арушанова, 1999; М.А. Панфилова, 2000 և այլն:

վարպետություն՝ դրանով իսկ իր աշխատանքում հասնում է բարձր արդյունքների: Շատ ուսուցիչներ, բացի վարպետությունից, ցույց են տալիս մանկավարժական ստեղծագործականություն և իրենց մոտեցումներով հարստացնում ուսուցման և դաստիարակության մեթոդիկան: Կան նաև մանկավարժ-նորարարներ, ովքեր իրականացնում են իրական մանկավարժական «հայտնագործություններ», նոր ուղիներ են բացահայտում դաստիարակության և ուսուցման մեջ, հարստացնում են մանկավարժական տեսությունը:

Մանկավարժական հմտությունը պատրաստողի (մանկավարժի) արհեստավարժության հիմքն է, առանց որի անհնար է աշխատել: Ուսուցչի նրման արհեստավարժությունն իր մեջ ներառում է առարկայի մանրակրկիտ իմացությունը, հոգեբանական և մանկավարժական տեսության խորը տիրապետումը, դաստիարակության և ուսուցման հմտությունների համակարգը և զարգացած մասնագիտական և անձնական հատկությունները և որակները, որոնք էլ թույլ են տալիս իրականացնել ուսուցումն ու դաստիարակությունը: Այն հիմնված է բավարար տեսական և գործնական պատրաստության վրա:

Պատրաստողի (մանկավարժի) մասնագիտական աճի հաջորդ քայլը **մանկավարժական վարպետությունն** է: Այն ուսուցչի կրթա-դաստիարակչական գործունեության որակական բնութագիրն է, որը դրսևորվում է գործնականում հոգեբանական և մանկավարժական տեսության կիրառման մեթոդների և տեխնիկայի հատուկ կիրառմամբ՝ ապահովելով ուսումնա-դաստիարակչական գործընթացի բարձր արդյունավետությունը: Սովորական մանկավարժական հմտությունից վարպետությունը տարբերվում է նրանով, որ դա նրա ավելի կատարյալ մակարդակն է, օգտագործվող մեթոդների բարձր կատարելությունը, և հաճախ՝ դրանց յուրահատուկ համադրությունը: Իհարկե, մանկավարժական հմտություններ զարգացնելու համար ուսուցիչը պետք է ունենա անհրաժեշտ ներազդող ձայն, լսողություն, արտաքին հմայք և այլն:

Մանկավարժական ստեղծագործականություն: «Ստեղծագործություն» հասկացությունը կապված է «նոր մշակութային և նյութական արժեքների» ստեղծման հետ՝ աշխատանքի և զբաղմունքի տարբեր ոլորտներում ինքնուրույն ստեղծագործական գործունեության հետ: Մանկավարժական ստեղծագործականությունը պարունակում է նորոյթի որոշակի տարրեր, բայց ա-

մենից հաճախ այս նորույթը ասոցացվում է ոչ այնքան դասավանդման և դաստիարակության նոր գաղափարների և սկզբունքների առաջխաղացման հետ, որքան ուսման-դաստիարակչական աշխատանքի մեթոդների փոփոխության, դրանց արդիականացման հետ: Այս առումով այն նման է ռացիոնալացմանը, ինչը տարածված է արտադրության մեջ: Ռացիոնալիզատորը չի ստեղծում արմատապես նոր բան, այլ միայն բարելավում է առկա տեխնոլոգիան և դրանով իսկ դրսևորում է նոր տեսակի ստեղծագործականություն: Այն բնութագրվում է ուսումնա-դաստիարակչական գործունեության մեջ որոշակի մեթոդական փոփոխությունների ներդրմամբ, դասավանդման և կրթության մեթոդների և տեխնիկայի ռացիոնալիզացիայով:

Պատրաստողի (մանկավարժի) մասնագիտական գործունեության բարձրագույն մակարդակը «մանկավարժական նորարարությունն» է, որը գալիս է լատ. novator, որը նշանակում է նորարարացնող, անձ, ով գործունեության որոշակի ոլորտում ներկայացնում և իրականացնում է նոր, առաջադեմ սկզբունքներ, գաղափարներ և տեխնիկա: Սահմանումը օրգանապես ներառում է ուսուցման և դաստիարակության գործընթացում նոր, առաջադեմ գաղափարների, սկզբունքների, տեխնիկայի ներդրում, էապես փոփոխում և բարելավում դրանց որակը: *Օրինակ՝ ուսանողների «ստեղծագործական առաջադրանքների հանձնարարման» եղանակը: Դրա էությունն այն է, որ ուսուցիչը ուսանողներին տալիս է (իմ օրինակով) բազմազան ստեղծագործական առաջադրանքներ տարբեր թեմաներով ... ինձ նման ...* Այս առաջադրանքների կատարումը կամավոր բնույթ է կրում, և յուրաքանչյուր ուսանող ընտրում է իր համար առաջադրանք՝ իր հակումների համաձայն: Զբաղվելով առաջադրանքով, նրանք աստիճանաբար որոշում են իրենց հետաքրքրությունը, զարգացնում են իրենց ունակություններն ու տաղանդները: Յուրաքանչյուր ուսանողի համար կազմվում է «Ստեղծագործական գիրք», որում գրանցվում է ավարտված աշխատանքը, և որով քիչ թե շատ հավանական է դատել նրանց հակումներն ու ստեղծագործական հակումները և հետագա աշխատանքներ իրականացնել դրանց զարգացման ուղղությամբ: Գնահատվում է կեցվածքը, խոսելու և արտահայտվելու ձևը, առոգանությունը, լսարանը «տանելու-գերելու» ունակությունը և այլն... Այս տեխնիկան իսկապես նորարարական է և լրջորեն փոխում է դասավանդման տեխնոլոգիան:

Աշոտ ԶԱԼԻՆՅԱՆ

Պետական ծառայողների մասնագիտական դաստիարակության շուրջ

Բանալի բառեր. պետական ծառայող, «մասնագիտական կրթություն», «մասնագիտական դաստիարակություն», ուսուցում, մասնագիտական զարգացում, մշակույթ, պրեֆեսիոնալ(մասնագիտական) զարգացում, միջազգային փորձ, մեթոդ, սկզբունք:

Աշխատանքում քննարկվում են պետական ծառայողների մասնագիտական դաստիարակության գործընթացի, «մասնագիտական կրթության» և «մասնագիտական դաստիարակության» հասկացությունների բովանդակային, դաստիարակության ու ուսուցման գործընթացների ամբողջական ցիկլի առանձնահատկությունները, մեթոդներն ու սկզբունքները: Ուսումնասիրվել են պետծառայողի գիտակցության ձևավորման մեթոդները, անձի (պետծառայողի) «բազային կուլտուրան(մշակույթը)» և դրա հիմնական բաղադրիչները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել դաստիարակության գործում այն իրականացնող մասնագետներին ներկայացվող պահանջներին, դաստիարակողի մասնագիտական

Ашот ЗАЛИНЯН

О профессиональном воспитании государственных служащих.

Ключевые слова: воспитание, обучение, образование, государственный служащий, профессиональное развитие, непрерывное повышение квалификации, международный опыт, методика, педагогика

В статье рассматриваются особенности, методы и принципы полного цикла процесса профессионального образования государственных служащих, содержание понятий «профессиональное образование» и «профессиональное воспитание». Изучены методы формирования сознания государственного служащего, «культурный базис» человека (государственного служащего), основные ее составляющие. Особое внимание было уделено требованиям к специалистам, реализующим его в сфере образования, анализу уровней профессионального развития педагога.

Ashot ZALINYAN

About professional education of public servants.

Key words: upbringing, training, education, government, civil servant, professional development, continuous professional development, international experience, methodology

The article examines the features, methods and principles of the full cycle of the process of vocational education of civil servants, the content of the concepts of "vocational education". The methods of forming the consciousness of a civil servant, the "cultural basis" of a person (a civil servant). Particular attention was paid to the requirements for specialists who implement it in the field of education, the analysis of the levels of professional development of the teacher.

Օգտագործված գրականություն

1. Новиков А.Н. Основания педагогики. М.: Эгвес, 2010.
2. Дарья Димке. «Памяти павших будьте достойны»: практики построения личности в утопических сообществах»// «Социология власти». 2014. № 4.
3. Уильям Крэйн. Теории развития человека. Прайм-Еврознак, 2007.
4. Уильям Крэйн. "Психология развития человека". Санкт-Пет.: Прайм-Еврознак, 2007
5. Жетонная система как метод работы с несовершенно. осуждёнными. Wilds Journal. 2016 г.
6. Гавров С. Н., Микляева Ю. В., Лопатина О. Г. Воспитание как антропологический феномен. Учебное пособие. М.: Форум, 2011.
7. Бронфенбреннер, Ури Детство, которое мы потеряли . В У.Бронфенбреннер "Два мира - два детства. Дети в США и в СССР", 1976 г.
8. Эллиот Аронсон. Общественное животное. Введение в социальную психологию. Психология-лучшее. Санкт-Петербург: Прайм-Еврознак, 2007.
9. Kenny A., Pinborg J. Medieval philosophical literature // The Cambridge History of Later Medieval Philosophy. Cambridge University Press, 1982.
10. 14th TEPE (Teacher Education Policy in Europe) Annual Conference on Sustainability and Ethics in Teacher Education and Education Policy. Faculty of Educational Sciences of the University of Helsinki held. May 13-15. 2020. Erika Löfström, Hannele Niemi.
11. Research on Study Abroad, Mobility, and Student Exchange in Comparative Education Scholarship. Bernhard T. Streitwieser. 2012.
12. Todd Giedt., Gigi Gokcek, Jayati Ghosh. International Education in the 21st Century: The Importance of Faculty in Developing Study Abroad Research Opportunities. The Interdisciplinary Journal of Study Abroad. Volume XXVI, Fall 2015.
13. A.Tamas. Advantages of study abroad from the students' perspective.// International Journal of Teaching and Education Vol. II (No. 4)
www.iises.net/download/Soubory/IJOTE/V2N4/pp67-88_ijoteV2N4.pdf
14. Марков А. Эволюция человека. Обезьяны, нейроны, душа. М.:Астрель. 2011.
15. Хокинс Д., Блейкли С. Об интеллекте. М.:ООО "И. Д. Вильямс, 2007.
16. Рамачандран В. С. Рождение разума. Загадки нашего сознания. М.: ЗАО «Олимп-Бизнес», 2006.
17. Кандель Э. В поисках памяти. Возникновение новой науки о человеческой психике. М.:Астрель. 2012.
18. Еремин А. Л. Ноогенез и теория интеллекта Краснодар: СовКуб, 2005.;
19. Gottfredson L. S. Mainstream Science on Intelligence Wall Street Journal. Dec. 13, 1994..
20. Т.Белоусова. Этикет. Полный свод правил светского и делового общения. Как вести себя в привычных и нестандартных ситуациях. 2013г.
21. Г. Обухова, Г. Климова. Риторика и культура делового общения как элемент успеха в условиях XXI века. Овладение необходимыми коммуникативными умениями при работе с людьми (практические рекомендации). 2019г.
22. Майкл Соренсен. Услышать и понять. 2017г.
23. Рональд Майерс. Виртуозное лидерство: как создать собственный репертуар лидерских стилей. 2018г.

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Կարեն ՍԱՐՈՅԱՆ

ՀՀ ՊԿԱ ասպիրանտ

Բանալի բառեր. տնտեսական աճ, աճի գործոններ, գյուղատնտեսություն, արտադրություն, ՀՆԱ

Տնտեսական աճը պետությունների զարգացման պատմության մեջ ունեցել է կարևորագույն դեր՝ իր ազդեցությունը թողնելով ինչպես տնտեսական հարաբերությունների կազմակերպման, այնպես էլ երկրներում բնակչության կենսամակարդակի վրա: Տնտեսագիտական գրականության մեջ՝ որպես տնտեսական աճի շարժիչ ուժեր, ամենահաճախը դիտարկվում են արտադրական գործոնների (աշխատանք, կապիտալ) արդյունավետ օգտագործումը և արտադրության մեջ տեխնոլոգիական առաջընթացը: Առավելապես առաջին բաղադրիչի վրա շեշտված արտադրությամբ տնտեսական աճի ռազմավարությունը, ըստ ժամանակակից ընկալման, «բիրտ ուժով» ձեռքբերված տնտեսական աճն է, որը որակապես ստորադասելի է տեխնոլոգիական փոփոխությունների ընդունմամբ ձեռք բերված տնտեսական աճին: Հայտնի տնտեսագետ-տեսաբան Ռոբերտ Սոլոուն 1950-ականներին ցույց տվեց, որ ԱՄՆ-ում և այլ արդյունաբերական երկրներում տեխնոլոգիական նորամուծություններն (ինովացիաները) առավել կարևոր դեր ունեն արտադրության ծավալների մեծացման գործում, քան վերոնշյալ «բիրտ ուժով»՝ օգտագործվող ռեսուրսների գերօգտագործումը¹: Մինչ օրս տնտեսական աճի ապահովման մեջ տեխնոլոգիական առաջընթացի դերը շարունակում է մնալ տնտեսագիտության ուշադրության կենտրոնում:

Տնտեսական աճի գիտական մոտեցմամբ ուսումնասիրության առաջամարտիկներից է ֆրանսիացի տնտեսագետ Ֆրանսուա Քենեն, ով իր հայտնի «Տնտեսական աղյուսակում» ցույց տվեց տնտեսության կազմակերպման իր տեսլականը՝ մեծ կարևորություն վերագրելով տնտեսական մրցակցությանը և տնտեսական գործակալների համագործակցությանը: Ըստ Քենեի մոդելի՝

¹ Baumol W.J., Litan R.E., Schramm C.J., Good Capitalism, Bad Capitalism, and the Economics of Growth and Prosperity Yale University Press, 2007, pp. 1-323

ագրարային հատվածում (սեկտորում) ձևավորված հավելյալ արժեքը հանդիսանում է համախառն պահանջարկի վրա ազդող որոշիչ ուժ և տեխնոլոգիական նորամուծությունները, որոնք արվում են այդ վերջին հատվածում, հանդիսանում են տնտեսական աճի սնուցիչը:

Հետագայում Ադամ Սմիթն իր «Ազգերի հարստություն» աշխատությունում մերժեց ագրարային հատվածի ունեցած նշանակության բացառիկությունը՝ շեշտը դնելով արտադրությանը մասնակից աշխատուժի վրա՝ համարելով, որ և՛ գյուղատնտեսական, և՛ արտադրական հատվածներն ունեն բացառիկ կարևորություն ամբողջական պահանջարկի ձևավորման վրա: Ի հավելում դրան, Սմիթը նշեց, որ առկա է դրական կապվածություն տնտեսության տարբեր հատվածների մեջ և մեկի ընդլայնումը տանում է մյուսի ընդլայնմանը և հակառակը¹: Սմիթի տեսության մեջ տնտեսական աճի մեկ այլ կարևոր գործոն է համարվում կապիտալի կուտակումը, որը միտված է խթանել շուկայի ընդլայնումը, երբ ներդրումներն ուղղվում են տնտեսության առավել արգասաբեր ճյուղեր: Սմիթը տնտեսական աճի ապահովման գործում նաև կարևորում էր ազատ առևտրի դերը՝ շեշտելով, որ ֆիրմաները և երկրները կշահեն այն ապրանքների արտադրությունից և վաճառքից, որոնց արտադրության մեջ ունեն բացարձակ առավելություն:

Անգլիացի հոգևորական և տնտեսագետ Թոմաս Մալթուսը համարում էր, որ տնտեսության արդյունաբերական հատվածում գործում է աճող, իսկ գյուղատնտեսությունում՝ նվազող արտադրողականության օրենքը՝ համարելով, որ նման տարբերության պատճառը տեխնոլոգիական առաջընթացի առկայությունն է տնտեսության առաջին հատվածում և դրա բացակայությունը՝ երկրորդում: Մալթուսը տնտեսական աճի կարևոր գործոններից էր համարում կապիտալի կուտակումը և արդյունավետ համախառն պահանջարկը: Նա նշում էր, որ միայն բնակչության աճը չի կարող հանգեցնել տնտեսական աճի և որ վերջինիս համար անհրաժեշտ է ծավալել այնպիսի տնտեսական քաղաքականություն, որը կբարձրացնի արդյունավետ պահանջարկի մակարդակը: Անգլիացի մեկ այլ խոշոր տնտեսագետ Դավիդ Ռիկարդոն, ևս հիմք ընդունելով գյուղատնտեսական ոլորտում արտադրողականության նվազման օրենքը, նշում էր, որ երկարաժամկետ հատվածում գյուղատնտեսական ապ-

¹ Vaggi G., Groenewegen P., A Concise History of Economic Thought: From Mercantilism to Monetarism, Palgrave Macmillan UK, April 29, 2014, Pages 339

րանքների գները կաճեն, ինչը կհանգեցնի աշխատավարձի միջին մակարդակի բարձրացմանը՝ բարձրացնելով աշխատողների կենսամակարդակը, և շահույթի մարժան կմոտեցնի գրոյի արդյունաբերական հատվածում: Ռիկարդոն շեշտում էր, որ պետությունը պետք է ուշադրությունը բևեռի այնպիսի ներդրումների կատարմանը, որոնք միտված են խթանել կապիտալի կուտակումը տնտեսության մեջ: Ինչպես Սմիթը և Մալթուսը, տնտեսության արդյունավետ (էֆեկտիվ) կազմակերպման գործում Ռիկարդոն ևս մեծ դեր էր հատկացնում տեխնոլոգիական առաջընթացի գործոնին:

Անցյալ դարի 50-ական թվականներից քննարկման լայն առարկա դարձավ տնտեսական զարգացման վերաբերյալ այն տեսակետը, որ վերջինս իրենից ենթադրում է տնտեսական աճի որակապես տարբեր փուլերի հաջորդականություն, որով բոլոր երկրներն անհրաժեշտաբար պետք է անցնեն: Նմանատիպ մոտեցման ջատագովներից էր հայտնի տնտեսագետ Ուոլտ Ռոստոուն, ըստ որի՝ տնտեսությունների թերզարգացած վիճակից դեպի զարգացած վիճակի անցումն իրենից ենթադրում է հենց այդպիսի փուլերի հաջորդականություն¹: Տնտեսական մեխանիզմները, որոնց շնորհիվ ներդրումների աճող ծավալները հանգեցնում են տնտեսական ավելի մեծ չափերի աճի, իրենց նկարագրումը գտան Հարոդ-Դոմարի մոդելում, որտեղ առանձնացված են տնտեսական աճի երեք տարբեր մակարդակներ՝

1) փաստացի աճի մակարդակ. սա երկրում ՀՆԱ-ի իրական աճի մակարդակն է,

2) երաշխավորված աճի մակարդակ. սա աճի այն մակարդակն է, երբ տնտեսությունում ողջ խնայողություններն ուղղվում են դեպի ներդրումները,

3) բնական աճի մակարդակ. սա աճի այն մակարդակն է, որն անհրաժեշտ է լրիվ զբաղվածություն ապահովելու համար: Օրինակ՝ եթե աշխատուժն աճում է տարեկան 5%-ով, ապա լրիվ զբաղվածություն ապահովելու համար անհրաժեշտ է ապահովել տարեկան 5% տնտեսական աճ: Այս պայմաններում կատարված ներդրումները հանգեցնում են տնտեսության մեջ կապիտալի կուտակման, ինչն էլ իր հերթին ապահովում է տնտեսական աճ: Հարոդ-Դոմարի մոդելում ենթադրվում է, որ բնական աճի պայմաններում **ներդրված կապիտալ/համախառն արտադրանք** հարաբերակցությունը

¹ Todaro M. P., Smith S. C., Economic Development 11th Edition, Prentice Hall, 2011, September 23, 801 pages

հաստատուն մեծություն է: Հետագայում Ռոբերտ Սոլոն իր մոդելում¹, ի հավելում Հարրոդ-Ռոմարի մոդելում դիտարկված կապիտալին, տնտեսական աճի գործոնների մեջ ներառեց նաև արտադրությանը մասնակից աշխատուժը և տեխնոլոգիական առաջընթացը: Ըստ Սոլոյի մոդելի՝ տնտեսական աճը հնարավոր է դառնում հետևալ գործոնների փոփոխությունների արդյունքում՝

- աշխատուժի քանակի և որակի (մասնագիտացման) բարձրացման,
- կապիտալի աճի (խնայման և ներդրման միջոցով),
- տեխնոլոգիական առաջընթացի:

Անցյալ դարի 60-ական թվականներից սկսեց զարգացում ստանալ տընտեսական աճի կառուցվածքային փոփոխությունների մոդելը (Structural-change theory), որը հիմնվում է այն հիպոթեզի վրա, որ որոշ տնտեսությունների թերզարգացվածքային հիմնական պատճառներից մեկն առկա ռեսուրսների թերօգտագործումն է, ինչը պայմանավորված է տնտեսությունում առկա կառուցվածքային և ինստիտուցիոնալ գործոններով²: Կառուցվածքային փոփոխությունների մոդելը շեշտադրում է այն մեխանիզմները, որոնք հրնարավորություն կտան արտադրության վեկտորը տնտեսական ավանդական ոլորտներից (օրինակ՝ գյուղատնտեսությունից) ուղղել դեպի ավելի նորարարական և բազմաճյուղ ոլորտներ (ծառայությունների ոլորտ և այլն): Ըստ մոդելի՝ տնտեսությունների զարգացման տեսլականը պետք է կառուցվի առաջնահերթությունը տալով հետևյալ կետերին՝

- կենսապահովման համար անհրաժեշտ ապրանքների և ծառայությունների հասանելիության մակարդակի բարձրացում,
- բարձր եկատումների և նոր աշխատատեղերի ապահովման հետ մեկտեղ, օրենքի գերակայության մթնոլորտի և մարդկային հիմնարար իրավունքների պաշտպանության ապահովում:

Կառուցվածքային փոփոխությունների մոդելի ամենահայտնի օրինակներից մեկը տնտեսագետ-տեսաբան Ուիլյամ Լյուիսի երկսեկտոր ավելցուկային աշխատուժի (Two-sector surplus labor) մոդելն է, ըստ որի գյուղատնտե-

¹ Solow R. M., A contribution to the theory of economic growth. Quarterly Journal of Economics, Vol. 70, No. 1, February 1956, pp. 65-94

² Todaro M. P., Smith S. C., Economic Development 11th Edition, Prentice Hall, 2011, September 23, 801 pages

սական ավանդական ոլորտում առկա ավելցուկային աշխատուժի հոսքը դեպի ժամանակակից արդյունաբերական հատված միտված է բարձրացնել տնտեսության արդյունաբերականացման մակարդակը՝ հանգեցնելով տնտեսական կայուն զարգացման ¹:

Տնտեսական աճի չափման ամենից կիրառելի ցուցիչը մինչ օրս համարվում է համախառն ներքին արդյունքի եռամսյակային կամ տարեկան իրական աճի մակարդակը: Վերջինին զուգահեռ նաև լայն կիրառություն ունի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի համապատասխան ցուցանիշը, ինչը հնարավորություն է տալիս ՀՆԱ-ի հաշվարկի համատեքստում չափելու մեկ շնչին բաժին ընկնող արտադրանքի ծավալը: Որպես երկրների տնտեսական բարեկեցության ամփոփ ցուցիչ, որոշակի կիրառություն ունի նաև Համախառն ազգային եկամրտի ցուցանիշը, որը հաշվարկվում է Համախառն ներքին արդյունքին ավելացնելով երկրի ռեզիդենտների կողմից արտերկրում ստացած գործոնային եկամուտները հանած ներքին տնտեսությունում ոչ ռեզիդենտների կողմից վաստակած եկամուտները: Տարբեր զարգացման մակարդակներում գտնվող երկրներում ստեղծված համախառն արդյունքների համեմատման համար նշված վերջին ցուցանիշները հաշվարկվում են ըստ գնողունակության համարժեքության (Purchasing Power Parity, PPP)՝ բոլոր ապրանքների և ծառայությունների գծով օգտագործելով միջազգայնորեն սահմանված գներ:

Ինչպես հայտնի է, համախառն ներքին արդյունքի աճը միանշանակ կերպով չի հանգեցնում երկրներում բարեկեցության մակարդակի աճի: Ըստ սահմանման՝ ՀՆԱ-ի ցուցանիշը միայն խոսում է այն ապրանքների և ծառայությունների մասին, որոնք վաճառվել են համապատասխան ժամանակահատվածում համապատասխան գներով: Այդպիսով՝ ՀՆԱ-ն անտեսում է տրնտեսական տարում ծավալված այն բոլոր գործունեությունները, որոնք իրենց անհերքելի ներդրումն ունեն բնակիչների բարեկեցության մակարդակի վրա, մասնավորապես՝ շրջակա միջավայրի վիճակը, քաղաքացիների ֆիզիկական և հոգեկան առողջության մակարդակը, եկամտի բևեռացվածության մակարդակը և այլն²: Երկրներում բարեկեցության ապահովման համար անհրաժեշտ

¹ Todaro M. P., Smith S. C., Economic Development 11th Edition, Prentice Hall, 2011, September 23, 801 pages

² Baumol W.J., Litan R.E., Schramm C.J., Good Capitalism, Bad Capitalism, and the Economics of Growth and Prosperity Yale University Press, 2007, pp. 1-323

նշված կետերի ներառման համար կան մշակված մի շարք ՀՆԱ-ին փոխարինիչ ցուցանիշներ, որոնք բացի արտադրական ծավալների քանակական ցուցանիշներից, իրենց մեջ ներառում են նաև կյանքի որակի վրա ազդող այլ բաղադրիչներ: Այդպիսի ցուցանիշներից են .

- Առաջընթացի իրական ցուցիչը (Genuine Progress Indicator, GPI):

- Մարդկային ներուժի զարգացման համաթիվը (ինդեքսը) (Human Development Index, HDI):

- Համախառն կայուն զարգացման արդյունքը (Gross Sustainable Development Product, GSDP):

- Ներառական աճի հայեցակարգը:

Առաջընթացի իրական ցուցիչը, ի թիվս ՀՆԱ-ի հաշվարկում տեղ գրտած բաղադրիչների, իր մեջ ներառում է նաև երկրի սոցիալ-տնտեսական և շրջակա միջավայրի վիճակը նկարագրող այնպիսի ցուցանիշներ¹, ինչպիսիք են՝

- եկամտային անհավասարությունը,
- շրջակա միջավայրի աղտոտվածության աստիճանը,
- բնակչության կրթական ցենզը,
- ռազմական ծախսեր/ համախառն արտադրանք հարաբերակցությունը և այլն:

Մարդկային ներուժի զարգացման համաթիվը (ինդեքսը) հիմնվում է այն ենթադրության վրա, որ միանշանակ չէ այն մոտեցումը, որ տնտեսական աճը հանգեցնում է երկրի բնակչության բարեկեցության մակարդակի աճի: Այն հաշվարկում ներառում է ինչպես բնակչության եկամուտների մակարդակը (մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշը ըստ գնողունակության համարժեքության), այնպես էլ կյանքի որակի վրա ազդող մի շարք գործոններ, ինչպիսիք են՝

- կյանքի միջին տևողությունը,
- կրթության հասանելիությունը,
- առողջապահական ոլորտի ձեռքբերումները,
- երկրում իրավահավասարության ապահովման մակարդակը,
- գենդերային հավասարության մակարդակը և այլն:

¹ Առաջընթացի իրական ցուցիչը ներառում է թվով 26 ցուցանիշներ, որոնք խմբավորված են ըստ 3 բաժինների՝ սոցիալական, տնտեսական և շրջակա միջավայրի:

Համախառն կայուն զարգացման արդյունքի ցուցանիշը մշակված է մատնանշելու համախառն սպառման այն ծավալները, որոնց կարելի է հասնել՝ առանց երկրներում կյանքի որակի նվազման: Համախառն կայուն զարգացման արդյունքի ցուցանիշը հաշվի է առնում՝

- արտադրության ունեցած ազդեցությունը մարդկանց առողջության, շրջակա միջավայրի վրա,

- ապագա սերունդների կյանքի որակը, տնտեսական զարգացման մակարդակը,

- առողջապահական ոլորտում կատարվող ծախսերը և այլն:

Համախառն կայուն զարգացման արդյունքի ցուցանիշը հնարավորություն է տալիս ուրվագծել գործելու այն ուղղությունները, որոնք պետք է տեղ գտնեն տնտեսությունների զարգացման պլաններում՝

- կրթական բարեփոխումներ,

- տեխնոլոգիական նորամուծություններին ուղղված ներդրումներ,

- ռեսուրսների օգտագործման էֆեկտիվության բարձրացմանը ուղղված քայլեր և այլն¹:

Ինչպես նշված է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) ներառական աճի հայեցակարգին նվիրված 2013 թվականի գիտաժողովում՝ վերջին տասնամյակների ընթացքում շատ երկրներում տեղի ունեցած տնտեսական աճը ոչ միայն չի ուղեկցվել հասարակության տարբեր խմբերի բարեկեցության համամասնական բարձրացմամբ՝ այլև մեծացրել է անհավասարությունը այդ խմբերի միջև²: Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) կողմից մշակված **ներառական աճի հայեցակարգը** ենթադրում է երկրներում եկամուտների աճին զուգահեռ նաև բարեկեցության այլ ցուցանիշների համաքայլ աճ: Ներառական աճի ապահովման համար մշակված ռազմավարության կետերից են³

- ներդրումների ավելացումը մարդկային կապիտալում,

- տնտեսությունների կառուցվածքային բարեփոխումների իրականացում,

- սոցիալական ապահով միջավայրի ապահովումը,

¹ <http://globalcommunitywebnet.com/globalcommunity/measurementofsd.htm>

² OECD, Together We Stand: Inclusive Growth, Paris, 3rd April 2013

³ CAFOD, What is “inclusive growth”?, CAFOD discussion paper, August 2014

- պետական ինստիտուտների կայացումը,
- պրոգրեսիվ հարկային քաղաքականությունը,
- սոցիալական բոլոր խմբերի հասարակական կյանքին ներգրավվածության մակարդակի բարձրացումը,
- աղքատության կրճատումը և այլն:

Ներկայումս ՀՀ-ում տնտեսական աճի չափման համար օգտագործվում են ՀՆԱ-ի եռամսյակային և տարեկան իրական աճի ցուցանիշները, որոնք բնութագրում են երկրի տնտեսությունում համապատասխան եռամսյակում կամ տարում արտադրված ապրանքների ու ծառայությունների (հանած միջանկյալ սպառումը) արժեքը՝ նախատեսված վերջնական սպառման, կուտակման և զուտ արտահանման համար: ՀՆԱ-ի եռամսյակային և տարեկան ցուցանիշների հաշվարկի համար հիմք են հանդիսանում ՀՀ ՎԿ ամփոփ, ՀՀ ԿԲ և ՀՀ ֆինանսների նախարարության տվյալները: ՀՆԱ-ն հաշվարկվում է երեք եղանակներով՝ արտադրական, եկամուտների ձևավորման և եկամուտների օգտագործման (ծախսային):

Ելնելով այն տրամաբանությունից, որ տնտեսական ակտիվության մակարդակը վերջին հաշվով ազդում է տնտեսական աճի վերջնական ծավալների վրա, ՀՀ-ում տնտեսական աճի դիտարկման համար օգտագործում է նաև ՀՀ ՎԿ-ի կողմից հաշվարկող Տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ), որը բնութագրում է տնտեսությունում ապրանքների և ծառայությունների թողարկման ծավալների փոփոխությունը միավոր ժամանակահատվածում: Այն ընդգրկում է տնտեսական գործունեության բոլոր տեսակները և սկզբնապես հաշվարկվում է նախորդ տարվա միջին տարեկան գներով, ինչը հնարավորություն է տալիս ունենալ տվյալ ամսվա արտադրանքի թողարկման ծավալի իրական փոփոխությունը նախորդ ամսվա և նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ:

Կարեն Սարոյան

Տնտեսական աճի հիմնախնդիրը տնտեսագիտական գրականության մեջ

Բանալի բառեր. տնտեսական աճ, աճի գործոններ, գյուղատնտեսություն, արդյադրություն, ՀՆԱ

Գրականության մեջ տնտեսական աճի վերաբերյալ կան բազմաթիվ ուսումնասիրություններ: Որպես համակարգված ուսմունք, տնտեսական աճի վերաբերյալ առաջին հիշատակումները կապված են ֆիզիոկրատների՝ մասնավորապես Ֆրանսուա Բենեի հետ: Սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր ժամանակներում՝ որպես տնտեսական աճի գործոններ, հիմք են ընդունել առևտուրը, գյուղատնտեսությունը, աշխատանքը, կապիտալը, տեխնոլոգիական առաջընթացը, իսկ ներկայումս՝ տեղեկատվական տեխնոլոգիաները և նորամուծությունները: Տնտեսական աճի մակարդակը ցույց է տալիս երկրի տնտեսության կենսունակության աստիճանը: Ինչպես աշխարհում, այնպես էլ ՀՀ-ում տնտեսական աճի չափման ամենակիրառելի ցուցիչը մինչ օրս համարվում է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) իրական աճի մակարդակը:

Карен САРОЯН

Проблема экономического роста в экономической литературе

Ключевые слова. экономический рост, факторы роста, сельское хозяйство, производство, ВВП

В литературе есть много исследований по экономическому росту. Как систематическое учение, первые упоминания об экономическом росте связаны с физиократами, особенно с Франсуа Кенэ. В разные периоды социально-экономического развития торговля, сельское хозяйство, труд, капитал, технический прогресс, а теперь информационные технологии и инновации воспринимались как факторы экономического роста, Уровень экономического роста указывает на степень жизнеспособности экономики страны. И в мире, и в Армении наиболее применимым показателем для измерения экономического роста остается уровень роста ВВП.

Karen SAROYAN

The problem of economic growth in economic literature

Key words. economic growth, growth factors, agriculture, production, GDP

There are many studies on economic growth in the literature. As a systematic teaching, the first references to economic growth were made by Physiocrats, particularly François Kane. At different times of social-economic development, trade, agriculture, labor, capital, technological progress, and now information technologies and innovations have been taken as factors of economic growth. The level of economic growth indicates the degree of viability of the country's economy. Both in the world and in Armenia, the most applicable indicator for measuring economic growth is still the level of GDP's real growth.

EFFECT OF THE 44 DAY WAR ON HOUSE PRICES IN YEREVAN

Mark HAMAZASPYAN

Metric LLC, machine learning specialist

Bachelor of Arts in Business: Economics track, American University of Armenia

Armen SAFARYAN

Doctor of Science in Economics

Keywords: house price index, Laspeyres Price Index, house prices, real estate, price change

հրաժեշտությունը: Կարևոր շեշտադրում է կատարվում վեկտորային մեխանիզմների (Vector Machines), նեյրալ ցանցերի (Neural Networks,) և անորոշ եզրակացության (Fuzzy Inference Systems) համակարգերի վրա: Advanced credit risk analysis and management, Ciby Joseph (2013, Wiley) առաջ է քաշվում այն գաղափարը, որ վարկն օգտագործելու և արդյունք ստանալու լավագույն միջոցը վարկային ռիսկը հասկանալն է: Այս գաղափարի հիմքում 2008/2009 թվականների համաշխարհային վարկային ճգնաժամի ուսումնասիրությունն է, որը ցույց է տվել, որ վարկային ռիսկի հիմնավոր ըմբռնումը ունի մեծ կարևորություն: Managing Credit Risk: The Great Challenge for Global Financial Markets (Wiley Finance), John B. Caouette, Edward I. Altman, Paul Narayanan, Robert Nimmo (2008) Աշխատանքում ուսումնասիրության առարկա է դառնում հեջ ֆոնդերի ի հայտ գալը՝ որպես հիմնական դերակատարներ և վարկանիշային գործակալությունների աճող ազդեցությունը: Այս հարցերի վերաբերյալ պատկերացում կազմելուց հետո ներկայացվում են ռիսկի կառավարման ժամանակակից արդյունավետ գործիքները և տեխնիկան: Managing Portfolio Credit Risk in Banks, Arindam Bandyopadhyay (2016) հնարավորություն է տալիս պատկերացնել վարկային ռիսկի կառավարման պրակտիկայի տարբեր նրբությունները, որոնք բխում են աշխարհում ընդունված լավագույն փորձից՝ հիմնվելով դեպքերի ուսումնասիրությունների վրա, համադրելով դրանք հնդկական բանկերից ստացված տվյալների հետ: Credit Risk Management: Basic Concepts: financial risk components, rating analysis, models, economic and regulatory capital, Baesens B., Van Gestel T. (Oxford University, 2009) ֆինանսական ռիսկերի կառավարումը քննարկվում է բիզնեսի գործնական ազդեցության և շահութաբերության աճող մրցակցության տեսանկյունից: Ներկայացվում են բանկային համակարգում մրցակցությանը դիմակայելու նոր մեխանիզմներ՝ դիտարկելով ռիսկի կառավարման համատեքստում:

Վերլուծություն:

Առևտրային բանկերում վարկային ռիսկի հաշվարկման համար տարբեր երկրներում, տարբեր բանկերում օգտագործվում են տարբեր մեթոդներ¹: Վարկառուի սնանկացման հավանականությունը տարբեր բանկերի կողմից կարող է հաշվարկվել տարբեր մոդելների հիման վրա: Օրինակ ինչ որ բանկ

¹ Т. Шаинян, Основные риски, возникающие в банковской системе, “Научно-практический электронный журнал Аллея Науки” № 4 (20), 2018, стр. 223-227

ինչ որ կազմակերպության սնանկացման հավանականությունը հաշվարկելու և գնահատելու համար կարող է հիմնվել պատճառահետևանքային մոդելների, պատմական հաճախականությունների մոդելների, կրեդիտային սքորինգ մոդելների և վարկային ռեյտինգավորման գործակալությունների մոդելների զուգակցման վրա¹: Մոդելների կառուցման համար տվյալները քանակականացվում են, սակայն կան տվյալներ, որոնք քանակականացման ենթակա չեն, հետևաբար մոդելները պետք է ճշգրտվեն հիմնվելով նաև վարքագծային գործոնների վրա: Նման վարքագծային գործոններ են "բարոյական ռիսկի" և "անբարենպաստ ընտրության" հավանականությունները: Վարկային ռիսկի տեսանկյունից "Բարոյական ռիսկը" վերաբերում է հավանականությանը, որ պարտապանը կարող է վարկը ստանալուց հետո փոխել իր վարքագիծը: "Անբարենպաստ ընտրությունը" գործոն է, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ ավելի քիչ ռիսկային վարկառուները ավելի քիչ են հակված վարկ ստանալուն: Այժմ քննարկենք վարկային ռիսկի կառավարման հիմնական մոդելները²:

Պատճառային կամ պատճառահետևանքային մոդելների հիմնական նպատակն է ճշգրտել սնանկացման պատճառները, ինչպես նաև գնահատել պատճառների ի հայտ գալու հավանականությունները: Վերջնական նպատակը սնանկացման հավանականությունը գտնելն է: Մոդելն ավելի լավ հասկանալու համար ներկայացնենք օրինակ: Ենթադրենք, որ հիփոթեքային վարկ ստացած պարտապանները չեն կատարի իրենց հիփոթեքային վարկի մարումները այն դեպքում, երբ իրենց տների արժեքները կդառնան ավելի ցածր քան վարկի արժեքն է (այսինքն վարկի և գրավի արժեքների հարաբերակցությունը մեծ կլինի 1-ից՝ վարկ/գրավ>100%) և միաժամանակ կկորցնեն իրենց աշխատանքը: Այս դեպքում, եթե տների՝ մինչև նշված արժեքը նվազելու հավանականությունը գնահատվում է 20%, իսկ տվյալ պարտապանի աշխատանքը կորցնելու հավանականությունը 10%, ապա դեֆոլտի հավանականությունը կգնահատվի $20 \cdot 10 / 100$ ՝ այսինքն 2%: Բանկային համակարգում խնդիրներ կարող են ի հայտ գալ նաև տնտեսական ճգնաժամով պայմանա-

¹The GARP Risk Series, Credit Risk Management, David C. Shimko, Ph.D. Peter Went Ph.D., GARP 2010 pp. 29-30

²The GARP Risk Series, Credit Risk Management, David C. Shimko, Ph.D. Peter Went Ph.D., GARP 2010 pp. 31-35

վորված¹: Հաճախ վարկային ռիսկի կառավարումը կապվում է տնտեսական կամ ֆինանսական ճգնաժամերի ի հայտ գալու հետ:

Պարտական հաճախականության մոդելը հիմնված է վիճակագրական տվյալների հավաքագրման վրա: Այս մոդելով պարտապանը դասվում է պարտապանների ինչ որ դասի, որը որոշվում է վարկի ներկայացման պահին վարկառուի բնութագրի հիման վրա և գնահատվում է սննկացման հավանականությունը՝ հիմնվելով այդ դասին պատկանող պարտապանների պատմական սնանկացման մակարդակի վրա: Պարտապանի համար դասի ընտրումը կարող է ներառել գործունեության ոլորտը, աշխատավայրը, ընկերության չափերը, կայուն ժամանակահատվածը և այլ փոփոխականներ:

Վարկային սքորինգային մոդելը նման է պատմական հաճախականությունների մոդելին, սակայն ներառում է համեմատականների ավելի լայն շրջանակ՝ իրենց մաթեմատիկական ճշգրտումներով ըստ տարբեր ցուցանիշների և բնութագրերի կարևորության և կշռի: Այն երկրներում, որտեղ վստահելի ֆինանսական ինֆորմացիայի պակաս կա, այս մոդելները օգտագործվում են որպես ՓՄՁ-երին տրամադրվող վարկերի գնահատման հիմնական միջոց: Սքորինգային մոդելը պետք է ներառի վիճակագրական տեղեկատվություն ֆիրմաների համար ըստ տարբեր արդյունաբերական ճյուղերի և չափերի որպեսզի գտնի դեֆոլտի հավանականության գնահատականը կոնկրետ արդյունաբերության ճյուղում գործող կոնկրետ ընկերության համար: Սքորինգային մոդելը հաճախ օգտագործվում է մանրաձախ վարկերի գնահատման համար, քանի որ մանրաձախ վարկառուները հիմնականում միատարր են և քանակապես շատ: Այն տեղեկատվությունը, որը հավաքագրվում է մանրաձախ վարկառուներից, զգալիորեն ավելի ստանդարտացված է, քան այն ֆինանսական հաշվետվությունը, որը ներկայացվում է կորպորատիվ հաճախորդի կողմից, հետևապես այս մոդելները կարելի է լայնորեն օգտագործել մանրաձախ վարկավորման ոլորտում, իսկ կորպորատիվ վարկավորման ոլորտում այն չի կարող մեծ արդյունավետություն ունենալ: Սակայն սքորինգային մոդելները երբեմն օգտագործվում են նաև կորպորատիվ վարկավորման համար: Ռիսկերի հաշվարկման հայտնի սքորինգային մոդել է "ALTMAN Z" սքորինգային մոդելը, որը հինգ հիմնական գործոնները և դրանց վերաբերյալ

1 Կ. Սարգսյան, Պետական հակաճգնաժամային քաղաքականության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները, ԵՐԵՎԱՆ ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2016, էջ 151-172

հաշվետվությունները օգտագործելով հաշվարկում է տվյալ ընկերության սննկացման հավանականությունը:

Վարկային ռեյտինգավորման մոդել. Բանկային գործունեության մեջ միատարր խմբերի համար օգտագործվում է վարկային վարկանշման մեթոդը¹: Այնպիսի ֆինանսական շուկաներում, որտեղ վարկային ռեյտինգները ներկայացվում են վարկային ռեյտինգավորման գործակալությունների կողմից, առևտրային բանկերը կարող են օգտագործել վարկային ռեյտինգները որպես ուղեցույց որպեսզի գնահատեն և չափեն պարտապանի սննկացման հավանականությունը: Այս դեպքում սննկացման հավանականության հաշվարկման համար վարկային ռեյտինգը արտացոլում է առաջիկա մեկ տարվա տվյալը, սակայն այն կարող է նաև ընդգրկել հավանականությունը, ըստ որի պարտապանը կկարողանա կատարել իր պարտավորությունները կոնկրետ տնտեսական ցիկլի ընթացքում: Անկախ ընտրվող ցուցանիշների քանակից՝ այդ համակարգը պետք է համապատասխանի հետևյալ չափանիշներին՝

1. Ֆինանսական դրության ռեյտինգային գնահատումը պետք է ընդգրկի կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ուղղությունները

2. Վարկանշային գնահատումը պետք է ունենա առավելագույն կամ նվազագույն շեմ

3. Տեղեկատվության հավաքագրման հիմնական աղբյուր պետք է հանդիսանան ֆինանսական հաշվետվությունները

4. Գնահատման համակարգում ներառված ցուցանիշները պետք է ունենան վերին և ներքին սահման, նախընտրելի միջակայք, իսկ դրանց բացակայության դեպքում՝ տվյալ ոլորտում գործող ընկերությունների ցուցանիշների միջին մեծություն:

Այն պետք է թույլ տա բացի ներկա իրավիճիկից գնահատել նաև ապագայում հնարավոր փոփոխությունները, այն պետք է լինի պարզ և ըմբռնելի²:

Դինամիկ մոդելները չափում են դեֆոլտի հավանականության փոփոխության հավանականությունը ժամանակի ընթացքում: Այսպիսի մոդելներում

1 Credit Risk Management: Basic Concepts: financial risk components, rating analysis, models, economic and regulatory capital, Baesens B., Van Gestel T. (Oxford University Press 2009) p. 168

2 Սոցիալ տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, գիտական հոդվածների ժողովածու 2019, ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, Գ. Մանուկյան, էջ 230-231,

կարող ենք տեսնել պարտապանի մի դասից մյուս դաս տեղափոխվելու հավանականությունը (օրինակ՝ AAA-ից D, կամ ստանդարտ դասից մինչև անհուսալի դաս): Այլ կերպ սա կոչվում է ռեյտինգային միգրացիա: Այսպիսի ինֆորմացիան օգտագործելով կարող ենք տեսնել, թե արդյոք ավելի հավանական է, որ պարտապանը մեկ տարվա ընթացքում կմնա նույն վարկանիշով, կբարձրանա, թե կիջնի:

Վարկային ռիսկի հաշվարկման համար մեծ կարևորություն ունի **5C-երի մոդելը**¹: Այն իրենից ներկայացնում է մոդել, որը հիմնված է 5 տարբեր գործոնների վրա:

- **Բնավորություն**՝ (Character): Սա ցույց է տալիս վարկառուի ազնվության աստիճանը:

- **Կապիտալ**՝ (Capital): Վարկատուն պետք է հասկանա թե ինչ մասնակցություն ունի վարկառուն տվյալ բիզնեսում:

- **Հնարավորություններ** (Capacity): Պարտապանի հնարավորությունները նույնպես մեծ ազդեցություն ունեն իր պարտավորությունների կատարման տեսանկյունից:

- **Պայմաններ**՝ (Conditions): Սա հիմնականում վերաբերում է պայմանագրի և այլ համաձայնագրերի պայմաններին և օրինականությանը:

- **Գրավ**՝ (Collateral): Բանկի համար կարևոր ցուցիչ է համարվում նաև, թե ինչ գրավ է առաջարկում վարկառուն վարկ ստանալու համար:

Բարոյական ռիսկի մոդել. Բանկային վարկավորման տեսանկյունից բարոյական ռիսկը վերաբերում է վարկառուի, վարկը տրամադրելուց հետո վարքագծային փոփոխության հնարավորությանը: Եթե չլիներ նման փոփոխության հավանականություն, ապա կարող եինք ենթադրել, որ բարձր ռիսկ ունեցող վարկառուները չեն ցանկանա վարկավորվել: Սակայն բարոյական ռիսկի ի հայտ գալու պատճառով, այն վարկառուն, որը չունի մտադրություն վարկը վերադարձնել, կդիմի վարկ ստանալու համար և չի անհանգստանա բարձր տոկոսների պատճառով, քանի որ վարկը մարելու մտադրություն չունի: Բացի նշվածը վարկառուն կարող է նաև օգտագործել վարկային միջոցները վարկատուի կողմից չարգելված, սակայն ոչ նպատակային ձևով և արդյունքում նման նպատակները կարող են մեծացնել սննկացման ռիսկը:

¹Advanced credit risk analysis and management, Ciby Joseph (2013, Wiley), p. 23-25

Հետևաբար առևտրային բանկերը պետք է գնահատեն սննկացման հավանականությունը՝ հիմնվելով բարոյական ռիսկի հնարավոր ի հայտ գալու վրա:

Անբարենպաստ ընտրության մոդել. Բանկի տեսանկյունից անբարենպաստ ընտրությունը տեղի է ունենում երբ հաճախորդը ընտրում է վարկային պրոդուկտ կամ գործիք, որը աշխատում է իր սեփական շահի համար, սակայն ազդում է բանկի վրա բացասական կերպով, որը չէր կարող բանկին հայտնի լինել մինչև վարկի տրամադրումը: Երբեմն կարող է նաև անբարենպաստ ընտրությունը տեղի ունենալ ոչ թե հաճախորդի մեղքով այլ հանգամանքների բերումով: Այն բանկերը, որոնք ցանկանում են աշխատել նման հաճախորդների հետ, պետք է առաջարկեն նորարարական պրոդուկտներ, որոնք կարտացոլեն այդ հաճախորդների հետ կապված հնարավոր ռիսկերը: Նմանատիպ ռիսկի զսպման մեխանիզմ է համարվում լողացող տոկոսադրույքով վարկերի տրամադրումը սահմանային և ցածր վարկային որակ ունեցող հաճախորդներին: Այս պարագայում էլ առաջ են գալիս այլ ռիսկեր: Քանի որ այս վարկերը առաջարկվում են ցածր վարկային որակ ունեցող վարկառուներին և ռիսկ կա, որ կսպասվի ցածր վարկային որակ ունեցող հաճախորդների մեծ հետաքրքրվածություն այս վարկերի հանդեպ, ապա բանկի վարկային ռիսկի մոդելում պետք է առանձնակի ուշադրություն դարձնել այս հանգամանքի վրա: Մեծ ուշադրության է արժանի Բազենսի և Վան Գեստելի վարկանիշային մոդելների դասակարգումը, որը ներկայացված է ստորև՝:

Ֆինանսական մոդելներ

1. Ֆինանսական կառուցվածք

- Մերթոնի մոդել
- KMV մոդել

2. Կանխիկ հոսք

- Գամբլերյան մոդել
- Դրամական հոսքի սիմուլյացիա

3. Ենթադրյալ շուկա

- Նվազեցված տեսքի մոդել
- Պարտատոմսերի, աժանցյալների և սեփական կապիտալի գներ

Փորձնական փվյալների վրա հիմնված մոդելներ

1Credit Risk Management: Basic Concepts: financial risk components, rating analysis, models, economic and regulatory capital, Baesens B., Van Gestel T. (Oxford University Press 2009) p. 175

1. Վիճակագրություն

- Գծային ռեգրեսիա
- Լոգիստիկ ռեգրեսիա
- Լրացուցիչ մոդելներ

2. Արհեստական բանականություն

- Նեյրալ ցանցեր
- Օժանդակող վեկտորային սարքավորումներ

- Կորիզային ուսուցում

3. Մեքենայական ուսուցում

- հարող իրավիճակներ
- Որոշման ծառեր
- Գրաֆիկական մոդելներ

Փորձագիտական մոդելներ

1. Փորձագիտական մոդելներ

- Փորձագիտական կանոններ
- Փորձագիտական գնահատական

2. Փորձագիտական գնահատականներ

- Փորձագիտական սնանկացման հավանականության վարկանիշներ
- Գրավի փորձագիտական գնահատում

Վերջին տասնամյակների ընթացքում վարկային ռիսկի վերլուծության գործընթացը ենթարկվել է մի շարք փոփոխությունների: Հասարակ ընթացակարգերին փոխարինելու են գալիս նոր սերնդի գերժամանակակից տեխնիկայի օգնությամբ իրականացվող վերլուծությունները

Վարկային մասնագետներից պահանջվում է ունենալ գիտելիքներ ոչ միայն ֆինանսների, կառավարման և մաթեմատիկայի ոլորտներից, այլ նաև ձեռք բերել նոր հմտություններ:

Բազելյան կոմիտեն առաջարկված նոր համաձայնագրի միջոցով փորձել է հեղափոխություն կատարելայն մեթոդաբանության մեջ, որով բանկերը կառավարում են իրենց վարկային ռիսկերը (Model III) և ակնկալվում է, որ այն կունենա արդյունքներ մի քանի տարվա ընթացքում¹: 2008թ. աշնանը պարզ դարձավ, որ բանկային համակարգի գլխավոր խնդիրը ոչ թե իրացվե-

¹Advanced credit risk analysis and management, Ciby Joseph (2013, Wiley), p. 37

լիությունն է, այլ կապիտալի անբավարարությունը¹: Այս դիտարկումը մեծ նշանակություն ունի վարկային ռիսկի կառավարման արդյունավետության բարձրացման տեսանկյունից և կարող է առաջացնել մոտեցումների փոփոխություն, ինչպես նաև նոր մոդելների և մեթոդների ի հայտ գալու նախապայման է դառնում:

Վարկային ռիսկի հաշվարկման մոդելներից շատերը ունեն մեծ օգտակարություն, սակայն դրանց նկատմամբ չափից ավել մեծ կախվածությունը կարող է աղետալի լինել: 2008թ-ի վարկային ճգնաժամի հիմքում մասամբ այն հանգամանքն է, որ օգտագործվել են իրական մոդելից տարբերվող ենթադրությունների վրա հիմնված ֆինանսական մոդելներ²: Հետևաբար վարկային ռիսկի հաշվարկման մոդելները պետք է անընդհատ զարգացվեն՝ համապատասխանեցնելով դրանք ժամանակակից մարտահրավերներին, ինչպես նաև ուղղված լինելով նաև ապագա զարգացումներին:

Ժամանակակից մոդելների հուսալիությունը կարող է նվազել այն ենթադրությունների պատճառով, որոնց հիման վրա կառուցվում են մոդելները, ինչպես նաև այդ մոդելների բարդության աճի պատճառով³:

Եզրակացություններ:

Կարևորելով վարկային ռիսկի ճշգրիտ գնահատումը պետք է նաև մեծ ուշադրություն դարձնել վարկառուի մասին այն ինֆորմացիայի վրա, որը հավաքագրվում է մինչև վարկի տրամադրումը: Նման մոտեցումը հիմնավոր է, քանի որ եթե սխալ տվյալների հիման վրա իրականացվի ճշգրիտ գնահատում, ապա նման գնահատականը չի արտացոլի վարկառուի իրական վարկային ռիսկը: Այս համատեքստում մեծ կարևորություն ունի նաև այն, թե ինչն է ընկած վարկառուի բիզնեսի հիմքում, այսինքն թե ինչն է հանդիսանում բիզնեսի շարժիչ ուժը:

ՀՀ-ում վարկային ռիսկի գնահատման նորագույն մեխանիզմների կիրառման անհրաժեշտությունը կարող ենք հիմնավորել մի շարք փաստարկներով: Նախ նման փոփոխությունը դրական ազդեցություն կունենա երկրի ֆինանսական համակարգի վրա, այն կդառնա ավելի կայուն, ՀՀ առևտրային

1 Սոցիալ տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում, գիտական հոդվածների ժողովածու 2015, ՀՀ ԳԱԱ տնտ. ինստիտուտ, Կ. Սարգսյան, էջ127-130

2Advanced credit risk analysis and management, Ciby Joseph (2013, Wiley), p. 22

3Advanced credit risk analysis and management, Ciby Joseph (2013, Wiley), p. 24

բանկերը կդառնան ավելի մրցունակ ինչպես ներքին այնպես էլ արտաքին շուկաների համար: Բացի այդ երկրի ֆինանսաբանկային համակարգի զարգացման աստիճանից մեծապես կախված է տվյալ երկրում ներդրումներ կատարելու հնարավորությունները: Որպեսզի թույլ չտրվի կապիտալի արտահոսք ՀՀ-ից, ինչպես նաև հնարավորություն ստեղծվի ներգրավվել օտարերկրյա ներդրումներ, անհրաժեշտ է ունենալ զարգացած բանկային համակարգ, քանի որ ներքին շուկայում գործող սուբյեկտները պարբերաբար ունենում են ֆինանսավորման անհրաժեշտություն: Հետևաբար ըստ անհրաժեշտության ֆինանսավորվելու են ՀՀ առևտրային բանկերի կողմից: ՀՀ առևտրային բանկերում վերջին տարիներին նկատվում է նոր տեխնոլոգիաների ներդրումներ, սակայն անհրաժեշտ է այդ փոփոխություններին ավելի մեծ տեմպեր հաղորդել և ստեղծել նոր հեռանկարներ: Ներկայումս առկա վարկային ռիսկի գնահատման մոդելները բավականին դանդաղեցնում են վարկավորման պրոցեսը, բացի այդ դրանք նաև չունեն մեծ ճկունություն ընթացիկ փոփոխությունների նկատմամբ: Նման խնդիրների լուծում կարող է հանդիսանալ վարկային ռիսկի հաշվարկներում արհեստական բանականության ներդրումը, որը օգտագործելով հասանելի մեծ ծավալի տեղեկությունները (այլ կերպ ասած՝ big data) հնարավորություն կտա ստանալ օբյեկտիվ և սուբյեկտիվ գնահատականների լավագույն զուգակցումը: Արհեստական բանականությունը որակական գնահատականները հաշվի առնելու մեծ հնարավորություններ կստեղծի՝ զերծ մնալով մարդկային սուբյեկտիվ դատողություններից: Օգտագործվող ժամանակակից թվային տեխնոլոգիաները հնարավոր են դարձնում քանակական բոլոր գնահատականների հաշվարկը, սակայն որակական և սոցիալական բազմաթիվ գործոններ հաշվի չեն առնում, և հետևապես էականորեն կտրված են իրականությունից, ուստի ինքնուրույն զարգացող և դատողությունների հիման վրա որոշումներ կայացնող համակարգը կարող է լուծել նման խնդիրները:

Արսեն ԸՌՔՈՅԱՆ

Առևտրային բանկերում վարկային ռիսկի կառավարման մոդելների ներածություն

Բանալի բառեր. վարկային ռիսկ, ռիսկի կառավարում, դեֆոլտ, ռիսկի կառավարման մոդելներ

Վարկային ռիսկի կառավարման մոդելներից որոշները մեծ արդյունավետությամբ կիրառելի են մանրածախ վարկավորման ոլորտում, սակայն քիչ են մոդելներ, որոնք բարձր արդյունավետությամբ հնարավոր է կիրառել կորպորատիվ վարկերի տրամադրման համար: Միաժամանակ կարող ենք նշել, որ չկա մոդել, որը հավասարապես հնարավոր լինի բարձր արդյունավետությամբ կիրառել և մանրածախ և կորպորատիվ վարկերի վարկային ռիսկի գնահատման համար: Այս դեպքում անհրաժեշտ է կիրառել կամ մոդելների համադրություն, որը և անում են շատ բանկեր, կամ մշակել նոր մոդել, որը հնարավորություն կտա ավելի բարձ արդյունավետությամբ կիրառել այն բոլոր դեպքերում:

Arsen ERKOYAN

Introduction of credit risk management models in commercial banks.

Keywords. Credit risk, risk management, default, risk management models

Some of the credit risk management models are very effective in retail lending, but few models can be used with high efficiency for corporate borrowing. Simultaneously, we can note that no model can be used equally effectively to assess the credit risk of retail and corporate loans. In this case, it is necessary to use either a combination of models, which many banks do or to develop a new model that will allow us to use it more efficiently in all cases.

Арсен ЭРКОЯН

Введение моделей управления кредитными рисками в коммерческих банках

Ключевые слова. Кредитный риск, управление рисками, дефолт, модели управления рисками

Некоторые модели управления кредитным риском очень эффективны при розничном кредитовании, но есть несколько моделей, которые можно использовать с высокой эффективностью для корпоративного кредитования. В то же время можно отметить, что не существуют модели, которая могла бы использоваться с одинаковой эффективностью для оценки кредитного риска розничных и корпоративных кредитов. В этом случае необходимо использовать либо комбинацию моделей, как это делают многие банки, либо разработать новую модель, которая позволит нам использовать ее более эффективно во всех случаях.

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԹՎԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Աննա ԱՅՎԱԶՅԱՆ

ՀՊՏՀ կառավարման ամբիոնի ասպիրանտ

Բանալի բառեր. թվային տնտեսություն, թվայնացում, կորպորատիվ կառավարում, թվային կորպորացիա

Ներածություն:

Գիտության ժամանակակից նվաճումներն ու տեխնոլոգիական մտքի շարունակական ձեռքբերումները ստեղծում են լրացուցիչ հնարավորություններ և մարտահրավերներ կեսագործունեության բոլոր ոլորտների համար: Արմատական փոխակերպումների են ենթարկվում շուկայական տնտեսության մասնակիցների գործունեության սկզբունքներն, ինչպես նաև լայն իմաստով՝ ողջ տնտեսությունը: Նշված փոփոխությունների շարժիչ ուժն ու հիմքը համատարած թվայնացումն է: Վերջինիս առանցքը տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների ինտենսիվ ներդրումն է, դրանց հենքի վրա մշակվող նոր արդյունքները և անընդհատ թարմացվող լուծումները¹:

Մեթոդաբանություն:

Թվային տնտեսության համատեքստում կորպորատիվ հարաբերությունները վերափոխելու անհրաժեշտությունը ցույց տալու ինչպես նաև վեջինի դրական ազդեցությունը վեր հանելու նպատակով հողվածում կատարվել են համեմատական վերլուծություններ ավանդական և թվային կորպորատիվ կառավարման համակագերի միջև, և բացահայտվել վերափոխման առկա խոչընդոտները:

Գրականության ակնարկ:

«Թվային տնտեսություն» եզրույթն առաջին անգամ շրջանառության մեջ է դրել Դոն Տապսկոտը 1994 թվականին լույս տեսած իր «Էլեկտրոնային-թվային տնտեսություն» (Digital Economy) գրքում, իսկ 1995 թվականից թը լայն կիրառության մեջ մտցրեց Մասաչուսեթսի համալսարանից ամերի-

1 ՀՀ տնտեսության թվային փոխակերպումների ինստիտուցիոնալ համակարգի ձևավորման հիմնախնդիրները, Երևան, ԵՊՀ հրատ., 2020.- էջ 9:

կացի գիտնական Նիկոլաս Նեգրոպոնտեն¹: Թվային տնտեսության համընդունելի սահմանում դեռևս գոյություն չունի, ինչը դժվարություններ է առաջացնում թվային տնտեսության չափերի գնահատման համար: Այնուամենայնիվ գոյություն ունեն թվային տնտեսության էության ըմբռնման հիմնական մոտեցումներ, որոնցից ըստ առաջինի թվային տնտեսությունը տնտեսության ինֆորմացիոն ճյուղն է, մասնավորապես՝ հեռահաղորդակցության ոլորտն ու ծրագրային արտադրանքի և ծառայությունների ոլորտը, իսկ մասնագետների մյուս մասը հակված են թվային տնտեսության հասկացությանը տալ ավելի լայն բնույթ՝ ընդլայնելով այն երկրի ամբողջ տնտեսության մասշտաբով: Այս դեպքում հեռահաղորդակցության ոլորտն ու ծրագրային արտադրանքի և ծառայությունների ոլորտը ընդհանուրի բաղադրատարրերից են:

Վերլուծություն:

Թվային տնտեսությունը ձևավորվում և խարխլում է պայմանական պատկերացումներն այն մասին, թե ինչպես են կառուցված բիզնեսները. Ինչպես են ընկերությունները համագործակցում, և ինչպես են սպառողները ծառայություններ, տեղեկատվություն և ապրանքներ ձեռք բերում: Վերոշարադրյալը վերաբերում է նաև կորպորատիվ կառավարման համակարգին, որը ևս անմասն չի մնացել և փորձում է ադապտացվել և համապատասխանել թվային դարաշրջանի պահանջներին:

Ներկայումս թվային տեխնոլոգիաները (խելացի սարքեր, լայնածավալ տվյալների վերլուծության համար նախատեսված խելացի ծրագրեր, ինտերնետ իրեր, մեքենայական ուսուցման տեխնոլոգիաներ, ճանաչողական վերլուծության ծառայություններ և այլն) դառնում են ընկերությունների կորպորատիվ կառավարման ավելի ու ավելի մեծ գործիքներ՝ աստիճանաբար ընդլայնելով իրենց ազդեցությունը համաշխարհային տնտեսության բոլոր ճյուղերում: Առաջիկա տարիներին այսպես կոչված «թվայնացումը» (թվային տեխնոլոգիաների օգտագործումը) և «թվային վերափոխումը» (թվայնացման ազդեցության ներքո բիզնեսի ռազմավարության և կորպորատիվ կառավարման գործընթացների արմատական փոփոխություն) կդառնան ոչ միայն օբյեկտիվ իրականություն շուկայի մասնակիցների մեծամասնության համար, այլև անհրաժեշտ պայման՝ «պետություն - բիզնես - հասարակություն» թվային էկո-

¹ Стрелкова И., Цифровая экономика: новые возможности и угрозы для развития мирового хозяйства, Экономика. Налоги. Право, №2, 2018 г., стр. 19

համակարգում գոյատևման համար¹: Կորպորատիվ կառույցների դերը տեսականորեն և գործնականում գնահատվում է ոչ միանշանակ: Որոշ գիտնականներ կարծում են, որ կորպորացիան հիմք է հանդիսանում երկրի տնտեսությունը կառուցելու, համամասնություններ և արդյունավետ զարգացման հիմնական ուղղություններ հաստատելու համար, իսկ մյուսները պնդում են, որ «մեգասոցիալիզմի» գործունեության բացասական միտումները զրգալի վնաս են հասցնում քաղաքակրթության զարգացմանը: Ընդհանուր առմամբ, կորպորատիվ կառավարման բոլոր մոտեցումները ունեն ընդհանուր ասպեկտ: Կառավարման համակարգը արտացոլում է հասարակության մեջ ձևավորված խնայողությունները ներդրումների վերափոխելու մեխանիզմը: Կախված այս մեխանիզմի առանձնահատկություններից՝ առանձնանում են կորպորատիվ կառավարման տարբեր մոդելներ: Այս մոդելներում խնայողությունները ներդրումների վերափոխելու մեխանիզմը, ղեկավարների եկամտի մակարդակը կարող է կախված լինել կորպորացիայի շուկայական կապիտալիզացիայի մակարդակից, շուկայում նրա բաժնետոմսերի արժեքից, կամ՝ շուկայում ընկերության մրցունակության ցուցանիշներից: Ներկայումս նորարարական տնտեսության և բիզնեսի թվային վերափոխման պայմաններում կորպորատիվ կառավարումը հնարավորություն է ստանում էական ազդեցություն գործելու սեփականության իրավունքի, մտավոր սեփականության, ինչպես նաև համաշխարհային տնտեսությունում մեծ տարածում և կիրառություն սըտացած թվային ակտիվների, ինչպես նաև մտավոր գործունեության արդյունքների, մտավոր զարգացման և կորպորացիայի մարդկային կապիտալի արդյունավետ կառավարման վրա: Այնուամենայնիվ, թվային փոխակերպումները առաջ են բերում մարտահրավերներ, որոնք պետք է պատշաճ կերպով և ժամանակին բացահայտվեն, հասցեագրվեն և առաջացող ռիսկերը արդյունավետորեն կառավարվեն: Աշխարհի խոշոր ընկերությունում կորպորատիվ կառավարման հատվածում թվային տեխնոլոգիաների համակարգային օգտագործման բարդությունները արտահայտվում են ներդաշնակ ինտեգրման բացակայության պայմաններում, մասնավորապես².

1. թվային ծրագրեր և գործառնության վերլուծության ենթակա ոչ թվային գործարքային տվյալներ.

1 Подходы к развитию цифровых моделей корпоративного управления: Брускин С. Н., Китова О. В.: Российский экономический ун-т им. Г.В. Плеханова, г. Москва, Россия, 8 с.

2 Նույն տեղում:

2. թվային ծառայություններ և ոչ թվային գործընթացներ, որոնք պետք է աջակցեն այդ ծառայություններին:

3. թվային արտադրանք և վերջինի խթանման համար ոչ թվային աղբյուրներ:

4. ընկերության արդյունքների կանխատեսման թվային և կազմակերպության զարգացման ռազմավարության ոչ թվային մոդելներ:

5. ներքին թվային գործընթացներ և գուծընկերների և հաճախորդների կողմից այդ գործընթացների վրա ազդող ոչ թվային էկոհամար:

Թվային կորպորացիայի կառուցման համար կան հիմնարար պահանջներ, որոնք որոշվում են ոչ այնքան օգտագործվող տեխնոլոգիաներով, որքան բիզնեսի մոդելով, բիզնեսի կառուցվածքով, գործընթացներով, խթանման ուղիներով և վերջինի գործելու միջավայրով: Մասնագիտական գրականության մեջ այս հասկացությունները երբեմն զուգորդվում են ընկերության «թվային հասունություն» հասկացությամբ, որը փորձում է գնահատվել փորձագիտական գնահատումների մեթոդով: Չնայած կորպորացիայի թվային կառավարման հայեցակարգը դեռ նոր է սկսում ի հայտ գալ, մի շարք հետազոտողների հաջողվել է ձևակերպել թվային մոդելների կառուցման հիմնական մոտեցումները՝ հաշվի առնելով դիտարկվող տեխնոլոգիական միտումները: Արթուր Դ. Լիթթլը գլոբալ թվայնացմանը վերաբերող իր հետազոտության մեջ առանձնացնում է վերջինի վերաբերյալ մի շարք գնահատականներ, որոնցից մի քանիսը ինչպես ինքն է նշում սպասելի էին, իսկ որոշները զարմանալի¹:

1. Բոլոր հիմնական արդյունաբերություններում մրցակցային միջավայրը ենթարկվելու է էական փոփոխությունների:

2. Արդյունաբերության մեծ մասն արդեն ենթարկվել է թվայնացման ազդեցությանը կամ սպասում է դրան մոտ ապագայում:

3. Որոշ ընկերությունների հաջողվում է հաղթահարել ներքին հակասությունները և հարմարեցնել սեփական բիզնես մոդելը թվայնացման մոտեցումներին:

¹ Arthur D. Little. Digital Transformation Study 2015. How to Become Digital Leader URL: http://www.adlittle.com/downloads/tx_adlreports/ADL_HowtoBecomeDigitalLeader_02.pdf

4. Գործառնական գործունեության բարելավման և բիզնես մոդելի արդիականացման նոր հնարավորություններ, որոնք թվայնացման շնորհիվ բացվում են ընկերությունների առջև, դեռ թերագնահատված են:

5. Կառավարման «թվային մոտեցումները» պահանջարկ ունեն, բայց ընկերությունները դեռևս պատրաստ չեն դրանք կյանքի կոչել:

6. Յուրաքանչյուր արդյունաբերություն ունի իր սեփական "առաջամարտիկներ", բայց նրանք դեռ թվային առաջնորդներ չեն դարձել:

7. Ընկերությունների մեծամասնությունը կամ չգիտի կամ անտեսում է թվայնացման հնարավոր սպառնալիքները իր բիզնեսի վրա:

8. Ընկերության թվային վերափոխման գործընթացների արագությունը շատ ավելի ցածր է, քան անհրաժեշտ է թվային մրցակցությունը հաջողությամբ հաղթահարելու համար:

9. Շուկայի այլ մասնակիցների հետ ինտեգրումը հաճախ թերագնահատված է, և շատ ընկերություններ դեռ շարունակում են փորձել ինքնուրույն լուծել իրենց խնդիրները:

10. Այսպես կոչված «խելացի տվյալների» (smart data) օգտագործումը և դրանց հիման վրա սպառողների համար անհատականացված առաջարկների ստեղծումը ներկայումս հետ են մնում թվային շուկայի հնարավորություններից և պահանջներից:

Վերոշարադրյալ խնդիրներից խուսափելու, ինչպես նաև թվային վերափոխումը լավագույնս իր նպատակին ծառայեցնելու համար անհրաժեշտ ենք համարում որպեսզի կորպորացիան իրականացնի հետևյալ հաջորդական քայլերը, որոնք հնարավորություն կտան մեղմել կամ լավագույն արդյունքի դեպքում բացառել թվայնացման բացասական հետևանքները վերջինի համար, մասնավորապես.

Պլանի ստեղծում. Այստեղ ներառված պետք է լինեն կորպորացիայի բոլոր բիզնես կարիքները: Թվային վերափոխման գործընթացի սկզբում շատ կարևոր է որոշել զարգացման ուղղությունները, ինչպես նաև տեխնոլոգիաների ամբողջությունը, որոնք կօգնեն այդ զարգացմանը: Միևնույն ժամանակ, ձեռնարկությունները պետք է գույքագրեն իրենց ռեսուրսները՝ կարևորելով նրանք, որոնք պահանջում են արդիականացում: Այս փուլում նույնիսկ կարող է նոր բիզնես կարիքներին ի պատասխան անհրաժեշտություն առաջանալ վերայանելու նախագծերի առաջնահերթությունները, ինչպես նաև

որոշել այն թերություններն ու բացերը, որոնք կարող են խոչընդոտ հանդիսանալ թվային վերափոխման համար:

Աշխատակիցների ուսուցում. Սա ենթադրում է աշխատակիցներին սովորեցնել, թե ինչպես աշխատել նոր տեխնոլոգիաներով: Այս գործընթացը կարող է առաջացնել մի շարք բարդություններ, քանի որ ավանդական բիզնես մոդելներում աշխատակիցները պետք է իմանային միայն որոշակի համակարգեր, որոնք նախատեսվում էր օգտագործել դեռ երկար տարիներ: Թվային վերափոխման հաջողության համար աշխատողները պետք է պատրաստ լինեն աշխատանքային գործընթացների ցանկացած փոփոխության, եթե այդ փոփոխություններն անհրաժեշտ են կորպորացիայի արդյունավետությունն ու արտադրողականությունը բարձրացնելու համար: Այս պատրաստականությունը նշանակում է ինչպես ստեղծագործական մտածելու ունակություն, այնպես էլ նոր տեխնոլոգիաների ներուժի իմացություն և դրանք առավելագույն արդյունավետությամբ օգտագործելու ունակություն:

Հրաժարում հնացած տեխնոլոգիաներից. Շատ հաճախ ձեռնարկությունները մեծ գումարներ են ծախսում իրենց հնացած այն տեխնոլոգիաներին աջակցման և պահպանման համար, որոնք այլևս եկամտաբեր չեն և ի վիճակի չեն աջակցել /սպասարկել/ շուկայում պահանջարկ ունեցող թվային գործընթացներին: Դա պայմանավորված է նրանով, որ հին տեխնոլոգիաների արդիականացումը բարդ է և չափազանց թանկ: Հին տեխնոլոգիաների պահպանումը խոչընդոտում է նաև ձեռնարկության ընդհանուր զարգացմանը: Դրանց սպասարկման համար հատկացվում են հսկայական արժեքավոր ռեսուրսներ, որոնք կարող են ծախսվել տեխնոլոգիաների վրա, որոնք ավելի հեշտ են օգտագործման մեջ, կարող են բարելավել հաճախորդների սպասարկումը և (կամ) արագացնել տվյալների վերլուծությունը:

Կորպորացիաները որոնք ընդունել և ընդունում են փոփոխությունները և ունակ են հարմարվել ավելի ճկուն աշխատանքային մոդելների, հաջողության ավելի մեծ ներուժ ունեն, քան երբևէ: Դա պայմանավորված է նրանով, որ թվային վերափոխումը ընդգրկում է տնտեսական գործունեության բոլոր ասպեկտները և թվային տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց առաջարկում է դրանց բարելավման արդյունավետ ուղիներ:

Չենք կարող ժխտել այն փաստը որ այս անցումն ուղեկցվում է մարտահրավերների բազմությամբ՝ գլոբալ թվային տարանջատվածությունից մինչև սոցիալական և զարգացման պոտենցիալ բացասական ազդեցություններ, կիրերանվտանգությանն առնչվող հարցեր, որոնք քաղաքականություն մշակողները պետք է թիրախավորեն¹:

Ինչպես հասկացանք թվայնացումը և տվյալները կարող են փոխել ընկերության աշխատանքային գործընթացները: Այնուամենայնիվ, գործընթացը ավելին է, քան պարզապես լրացուցիչ տեղեկություններ հավաքելը և տվյալների ծանոթ պահեստի և հաճախորդների վերլուծության մոտեցման օգտագործումը, որը սկսվում է տվյալների հավաքագրմամբ և պատմական տեղեկատվությունից տեղեկություններ ստանալու համար, ինչն առավել ակնառու է դառնում կորպորատիվ կառավարման համակարգում վերջինի ընձեռած լայն հնարավորությունների պայմաններում: Այս պարագայում թվային ձեռնարկություն դառնալը պահանջում է ներքին մշակույթի էական փոփոխություն և հմտությունների զարգացում՝ տվյալների արդյունավետ օգտագործման նոր եղանակներ գտնելու և դրանց արդյունավետ կառավարումն իրականացնելու համար:

Ինչ վերաբերում է այս համատեքստում վերջինի ընձեռած հնարավորություններին դրանցից կցանկանայինք առանձացնել հետևյալները.

Գործընթացների կապարելագործում. Նոր տեխնոլոգիաները կորպորացիաներին հնարավորություն են տալիս ավտոմատացնել ավելի պարզ գործընթացները և վերացնել միջանկյալ քայլերը ավելի բարդ գործընթացներում: Սա մեծացնում է վերջինի ճկունությունը, որոնք այժմ կարող են շատ ավելի արդյունավետ օգտագործել իրենց մարդկային ռեսուրսները:

Եկամտի նոր աղբյուրների որոնում. Նոր տեխնոլոգիաների ի հայտ գալով շահույթ ստանալու նոր հնարավորություններ են ընձեռնվում, որոնք հնարավոր է՝ նախկինում չեն եղել:

Անհատականացված հաճախորդների սպասարկում՝ վերջինների գործընթացներին մեծ ներգրավվածությամբ. ներկայումս հաճախորդներն ակնկա-

1 World Investment Report 2017. Investment and the Digital Economy, United Nations Conference on Trade and Development, Geneva, 2019, p. 156, // URL: https://unctad.org/system/files/official-document/wir2017_en.pdf, 06.11.2020

լում են, որ կորպորացիաները կլսեն իրենց կարծիքը և կբավարարեն իրենց հատուկ կարիքները, իսկ ժամանակակից տեխնոլոգիաներն այնքան զարգացած են, որ դրանք կարող են լուծել այս բոլոր խնդիրները:

Եզրակացություններ:

Այսպիսով կորպորացիաները արագորեն փոխարինում են ավանդական փոխազդեցությունները թվայինով՝ օգտագործելով գերժամանակակից տեխնոլոգիա: Շատ հաճախ վերափոխումը տեղի է ունենում ոչ թե այն պատճառով, որ կորպորացիան այդպես է որոշում, այլ այն պատճառով, որ նրանց դա անհրաժեշտ է գոյատևելու և զարգանալու համար: Տնտեսական գործունեության համար արդյունավետ թվային տեխնոլոգիաների պահանջարկն այսօր շուկայում աճել է, և կորպորացիաները որոնք չեն կարողանա հարմարվել նոր թվային սպառողի մոդելին, հավանաբար կմահանան:

Կարծում ենք թվային տվյալների արդյունավետ օգտագործման համար ձեռնարկությունները պետք է անընդհատ տեղակայեն, փորձարկեն և օգտագործեն զարգացող տեխնոլոգիաները՝ ավելի լավ հարմարվելու և պատրաստ լինելու ապագայի մարտահրավերներին և չնայած նոր տեխնոլոգիաների ընդունումը ավելի դիսկային մոտեցում է, քան առկա համակարգերի և սարքերի օգտագործումը՝ հետագա հնարավորություններն ու փոխհատուցումը կլինեն հսկայական:

Աննա ԱՅՎԱԶՅԱՆ

Կորպորատիվ կառավարումը թվային տնտեսության պայմաններում

Բանալի բառեր. թվային տնտեսություն, թվայնացում, կորպորատիվ կառավարում, թվային կորպորացիա

Հոդվածն ուսումնասիրում է կորպորատիվ գործունեության արդյունավետության կառավարման ժամանակակից մոդելներն ու գործիքները՝ թվային վերափոխման համատեքստում: Թվային տնտեսության մեջ կորպորատիվ կառավարման և գույքային հարաբերությունները վերափոխելու անհրաժեշտությունը բխում է թվային ակտիվների, մտավոր սեփականության նոր օբյեկտների, մարդկային և մտավոր կապիտալի աճող դերի հետ կապված նոր իրողություններից: Այս համատեքստում դիտարկվում են թվային կառավարման առավել նշանակալից տեղեկատվական ասպեկտները, ինչպես նաև ընկերությունում թվային տեխնոլոգիաների օգտագործման խոչընդոտները: Ներքին թվային կառավարման պահանջները ձևակերպվում են՝ հաշվի առնելով համաշխարհային տեխնոլոգիական միտումները:

Анна АЙВАЗЯН

Корпоративное управление в цифровой экономике

Ключевые слова: Цифровая экономика, цифровизация, корпоративное управление, цифровая корпорация

В статье исследуются современные модели и инструменты корпоративного управления результативностью в условиях цифровой трансформации. Необходимость трансформации корпоративного управления и имущественных отношений в цифровой экономике проистекает из новых реалий, связанных с цифровыми активами, новыми объектами интеллектуальной собственности и растущей ролью человеческого и интеллектуального капитала. В этом контексте рассмотрены наиболее значимые информационные аспекты цифрового менеджмента, а также препятствия на пути использования цифровых технологий в компании. Требования к внутреннему цифровому менеджменту сформулированы с учетом мировых технологических тенденций, проанализированы результаты современных исследований.

Anna AYVAZYAN

Corporate governance in the digital economy

Key words: Digital economy, digitalization, corporate governance, digital corporation

The article research modern models and tools of corporate performance management in digital transformation environment. The need to transform corporate governance and property relations in the digital economy stems from new realities related to digital assets, new intellectual property objects, and the growing role of human and intellectual capital. In this context, the most significant information aspects of digital management are considered, as well as the barriers to the use of digital technologies in the company. The requirements for internal digital management are formulated taking into account global technological trends, and the results of modern research in this field are analyzed.

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Գևորգ ԱՍԼԱՆՅԱՆ

ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի ասպիրանտ

Բանալի բառեր. պետական պարտք, կայունություն, տնտեսական շոկ, դետերմինիստիկ մոդել, ՀՆԱ

Ներածություն

Պետական պարտքը պետության տնտեսական ռազմավարության իրագործմանը նպաստող, բյուջետային կարգավորման կարևորագույն գործիքներից մեկն է: Պարտքի կայունության տեսակետից երկիրը պետք է ի վիճակի լինի միջնաժամկետ հեռանկարում կատարել պարտքի գծով պարտավորությունները (վճարունակություն) և կարողանա կատարել այն պարտավորությունները, որոնց մարման ժամկետը լրացել է (իրացվելիություն):

Մեթոդաբանություն

ՀՀ կառավարության պարտքի կայունությունը գնահատվել է ԱՄՀ և ՀԲ մշակված MAC DSA մոդելի օգնությամբ: Մոդելի հիմքում ընկած է պարտքի կուտակման բանաձևը: Պարտքի կայունության վերլուծության դետերմինիստիկ մոդելում իրականացվում են բազային սցենարի և տարբեր շոկերի սիմուլյացիաներ, որոնց օգնությամբ վեր են հանվում այդ սցենարի ռիսկերը:¹ MAC DSA դետերմինիստիկ մոդելը սահմանում է ուսումնասիրության խորության 2 աստիճան՝ բարձր և ցածր²: MAC DSA մոդելը միջնաժամկետ ռիսկերի բազմակողմանի վերլուծության ստանդարտացված համակարգ է, որը լիարժեքորեն կարող է կիրառվել Հայաստանի պարտքի կայունության վերլուծություններում: Գործիքների առավելություններից մեկն այն է, որ վերլուծության համար անհրաժեշտ չեն այնպիսի երկարության և որակի ժամանակային շարքեր, ինչպիսիք անհրաժեշտ են ստոխաստիկ և այլընտրանքային վերլուծության մեթոդների մեծ մասի դեպքում:

Գրականության ակնարկ

Պարտքի կայունության վերլուծության համար առանձնացվում է 3 մոտեցում՝ դետերմինիստիկ, ստոխաստիկ և այլընտրանքային: Դետերմինիստիկ

1 IMF-“STAFF GUIDANCE NOTE FOR PUBLIC DEBT SUSTAINABILITY ANALYSIS IN MARKET-ACCESS COUNTRIES”, 2013

2 IMF, online course-“Debt Sustainability Analysis”, 2018

մոդելները հիմնվում են պարտքի կուտակման բանաձևի և դրա առանձին տարրերի վրա շուկերի սիմուլյացիաների, ինչպես նաև պարտքի բեռի սահմանված շեմերի վրա:¹ Ստոխաստիկ մոդելների հիմքը պարտքը ձևավորող գործոնների փոճադարձ կապերը և օրինաչափություններն են, որոնք պրոյեկտվում են ապագայի վրա: Ստոխաստիկ մոտեցումը ևս օգտագործում է պարտքի կուտակման բանաձևը՝ պարտքի սիմուլյացիաների իրականացման համար:² Այլընտրանքային մոտեցումներ շարքին են դասվում «հավասարակշիռ պարտք/ՀՆԱ» սահմանաչափի գնահատումը, «ֆիսկալ տարածքի» գնահատումը, «ֆիսկալ արձագանքի ֆունկցիայի» գնահատումը, էկոնոմետրիկ վերլուծության այլ մեթոդներ: Նշենք, որ ի տարբերություն դետերմինիստիկ մոտեցման, ստոխաստիկ և այլընտրանքային մոտեցումների համար հիմնականում անհրաժեշտ են էկոնոմետրիկ վերլուծության համար բավարար պարամետրեր ունեցող ժամանակային շարքեր: Այս մոտեցումներն առավել հաճախ ոչ թե փոխարինում, այլ փոխլրացնում են միմյանց: Մասնավորապես ստոխաստիկ և այլ մոտեցումները լրացնում են դետերմինիստիկ վերլուծության արդյունքներին՝ դիտարկելով արպես ռիսկերի գնահատման լրացուցիչ գործիքակազմ:³

Վերլուծություն

Վերջին տարիներին ՀՀ պետական պարտքը անընդհատ աճում է, իսկ 2016թ. կառավարության պարտքի կտրուկ աճից հետո, որը շարունակվեց նաև 2017թ., կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը գերազանցեց 50%-ը: Հետագա ռիսկերը նվազեցնելու համար ՀՀ կառավարությունը 2017թ. իրականացրեց հարկաբյուջետային կանոնների արդիականացում⁴, իսկ 2018թ. և 2019թ. ներկայացրեց պարտքի նվազեցման ծրագրեր, որի արդյունքում նախատեսվում էր կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը մինչև 2023թ. նվազեցնել 50%-ից: 2020թ. ընթացքում համաճարակի և պատերազմի սոցիալական և տնտեսական հետևանքները հաղթահարելու համար կառավարությունը ներգրավեց նոր պարտք: Այսպիսով 7.4% տնտե-

1 IMF-“STAFF GUIDANCE NOTE FOR PUBLIC DEBT SUSTAINABILITY ANALYSIS IN MARKET-ACCESS COUNTRIES”, 2013

2 O. CELASUN, X. DEBRUN, J.D. OSTRY-“ Primary Surplus Behavior and Risks to Fiscal Sustainability in Emerging Market Countries: A “Fan-Chart” Approach”, IMF, 2007

3 S. Roberta de, B. Othman, D. Francesco, Se. Ralph-“ Debt sustainability analysis for euro area sovereigns. A methodological framework”, ECB, 2017


4 ՀՀ կառավարության 2018թ-ի օգոստոսի 23-ի N 942-Ն որոշում

սական անկման պայմաններում կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կազմեց 63.5%, որը կառավարությունը պետք է փորձի նվազեցնել հաջորդող 5 տարիների ընթացքում:

ՀՀ կառավարության պարտքը 2000թ. կազմել է ՀՆԱ-ի 39.8%-ը և մինչև 2007թ. այս ցուցանիշը նվազել է՝ կազմելով 14.5%: Պարտքը աճել է 29.3%-ով, սակայն այս տարիներին գրանցվել է իրական ՀՆԱ երկնիշ աճ, որի արդյունքում էլ պարտք/ՀՆԱ ցուցանիշը նվազել: 2008-2009թթ. ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքները մեղմելու համար պետական բյուջեի պակասուրդի հաշվին մեծածավալ ֆինանսական միջոցներ է ներարկվել տնտեսություն: Այսպիսով՝ ՀՀ կառավարության պարտքը աճեց գրեթե երկու անգամ, իսկ ՀՆԱ-ն նվազեց 14.1%-ով որի արդյունքում պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը աճեց գրեթե 20 տոկոսային կետով: 2010-2013թթ. պարտք/ՀՆԱ ցուցանիշի աճը մեղմ է եղել: 2014-2016թթ. կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կտրուկ ավելացել է: ՌԴ տնտեսության անկման, ռուբլու արժեզրկման, հումքային ակտիվների՝ այդ թվում պղնձի գների անկման հետևանքով տնտեսության անկումը թույլ չտալու համար կառավարությունը ընդլայնեց պետական բյուջեի պակասուրդը: 2016թ.՝ 2013թ. համեմատ ՀՀ կառավարության պարտքը աճեց մոտ 59%-ով: Արդյունքում պարտք/ՀՆԱ ցուցանիշը գերզանցեց 50%-ը՝ կազմելով 51.9%, որի հետևանքով գործի դրվեց հարկաբյուջետային կանոնով նախատեսված՝ բյուջեի դեֆիցիտի սահմանափակումը (վերջին երեք տարում ՀՆԱ 3%-ի չափով)¹: 2017թ. պարտք/ՀՆԱ ցուցանիշը աճեց 1.8 տոկոսային կետով և կազմեց՝ 53.7%: Որն էլ ազդակ դարձավ նոր հարկաբյուջետային կանոնների կիրառմանը: 2018թ. ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը նվազել է 2.4 տոկոսային կետով և կազմել 51.3 տոկոս: Ցուցանիշի նվազումն արձանագրվել է մի կողմից ՀՀ կառավարության կողմից պլանավորված հարկաբյուջետային կոնսոլիդացիայի, մյուս կողմից՝ սպասվածից էլ ավելի զսպող քաղաքականության իրականացման շնորհիվ, որի արդյունքում բյուջեի առաջնային հաշվեկշիռը կազմել է ՀՆԱ 0.6 տոկոսը: 2019թ. պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը նվազեց 1.2 տոկոսային կետով և կազմեց 50.1%: Դրա հիմնական պատճառը իրական ՀՆԱ-ի 7.6% աճն էր՝ 5.4% կանխատեսվածի փոխարեն: 2020թ. ընթացքում համաճարակի և պատերազմի սոցիալական և տնտեսա-

1 «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենք, 2008թ.

կան հետևանքները հաղթահարելու համար կառավարությունը ներգրավեց նոր պարտք: Այսպիսով 7.4% տնտեսական անկման պայմաններում կառավարության պարտք/ՀՆԱ-ն կազմեց 63.5%, որը կառավարությունը պետք է փորձի նվազեցնել հաջորդող 5 տարիների ընթացքում:



Գծապատկեր 1. ՀՀ կառավարության պարտքի դինամիկան 2000-2019թթ. Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ

ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի արդյունավետ կառավարման նպատակով անհրաժեշտ է բացահայտել և գնահատել ՀՀ կառավարության պարտքի պորտֆելին բնորոշ ռիսկերը: Այդ պատճառով ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունը սահմանում է պարտքի պորտֆելի ռիսկերի ուղենշային ցուցանիշներ:¹ ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2018-2020թթ. և 2019-2021թթ. ռազմավարական ծրագրերում կառավարությունը սահմանել էր միևնույն ուղենշային ցուցանիշները:² Սակայն, հաշվի առնելով 2020թ. տեղի ունեցած իրադարձությունները, կառավարությունը 2021-2023թթ. պարտքի ռազմավարական ծրագրում³ փոխարժեքի ռիսկի ցուցանիշները սահմանեց առնվազն 25%, նախկին 20%-ի փոխարեն:

1 ՀՀ ՖՆ-«ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2019-2021թթ.ռազմավարական ծրագիր»,2018թ.
 2 ՀՀ ՖՆ-«ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2018-2020թթ.ռազմավարական ծրագիր»,2017թ.
 3 ՀՀ ՖՆ-«ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2021-2023թթ.ռազմավարական ծրագիր»,2020թ.

Աղյուսակ 3. ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի 2019-2021թթ. ուղենշային ցուցանիշները (2021-23թթ. ուղենշային ցուցանիշներ)

	Ուղենիշ	2018թ.	2019թ.	2020թ.
Վերաֆինանսավորման ռիսկ				
Մինչև մարում միջին ժամկետը	8 – 11 տարի	8.7 տարի	9.1 տարի	8.8 տարի
Առաջիկա տարում մարվող պետ. գանձապետ. պարտատոմսերի (ՊԳՊ) կշիռը ՊԳՊ ծավալում (տարեվերջին)	Առավելագույնը 20%	13.1%	12.7%	11.5%
Տոկոսադրույքի ռիսկ				
Ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 80%	85.0%	83.8%	80.4%
Փոխարժեքի ռիսկ				
Ներքին պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 20% (25%)	21.8%	22.5%	25.4%
ՀՀ դրամով ներգրավված պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 20% (25%)	19.1%	20.8%	24.4%

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ¹

Վերաֆինանսավորման ռիսկը բնութագրող ցուցանիշներից առաջին տարվա ընթացքում մարվող պարտատոմսերի կշիռը 2017թ. կազմել էր 19.1%², որը կտրուկ մոտեցել էր ուղենիշային ցուցանիշին, սակայն վերջին երեք տարիներին այն շարունակաբար նվազում է և 2020թ. կազմել 11.5% և բավականին հեռու է ռիսկային գոտուց: ՀՀ կառավարության պարտքի մինչև մարման միջին ժամկետը 2017թ. եղել է 9 տարի, իսկ 2020թ. 8.8տարի, որը ևս կառավարելի միջակայքում է:

Տոկոսադրույքի ռիսկի կառավարման տեսակետից կարևորվում է լողացող տոկոսադրույքով պարտքի ծավալների աճի սահմանափակումը: 2020թ. ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռը կազմել է 80.4% 2018թ. 85%-ի փոխարեն: Այսպիսով՝ տոկոսադրույքի ռիսկի ցուցանիշները ցույց են տալիս, տոկոսադրույքի ռիսկը վերջին տարիներին ավելանում է:

Փոխարժեքի ռիսկ: 2019թ. ՀՀ կառավարության ներքին պարտքը կազմել է 25.4%, որը 3.6 տոկոսային կետով ավել է 2018թ. ցուցանիշից: Այսինքն եթե 2018թ. ներքին պարտքի ցուցանիշը մոտեցել է ռիսկային կետին, ապա 2020թ. այն արդեն ամրապնդվել է կառավարման միջակայքում: Հատ-

1 ՀՀ ՖՆ-«ՀՀ պետական պարտքի 2020թ. տարեկան հաշվետվությունը», 2021թ.

2 ՀՀ ՖՆ-«ՀՀ պետական պարտքի 2017թ. տարեկան հաշվետվությունը», 2018թ.

կանչական է նաև այն, որ այս ցուցանիշը բավարարում է նաև 2021-23թթ. ռազմավարական ծրագրի ուղենիշային ցուցանիշներին: ՀՀ կառավարության պարտքի արժույթային կառուցվածքում ՀՀ դրամով ներգրաված պարտքի մասնաբաժինն աճել է 5.3 տոկոսային կետով: 2018թ. ՀՀ դրամով ներգրավված պարտքը կազմել է 19.1%, իսկ 2020թ. 24.4%:

ՀՀ պետական պարտքի կայունության գնահատումը MAC DSA մոդելի միջոցով: Գնահատենք ՀՀ կառավարության պարտքի կայունությունը ԱՄՀ և ՀԲ մշակած MAC DSA մոդելի օգնությամբ: ՀՀ պետական պարտքի կայունության գնահատման համար անհրաժեշտ է կատարել որոշ մակրոտրնտեսական ցուցանիշների կանխատեսումներ:

Աղյուսակ 4. Պարտքի կայունության վերլուծության հիմքում ընկած առանցքային ենթադրություններ

	2021	2022	2023	2024	2025	2026
Անվանական ՀՆԱ	6.769	7.412	8.116	8.868	9.688	10.585
ՀՆԱ դեֆլյատորի աճ	3.9	4	4	4	4	4
Իրական ՀՆԱ աճ	5.5	5.2	5.1	5.1	5.1	5.1

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ, հեղինակի հաշվարկներ

Բազային սցենարի կանխատեսումները անելիս հիմնվել ենք ՀՀ կառավարության պարտքի նվազեցման վերանայված ծրագրի¹ և կառավարության պարտքի կառավարման 2021-23թթ. ռազմավարական ծրագրի վրա²: Կանխատեսվող տարիների համար իրական ՀՆԱ աճը միջինում կազմում է 5%, իսկ ՀՆԱ դեֆլյատորը՝ 4%: Բազային սցենարում կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը աստիճանաբար նվազում է և 2026թ. հասնում է 52.2%-ի՝ հիմնականում պայմանավորված տնտեսական աճով:


Աղյուսակ 5. Պարտքի կայունության գնահատման բազային սցենար

Փաստացի	Կանխատեսումներ									
	2010-2018	2019	2020	2021	2022	2023	2024	2025	2026	
Կառավարության պարտք	42.0	50.0	63.5	61.6	59.9	58.6	55.7	53.5	52.2	
Համախառն ֆինանսավորման պահանջ	6.2	3.8	10.0	7.1	6.1	5.7	4.4	5.5	3.5	
Իրական ՀՆԱ. աճ %	4.1	7.6	-7.4	5.5	5.1	5.1	5.1	5.1	5.1	
ՀՆԱ դեֆլյատոր. %	2.5	1.4	3.5	4.0	4.0	4.0	4.0	4.0	4.0	
Անվանական ՀՆԱ աճ. %	6.7	9.1	-5.7	9.5	9.5	9.5	9.3	9.3	9.3	
Արդյունավետ տոկոսադրույք. %	3.7	5.1	5.1	5.0	5.6	6.1	6.7	6.8	6.6	

Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ, հեղինակի հաշվարկներ

1 ՀՀ ՖՆ, ՀՀ կառավարության պարտքի նվազեցման 2019-2023թթ. վերանայված ծրագիր
2 ՀՀ ՖՆ, ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2021-2023թթ. ռազմ. ծրագիր, 2020թ

Պարտքի բեռի նվազեցմանը նպաստում է նաև կանխատեսվող դրական առաջնային հաշվեկշիռը. իսկ տոկոսադրույքը և պարտքի այլ հոսքերը նը-պաստում են հակառակ ուղղությամբ:



Գծապատկեր 2. Կառավարության պարտքի բեռի փոփոխության գործոնային վերլուծություն

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ. հեղինակի հաշվարկներ


Բյուջեի համախառն ֆինանսավորման պահանջը կանխատեսվող տարիներին նվազում է, բայց 2025թ. աճում է և կազմում է 5.5%՝ կապված 2019թ. թողարկված եվրոպարտատոմսերի մարման հետ: 2026թ. այն կկազմի 3.5%: Ինչպես նշել ենք, MAC DSA դետերմինիստիկ մոդելը սահմանում է ուսում-

նասիրության խորության 2 աստիճան՝ բարձր և ցածր¹: Քանի որ Հայաստանի կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 2020թ. կազմել է 63.5%: Հայաստանի պարտքի կայունության գնահատման համար սահմանվում է բարձր աստիճանի խորության ուսումնասիրություն: Սա նշանակում է, որ բացի երկու հիմնական՝ պատմական և հաստատուն առաջնային հաշվեկշռի այլընտրանքային սցենարներից, կիրառվելու են նաև լրացուցիչ մակրոֆիսկալ թեստերը:


Ներկայացնենք հիմնական այլընտրանքային՝ պատմական և հաստատուն առաջնային հաշվեկշռի սցենարները: Այսպիսով՝ պատմական սցենարի դեպքում իրական ՀՆԱ աճը 2022-2026թթ. կազմում է 3.5%, առաջնային հաշվեկշիռը՝ -1.4%: Հաստատուն առաջնային հաշվեկշռի սցենարի դեպքում կանխատեսվող բոլոր տարիներում առաջնային հաշվեկշիռը վերցվում է կանխատեսվող առաջին տարվա առաջնային հաշվեկշռին հավասար:

Պատմական սցենարի դեպքում կառավարության պարտքի բեռը շարունակում է աճել և 2026թ. կազմում է 72.4%: Բնականաբար պարտք/ՀՆԱ ցուցանիշի աճը անհանգստացնող է, սակայն պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ այս սցենարը բավականին վատատեսական է և հաշվի չի առնվում կառավարության հարկաբյուջետային վարքագիծը պարտք/ՀՆԱ հարաբերակցության մոնոտոն աճի դեպքում:

..... Պատմական — — Հաստատուն առաջնային հաշվեկշիռ — — Բազային կառավարության պարտք (% ՀՆԱ-ում) Համախառն ֆինանսավորման պահանջ (% ՀՆԱ-ում)



IMF, online course-“Debt Sustainability Analysis”, 2018



Գծապատկեր 3. Պարտքի կայունության գնահատման
այլընտրանքային սցենարներ

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ. հեղինակի հաշվարկներ

Համախառն ֆինանսավորման կարիքներ/ՀՆԱ ցուցանիշը պատմական սցենարի դեպքում աճում է մինչև 2025թ.՝ կազմելով 10.3%, սակայն 2026թ. այն նվազում է մինչև 7.7%: Հաստատուն առաջնային հաշվեկշռի սցենարի դեպքում կառավարության պարտքը գրեթե փոփոխությունների չի ենթարկվում և շարունակում է մնալ 60%-ից բարձր:

Կառավարության պարտքը կիրառված մակրո-ֆիսկալ սթրես թեստերից ամենաշատը զգայուն է տնտեսական աճի և փոխարժեքի շոկերի նկատմամբ. իսկ համախառն ֆինանսավորման պահանջը՝ ՀՆԱ-ի և առաջնային հաշվեկշռի շոկերի նկատմամբ: Առաջնային հաշվեկշռի շոկի դեպքում առաջնային հաշվեկշռը կանխատեսվող 1-ին և 2-րդ տարիների վերցվում է -0.4. իսկ մնացած ցուցանիշները մնում են նույնը ինչ բազային սցենարի դեպքում:


Իրական ՀՆԱ աճի շոկի դեպքում ՀՆԱ աճը կանխատեսվող 2-րդ և 3-տարում բազային սցենարի համեմատ նվազեցվում է նախորդ 10 պատմական տարիների ստանդարտ շեղման չափով և կազմում է համապատասխանաբար՝ 0.7% և 0.6%: ՀՆԱ աճի նվազեցումը հանգեցնում է ՀՆԱ դեֆլյատորի աճի նվազման. կանխատեսվող 2-րդ և 3-րդ տարիներին այն կկազմի 2.9%: ՀՆԱ աճի կրճատումը հանգեցնում է նաև առաջնային ծախսերի ավելացմանը. որն էլ հանգեցնում է առաջնային հաշվեկշռի նվազմանը: Առաջնային հաշվեկշռը կանխատեսվող 2-րդ և 3-րդ տարիների համար կկազմի -

0.5% և -2%: Իրական տոկոսադրույքի շուկի դեպքում փոփոխվում է միայն արդյունավետ տոկոսադրույքը կանխատեսվող տարիների համար. իսկ մնացած փոփոխականները մնում են անփոփոխ: Իրական փոխարժեքի շուկի դեպքում անվանական փոխարժեքը կանխատեսվող 2-րդ և 3-րդ տարիներին արժեզրկվում է 23%-ով. որն էլ հանգեցնում է ՀՆԱ դեֆլյատորի աճի փոփոխության. կանխատեսվող 2-րդ տարում այն կկազմի 9.7%: Փոփոխության է ենթարկվում նաև արդյունավետ տոկոսադրույքը:


¹ Моторина С. Клиентоориентированность должна стать ДНК, корпоративной религией компании. Управление персоналом. 2012. № 11

որպես կանոն, հիմնականում ուղղված է դեպի արտաքին կողմնորոշիչները: Այս մոտեցման հիմքում ընկած է հաճախորդների ակնկալիքների բավարարմանն ուղղված ներքին ստանդարտների սահմանումը: Հաճախորդամետ քաղաքականություն իրականացնող բանկերը հետապնդում են ոչ միայն բանկային պրոդուկտների և ծառայությունների իրացման, այլ նաև հաճախորդների հետ համագործակցության խորացման և ամրապնդման նպատակ՝ նրանց լոյալության ապահովման և հավատարիմ հաճախորդների թվաքանակի ավելացման միջոցով: Նման հաճախորդները, որպես կանոն, առավել բաց են նոր առաջարկների համար և հակված են իրենց ծանոթներին երաշխավորել տվյալ բանկի ծառայություններից օգտվելու համար: Արդյունքում, նման քաղաքականությունը հնարավորություն է տալիս բանկին ավելացնել վաճառքի և շահույթի ծավալները, բնակչության շրջանում բարձրացնել սեփական վարկանիշը և համբավը: Ակնհայտ է, որ հաճախորդների հետ արդյունավետ երկխոսություն ապահովելու բանկի անկարողությունը կարող է չափազանց թանկ "արժենալ" վերջինիս համար: Եթե նախկինում մեկ բավարարված սպառողը կարող էր ներգրավել հինգ նոր հաճախորդի, ապա համացանցի զարգացման ներկա փուլում այն կարող է հասնել մինչև 5000-ի:¹ Այսինքն, մեկ չբավարարված հաճախորդի պատճառով այդքան կկազմեն բանկի պոտենցիալ կորուստները: Հետևաբար, հաճախորդի շահերին ու հետաքրքրություններին գերակայություն տալը նշանակում է նախապատվություն տալ երկարաժամկետը կայունությանը, այլ ոչ թե իրավիճակային օգուտներին: Այս առումով, բանկերի խնդիրը պետք է հանդիսանա ոչ միայն սեփական բրենդի դրական իմիջի ձևավորումը, այլ նաև սեփական հաճախորդներին համակողմանի աջակցության ցուցաբերումը՝ ֆինանսական աշխարհում իրենց հանգիստ ու ապահով զգալու նպատակով: Որոշումների կայացման ժամանակ բանկերը պետք է առաջնորդվեն յուրաքանչյուր հաճախորդի "ներկա և ապագա" արժեքի իրատեսական գնահատման սկզբունքով: Փորձագիտական գնահատումների համաձայն, զարգացած արևմտյան երկրներում հավատարիմ և լոյալ հաճախորդների հետ համագործակցության ամբողջ ժամանակահատվածում շահութաբերությունը միջին հաշվով 9Ձ5 հազար ԱՄՆ դոլարով գերազանցում է դժգոհ հաճախորդների հետ համագործակցության շահութա-

¹ Моторина С. Клиентоориентированность должна стать ДНК, корпоративной религией компании. Управление персоналом. 2012. № 11

բերությանը:¹ Անշուշտ, բանկերի ճիշտ չհաշվարկված հաճախորդամետ քաղաքականության իրականացումը կարող է ստեղծել որոշակի ռիսկեր և հիմնախնդիրներ, որոնք իրենց բացասական ազդեցությունը կունենան բանկի գործունեության և նրա ֆինանսատնտեսական ցուցանիշների վրա: Այս առումով, գոյություն ունեն մի քանի հիմնարար սկզբունքներ, որոնք անվերապահ կերպով պետք է հաշվի առնվեն և դրվեն նման քաղաքականության հիմքում: Մասնավորապես, որպես այդպիսիք պետք է դիտարկել հաճախորդների հետ ամուր և փոխշահավետ հարաբերությունների ստեղծումը, բարձր որակի բանկային ծառայությունների մատուցումը և սպասարկումը: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ վերջիններս սերտորեն փոխկապակցված են և չպետք է դիտարկվեն միմյանցից առանձին, քանի որ որակյալ սպասարկումն ավելացնում է ֆինանսական պահանջմունքների բավարարման հնարավորությունները, իսկ արդյունավետ վաճառքը ավանդատուին կապում է բանկին և ստեղծում համագործակցության նոր հեռանկարներ:

Եզրակացություններ

Ընդհանուր առմամբ, բանկերի հաճախորդամետ քաղաքականության իրականացումը պետք է ապահովվի հետևյալ մոտեցումների կիրառմամբ:

- Հաճախորդամետությունը որպես բրենդ: Առևտրային բանկի բրենդն արտաքին աշխարհի և, առաջին հերթին, հաճախորդների կողմից նրա ընկալումն է: Անհրաժեշտ է գնահատել, թե ինչի՞ հետ է ասոցացվում տվյալ բանկը և ինչպե՞ս են հաճախորդները գնահատում հաճախորդամետության աստիճանը: Այդ ամենի հիման վրա անհրաժեշտ է ուրվագծել տվյալ բրենդի նպատակային զարգացման վեկտորը, այսինքն, ինչպիսի՞ն նրանք կցանկանային ապագայում տեսնել:

- Հաճախորդամետությունը որպես արժեք: Որպեսզի հաճախորդամետությունը ամրապնդվի արտաքին աշխարհի ընկալումներում, անհրաժեշտ է, որ այն դառնա բանկի ներքին արժեքը: Եթե հաճախորդամետությունը դիտարկենք որպես արժեք, ապա անհրաժեշտ կլինի մշակել դրա գնահատման չափանիշներ: Այս դեպքում անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ժամանակակից իրողությունների պայմաններում առավել հաջողակ են այն բանկերը, որոնք կարողանում են հաճախորդների պահանջմունքները մղել առաջին պլան: Հաճախորդամետ քաղաքականության իրականացման արդյունքում

¹ Мамонтов А. Новые принципы сотрудничества. Банковская практика за рубежом. 2011. №5

ստացված լրացուցիչ շահույթը դառնում է սպառողների որակյալ սպասարկումից և մատուցվող ծառայությունների բավարարվածությունից հարակից էֆեկտ: Այս տեսանկյունից, ռազմավարական սխալ է միայն շահույթի ցուցանիշի միջոցով բանկի գործունեության գնահատումը: Հաճախորդամետ քաղաքականություն իրականացնող բանկի տարբերությունը մյուսներից այն է, որ առաջինի ղեկավարությունը շահույթը դիտարկում է որպես հաճախորդների պահանջմունքների բավարարման արդյունք: Եթե բանկը մշտապես չի ներգրավում նոր հաճախորդների, ապա նա երկարաժամկետ հատվածում չի կարող լինել շահութավեր: Այս առումով, բանկային գործունեության տեսանկյունից գոյություն ունի հետևյալ կանոնը՝ այսօր ստացվող շահույթը ապահովում են երեկ ներգրավված հաճախորդները: Հետևաբար, "վաղվա" շահույթը կապահովեն ներկա պահին բանկային սպասարկումից բավարարված և բանկի հետ համագործակցող հաճախորդները: Դեպի հաճախորդը կողմնորոշված բանկը մշտական հաճախորդին դիտարկում է որպես իր ամենաարժեքավոր ակտիվը: Այս համատեքստում կարելի է պնդել, որ եթե շահույթը անցած ժամանակահատվածում բանկի գործունեության արդյունավետության ցուցանիշն է, ապա հաճախորդի պահանջմունքների բավարարվածության աստիճանն ապագա շահույթի ցուցանիշն է:

Կարևոր մոտեցում է հանդիսանում հաճախորդամետության՝ որպես սըրտանդարտի դիտարկումը: Ավելացված արժեք ստեղծող և հաճախորդների հետ առնչվող բոլոր գործընթացները պետք է դիտարկվեն հաճախորդամետության տեսանկյունից: Անհրաժեշտ է վերացնել բոլոր այն բացասական գործոնները, որոնք հաճախորդների սպասարկման տեսանկյունից ստեղծում են անհարմարավետություն, ավելորդ քաջջուկներ և նմանատիպ այլ երեվոյթներ:

Ընդհանրացնելով վերը նշվածը, կարծում ենք, որ բանկի հաճախորդամետ ռազմավարության հիմքում պետք է դրվեն հետևյալ մոտեցումները:

- բանկային բիզնես գործընթացների իրականացում՝ հաշվի առնելով հաճախորդների ակնկալիքները և պահանջմունքները,
- բանկի շահութաբերության ավելացման ռազմավարության մշակում և ներդրում՝ այնպիսի պայմանների ստեղծման հաշվին, որի պարագայում հաճախորդը կցանկանա ձեռք բերել բանկային պրոդուկտ և խորհուրդ կտա իր շփման շրջանակին հետևել այդ օրինակին,

- յուրաքանչյուր հաճախորդին առավելագույնս երկար ժամանակ փոխշահավետ պայմաններով "պահելու" համար համապատասխան պայմանների ստեղծում,

- հաճախորդի ցանկությունների "կանխագուշակում" և նրան ընդառաջ քայլերի իրականացում,

- բանկի աշխատակիցների գիտակցության մեջ հաճախորդամետ գաղափարախոսության ներդրում, այդ ուղղությամբ իրական մոտիվացիայի ապահովում, թափանցիկ և հասկանալի նյութական խթանների ստեղծում, որոնց պարագայում աշխատակիցն ուղղակիորեն կզգա հաճախորդամետ վարքագծի շահավետությունը:

Ամփոփելով, հարկ ենք համարում նշել, որ բանկերի հաճախորդամետ քաղաքականությունն իր մեջ պետք է պարունակի ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական նպատակներ: Միջբանկային մրցակցության ներկա պայմաններում միայն մշտական հաճախորդների կայուն բանակ ունեցող բանկերը կկարողանան ուժեղ դիրքեր ապահովել մրցակցային պայքարում:

Գևորգ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Հաճախորդների հետ համագործակցության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները առևտրային բանկերում

Բանալի բառեր. առևտրային բանկ, բանկի հաճախորդ, բանկային պրոդուկտ, բանկային ծառայություններ, բանկային սպասարկում

Հոդվածը նվիրված է առևտրային բանկերում հաճախորդների հետ համագործակցության խնդիրների քննարկմանը: Ներկայացվել են երկարաժամկետ համագործակցության հիմնական ուղիները, դրա վրա բացասաբար անդրադարձող գործոնները և դրանց ազդեցության չեզոքացման հիմնական մոտեցումները: Առաջարկվել են բանկային սպասարկման որակի գնահատման հիմնական չափանիշները և դրա բարձրացման ուղիները: Մշակվել են առևտրային բանկի կողմից հաճախորդամետ քաղաքականության իրականացման հիմնական սկզբունքները:

Геворг КИРАКОСЯН

Проблемы сотрудничества с клиентами и пути их решения в коммерческих банках

Ключевые слова: коммерческий банк, клиент банка, банковский продукт, банковские услуги, банковское обслуживание

Статья посвящена обсуждению проблем сотрудничества с клиентами в коммерческих банках. Представлены основные пути долгосрочного сотрудничества, отрицательно отражающие на нем факторы и основные подходы по нейтрализации их влияния. Предложены основные критерии оценки качества банковского обслуживания и пути его повышения. Разработаны основные принципы клиентоориентированной политики коммерческих банков.

Gevorg KIRAKOSYAN

Problems of cooperation with clients and ways to solve them in commercial banks

Keywords: commercial bank, bank client, banking product, banking services, banking services

The article is devoted to the discussion of the problems of cooperation with clients in commercial banks. The main ways of long-term cooperation, the factors that negatively affect it, and the main approaches to neutralizing their influence are presented. The main criteria for assessing the quality of banking services and ways to improve it are proposed. The basic principles of the customer-oriented policy of commercial banks have been developed.

АНАЛИЗ МАКРОЭКОНОМИЧЕСКИХ ПОКАЗАТЕЛЕЙ СЧЕТОВ ОПЕРАЦИЙ С КАПИТАЛОМ (НА ПРИМЕРЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ)

Маргарита ЕГИАЗАРЯН

доцент кафедры экономики и МЭО ЕГУ, к.э.н.,

Арсен ОГАНДЖАНОВ

Аспирант кафедры экономики и МЭО ЕГУ

Ключевые слова: система национальных счетов, счет операций с капиталом, чистое кредитование, чистое заимствование

Система национальных счетов (СНС) позволяет получать достоверную аналитическую информацию для макроэкономического анализа и прогнозирования финансовых агрегатов. Основная задача СНС, в общем виде заключается в удовлетворении потребностей общества в информации о финансово-экономическом состоянии и развитии страны и отдельных элементов ее экономической системы. СНС служит надежным источником информации для экономических агентов, принимающих самостоятельные стратегические решения в условиях рыночной экономики. На сегодняшний день для анализа финансов статистическая практика Армении имеет возможность представлять только счет операций с капиталом, который составляется по секторам финансовых и нефинансовых корпораций, государственного управления, домашних хозяйств, некоммерческих организаций, обслуживающих домашние хозяйства и для остального мира. Разработка счетов финансовых потоков зависит от ресурсов страны, от полноты структуры статистики платежного баланса, государственных финансов и денежно-кредитной статистики.

Методологической основой исследования являются Система национальных счетов-2008 (СНС-2008)¹ и труды зарубежных ученых в области экономической теории и системного анализа. В статье использовались научные методы, позволяющие выявить основные характеристики счета операций с капиталом СНС, определить тенденции их развития и становления. В процессе исследования были применены такие научные методы, как анализ и синтез, системный подход, экономико-статистический, традиционные методы группировки, обобщения, сравнения.

Обзор литературы. Теоретические аспекты макроэкономических счетов особо актуальна для научного сообщества. В разработку методологии построения национальных счетов как системы взаимоувязанных макропоказателей значительный вклад внесли Ф. Кенэ, Г. Кинг, М. Гильберт, Дж. М. Кейнс, Э. Денисон, М. Джильберт, К. Кларк, А. Мэдисон, П. Хилл, К. Грюзон и др. Научные исследо-

¹ Это издание подготовлено и выпускается под эгидой Организации Объединенных Наций, Европейской комиссии, Организации экономического сотрудничества и развития, Международного валютного фонда и Группы Всемирного банка.

вания данных ученых посвящены аргументацию необходимости внедрения национальных счетов и теоретическим проблемам реализации данной макросистемы, тем не менее проблемы, связанные с применением СНС в качестве институционального инструмента регулирования экономики требуют более глубокого анализа, что и повлияло на выбор научной темы.

Счет операций с капиталом как инструмент макроэкономического анализа предназначен для организации процесса реального накопления основных и оборотных средств, нематериальных и нефинансовых активов, а также источников его финансирования. В этом счете отражаются операции, связанные с приобретением нефинансовых активов и капитальные трансферты, приводящие к перераспределению богатства. В ресурсной части счета (изменения в обязательствах и чистой стоимости капитала) показываются чистое сбережение, капитальные трансферты, подлежащие получению и капитальные трансферты, подлежащие выплате, что позволяет определить изменение чистой стоимости капитала. В использовании (изменения в активах) показываются различные виды инвестирования в нефинансовые активы (валовое накопление основных средств, изменение запасов материальных оборотных средств, чистые покупки земли и нематериальные активы).

Балансирующей статьей счета операций с капиталом является чистое кредитование или чистое заимствование. Чистое кредитование со знаком плюс, измеряющее чистую величину ресурсов, которую институциональная единица или сектор могут предоставить прямо или в косвенной форме другим институциональным единицам или секторам. Чистое заимствование со знаком минус, измеряющее величину ресурсов, которую институциональная единица или сектор вынуждены занять у других институциональных единиц или секторов [2, с. 29]. В счете операций с капиталом чистое кредитование или чистое заимствование можно рассчитать по следующей формуле [3, с. 158]:

$$NL/NB = S + CT_R - CT_P - GFCF - CFC - CI - ALDV - ALDNPA$$

- NL/NB - Чистое кредитование или чистое заимствование
- S - Сбережение
- CT_R - Капитальные трансферты, подлежащие получению
- CT_P - Капитальные трансферты, подлежащие выплате
- $GFCF$ - Валовое накопление основного капитала
- CFC - Потребление основного капитала

- CI - Изменение запасов материальных оборотных средств
- ALDV - Приобретение ценностей за вычетом выбытия
- ALDNPA - Приобретение произведенных активов за вычетом выбытия

Макроэкономический анализ способствует определять взаимосвязи между производством и использованием, накоплением капитала и сбережением, а также идентифицировать взаимосвязи между национальной экономикой и остальным миром. Счет операций с капиталом используется для разработки структуры финансирования, обусловленной сбережениями и чистыми капитальными трансфертами. Структура финансирования, рассчитанная по данным Статистического Комитета РА за период с 2012 по 2018 г., иллюстрируется в таблице 1.

Таблица 1. Структура счета операций с капиталом в Республике Армения за 2012-2018 гг., млн драмов [7]

	2012г.	2013г.	2014г.	2015г.	2016г.	2017г.	2018г.
Сбережение	601 428.6	675 914.3	641 303.0	929 562.7	902 712.7	941 113.8	931 038.9
Кап. трансф. подлежа. получению	51 927.5	42 220.6	35 713.2	37 408.5	22 011.9	26 018.6	37 371.6
Кап. трансферты, подлежа. выплате	8 368.7	7 656.0	6 421.3	6 212.1	5 257.0	3 663.8	4 744.2
Всего	644 987.4	710 478.9	670 594.9	960 759.1	919 467.6	963 468.6	963 666.3
Валовое накопление основного капитала	1 006 835.0	966 365.3	965 486.6	1 039 622.0	879 566.6	982 042.7	1 007 306.5
Изменение запасов мат. обор. средств	46 168.1	42 822.0	62 191.9	5 949.9	33 332.1	43 033.8	340 493.7
Чистое кредитование (+) /чистое заимствование(-)	-408 015.7	-298 708.4	-357 083.6	-84 812.8	6 568.9	-61 607.9	-384 133.9
Всего	644 987.4	710 478.9	670 594.9	960 759.1	919 467.6	963 468.6	963 666.3

Так, представленная таблица, составленная в соответствии с требованиями СНС, в которой распределены основные элементы счета операций с капиталом и выявлены основные показатели, характеризует положение финансово-кредитных ресурсов экономики Армении. В связи с вышеизложенным, особый интерес представляет анализ основных компонентов счета операций с капиталом по секторам экономики. Главные направления макроэкономического анализа заключаются не только в оценке операций образования, распределения и перераспределения экономических ресурсов, но и в выявлении величины дефицита и источников его финансирования по институциональным секторам, по экономике в целом и в отноше-

ниях ее с остальным миром. Показатели счета операций с капиталом (таб. 2) свидетельствуют о том, что Армения чистый заемщик у зарубежных стран.

Внутренний спрос (потребность) республики был обеспечен в основном за счет импорта. За 2012-2018 гг. ввезено в республику товаров и услуг на 16 767.1 млрд драмов, из которых 19% только – в 2018 г. В 2008 г. объем импорта товаров и услуг составил 58% к ВВП, в 2015 г. – 42.0% и в 2012 г. – 48.3%. За 2012-2018 гг. объем импорта товаров и услуг в республике превышал его экспорт, но последние годы наблюдается снижение этого разрыва. Если в 2012 г. в текущих ценах уровень импорта превышал уровень экспорта на 75.9%, в 2015 г. на 40.9%, то в 2018 г. на 34.7% [7]. В результате образовавшееся отрицательное внешнеторговое сальдо свидетельствует о зависимости республики от остального мира. В республике в секторе домашних хозяйств фактически используются на конечное потребление больше ресурсов, чем она имеет в своем распоряжении, т. е. формируются не сбережения, а долги. В результате опережающего роста расходов на конечное потребление по сравнению с располагаемым доходом, образовались отрицательные сбережения, т. е. дефицит финансовых средств, который достиг наибольшей величины в 2018 г. 837,5 млрд драмов (Рисунок 1).




Рисунок 1. Сбережения домашних хозяйств в экономике, млрд драмов [8]

В целом долги в экономике (отрицательные сбережения) сформировались за счет высоких долгов домашних хозяйств, 837 млрд др. в 2018 г. В этом секторе за 2012-2018 гг. образовались долги на сумму более чем 3 443.7 млрд драмов.

Несмотря на долги в секторе домашних хозяйств, в 2018 г. в целом в экономике сформировался положительный показатель сбережения на сумму 931.0 млрд драмов. Это обусловлено тем, что у всех секторов, кроме домашних хозяйств, образовался положительный показатель сбережения на сумму 1 768.6 млрд драмов. Они также являются основными источниками финансирования инвестиций в экономике. На уровне экономики в 2018 г. по сравнению с 2012 г. сбережения увеличились более, чем на 329 млрд драмов, а в секторе нефинансовых организаций на 517 млрд драмов. Сбережения обычно направляются на накопление основного капитала, образование запасов материальных оборотных средств и на формиро-

вание свободных средств для кредитования. Для Армении характерна положительная величина сальдо капитальных трансфертов. В 2018 г. сумма капитальных трансфертов, полученных резидентами от остального мира, составила 37.4 млрд драмов. За 2012-2018 гг. республике предоставили извне капитальные трансферты в виде машин, оборудования и других ресурсов, на сумму 252.7 млрд драмов. За тот же период сумма капитальных трансфертов, переданных остальному миру, составила 42.3 млрд драмов. В национальной экономике капитальные трансферты другим секторам передает в основном государственный сектор. Так в 2018 г. Государственным сектором передано капитальных трансфертов на сумму 93.8 млрд драмов. Капитальные трансферты, полученные домашними хозяйствами, составили около 5 млрд драмов. Доля накопления основного капитала к ВВП, в 2018 г. составила 16.7%, в 2015 г. 20.6% и в 2012 г. 23.6%. За 2018 г. объем валового накопления основного капитала составил 1 007.3 млрд драмов, в том числе доля нефинансового сектора составила 62.9%, домашних хозяйств – 11.5%, государственного сектора – 23.6%. Изменение запасов материальных оборотных средств за 2012-2018 гг. составило 574.0 млрд драмов, из которых 532.5 млрд драмов или 92.8% в нефинансовом секторе и 40.7 млрд др. или 7.1% в секторе домашних хозяйств. С 2012 г. по 2018 г. изменение запасов материальных оборотных средств выросло в 7 раз и 2018 г. - 340.5 млрд др., из которых 334.5 млрд др. - 98.2% в нефинансовом секторе и 5.8 млрд драмов - 1.7% в домашних хозяйствах [9].




Рисунок 2. Чистое заимствование/чистое кредитование по секторам, млрд др. [8]

В счете операций с капиталом формируется важнейший показатель экономики, определяющий финансово-кредитное положение – “чистое кредитование” или “чистое заимствование”. Если это “чистое кредитование”, то оно показывает, в какой степени сумма сбережения и капитальных трансфертов фактически использована на финансирование приобретения нефинансовых активов и сколько пошло на кредитование остального мира. Если это “чистое заимствование”, то сумма сбережения и капитальных трансфертов является недостаточной для финансирования всего приобретения нефинансовых активов, и необходимо заимствование у остального мира [2, с. 386]. Ряд данных за 2012-2018 гг. свидетельствует о крупных

кредитах, выделенных нашей республике. За этот период образовалась примерно 1 587 млрд драмов займов. Соотношение чистых долгов, имеющихся в республике, к ВВП в 2012 г. составило 9.6%, в 2014 г. 7.4%, в 2015 г. 1.7% и в 2018 г. – 6.4%. Кредитные долги в основном сформировались в секторах домашних хозяйств и учреждений. Эти объемы в 2012-2018 гг. составили 4 246.9 и 405.2 млрд драмов. В нефинансовом и финансовом секторах, наоборот, освободились значительные суммы в размере 1 792.4 млрд драмов и 1 187.0 млрд драмов, что служит источником внутренних инвестиций для основных средств и производственного строительства (Рис.2).

Заключение. Обобщая изложенное выше, можно заключить, что за рассматриваемый период национальная экономика в целом характеризовалась дефицитом ресурсов. Это означает, что в стране сумма сбережения и капитальных трансфертов являются недостаточной для финансирования всего приобретения нефинансовых активов, и необходимо заимствование у остального мира. На протяжении исследуемого периода отрицательные показатели сбережений (т. е. долги), образовавшейся в секторе домашних хозяйств, негативно повлияли на экономику Армении, что способствовало формированию чистых заимствований. Следует отметить, что существующие в данное время сложности методологического учета финансов Армении заключаются прежде всего в отсутствии в армянской статистической практике счетов, характеризующих изменения финансовых потоков и запасов (финансовый счет). Внедрение финансового счета СНС предполагает завершить описания системы национальных счетов и согласовать счета по институциональным секторам. Имплементация международных стандартов в полной мере позволит осуществить качественный анализ структуры финансов по институциональным секторам экономики и типам финансовых инструментов, вводить взаимосвязи финансовых требований и обязательств всех секторов экономики.

Литература

1. European System of Accounts 2010. Luxembourg. 2013. p. 688
2. Система Национальных Счетов 2008: Евростат, МВФ, ОЭСР, ООН, ВБ. 2012. 764 с.
3. Аблеева А., Система национальных счетов и экономические балансы: Уфа. 2012. 158 с.
4. Образцова О., Копейкина О., Система национальных счетов, ВШЭ. М.: 2008. 460 с.
5. Башкатов Б., Назарова О., Система нац. счетов: теор. задачи и основы. М. 2002. 151 с.
6. Handbook on Fin. Production, Flows, Stocks in System of Nat. Accounts. NY. 2015. p.539
7. <https://www.armstat.am/am/?nid=14>
8. https://www.armstat.am/file/article/hah_20_3.pdf
9. Национальные счета Армении 2020, <https://www.armstat.am/am/?nid=81&id=2320>

Маргарита ЕГИАЗАРЯН, Арсен ОГАНДЖАНОВ

Анализ макроэкономических показателей счетов операций с капиталом (на примере Республики Армения)

Ключевые слова: система национальных счетов, счет операций с капиталом, чистое кредитование, чистое заимствование

Основной информационной базой для анализа важнейших социально-экономических процессов, происходящих в стране, является система национальных счетов на основе взаимосвязанных показателей. Выявлены основные проблемы макроэкономического учета финансов Армении. Рассмотрены связи между показателями, характеризующими состояние основных институциональных секторов экономики, позволяющие отразить функционирование отдельных сфер национального хозяйства. Рассмотрены объемы и динамика счета операций с капиталом, как в целом по экономике, так и по отдельным секторам. Проанализированы основные макроэкономические индикаторы, методы расчета.

Մարգարիտա ԵԴԻԱԶԱՐՅԱՆ, Արսեն ՕԿԱՆՋԱՆՈՎ

Կապիտալի հետ գործառնությունների հաշվի մակրոտնտեսական ցուցանիշների վերլուծությունը (ՀՀ օրինակով)

Բանալի բառեր. Ազգային հաշիվների համակարգ, կապիտալի հետ գործառնությունների հաշիվ, զույր վարկավորում, զույր փոխառություն

Երկրում ընթացող սոցիալ-տնտեսական կարևորագույն գործընթացների վերլուծության հիմնական տեղեկատվական հենքը Ազգային հաշիվների համակարգն է իր հիմնական և փոխկապակցված ցուցանիշներով: Հոդվածում վեր են հանվել Հայաստանի ֆինանսական ցուցանիշների հաշվառման հիմնախնդիրները: Ուսումնասիրվել են տնտեսության հիմնական ինստիտուցիոնալ հատվածների վիճակը բնութագրող ցուցանիշների միջև կապը: Հետազոտական աշխատանքում դիտարկվել են Հայաստանի Հանրապետության կապիտալի հետ գործառնությունների հաշվի ցուցանիշների կառուցվածքն ու դինամիկան :

Margarita YEGHIAZARYAN, Arsen OHANJANOV

Analysis of macroeconomic indicators of capital accounts (on the example of RA)

Key words: System of National Accounts, capital account, net lending, net borrowing

The main information base for the analysis of the most important socio-economic processes taking place in the country is the System of National Accounts with its basic and interrelated indicators. This paper identifies the main problems of macroeconomic accounting of Armenia, the relationship between the indicators characterizing the state of the main institutional sectors of the economy. It discusses the structure and dynamics of the capital accounts of the Republic of Armenia both in terms of the whole economy and its separate sectors. The article also touches upon the main macroeconomic indicators, calculation methods, institutional features of the aggregate capital account.

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՏՆՏԵՍԱ-ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ

Սուրեն ԼԵՎՈՆՅԱՆ

ՀՊՏՀ ՏՄՄ ամբիոնի ասպիրանտ

Բանալի բառեր: դրամական զանգված, պահանջարկ, ավանդ, տոկոսադրույք, ՀՆԱ

Ներածություն

Ներկա ժամանակներում և ՀՀ տնտեսության առանձնահատկություններից ելնելով, բավականին կարևոր է դրամավարկային հիմնական ցուցանիշների կապի գնահատումը և նրանց վրա ազդող հիմնական գործոնների հայտնաբերումը, քանի որ դրամավարկային քաղաքականության ծրագրերի էֆեկտիվությունը մեծապես կախված է դրամավարկային քաղաքականության ընտրված ռազմավարությունից և վերջինիս իրագործման նպատակով ԿԲ գործիքների կիրառման ազդեցության ճիշտ գնահատումից: Հոդվածի հիմնական նպատակն է վերլուծել և գնահատել ՀՀ-ում դրամական ագրեգատների նկատմամբ պահանջարկը, պարզել պահանջարկի վրա ազդող գործոնները, ինչպես նաև ներկայացնել դրամավարկային քաղաքականության հիմնական ցուցանիշների կապի տնտեսամաթեմատիկական գնահատումը:

Մեթոդաբանություն

Ընդհանուր առմամբ, ARDL մոդելը կարելի է ներկայացնել այսպես¹:

$$\Delta y = \alpha_0 + \alpha_1 t + \sum_{i=1}^p \beta_i \Delta y_{t-1} + \sum_{i=0}^{q_1} \gamma_i \Delta x_{t-1} + \sum_{i=0}^{q_2} \delta_i \Delta z_{t-1} + \lambda_1 y_{t-1} + \lambda_2 x_{t-1} + \lambda_3 z_{t-1} + \varepsilon_t \quad (2)$$

որտեղ՝ α_0 -ն հաստատունն է կամ ազատ անդամը, $\beta_i, \gamma_i, \delta_i$ -ն կարճաժամկետ ազդեցության գործակիցները, $\lambda_1, \lambda_2, \lambda_3$ - երկարաժամկետ ազդեցության գործակիցները, p, q_1, q_2 - համապատասխան փոփոխականների լագերի քանակությունը,

Մոդելում փոփոխականների լագերի քանակությունը կարելի է ընտրել կամ ֆիքսված եղանակով, կամ օգտագործելով Ակայկեի կամ Շվարցի տեղե-

¹ Էջ 9, Shrestha, M. B., & Bhatta, G. R. (2018). Selecting appropriate methodological framework for time series data analysis. The Journal of Finance and Data Science:

կատվական չափանիշները: Այստեղից, երկարաժամկետ կախվածության դեպքում մոդելը կարելի է ներկայացնել սխալների ուղղման մոդելի միջոցով, որը կարող է ստացվել ARDL մոդելից պարզ գծային ձևափոխություններից հետո: Այս դեպքում ECM մոդելի մեջ ներառվում են կարճաժամկետ ազդեցության գործակիցները առանց կորցնելու երկարաժամկետ հավասարության տեղեկատվությունը, ինչպես նաև մոդելը զերծ է պահում այնպիսի խնդիրներից, ինչպիսիք են, օրինակ, կեղծ կապի առկայությունը ոչ ստացիոնար շարքերի պատճառով: Սխալների ուղղման մոդելի կոինտեգրացիոն հավասարման տեսքը հետևյալն է:

$$\Delta y = \alpha_0 + \alpha_1 t + \sum_{i=1}^p \beta_i \Delta y_{t-1} + \sum_{i=0}^{q_1} \gamma_i \Delta x_{t-1} + \sum_{i=0}^{q_2} \delta_i \Delta z_{t-1} + \varphi_1 ECT_{t-1} \quad (3)$$

որտեղ՝ φ_1 - ճշգրտման գործակիցն է, ECT_{t-1} - սխալների ուղղման գործակցի լագավորված արժեքը, որը ստացվում է ARDL մոդելի մնացորդներից: Սա ֆունկցիայի կարճաժամկետ ազդեցության տեսքն է, որտեղից երկարաժամկետ ազդեցության տեսքը կամ սխալների ուղղման հավասարությունը ստացվում է այսպես¹:

$$= y_t - \left(\frac{\lambda_2}{\varphi_1} x_{t-1} + \frac{\lambda_2}{\varphi_1} z_{t-1} \right) \quad (4)$$

Կոինտեգրացիոն հավասարման գործակիցները ցույց են տալիս գնահատված երկարաժամկետ հավասարման փոփոխականների միջև կապը, իսկ սխալների ուղղման մոդելի գործակիցները ցույց են տալիս, թե երկարաժամկետ հավասարակշռության շեղումները ինչպես են ազդում նրանց վրա հաջորդ ժամանակաշրջանում: Ներկայացնենք Bounds-Testing կոինտեգրացիոն մեթոդի որոշակի առավելություններ²:

- ARDL մեթոդը փոքրագույն քառակուսիների եղանակի վրա հիմնված մոդել է, որի համար կիրառելի է և ոչ ստացիոնար շարքերի ներառումը, և տարբեր կոինտեգրացիոն պրոցեսների ենթակա շարքերի ներառումը: Այս

¹ Էջ 300, EViews 10 Users guide: HIS Global Inc, 2017

² Էջ 90, Yosri Nasr Ahmed, Huang Delin (2018): Current situation of Egyptian Cotton: Econometrics Using ARDL Model: Journal of Agricultural science: Page 88-97:

մոդելը օգտագործում է բազմաթիվ լագերի քանակություն ամբողջական տրվյալների բազան մոդելի մեջ ներգրավելու համար:

- Այն հարմար է օգտագործել համեմատաբար կարճ ժամանակային շարքերի դեպքում: Այն թույլ է տալիս կոինտեգրացիոն կապը գնահատել փոքրագույն քառակուսիների եղանակով:

- ARDL մոդելը տալիս է հետաքրքիր ինֆորմացիա երկարաժամկետ և կարճաժամկետ ազդեցության գործակիցների մասին: Յուրաքանչյուր գործակիցի նշանը կարելի է ստուգել տեսությունից ակնկալվող նշանի հետ:

Գրականության ակնարկ

Հոդվածում էկոնոմետրիկ մոդելի ընտրությունը հիմնված է միջազգային փորձի և ԿԲ-ի հետազոտությունների վրա, որոնցից ներկայացված են մի քանիսը: Չախդո Դրիսակին օգտագործել է ARDL գնահատման մեթոդը ուսումնասիրելու համար Իտալիայում 1960-2017թթ. փողի պահանջարկի վրա ազդող փոփոխականները¹: Իրական ՀՆԱ-ի, երկարաժամկետ վերաֆինանսավորման տոկոսադրույքի և գնաճի վարքագիծը, ըստ ուսումնասիրության, համապատասխանել է մոնետարական տեսության սպասելիքներին: Վերջում, CUSUM և CUSUMS թեստի արդյունքները ցույց են տվել, որ ֆունկցիան կայունություն է դրսևորում M1-ի դեպքում:

Սայեդը և Ալ Շավաքֆեն ուսումնասիրել են փողի պահանջարկի ֆունկցիաները նեղ և լայն դրամական զանգվածների համար 1995-2016թթ.¹ օգտագործելով Հորդանանի եռամսյակային շարքերը ARDL գնահատման մեթոդի օգնությամբ: Բացի ֆունկցիայի կայունությունից, հեղինակները ցույց են տվել երկարաժամկետ կախվածություն փողի պահանջարկի, իրական ՀՆԱ-ի, գնաճի, տոկոսադրույքի, ֆինանսական զարգացման ինդեքսի և բաժնետոմսերի գների ինդեքսների միջև²: Կյոֆիլավոնզը, Ուդդին, Շաբազը, Հարվին և Չարոենրատը 2019թ. ուսումնասիրել են փողի պահանջարկի վրա ազդող գործոնները և կայունությունը Լաոսում: Հետազոտության նպատակն է եղել պարզելու փողի պահանջարկի ֆունկցիայի կայունությունը դոլարայնացման բարձր մակարդակ ունեցող երկրում, որը Լաոսում 2008 թվականին

¹ Tsounis, N., & Vlachvei, A. (Eds.). (2020). Advances in Cross-Section Data Methods in Applied Economic Research. Springer Proceedings in Business and Economics, page 401-417

² Adnan A. Saed1, Walid Al-Shawaqfeh (2017): The Stability of Money Demand Function in Jordan: Evidence from the Autoregressive Distributed Lag Model: International Journal of Economics and Financial Issues, 7(5), page 331-337.

կազմել է մոտ 50 տոկոս¹: Ուսումնասիրվել է փոփոխ պահանջարկի գնահատման ՀՀ մոտեցումները: 2007թ. դրամային զանգվածի կանխատեսումները կատարվել են ADL (Autoregressive Distributed Lags) մոդելի միջոցով, որի հիմքում հետևյալ ռեգրեսիոն հավասարումն է².

$$M2_t = c + \alpha_1 M2_{t-1} + \alpha_2 GDP_{t-1} + \alpha_3 DUM_{1t} * GDP_t + \alpha_4 DUM_{2t} + \varepsilon_t \quad (1)$$

Վերլուծություն

Դիտարկվել է M2 դրամական զանգվածի պահանջարկը՝ կախված գնահից, տոկոսադրույքից և իրական ՀՆԱ-ից: Գնահատվել է ARDL այս մոդելը:

$$\begin{aligned} \Delta M2_t = & C_0 + \delta_{M2} M2_{t-1} + \delta_{GDP} GDP_{t-1} + \delta_R R_{t-1} + \delta_{INF} INF_{t-1} + \sum_{i=1}^p \alpha_{1i} \Delta M2_{t-i} + \\ & + \sum_{i=0}^{q_1} \alpha_{2i} \Delta GDP_{t-i} + \sum_{i=0}^{q_2} \alpha_{3i} \Delta R_{t-i} + \sum_{i=0}^{q_3} \alpha_{4i} \Delta INF_{t-i} + \varepsilon_t, \quad t \\ & = \text{2001Q1, 2020Q4} \quad (5) \end{aligned}$$

Որտեղ՝ $\delta_{M2}, \delta_{GDP}, \delta_R, \delta_{INF}$ -ն երկարաժամկետ ազդեցության գործակիցներն են, R_t -ն պետական կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը, INF_t -ն գնաճի մակարդակը, p, q_1, q_2, q_3 - համապատասխան փոփոխականների լագերը, $\alpha_{1p}, \alpha_{2q_1}, \alpha_{3q_2}, \alpha_{4q_3}$ - կարճաժամկետ ազդեցության գործակիցները, C_0 -ն ազատ անդամը:

Մոդելի մեջ M2 ազդեցատը և իրական ՀՆԱ-ի եռամսյակային շարքերը ներառվել են սեզոնային հարթեցված տարբերակով, գների մակարդակը իրենից ներկայացնում է 12-ամսյա գնաճի եռամսյակային միջին գործակիցը, պետական կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը ներկայացված է եռամսյակային միջին ցուցանիշով: Մոդելում փոփոխականների լագերի քանակությունը ընտրվել է Ակայեի տեղեկատվական չափանիշի հիման վրա: Մոդելում ազատ անդամը և գնաճը նշանակալի ազդեցություն չեն ունեցել, ինչի պատճառով դրանք դուրս են բերվել մոդելից: Մնացորդների թեստերի արդյունքները և մոդելի վերջնական գնահատված տեսքը պատկերված է աղյուսակ 1-ում:

¹ Kyophilavong, P., Uddin, G. S., Shahbaz, M., Harvie, C., & Charoenrat, T. (2019). Money Demand in a Dollarized Economy: Evidence from Laos PDR. *Asian Economic Papers*, 18, p.99–115.

² էջ 80, ՀՀ ԿԲ, ՀՀ 2007թ. Դրամավարկային քաղաքականության ծրագիր:

Ինչպես երևում է ստացված արդյունքներից՝ ճշգրտման արագությունը նշանակալի է և ունի բացասական նշան (-0.198656), ինչը նշանակում է, որ երկարաժամկետ հավասարակշռությունից շեղման մոտ 1998 տոկոսը ճըզգրտվում է մեկ եռամսյակի ընթացքում: F վիճակագրության արժեքը (5.93) մեծ է I(1) կրիտիկական արժեքից, ինչը նշանակում է, որ կոինտեգրացիա չի ներկայացնում մասին 0-ական վարկածը մերժվում է 10 տոկոս նշանակալիության մակարդակում, հետևաբար կարելի է ստանալ երկարաժամկետ կախվածություն նշված փոփոպականների մեջ, որը կունենա այս տեսքը:

$$\begin{aligned} & LOG(\overline{M2_SA}) \\ & = 1.76 * LOG(GDP_SA) \quad 2,29 * LOG(R) \end{aligned} \tag{6}$$

Աղյուսակ 1՝ Գնահատված մոդելի արդյունքները և մնացորդների թեստերը

Breusch-Godfrey Serial Correlation LM Test:					
F-statistic	0.739307	Prob. F(2,57)			0.4820
Obs*R-squared	1.820498	Prob. Chi-Square(2)			0.4024
Heteroskedasticity Test: Breusch-Pagan-Godfrey					
F-statistic	0.808672	Prob. F(13,58)			0.6487
Obs*R-squared	11.04783	Prob. Chi-Square(13)			0.6068
Scaled explained SS	21.27179	Prob. Chi-Square(13)			0.1677
F-Bounds Test			Null Hypothesis: No levels relationship		
Test Statistic	Value	Signif.	I(0)		I(1)
F-statistic	5.939198	10%	2.17		3.19
ARDL Error Correction Regression					
Dependent Variable: DLOG(M2_SA)					
Selected Model: ARDL(4,0,7)					
Short Run coefficients			Long Run coefficients		
Variable	Coefficient	Prob.	Variable	Coeff	Prob.
DLOG(M2_SA(-1))	0.487449	0.0002	LOG(M2_SA(-1))	-0.19865	0.0007
DLOG(REALGDP_SA)	0.155979	0.3542	LOG(GDP_SA(-1))	0.34973	0.0010
CointEq(-1)*	-0.198656	0.0001	LOG(R)	-0.45665	0.0021
ARDL Long Run Form					
Dependent Variable: LOG(M2_SA)					
Variable	Coefficient	Std. Error	t-Statistic		Prob.
LOG(GDP_SA)	1.760492	0.252662	-9.097956		0.0000
LOG(R)	-2.298709	0.084245	20.89737		0.0000

Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկներ

Ինչպես երևում է ստացված արդյունքներից, երկարաժամկետում գնաճի մակարդակը նշանակալի ազդեցություն չունի M2 դրամական զանգվածի պահանջարկի վրա: Տոկոսադրույքի 1 տոկոս աճը հանգեցնում է դրամական զանգվածի կրճատմանը 2՝29 տոկոսով, իսկ ՀՆԱ-ի 1 տոկոս աճը հանգեցնում է փողի նկատմամբ պահանջարկի 1.76 տոկոս բարձրացման: Քանի որ ՀՆԱ-ի 1 տոկոս աճը բերում է 1-ից ավել տոկոսով դրամական զանգվածի

փոփոխության, ապա այստեղից կարելի է եզրակացնել, որ ՀՆԱ-ի աճը հանգեցնում է մոնետիզացիայի աճին, իսկ գնաճի ոչ նշանակալի ազդեցության պատճառով ուսումնասիրենք M1 դրամական ագրեգատը: Համանման կերպով գնահատվել է նաև M1 դրամական զանգվածի պահանջարկը:

$$\begin{aligned} & LOG(\widehat{M1_SA}) \\ & = 1.39 * LOG(GDP_SA) - 1.30 * LOG(R) \end{aligned} \quad (7)$$

Ինչպես երևում է ստացված արդյունքներից, ՀՆԱ-ի 1 տոկոս աճը հանգեցնում է փողի նկատմամբ պահանջարկի 1"39 տոկոս աճին, իսկ տոկոսադրույքի 1 տոկոս աճը հանգեցնում է փողի պահանջարկի նվազմանը 1"39 տոկոսով: M1 դրամական զանգվածի դեպքում երկարաժամկետ հավասարակշռությունից շեղման մոտ 16"2 տոկոսն է ճշգրտվում մեկ եռամսյակի ընթացքում: Քանի որ ըստ մոդելների գնահատման արդյունքների, գնաճը ուղղակի ազդեցություն չունի դրամական զանգվածների պահանջարկի վրա, փորձ է կատարվել ուսումնասիրել գնաճի կախվածությունը ՀՆԱ-ից, դրամական զանգվածից և տոկոսադրույքի մակարդակից: Գնահատվել է հետևյալ մոդելը:

$$\begin{aligned} \Delta INF_t = & C_0 + \delta_{INF} INF_{t-1} + \delta_{GDP} GDP_{t-1} + \delta_R R_{t-1} + \delta_{M1} M1_{t-1} + \sum_{i=1}^p \alpha_{1i} \Delta INF_{t-i} \\ & + \sum_{i=0}^{q_1} \alpha_{2i} \Delta GDP_{t-i} + \sum_{i=0}^{q_2} \alpha_{3i} \Delta R_{t-i} + \sum_{i=0}^{q_3} \alpha_{4i} \Delta M1_{t-i} + \varepsilon_t, \quad t \\ & = 2001Q1, 2020Q4 \end{aligned} \quad (8)$$

Որտեղ՝ δ_{INF} , δ_{GDP} , δ_R , δ_{M1} -ն երկարաժամկետ ազդեցության գործակիցներն են, R_t -ն պկպ-ի եկամտաբերությունը, INF_t -ն գների մակարդակը:

Ստացված արդյունքները պատկերված են աղյուսակ 2-ում:

Երկարաժամկետ հավասարությունը կունենա հետևյալ տեսքը:

$$\begin{aligned} LOG(INF) = & 0.15 * LOG(M1_SA) - 0.256 * LOG(GDP_SA) - 0.325 * LOG(R) \\ & + 7.7 \end{aligned} \quad (9)$$

Մոդելի գնահատման արդյունքներից հետևում է, որ տոկոսադրույքի ազդեցությունը գնաճի մակարդակի վրա նշանակալի չէ 5 տոկոս նշանակալիության մակարդակում, ինչը մատնանշում է այն փաստը, որ ԿԲ տոկոսադրույքների փոփոխությունները գնաճի վրա ազդում են անուղղակի, փոխան-

ցումային մեխանիզմների միջոցով, օրինակ դրամական զանգվածի փոփոխության միջոցով կարելի է ազդել գնաճի մակարդակի վրա, քանի որ ըստ սրտացված արդյունքների՝ M1 դրամական զանգվածի 1 տոկոս աճը հանգեցնում է գների մակարդակի 0.15 տոկոս աճին, իսկ ՀՆԱ-ի 1 տոկոս աճը հանգեցնում է գների մակարդակի 0.24 տոկոս նվազման: Բավականին մեծ է ճշգրտման արագությունը, ըստ որի երկարաժամկետ հավասարակշռությունից շեղման 42.7 տոկոսը ճշգրտվում է մեկ եռամսյակի ընթացքում:

Աղյուսակ 2. Գնահատված մոդելի արդյունքները և մնացորդների թեստերը

Breusch-Godfrey Serial Correlation LM Test:					
F-statistic	0.031866	Prob. F(2,53)			0.9687
Obs*R-squared	0.087675	Prob. Chi-Square(2)			0.9571
Heteroskedasticity Test: Breusch-Pagan-Godfrey					
F-statistic	0.984573	Prob. F(17,55)			0.4880
Obs*R-squared	17.03225	Prob. Chi-Square(17)			0.4522
Scaled explained SS	8.154253	Prob. Chi-Square(17)			0.9631
F-Bounds Test					
Null Hypothesis: No levels relationship					
Test Statistic	Value	Signif.	I(0)		I(1)
F-statistic	5.021372	10%	2.37		3.2
ARDL Error Correction Regression					
Dependent Variable: DLOG(INF)					
Selected Model: ARDL(5, 3, 6, 0)					
Short Run coefficients			Long Run coefficients		
Variable	Coefficient	Prob.	Variable	Coefficient	Prob.
DLOG(INF(-1))	0.300252	0.0030	LOG(INF (-1))	-0.427546	0.0003
DLOG(M1_SA(-1))	-0.139001	0.0001	LOG(M1_SA(-1))	0.065338	0.0004
DLOG(GDP_SA(-1))	0.184659	0.0008	LOG(GDP_SA(-1))	-0.109676	0.0002
CointEq(-1)	-0.427546	0.0000	LOG(R)	-0.138946	0.0542
ARDL Long Run Form					
Dependent Variable: LOG(INF)					
Variable	Coefficient	Std. Error	t-Statistic		Prob.
LOG(M1_SA)	0.152821	0.037429	4.082985		0.0001
LOG(GDP_SA)	-0.256525	0.057671	-4.448102		0.0000
LOG(R)	-0.324984	0.178496	-1.820674		0.0741
C	7.719370	0.991804	7.783157		0.0000

Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկներ

Ավանդների տոկոսադրույքների ազդեցությունը դրամական զանգվածի պահանջարկի վրա ուսումնասիրելու նպատակով նախ դիտարկվել է ժամկետային ավանդների կախվածությունը ավանդների տոկոսադրույքներից:

Գնահատվել է հետևյալ ARDL մոդելը:

$$\Delta DEP_t = C_0 + \delta_{DEP} DEP_{t-1} + \delta_{AMDR} LAMDR_{t-1} + \delta_{GDP} GDP_{t-1} + \delta_{USDR} LUSDR_{t-1} + \dots \quad (10)$$

$$+ \sum_{i=1}^p \alpha_{1i} \Delta DEP_{t-i} + \sum_{i=0}^{q_1} \alpha_{2i} \Delta LAMDR_{t-i} + \sum_{i=0}^{q_2} \alpha_{3i} \Delta GDP_{t-i} + \sum_{i=0}^{q_3} \alpha_{4i} \Delta LUSDR_{t-i} + \varepsilon_t$$

$t = \overline{2001Q1, 2020Q4}$

Որտեղ՝ $\delta_{DEP}, \delta_{LAMDR}, \delta_{GDP}, \delta_{LUSDR}$, - երկարաժամկետ ազդեցության գործակիցներն են, DEP_t - դրամով ժամկետային ավանդների ծավալներն են, $LAMDR_t$ - դրամով, իսկ $LUSDR_t$ - դոլարով երկարաժամկետ ավանդների տոկոսադրույքներն են,

Աղյուսակ 3. Գնահատված մոդելի արդյունքները և մնացորդների թեստերը

Breusch-Godfrey Serial Correlation LM Test:					
F-statistic	0.304974	Prob. F(2,60)			0.7383
Obs*R-squared	0.754763	Prob. Chi-Square(2)			0.6857
Heteroskedasticity Test: Breusch-Pagan-Godfrey					
F-statistic	1.613008	Prob. F(12,62)			0.1112
Obs*R-squared	17.84386	Prob. Chi-Square(12)			0.1205
Scaled explained SS	26.17092	Prob. Chi-Square(12)			0.1002
F-Bounds Test		Null Hypothesis: No levels relationship			
Test Statistic	Value	Signif.	I(0)		I(1)
F-statistic	7.032643	10%	2.37		3.2
ARDL Error Correction Regression					
Dependent Variable: DLOG(DEP_SA)					
Selected Model: ARDL (4, 1,4,0)					
Short Run coefficients			Long Run coefficients		
Variable	Coefficient	Prob.	Variable	Coef	Prob.
DLOG(DEP_SA(-1))	0.373876	0.0004	LOG(DEP_SA(-1))	-0.305644	0.0000
DLOG(LAMDR(-1))	0.335236	0.0253	LOG(LAMDR(-1))	0.078145	0.4468
DLOG(LUSDR)	-0.889534	0.0001	LOG(GDP_SA)	0.911098	0.0000
CoIntEq(-1)*	-0.305644	0.0000	LOG(LUSDR(-1))	-0.258044	0.0122
ARDL Long Run Form					
Dependent Variable: LOG(DEP_SA)					
Variable	Coefficient	Std. Error	t-Statistic		Prob.
LOG(LAMDR)	0.255674	0.317777	0.804569		0.4241
LOG(GDP_SA)	2.980909	0.134020	22.24227		0.0000
LOG(LUSDR)	-0.844262	0.293392	-2.877592		0.0055
C	-28.15929	1.805432	-15.59698		0.0000

Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկներ

Երկարաժամկետ հավասարությունը կունենա այս տեսքը:

$$LOG(\widehat{DEP}) = 0.25LOG(LAMDR) + 2.98 * LOG(GDP_SA) - 0.84 * LOG(LUSDR) - 28.15 \quad (11)$$

Նկատելի է, որ դրամով երկարաժամկետ ավանդի տոկոսադրույքի ազդեցությունը նշանակալի չէ, իսկ ՀՆԱ-ի 1 տոկոս աճը հանգեցնում է ավանդների ծավալի 2.98 տոկոս աճի, իսկ դոլարով ավանդի տոկոսադրույքի 1 տո-

կոս աճը հանգեցնում է դրամով ավանդների պահանջարկի նվազմանը 0.84 տոկոսով: Երկարաժամկետում դոլարով ավանդի տոկոսադրույքների ազդեցությունը առավել ուժեղ է և նշանակալի ի համեմատություն դրամով ավանդի տոկոսադրույքների: Ներկայումս նկատելի է դոլարով ավանդների տոկոսադրույքի նվազում և տնտեսության մեջ դրամական զանգվածի խթանում, ինչի շնորհիվ նկատելի է, որ դոլարիզացիայի մակարդակը ՀՀ-ում բավականին նվազել է 2017 թվականի դեկտեմբերին 46.4 տոկոսի նկատմամբ 2020 թվականի համապատասխան ժամանակաշրջանում կազմելով 35 տոկոս¹:

Եզրակացություններ

Ամփոփելով կատարված վերլուծությունը, կարելի է ասել, որ

- M1 և M2 դրամական ագրեգատների դեպքում տոկոսադրույքի փոփոխությունը նշանակալի բացասական ազդեցություն ունի, մասնավորապես՝ տոկոսադրույքի 1 տոկոս աճի դեպքում M1-ի ծավալը կրճատվում է 1.3 տոկոսով, իսկ M2-ի ծավալը՝ 2.29 տոկոսով,

- M1 և M2 դրամական ագրեգատների վրա նշանակալի ազդեցություն չունի գնաճը, իսկ գների մակարդակը բնութագրող ցուցանիշը որպես կախյալ փոփոխական դիտարկելու դեպքում ստացվում է, որ երկարաժամկետ հավասարակշռությունից շեղման 42.7 տոկոսը ճշգրտվում է 1 եռամսյակի ընթացում, ինչը նշանակում է, որ գները բավականին մեծ արագությամբ ետ են վերադառնում սկզբնական հավասարակշռության մակարդակին: M1-ը ունի դրական ազդեցություն, մասնավորապես՝ M1-ի 1 տոկոս աճը հանգեցնում է գների 0.15 տոկոս աճի, իսկ ՀՆԱ-ի 1 տոկոս աճը հանգեցնում է գների մակարդակի 0.25 տոկոս նվազման: Տոկոսադրույքը 5 տոկոս նշանակալիության մակարդակում նշանակալի ազդեցություն չունի, ինչից կարելի է եզրակացնել որ տոկոսադրույքի փոփոխությունը գների մակարդակի վրա ազդում է անուղղակի կերպով, տվյալ դեպքում M1 ագրեգատը կարող է հանդիսանալ տոկոսադրույքը և գնաճը կապող օղակ, որի փոփոխության շնորհիվ տոկոսադրույքը ազդեցություն է ունենում գների մակարդակի վրա:

- Ժամկետային ավանդների կախվածությունը դրամով և դոլարով ավանդի տոկոսադրույքներից բնութագրող մոդելի գնահատումից պարզ դարձավ, որ երկարաժամկետում դրամով ավանդի տոկոսադրույքի ազդեցությու-

¹ ՀՀ ԿԲ, վիճակագրություն, դրամավարկային քաղաքականության ցուցանիշներ, փողի ագրեգատներ (ամսական)

նը բավականին թույլ է դառնում ավանդի տոկոսադրույքների ազդեցությունից, ինչպես նաև դրամով ավանդների տոկոսադրույքները նշանակալի ազդեցություն չունեն, ինչից կարելի է ենթադրել, որ ՀՀ-ում տնային տնտեսությունների մոտ կա ազգային արժույթի նկատմամբ անվստահություն, քանի որ երկարաժամկետում նրանք նախընտրում են իրենց խնայողությունները պահել արտարժույթով, ինչը բավական բացասական ազդեցություն կարող է ունենալ, քանի որ այն կարող է խթանել դառնալիս ազգային աճին: Մյուս կողմից առավել բարդ է իրավիճակը դառնալիս արտարժույթի դեպքում, քանի որ ԿԲ-ի դրամավարկային քաղաքականությունը չի կարող էֆեկտիվ գործել բարձր դառնալիս արտարժույթի մակարդակում, քանի որ փողի լայն զանգվածը չի արձագանքում ԿԲ տոկոսադրույքների փոփոխությանը, իսկ դառնալիս արտարժույթի տոկոսադրույքի բարձրացման դեպքում ՀՀ-ում տնային տնտեսությունները իրենց ավանդները սկսում են նախընտրել պահել դառնալիս, ինչը էլ ավելի կարող է բարձրացնել դառնալիս արտարժույթի մակարդակը, հետևաբար նաև նվազեցնել ԿԲ դրամավարկային քաղաքականության էֆեկտիվությունը: Այս պատճառով գոյություն ունի դրամով և դառնալիս արտարժույթի տոկոսադրույքների բավականին մեծ տարբերություն, ինչը կարողանում է զսպել տնտեսության դառնալիս արտարժույթի մակարդակը և խթանում է տնտեսության դրամայնացմանը:

- Մոդելների բոլոր սպեցիֆիկացիաների դեպքում բավականին լավ ազդեցություն ունի ՀՆԱ-ն, որի 1 տոկոս աճը բոլոր դեպքերում հանգեցնում է փողի պահանջարկի 1-ից ավել տոկոսով աճի:

Սուրեն ԼԵՎՈՆՅԱՆ

Դրամավարկային հիմնական ցուցանիշների տնտեսամաթեմատիկական գնահատումը ՀՀ տնտեսության օրինակով

Բանալի բառեր. դրամական զանգված, պահանջարկ, ավանդ, տոկոսադրույք, ՀՆԱ

Ազգային տնտեսության համար դրամավարկային քաղաքականության իրականացման համար արդիական մոդելների մշակումը և գնահատումը առանցքային պայման են հանդիսանում, որպեսզի իրականացվող քաղաքականությունը հիմնված լինի հնարավորինս հավաստի և հիմնավոր արդյունքների վրա: Փողի նկատմամբ տնտեսությունում առկա պահանջարկի գնահատումը, նրա վրա ազդող հիմնական գործոնների բացահայտումն ու վերլուծությունը ԿԲ կողմից դրամավարկային քաղաքականության մշակման և իրականացման արդյունավետության բարձրացման կարևորագույն նախապայմաններից է: Իսկ վերջնական նպատակի՝ գների կայունությունն ապահովելու համար անհրաժեշտ է հստակ վերլուծել գների վրա ազդեցություն ունեցող գործոնների ազդեցությունը և գնահատել այդ ազդեցության չափը:

Suren LEVONYAN

Economic and mathematical assessment of the main monetary indicators by the example of the economy of Armenia

Key words: Money supply, demand, deposit, interest rate, GDP

Development and evaluation of up-to-date models for the implementation of monetary policy for the national economy are a key condition for the policy to be based on the most reliable, reasonable results. Assessing the demand for money in the economy, identifying and analyzing the main factors affecting it is one of the key preconditions for the Central Bank to develop and implement monetary policy. And in order to ensure the final goal, price stability, it is necessary to clearly analyze the impact of the factors influencing prices, to assess the extent of that impact. This article is devoted to the study of the assessment of the interaction of main monetary and macroeconomic indicators.

Сурен ЛЕВОНЯН

Экономико-математическая оценивание основных денежных показателей на примере экономики Армении

Ключевые слова: Денежная масса, спрос, депозит, процентная ставка, ВВП.

Разработка и оценивание современных моделей реализации денежно-кредитной политики для национальной экономики являются ключевым условием для того, чтобы политика основывалась на наиболее надежных и устойчивых результатах. Оценивание текущего спроса на деньги в экономике, выявление и анализ ключевых факторов, влияющих на него, является одним из ключевых предварительных условий для Центрального банка в разработке и повышении эффективности денежно-кредитной политики. И чтобы обеспечить конечную цель - стабильность цен, необходимо четко проанализировать влияние факторов, влияющих на цены и оценить степень этого воздействия.

ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Դավիթ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Տնտ. գիտ. դոկտոր

Մերի ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀՀ ԳԱԱ տնտ. ինստ. գիտաշխատող, հայցորդ

Բանալի բառեր. ջրային ռեսուրսներ, ոռոգում, ոռոգման եղանակներ, ջրօգտագործում, ջրամատակարարում, կաթիլային ոռոգում, անձրևային եղանակով ոռոգում, ոռոգման առանձնահատկություններ

Ներածություն

Մարդկության զարգացման սկզբնական շրջանում ջուրն օգտագործվել է խմելու և կենցաղային կարիքների, իսկ ավելի ուշ ոռոգման, և առհասարակ գյուղատնտեսության համար: Հողաբարելավման հիմնական տարբերակը ոռոգումն է: Հին աշխարհի առաջին փիլիսոփաներից մեկի՝ Թալեսի կարծիքով ջուրը ամեն ինչի հիմքն է, իսկ մնացյալն առաջանում է ջրից:... Ջրով ոռոգում են դաշտերը, այն ապահովում է մարդկանց պարենային խնդիրը, առանց ջրի ոչ մի արդյունաբերական գործընթաց չի լինի և այլն¹: Ոռոգումը անբավարար խոնավությամբ հողերը արհեստականորեն լրացնում է ջրային պաշարներով: Այն կոչված է օգնելու մշակաբույսերի մշակմանը, լանդշաֆտների պահպանմանը, ամայացած կանաչ ծածկույթների վերականգնմանը:

Մեթոդաբանություն

Ըստ Ա. Ա. Գույանի և Ռ. Ռ. Մանուկյանի, ջուրը բույսի կյանքի անհրաժեշտ գործոն է և հողի բերրիության կարևոր տարր: Բույսի պահանջը ջրի նկատմամբ սկսվում է սերմի ծլման պահից և շարունակվում է մինչև լրիվ հասունացումը²: Ոռոգումը նպաստում է բույսերի աճին ու զարգացմանը, ստեղծում է անհրաժեշտ ջրային, ջերմային, օդային ռեժիմ, որի օգնությամբ էլ բարձրանում է մշակաբույսերի բերքատվությունը: Ոռոգման եղանակը ներառում է տեխնիկական, ագրոտեխնիկական ու կազմակերպչական տնտեսական միջոցառումների համալիր, որի հիմքում դրված են հողերի ջրման ջրատեխնիկական գործադրաձևերը: Ոռոգման ջրով խոնավացվում է հողը:

¹ Հակոբյան Ե., «Ոռոգման ջրի օգտագործման տնտեսական արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ-ում»: Ատենախոսություն, Երևան 2015թ, էջ 13

² Ա. Ա. Գույան, Ռ. Ռ. Մանուկյան, «Երկրագործություն», Երևան 2009թ, էջ 26

Ջրի և հողի փոխազդեցության միջոցով փոխվում է հողի ֆիզիկական վիճակը: Ոռոգման ջուրը հողում վերածվելով հողի խոնավության, բույսի արմատներով փոխազդում է բույսի հետ, փոխվում է բույսի ջրային ռեժիմը, ֆիզիոլոգիական վիճակը, կենսաբանական պրոցեսները, տրանսպիրացիան և այլն¹:

Գրականության ակնարկ

Ըստ ՀԱԱՀ-ի դասախոս Գ. Նավոյանի, Հայաստանի տարածքի վարելահողերի մեծ մասը գտնվում է այնպիսի գոտում, որտեղ բնական գործոնները բավարար են, սակայն երաշխավորված, կայուն և բարձր բերք ստանալու համար նկատվում է ջրի պակաս²: Վերջին տասնամյակում Հայաստանում կլիմայական պայմանների որոշ փոփոխություններ նկատելի են, ներառյալ երաշտը, ջրային ռեսուրսների էական կրճատումը, տարեկան տեղումների անհավասար բաշխումը: Եթե այս բոլորին գումարենք սոցիալական, տնտեսական, բնական բարդ պայմանները և հատկապես օդերևութաբանական կանխատեսումները, ապա ակնհայտ է, որ պահանջվում է ներդնել ոռոգման նոր տեխնոլոգիաներ երկրի տարբեր մարզերում՝ վերը նշված անբարենպաստ գործընթացներին դիմակայելու համար³:

Վերլուծություն

ՀՀ գյուղատնտեսության մեջ բուսաբուծության համախառն արտադրանքի 70-75%-ից ավելին ստացվում է ոռոգելի երկրագործության հաշվին: Ներկայումս փաստացի ոռոգվող տարածքները կազմում են նախառեֆորմյան շրջանի համապատասխան ցուցանիշի կեսից պակասը⁴: Հայաստանում ոռոգման եղանակներից տարածված է մշակաբույսերը ոռոգելու ակոսային եղանակը: Այս եղանակով ջրելիս հողը չի ճաքճքում, չի խտանում և կեղևակալում, ջուրը ներծծվում է հողի մեջ միայն ակոսի հատակից: Չնայած ակոսներով ջրելու դրական կողմերին, այն ունի նաև բացասական կողմը՝ ջրի սպառման ծավալի մեծությունը, ջրի կորուստը: Այդ տեսանկյունից ոռոգման ամենաարդյունավետ մեթոդը համարվում է կաթիլային ոռոգումը: Ոռոգման

¹ Գ. Նավոյան, «Ոռոգման հիմունքների ուղեցույց», Երևան 2009թ, էջ 2

² Գ. Նավոյան, «Ոռոգման հիմունքների ուղեցույց», Երևան 2009թ, էջ 2

³ M. Manucharyan, Drip irrigation and its investment opportunities in Armenian agriculture, Norwegian Journal of Development of the International Science, 17/2018, Vol. 4, Oslo 2018, p. 3

⁴ Մ. Մանուչարյան, Լ. Հակոբյան «Ջրօգտագործման տնտեսական արդյունավետությունը ՀՀ-ում», Գիտակրթական համակարգի զարգացման առաջնահերթությունները ՀՀ մարզերում /գիտաժող. նյութեր/, ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղ 2015թ, էջ 144

այս տիպը իդեալական է ցանցակաժ տիպի բույսերի համար, ջուրը անմիջապես հասնում է արմատներին, ինչն ապահովում է որակյալ ոռոգում: Ջրի ծախսերը կրճատվում են գրեթե 4 անգամ, իսկ կորուստը՝ 3 անգամ, և որ ամենակարևորն է նվազում է հողի էրոզիան: Ոռոգման այս տեսակը շատ հարմար է կիրառել Հայաստանում, քանի որ մեզ մոտ շատ են անկանոն ռելիեֆ ունեցող տարածքները, որտեղ արդյունավետ է ոռոգումը իրականացնել կաթիլային եղանակով: Հայաստանում ոռոգման այս տեսակը զարգացել է վերջին տարիներին և գնալով ավելանում են կաթիլային եղանակով ոռոգվող տարածքները: Հայաստանի գյուղատնտեսական արտադրանքի մեծ մասը արտադրվում է գերփոքր և փոքր 300 հազարից ավել գյուղացիական տնտեսությունների կողմից, որոնց հիմնական խնդիրներից մեկը այսօր հանդիսանում է ոռոգումը: ՀՀ ոռոգելի գոտու գյուղատնտեսական շրջանառության մեջ ընդգրկված մշակաբույսերի կայուն ջրամատակարարման ապահովումը, տարածքների ընդլայնումը ու բերքատվության բաժրացումը գյուղատնտեսության կայուն զարգացման գերակա ուղղություններից մեկն է: Հանրապետությունում 2019թ. ջրառը կազմել է 2865.4 մլն.մ³ ջրօգտագործումը՝ 2123.7 մլն.մ³ (87.3%-ը՝ գյուղատնտեսություն, ձկնաբուծություն և անտառտնտեսություն, 6.7%-ը՝ արտադրական, կոմունալ տնտեսություն և շինարարություն, 6.0%-ը՝ խմելու)¹: ՀՀ-ում ընդհանուր ջրօգտագործման ծավալը և գյուղատնտեսության մեջ օգտագործված ջրի ծավալը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Զրօգտագործման ծավալը գյուղատնտեսությունում 2015-2019թթ²

	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2019թ. 2015թ. նկ. %
Ընդ. ջրօգտագործման ծավալը	2533,1	2469,9	2040,0	1926,8	2123,7	-16,2
Գյուղատնտ.ում, ձկնաբուծութ.ում,անտառտնտ. ում	2283,3	2216,8	1707,2	1600,0	1854,3	-18,8
Ոռոգում	1519,1	1522,3	1236,6	1064,6	1069,5	-29,5

Աղյուսակի տվյալներից պարզ է դառնում է, որ տարեց տարի ջրօգտագործման ծավալը նվազում է: Այն կապված է նաև մշակաբույսերի տարածքների կրճատման հետ: Պետք է նշենք, որ 2019թ. ջրօգտագործման ծավալի

¹ԱՎԿ, ՀՀ շրջակամիջավայրը և բնական պաշարները 2019թ: / https://www.armstat.am/file/article/eco_book_2019_9.pdf

²Աղյուսակը կազմել է հեղինակը՝ Վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա:

87,3%-ը օգտագործվել է գյուղատնտեսության, ձկնաբուծության և անտառ-տնտեսության մեջ: Իսկ այդ ծավալի 57,7%-ը ոռոգման նպատակով: Աղյու-սակը ներկայացված է ստորև: Գյուղատնտեսության, ձկնաբուծության, ան-տառտնտեսության ճյուղում ջրօգտագործման ծավալը ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի ներկայացված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Գյուղատնտեսությունում ջրօգտագործման ծավալն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի 2015-2019 թթ.¹

	2015	2016	2017	2018	2019
ք. Երևան	106,0	89,6	137,6	157,7	125,7
Արագածոտն	220,0	302,7	311,6	44,0	217,5
Արարատ	774,6	685,4	521,5	512,0	662,5
Արմավիր	848,5	422,8	434,9	595,7	462,8
Գեղարքունիք	26,2	16,5	23,7	17,5	87,2
Լոռի	5,5	2,9	2,8	0,5	2,6
Կոտայք	156,3	148,4	183,5	168,2	179,1
Շիրակ	110,8	520,1	56,8	46,2	79,5
Սյունիք	10,8	8,0	15,3	34,8	18,0
Վայոց Ձոր	14,5	14,9	12,7	12,9	11,4
Տավուշ	10,1	5,5	6,8	10,5	8,0
Ընդամենը	2283,3	2216,8	1707,2	1600,0	1854,3

Ըստ ներկայացված տվյալների առավել շատ ջրօգտագործող մարզերն են Արարատի, Արմավիրի և Արագածոտնի մարզերը: Ինչը բնական է, քանի որ բուսաբուծական արտադրանքի 80%-ը ստացվում է այս մարզերից: Որոնց հաջորդում են Կոտայքի մարզը և Երևան քաղաքը: Պետք է նշել, որ ընդհա-նուր ջրօգտագործման ծավալը 2019թ.¹ 2015թ. համեմատ նվազել է 18.8%-ով:

ՀՀ-ում ջրային ռեսուրսների, այդ թվում ոռոգման ջրի պաշարների ձև-վորման առանձնահատկություններից է ջրի հոսքի բաշխման ծայրահեղ անհամաչափությունը: Տարեկան հոսքի ավելի քան 50%-ը ընկնում է զարնա-նային շրջանին և միայն 20%-ը՝ ամռանը, այսինքն՝ նրա առավելագույն պա-հանջի շրջանում: Ներկայումս հանրապետության ժողովրդական տնտեսու-թյան կարիքների համար հավաքվում և օգտագործվում է գետերի հոսքի մո-տավորապես 48%-ը: Գետերի ողջ բնական հոսքը հավաքվում է միայն տար-վա ամառային ամիսներին: Հաշվի առնելով տարվա եղանակային պայման-

¹ԱՎԿ, ՀՀ շրջակա միջավայրը և բնական պաշարները 2019թ: www.armstat.am

ները, երևում է, որ առանց բնական հոսքի կարգավորման հնարավոր չէ ջրի պահանջի լիարժեք ապահովումը¹: Այդ իսկ պատճառով հանրապետությունում անհրաժեշտ է ջրօգտագործման այնպիսի համակարգի ներդրում, որը կհամապատասխանի երկրի բնակլիմայական և աշխարհագրական պայմաններին: Քանզի ջրօգտագործման առավել մեծ սպառումը իրականացվում է գյուղատնտեսությունում, խնդրի լուծումը պետք է սկսել այս ճյուղից:

Ցանկացած վայրում ոռոգում իրականացնելիս հաշվի է առնվում այդ տեղանքի աշխարհագրական դիրքը, ռելիեֆի կտրտվածությունը, կլիման և այլ առանձնահատկություններ: Մեր հանրապետությունում ելնելով լեռնային գոտու առանձնահատկություններից, տեղանքի թեքությունից, ոռոգման ջրի դեֆիցիտից, բարձր ջրի ինքնարժեքից, փոքր և կտրտված տնտեսությունների առկայությունից, առաջնահերթությունը տրվում է կաթիլային և անձրևային ոռոգման համակարգերին: Ջուրն ավելի արդյունավետ օգտագործելու հնարավորությունը ոռոգման արդիական համակարգերի ամենադրական բնութագրերից մեկն է՝ ջրի խոնավությունը մակերեսային ոռոգման համակարգի համեմատությամբ կաթիլային ոռոգման դեպքում կազմում է ավելի քան 50%, անձրևացման դեպքում՝ ավելի քան 30% (գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում այս ցուցանիշները շատ ավելի բարձր են)²:

Կաթիլացություն

Կաթիլային և անձրևային ոռոգման եղանակների ներդրման անհրաժեշտությունը սկսվեց այն ժամանակ, երբ ձկնաբուծության պատճառով Արարատյան արտեզյան ավազանի մակարդակը կտրուկ նվազեց և հիմք հանդիսացավ ոռոգման ջրի դեֆիցիտի առաջացմանը: Կաթիլային ոռոգման կիրառման դեպքում ոռոգման նորման կրճատվում է 20-50%-ով՝ համեմատած ոռոգման այլ եղանակների հետ, իսկ մի շարք դեպքերում էլ ջրի տնտեսումը

¹ Մ. Մանուչարյան, Լ. Հակոբյան, «Ջրօգտագործման տնտեսական արդյունավետությունը ՀՀ-ում», Գիտակրթական համակարգի զարգացման առաջնահերթությունները ՀՀ մարզերում /գիտաժող. նյութեր/, ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղ 2015թ, էջ 149
² «Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման ծրագիր», Հավելված ՀՀ կառավարության 2019թվականի մարտի 7-ի № 212 –Լ որոշման

կարող է հասնել մինչև 75-90%-ի¹: Վերջին տարիներին ոռոգման համակարգի կառուցվածքային և կառավարման բարեփոխումները որոշ չափով նպաստել են ոռոգման ջրի մատակարարման ցուցանիշների բարելավման վրա: Սակայն, ոռոգման համակարգի ֆիզիկական մաշվածության, ոռոգման ջրի մատակարարման բարձր էներգատարության և կառավարման ցածր արդյունավետության պայմաններում ներկայումս ոռոգվում է ոռոգման համար պիտանի հողերի միայն 70%-ը: Զրոգտագործման ոլորտում ներկայումս էլ բավականին մեծ է կորուստների մակարդակը: Գերակա խնդիր է ոռոգման արդիական համակարգերի ընդլայնումը և արտեզյան ավազանի ջրային պաշարների վերականգնումը: Պետք է գիտակցել, որ ջրի խնայողաբար օգտագործումը օրհասական խնդիր է: Հանրապետության աշխարհագրական դիրքը թույլ չի տալիս ակնկալել ջրային պաշարների ավելացումը ի հաշիվ հարևան պետությունների: Այս պայմաններում, իհարկե, ջրային պաշարների օգտագործման և պահպանության հարցը հանրապետության զարգացման և ընդհանրապես գոյատևման համար ունի հույժ կենսական նշանակություն²: Զրային ռեսուրսների ճիշտ կառավարման արդյունքում է հնարավոր միայն լուծել ոռոգման ջրի դեֆիցիտը:

¹ Եվգենյա Հակոբյան, Կաթիլային ոռոգման տեխնոլոգիայի ներդրման արդյունավետության գնահատումը, Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (գիտական հոդվածների ժողովածու). -Եր.: «Գիտություն» հրատ., 2014-1, էջ 150

² Մ.Մանուչարյան, Լ.Հակոբյան «Զրոգտագործման տնտեսական արդյունավետությունը ՀՀ-ում», Գիտակրթական համակարգի զարգացման առաջնահերթությունները ՀՀ մարզերում /գիտաժողովի նյութեր/, ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղ 2015թ, էջ 148

Դավիթ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Մերի ՄՈՒՐԱԴՅԱՆ

Ռոռզման համակարգի առանձնահատկությունները ՀՀ-ում

Բանալի բառեր. ջրային ռեսուրսներ, ռոռզում, ռոռզման եղանակներ, ջրօգտագործում, ջրամատակարարում, կաթիլային ռոռզում, անձրևային եղանակով ռոռզում, ռոռզման առանձնահատկություններ

Կյանքի գոյության միակ բնական պայմանն են հանդիսանում հողը և ջուրը: Հողի բերրիության վրա ազդում են մի շարք գործոններ՝ լույս, ջերմություն, օդ, սննդանյութեր և հատկապես ջուր: Հողօգտագործման պրոցեսում ջուրը կարևորագույն գործոններից մեկն է: Այն ունի բազմակողմանի ազդեցություն այդ գործընթացում՝ ազդում է հողի ֆիզիկական վիճակի, քիմիական և կենսաբանական պրոցեսների վրա: Հայաստանը համարվում է այն բազմակի երկրներից մեկը, որտեղ չնայած բնական գործոնների բավարար վիճակի, կայուն երաշխավորված և բարձր բերք ստանալու համար նկատվում է ջրի պակաս: Այդ պակասը լրացվում է ռոռզման եղանակով:

Давид АРУТЮНЯН, Мери МУРАДЯН

Особенности ирригационной системы в РА

Ключевые слова: водные ресурсы, орошение, способы орошения, водопользование, водоснабжение, капельное орошение, дождевое орошение, особенности орошения.

На плодородие почвы влияет ряд факторов: свет, тепло, воздух, питательные вещества и особенно вода. Вода - один из важнейших факторов землепользования. В этом процессе он оказывает разностороннее действие, влияет на физическое состояние почвы, химико-семиологические процессы. Армения считается одной из многих стран, где, несмотря на удовлетворительное состояние природных факторов, наблюдается нехватка воды для получения стабильного и высокого урожая. Этот дефицит восполняется за счет орошения. Здесь важна правильная организация и управление процессом полива .

David HARUTYUNYAN, Mery MURADYAN

Features of the irriation system in RA

Key words: water resources, irrigation, irrigation methods, water use, water supply, drip irrigation, rain irrigation, irrigation features

A number of factors affect soil fertility: light, heat, air, nutrients and especially water. Water is one of the most important factors in land use. In this process, it has a versatile effect, affects the physical condition of the soil, chemical and semiological processes. Armenia is considered one of the many countries where, despite the satisfactory state of natural factors, there is a lack of water to obtain a stable and high yield. This deficit is made up by irrigation. The correct organization and management of the irrigation process is important here .

**ՏՈՒՐԻԶՄԸ ՈՐՊԵՍ ԲԵՐԴԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ամբաստ ԶՈՒՑՈՒԼՅԱՆ

ԵՊՀ Իջևանի մ/ճ ՏԿՄ ամբիոնի տ.գ.թ. ասիստենտ

Քրիստինե ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱԱՀ ԱԷ ամբիոնի դասախոս տ.գ.թ.

Բանալի բառեր. գյուղական զբաղվածություն և գործազրկություն գյուղական տուրիզմ, SWOT վերլուծություն

Ներածություն

Գյուղական տարածքները հատկապես սահմանամերձ գոտու յուրաքանչյուր երկրի համար ունեն ռազմավարական մեծ նշանակություն: Տավուշի մարզում և նրա տարածաշրջաններում (այդ թվում Բերդի տարածաշրջանի) վերջին հինգ տարիների ընթացքում գյուղատնտեսության ոլորտի զարգացման և դինամիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ գյուղատնտեսության մեջ տնտեսական աճի տեմպերն անկայուն են եղել շատ պատճառներով, և գյուղատնտեսական արտադրության արդյունավետությունը շարունակում է մնալ խիստ ցածր մակարդակում: Դա կապված է օբյեկտիվ և սուբյեկտիվ մի շարք շատճառների հետ՝ տարածաշրջանի բնակավայրերի գերակշիռ մասը գտնվում է հայ-ադրբեջանական սահմանի մոտ, մեծ է գյուղատնտեսական աշխատանքների սեզոնայնության մեկերդակը, ռոզման ջրի անբավարարության պատճառով գյուղնշանակության հողատարածքների մեծ մասը չի մշակվում, ճանապարհների մեծ մասը անբարեկարգ են, ցածր է բնակավայրերի տրանսպորտային հասանելիության մակարդակը, չկան գյուղմթերքներ վերամշակող ձեռնարկություններ: Տնտեսության ներկայիս պայմաններում Հայստանի Հանրապետության և նրա սահմանամերձ մարզերի ու տարածաշրջանների գյուղական բնակչության կյանքի մակարդակն ու որակը զգալիորեն հետ է մնում քաղաքների կենսամակարդակից, բնակչության մուտքը սոցիալական կազմակերպությունների ծառայություններ նեղանում է, և տեղեկատվության և նորարարության ճեղքվածքը քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև մեծանում է, ինչը հանգեցնում է գյուղական բնակչության միգրացիայի արտահոսքի մեծացմանը, դեպի գյուղական տարածքների զարգացման կորստին [4. Էջ 15]: Այսօր ինչպես Տավուշի մարզի

այնպես էլ Բերդի տարածաշրջանի գյուղական բնակավայրերի հիմնական բացասական միտումներից մեկը նրա դեգրադացիան և աշխատուժի (հիմնականում 18-ից 35 տարեկաններ) զանգվածային արտահոսքն է հանրապետության և արտերկրի այլ քաղաքներ: Այս գործընթացն անխուսափելիորեն հանգեցնում է գյուղի արդեն թերզարգացած ենթակառուցվածքի վատթարացմանը, որի արդյունքում գյուղում առաջանում է զբաղվածության խնդիր և գործազրկության աճ: [2, էջ. 135]: 2000 թվականի համեմատ 2020թ. Բերդի տարածաշրջանի գյուղական բնակչությունը կրճատվել է 6.1 հազարով և 2020 հունվարի 1-ին կազմել է 16.6 հազար մարդ[1.էջ 6]:

Գրականության ակնարկ

Ունենալով սոցիալ-տնտեսական կարևոր նշանակություն, գյուղական զբոսաշրջությունը մշտապես գտնվում է թե հայ, թե արտերկրի հետազոտողների ուսումնասիրության կենտրոնում: Սույն հետազոտության տեղեկատվության հիմքը մասնագիտական գրականության արտերկրի աղբյուրները (Օ.Ա. Նիկիտինա, Ե.Պ.Կուչնարենկո), հայ հետազոտողների ուսումնասիրությունները, զբոսաշրջության ոլորտը կարգավորող օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը, ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական տեղեկագրերը:

Հետազոտության մեթոդաբանություն

Հոդվածում արծարծվող հիմնահարցերը ավելի տեսանելի դարձնելու նպատակով կատարվել է համեմատական վերլուծություն, մասնավորապես ներկայացվել են գյուղական զբոսաշրջության ոլորտում տեղի ունեցած փոփոխությունները 2015թ. ի վեր, փորձելով վեր հանել պատճառահետևանքային կապը վերջինիս և հիփոթեքային շուկայի զարգացումների միջև: Տեղեկատվության համար հիմք են ծառայել ՀՀ վիճակագրության պետական կոմիտեի կողմից հրապարակված վիճակագրական հրապարակումները, ՀՀ Տավուշի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի կողմից տրամադրված տվյալները: Հետազոտության համար կիրառվել են տվյալների հավաքագրման, վերլուծության գրաֆիկական, համեմատական մեթոդները՝ համադրելով 2015-2020թթ. ցուցանիշները:

Վերլուծություն

Չնայած վերջին տարիներին որշակի աշխատանք են տարվել տարածաշրջանում գյուղական տուրիզմի զարգացման ուղղությամբ, սակայն այն դեռևս որոշիչ դեր չի կատարում համայնքների զարգացման և նոր աշխա-

տատեղերի ստեղծման գործում: Տարածաշրջանի 9 գյուղական համայնքների 13 հյուրատներ զբաղվում են գյուղական զբոսաշրջությամբ:

Աղյուսակ 1. Բերդի տարածաշրջանում գյուղական զբոսաշրջության զարգացման SWOT վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>Բերդի տարածաշրջանի գերակա ճյուղը գյուղատնտեսությունն է՝ խաղողագործությունը, պտղաբուծությունը, ծխախոտագործությունը, կարտոֆիլի, մսի և կաթի արտադր.: 2. Տարածաշրջանն ունի. - հարուստ բնական ռեսուրսներ; - բարենպաստ կլիմայական պայմաններ; - տրանսպորտային ցանցերի - կրթական հաստատություններ, որոնք մասնագիտանում են անձնակազմի վերապատրաստման մեջ: 3. Նոր տուրիստական ծառայությունների հնարավորություններ: 4. Մրցակցության բացակայություն: 5. Մայրաքաղաքային գների համեմատ տուրիստական ծառայությունների ցածր գները: 6. Բնական ռեկրեացիոն ռեսուրսների առկայություն՝ «Բելվեժ. պուշա» ազգ. պարկ, հատուկ պահպ. տարածքներ: 7. Տարածաշրջանի բարձր գյուղատնտեսական ներուժը:</p>	<p>1. Հաճախակի երաշտի և կարկուտի մեծ վնասները: 2. Ճանապարհների ցածր որակը և մեքենաների հնացած պարկը: 3. Գյուղական տուրիզմի զարգացմանը նպաստող հատուկ ծրագրերի բացակայություն: 4. Գովազդային արշավների անբավարարություն: 5. Գյուղական բնակավայրերի մեծ մասում գիշերակացի կազմակերպման բացակայությունը: 6. Պետության անբավարար ֆինանսավորումը: 7. Առաջարկվող տուրերի փոքր քանակը:</p>
Հնարավորություններ	Սպառնալիքներ
<p>1. Չմշակվող հողատարածքների փոքրացում: 2. Ինտենսիվ գյուղատնտեսության զարգացում: 3. Տեղական գյուղատնտեսական ապրանքների իրացման ծավալների և հնարավորությունների: 4. Վերամշակող նոր արտադրությունների ստեղծում և հների ընդլայնում: 5. Զբոսաշրջային ենթակառուցվածք զարգացման նախագծերի իրացման բարենպաստ ներդրումային միջավայր: 6. Տեղական բնակչության և ամբողջ տարածաշրջանի եկամուտների աճ : 7. Լրացուցիչ աշխատատեղերի ստեղծում: 8. Գյուղական բիզնեսի զարգացում : 9. Գյուղում սոցիալական ենթակառուցվածքների օբյեկտների աշխուժացում : 10. Տուրիստական դրական իմիջի ստեղծում: 11. Զբոսաշրջային ապրանքների տեսականու ընդլայնում: 12. Նոր աշխատատեղերի ստեղծում: 13. Ենթակառուցվածքների որակի բարելավում: 14. Կրթական ծառայությունների շրջանակի ընդլայնում: 15. Գյուղական բնակչության եկամուտների աճ: 16. Ճգնաժամային իավիճակներում զբոսաշրջիկներին ներքին տուրիզմ վերակողմնորոշելու ունակություն:</p>	<p>1. Ռեկրեացիոն միջավայրի վրա կտրուկ ավելացման հնարավորությունը: 2. Տարածաշրջանում էկոլոգիական իրավիճակի վատթարացման հավանականություն: 3. Մրցակիցների ի հայտ գալը: 4. Հանրապետության այլ տարածաշրջանների հետ մրցակցության մեծացման արդյունքում զբոսաշրջային շուկայի կորուստ: 5. Տուրիստական ծառայության ցածր մակարդակի պատճառով շուկայից դուրս մղում: 6. Սոցիալ-տնտեսական և քաղաքական ապակայունացում: 7. Հայ-ադրբեջանական սահմանագոտում ռազմական բախումներ:</p>

Գյուղական զբոսաշրջությունն առավել զարգացած է տարածաշրջանի Բերդ քաղաքային և Արծվաբերդ գյուղական համայնքներում որոնք ունեն 3 ական հյուրատներ: Մեկական հյուրատներ ունեն Ներքին Կարմիր աղբյուր, Նորաշեն, Չինարի, Չորաթան և Վերին Կարմիր աղբյուր գյուղական համայնքները: Համաձայն զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության, գյուղական վայրերում տուրիզմը աշխարհում զբոսաշրջության զարգացման հինգ հիմնական ռազմավարական ուղղություններից մեկն է [3, էջ 236]: Ռեկրեացիոն ռեսուրսների ներուժի շնորհիվ ագրոտուրիզմի զարգացումը կբազմազանեցնի տարածաշրջանի ագրոարդյունաբերական համալիրի գործունեության ոլորտները և կբացահայտի դրա աճի նոր հեռանկարներ: Գյուղական տուրիզմը ահրաժեշտ է դիտարկել որպես Բերդի տարածաշրջանի գյուղական բնակավայրերի հեռանկարային տուրիստական ուղղություն: Սակայն գյուղական զբոսաշրջության զարգացումը բավարար չէ կազմակերպել միայն գյուղացիական տնտեսությունների՝ իրենց բնակարաններում հյուրեր ընդունելու ցանկությամբ: Անհրաժեշտ է ստեղծել այնպիսի նըպաստավոր պայմաններ, որը թույլ կտա ամբողջովին և արդյունավետ օգտագործել սպասարկման համալիրի (հասարակական սննդի կազմակերպություններ, տրանսպորտ, առևտուր, կապ, առողջապահություն և այլն) առկա ներուժը: Ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, մեկ զբոսաշրջիկին որակյալ սպասարկում մատուցելու համար անհրաժեշտ է ունենալ առնվազն երեք աշխատատեղ [5.էջ 156]:

Մեր կողմից իրականացված SWOT-վերլուծության միջոցով որոշվել են Բերդի տարածաշրջանում գյուղական զբոսաշրջության զարգացման արտաքին և ներքին միջավայրի գործոնները: Բացահայտվել են տարածաշրջանի ուժեղ և թույլ կողմերը ինչպես նաև հնարավորություններն ու սպառնալիքները որոնք կարող են խոչընդոտել Բերդի տարածաշրջանում գյուղական զբոսաշրջության զարգացմանը: Ելնելով վերոնշյալից բացահայտենք Բերդի տարածաշրջանում գյուղական զբոսաշրջության զարգացման հիմնական միտումները.

1. Չնայած այն հանգամանքին որ տարածաշրջանը ունի հարսուստ բնական և մարդածին ռեկրեացիոն ռեսուրսներ սակայն այն ամբողջովին չի օգտագործվում տարածաշրջանի գյուղական համայնքներում գյուղական զբոսաշրջության զարգացման նպատակով:

2. Տարածաշրջանի ժամանող զբոսաշրջիկների գիշերակացի նպատակով չեն օգտագործվում գյուղական բնակչության սեփական բնակարանները: Դա է պատճառը որ տարածաշրջանի 10 գյուղական բնակավայրերում (Այգեպար, Իծաքար, Վերին Ծաղկավան, Մովսեսգե, Նավուր, Չինչին, Պառավաքար, Վարագավան, Տավուշ) դեռևս հյուրատներ չկան:

3. Տարածաշրջանում դեռևս չկան զբոսաշրջային ծառայություններ մատուցող կազմակերպություններ:

4. Տարածաշրջանի իմիջի վրա բացասական ազդեցություն ունի նրա հայադրբեջանական սահմանին մոտ գտնվելը:

5. Ենթակառուցվածքների անկատարությունը:

6. Գյուղական զբոսաշրջության վերաբերյալ պաշտոնական վիճակագրության բացակայությունը խոչնդոտում է գնահատելու ոլորտում տիրող իրավիճակը և գտնել արդյունավետությունը մեծացնող ուղիներ:

Եզրակացություն

Ներկայացված SWOT վերլուծության արդյուքում կարող ենք հանգել այն եզրակացությանը, որ Բերդի տարածաշրջանը ունի բավականին լավ բնական և զբոսաշրջային ռեսուրսներ գյուղական տուրիզմի զարգացման համար: Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ զբոսաշրջության այս տեսակի զարգացման մեջ կան բարդ խնդիրներ, որոնք սուր և համակարգային բնույթ ունեն (մաս-նավորապես՝ ենթակառուցվածքներ, անձնակազմի խնդիրներ և մի շարք այլ) [6 էջ 79]:

Որպես զբոսաշրջության զարգացման միջոց կարելի է օգտագործել մարդկային, բնական, ֆինանսական, ինֆորմացիոն ռեսուրսները և ենթակառուցվածքները: Որպես ֆինանսական ռեսուրսներ կարելի է օգտագործել միջազգային ներդրումային և վարկային ֆոնդերի, ֆինանսական այլ կառույցների կողմից տրամադրվող ինչպես նաև բանկերին բնակչության որպես ավանդ տրամադրված ֆինանսական միջոցները: Տարածաշրջանի հիասքանչ անաղարտ և գեղեցիկ բնությունը զբոսաշրջության նպատակատով օգտագործելու գյուղական բնակչությանը ոլորտում ընդգրկելու նպատակով անհրաժեշտ է նրանց տրամադրել իրավական աջակցություն, մեթոդական նյութեր, փորձի փոխանակման միջոցով մեցածնել նրանց որակական հատկանիշերը, լրատվամիջոցների և ինտերնետի միջոցով գովազդել գյուղական զբոսաշրջու-

թյամբ զբաղվող հյուրատների և ծառայություն մատուցող կազմակերպությունների դրական փորձը:

Գյուղական բնակավայրերում տուրիզմի զարգացման միջոցներ	
Մարդկային ռեսուրսներ	ազատ աշխատուժ, հմտություններ, գիտելիքներ, որակավորումներ:
Ենթակառուցվածքներ	կացարանային պայմաններ, ճանապարհի պայմաններ, էներգետիկ ռեսուրսներ, տրանսպորտային
Ֆինանսական ռեսուրսներ	բյուջեի միջոցներ, վարկային և ներդրողների ֆոնդեր, ձեռնարկատիրոջ սեփական միջոցներ.
Սոցնալական ենթակառուցվածք	Առողջապահական, կրթական և սպասարկման ենթակառուցվածներ
Բնական ռեսուրսներ	Տարածքի շրջակա բնություն, ազգային առանձնահատկություններ, պատմամշակութային
Ինֆորմացիոն ռեսուրսներ	Իրավական աջակցություն, մեթոդական նյութեր, փորձի փոխանակման հնարավորություն, լրատվամիջոցների և ինտերնետի միջոցով գովազդ:

Գծապատկեր 1. Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանի գյուղական բնակավայրերում տուրիզմի զարգացման միջոցները:

Կարևոր տեղ պետք է հատկացվի և նպատակաուղղված աշխատանքներ տարվի ենթակառուցվածքների ստեղծման և հնի արդիականացման ուղղությամբ: Վերոնշյալ խնդիրների լուծումը թույլ կտա Բերդի տարածաշրջանում արագ զարգացնել գյուղական զբոսաշրջությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2020թ. հունվ. 1-ի դր.. ՎՏ, 2020թ. 10 էջ
2. Иволга А.Г. Сидельникова К.А.Карнаухова Я.А. Демографические аспекты сельского туризма: проблемы и пути решения. Сервис в России и зарубежом Т. 10, No.7.2016г. с 135.
3. Кучина О.В.Туризм на сельских территориях ; проблемы дефиниций . Теория и технологии сферы услуг СПбГУСЭ. 2012 г. с 236-242
4. Сельский туризм: опыт, проблемы, перспективы развития в РФ. М., 2008.– 72 с.
5. Скульская Л.В. Широкова Т. К. Сельский туризм и народные промыслы как дополн. источники дохода сельского населения. Науч. тр. ИНП РАН. М.: МАКС Пресс, 2011. с151.
6. Кундиус В.А., Винтаева Т.С. Проблемы и перспективы развития агротуризма в Алтайском крае. Сетевое издание Совета ректоров вузов Большого Алтая. Наука и образование Большого Алтая 2. 2019 с 79-84.

Սմբատ ՅՈՒՅՈՒԼՅԱՆ, Քրիստինե ՍԱՀԱԿՅԱՆ
Տուրիզմը որպես Բերդի տարածաշրջանի գյուղական համայնքների
զարգացման միջոց

Բանալի բառեր. գյուղական զբաղվածություն և գործազրկություն գյուղական տարածքում, SWOT վերլուծություն

Հոդվածում դիտարկվում են Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանի զբոսաշրջության ոլորտի համեմատաբար նոր ուղղության՝ գյուղական տուրիզմի զարգացման հնարավորություններն ու որոշ ասպեկտներ: Բերդի տարածաշրջանում գյուղական զբոսաշրջության զարգացման համար ամենաէական նախադրյալներն են՝ բնական ռեկրեացիոն ռեսուրսների ներուժը, հնագույն պատմական և մշակութային ժառանգությունը (հնագիտական, կրոնական, պատմական) և ազգային խոհանոցի և հյուրասիրության հարուստ ավանդույթները: Վերոնշյալ նախադրյալների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանում գյուղական զբոսաշրջության զարգացումը բավականին հեռանկարային է:

Смбат ЦУЦУЛЯН, Кристине СААКЯН
Туризм как средство развития сельских общин Бердского района

Ключевые слова: занятость и безработица в сельской местности, сельский туризм, SWOT-анализ

В статье рассматриваются возможности и некоторые аспекты развития сельского туризма – относительно нового направления в туристической сфере Бердского района Тавушской области. Наиболее существенными предпосылками развития сельского туризма в Бердском районе являются потенциал природных рекреационных ресурсов, древнейшее историко-культурное наследие (археологическое, религиозное, историческое), богатые традиции национальной кухни и гостеприимства. Анализ указанных предпосылок позволяет сделать вывод о перспективности развития сельского туризма в Бердском районе Тавушской области.

Smbat TSUTSULYAN, Kristine SAHAKYAN
Tourism as Means of Development of Rural Communities in Berd Region

Key words: employment and unemployment in the rural areas, rural tourism, a SWOT analysis.

The article discusses the possibilities and some aspects of the development of rural tourism related to a relatively new direction in the tourism sector of the Berd region of the Tavush marz. The potential of natural recreational resources, the most ancient historical and cultural heritage (archaeological, religious, historical), the rich traditions of the national cuisine and hospitality are the most essential preconditions for the development of rural tourism in the Berd region. The analysis of the mentioned preconditions allows us to come to a conclusion that the development of rural tourism in the Berd region of the Tavush marz is promising. A SWOT analysis of the strong and weak sides of the rural tourism development has been carried out. Proposals for the development of rural tourism have been presented.

ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Մերի ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ՏԻ գիտաշխատող, հայցորդ

Բանալի բառեր. ջրային ռեսուրսներ, ջրօգտագործում, ջրամատակարարում, ջրահեռացման համակարգ, ոռոգում, ջրօգտագործողների ընկերություններ

Ջուրը կյանքի սկզբնաղբյուրն է պայմանավորված է ջրի հետ: Այն կենսական դեր է խաղում մ, առանց որի հնարավոր չէ ապրել: Առհասարակ երկրագնդի վրա կյանքի կազմավորումը մեծապես արդու առողջության, գյուղատնտեսության բոլոր տեսակի գործունեության վարման, արդյունաբերության և տնտեսության բոլոր ճյուղերում: Ելնելով այդ կարևորությունից ջրային ռեսուրսների կառավարումը ձեռք է բերում առանցքային դեր և նշանակություն: Ջրի դեֆիցիտի սրումը դարձել է ապագայի գլխավոր մարտահրավերը: Շըրջակա միջավայրի Համաշխարհային օրվա առթիվ 2003 թվականին ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը նշել է. «Երկու միլիարդ մարդ խմելու ջրի կարիք ունեն»: Բացի դրանից, ևս երկու միլիարդ էլ հնարավորություն են ունեցել գարծընականում ունենալ ջրի դեֆիցիտի հետ կապված խնդիրը¹:

Աշխարհում ջրի հիմնախնդրի մասին բավականին հստակ նկարագիր է տվել Հ. Մոդգերը՝ նշելով, որ «դա չկա այնտեղ, որտեղ պետք է և այն ձևով չէ, որը մեզ ձեռնտու է»²: Ջրային հիմնախնդրին նվիրված առաջին խոշոր համաժողովներից մեկը տեղի է ունեցել 1977 թ. Մար դել Պլատայում (Արգենտինա): Համաժողովի վերջնական եզրակացությունը հետևյալն էր. «Բոլոր ազգերը՝ անկախ իրենց զարգացման մակարդակից և սոցիալ տնտեսական պայմաններից, իրավունք ունեն օգտվելու այն խմելու ջրից, որը որակական և քանակական առումներով կբավարարի իրենց հիմնական պահանջմունքերը»³: Հայաստանում ընդհանուր առմամբ առկա է ջրային ռեսուրսների բավարար պաշարներ: Հաշվի առնելով երկրում առկա բոլոր ջրային ռեսուրսները, վերջիններս բավարար են տարեկան մեկ շնչի հաշվարկով 3100 խորանարդ մետր ջրի մատակարարման համար, որը զգալիորեն գերազանցում է սովորաբար վկայակոչվող 1700 խորանարդ մետր Ֆալկենմարկի ջրային


¹ Важнейший ресурс планеты. Внешнеторговый ежедневник КОРИНФ. 2005г. N 21, стр. 4-6

² Аксенов Д., Войны за воду, Огонек, No. 11-12, Март 2002, www.ropnet.ru/ogonyok/win/2002

³ Report of the United Nations Water Conference, Mar del Plata, March 14-25, 1997,

NE.77.II.A.12, United Nations Publications, New York.1997, p. 2

սթրեսի ցուցանիշը: Ինչ վերաբերվում է գետերի հոսքին, մեզ մոտ այն ունի սեզոնային և տարեկան տատանողականության բնույթ, արդյունքում ջրային ռեսուրսների և տարածքաժամանակային բաշխվածությունը դառնում է անհավասար: Գետահոսի սեզոնային տատանումների դեմ պայքարելու համար երկրում կառուցվել են 1,4 միլիարդ խորանարդ մետր ընդհանուր հզորությամբ 87 պատվարներ: Նրանց մեծ մասը ծառայում է մեկ նպատակի՝ հիմնականում ոռոգման: Խմելու ջրի մոտ 96 տոկոսը և ընդհանուր ջրառի շուրջ 40 տոկոսը կազմում են ստորերկրյա ջրերը¹: Տարեկան առաջանում է մոտ 3 մլրդ խոր. մետր ստորգետնյա ջուր: Ստորերկրյա ջրերի ոչ համաչափ տեղաբաշխման պատճառով Արարատյան դաշտում արտեզյան ջրերի ճնշումից ճահիճներ են առաջանում, որոնց ընդհանուր մակերեսը մոտ 1500 քառ. կմ է²: Հանրապետությունում 2017-2019թթ. ջրային ռեսուրսների սպառումը ըստ տնտեսական գործունեության ներկայացված է գծապատկեր 1-ում:



Գծանկար 1. Զրոգտագործումն ըստ տնտեսական գործունեության հիմնական տեսակների 2017-2019թթ. (մլն. մ³)³


Հանրապետությունում ջրօգտագործումը դասակարգվում է ըստ հետևյալ ոլորտների՝ ոռոգում, խմելու-կենցաղային, հիդրոէներգետիկա, արդյունաբերություն, ռեկրեացիա, ձկնաբուծություն և այլն: Ինչպես աշխարհի բոլոր երկրներում, այնպես էլ Հայաստանում գյուղատնտեսությանը մեծապես կախ-

¹ ՀԲ զեկույց, Դեպի ջրային ռեսուրսների համալիր կառավարում: www.212.42.195.34:92/

² Ե. Հակոբյան, Հայաստանի ջրային ռեսուրսները և կառավարման հիմնախնդիրները, Սոցիալ-տնտ. զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում, «Գիտություն», 2012, էջ 144

³ ԱՎԿ, ՀՀ շրջակա միջավայրը և բնական պաշարները 2019թ: www.armstat.am

ված է ոռոգումից: Մշակաբույսերի համախառն արտադրության ավելի քան 80%-ը ստացվում է ոռոգվող տարածքներից¹: Ոռոգման ճիշտ նորմերի ընտրության դեպքում կարելի է մշակաբույսերի բերքատվությունը բարձրացնել մի քանի անգամ: Ոռոգման ոլորտը շարունակում է մնալ ջրային պաշարների խոշորագույն սպառողը: Հանրապետությունում 2019 թվականի ջրօգտագործումը ըստ նշանակության ներկայացված է գծապատկեր 2-ում:



Գծանկար 2. Ջրօգտագործումը ըստ նշանակության²

Գյուղատնտեսության մեջ ջրի կառավարման խնդիրներով զբաղվում են ջրօգտագործողների ընկերությունները, որոնց կառավարման ոլորտում գրտընվում է մոտ 200 հազար հեկտար հողատարածք: Ջրօգտագործող ընկերությունների ստեղծումը ունեցավ իր դրական հետևանքները՝ վերահսկողություն սահմանվեց ջրի սպառման դիմաց վճարումների գանձմանը, ցածրարժեք մշակաբույսերի տեսակները աստիճանաբար սկսեցին փոխարինվել բարձրարժեք տեսակներով: Սակայն ջրօգտագործողների ընկերությունները ֆինանսապես ապահովված չեն և շարունակում են ապավինել պետական սուբսիդավորմանը: Ի վերջո, գյուղատնտեսական ջրի կառավարմանը դեռևս բնորոշ է որոշակի անարդյունավետություն: Թեև ջրօգտագործող ընկերությունների ստեղծումը նպաստեց ոլորտի բարելավմանը, բայց և այնպես ջրային ռեսուրսների սպառման գործընթացում առկա են մի շարք խնդիրներ:

- Ոռոգման ժամանակ դեռևս ջրի կորուստը բավականին բարձր է: Անհրաժեշտ է իրկանացնել ոռոգման ջրանցքների վերականգնում, ընդլայնել կաթիլային ոռոգման համակարգը:

¹ Ե. Հակոբյան, Նույն աղբյուրը, էջ 145

² ԱՎԿ, ՀՀ շրջակա միջավայրը և բնական պաշարները 2019թ: / www.armstat.am

Աղյուսակ 1. Զրոգտագործողների ընկերությունների կողմից 2018 և 2019 թվականների նույն ժամանակահատվածում մատակարարված ոռոգման ջրի ծավալների, հասույթի, գանձման վերաբերյալ¹

№	ԶՕԸ անվանումը	Առ 31. 07. 2018թ			Գանձման %
		Զրոտոց, հազ.մ ³	Հասույթ, հազ. դրամ	Գանձում, հազ. դր.	
1	Արտաշատ ԶՕԸ	47 305,6	520 361,1	238 328,2	45,8
2	Արարատ ԶՕԸ	20 274,3	223 017,0	128 445,0	57,6
3	Երևան ԶՕԸ	14 799,6	162 795,6	79 251,0	48,7
4	Կոտայք ԶՕԸ	20 540,4	216 086,5	111 555,1	51,6
5	Արագածոտն ԶՕԸ	40 110,0	441 210,0	164 610,7	37,3
6	Էջմիածին ԶՕԸ	52 674,1	579 414,8	166 500,0	28,7
7	Արմավիր ԶՕԸ	81 014,8	891 162,8	136 594,0	15,3
8	Շենիկ ԶՕԸ	37 935,7	417 292,7	144 788,8	34,7
10	Թային ԶՕԸ	9 653,0	106 183,0	52 850,0	49,8
11	Շիրակ ԶՕԸ	2 526,6	27 792,6	20 669,3	74,4
12	Գեղարքունիք ԶՕԸ	3 442,0	37 862,0	9 490,0	25,1
13	Տավուշ ԶՕԸ	4 418,2	48 599,9	13 795,9	28,4
14	Լոռի ԶՕԸ	1 057,7	20 368,2	12 281,9	60,3
15	Եղեգնաձոր ԶՕԸ	5 100,0	58 550,0	40 429,0	69,1
	Սյունիք ԶՕԸ	2 786,0	30 646,0	5 000,0	16,3
Ընդամենը		343 637,86	3 781 342,12	1 324 588,86	35,0
№	ԶՕԸ անվանումը	Առ 31. 07. 2019թ			Գանձման %
		Զրոտոց, հազ.մ ³	Հասույթ, հազ. դրամ	Գանձում, հազ. դր.	
1	Արտաշատ ԶՕԸ	45 455,1	500 005,9	215 084,6	43
2	Արարատ ԶՕԸ	21 582,3	237 405,0	125 494,8	52,9
3	Երևան ԶՕԸ	8 836,2	97 198,2	68 948,0	70,9
4	Կոտայք ԶՕԸ	17 678,3	175 418,6	122 319,7	69,7
5	Արագածոտն ԶՕԸ	26 000,0	286 000,0	172 800,0	60,4
6	Էջմիածին ԶՕԸ	42 748,6	470 235,0	198 503,9	42,2
7	Արմավիր ԶՕԸ	58 780,3	646 583,5	145 824,6	22,6
8	Շենիկ ԶՕԸ	43 156,7	474 723,9	165 309,5	34,8
10	Թային ԶՕԸ	17 205,0	189 255,0	62 562,0	33,1
11	Շիրակ ԶՕԸ	5 860,0	64 460,0	42 156,6	65,4
12	Գեղարքունիք ԶՕԸ	2 575,2	28 327,2	30 961,5	109,3
13	Տավուշ ԶՕԸ	4 182,8	46 011,1	17 669,3	38,4
14	Լոռի ԶՕԸ	1 336,9	21 129,7	13 209,5	62,5
15	Եղեգնաձոր ԶՕԸ	4 800,0	52 800,0	47 813,0	90,6
	Սյունիք ԶՕԸ	2 704,0	32 846,0	34 112,0	103,9
Ընդամենը		302 901,47	3 322 399,17	1 462 768,98	44,0

¹ Զրային կոմիտե: https://www.scws.am/uploads/files/104/Operativ_01.08_.2019_.pdf

- Հայաստանում անմխիթար վիճակում է գտնվում ջրահեռացման համակարգը, որը հանգեցրել է ստորերկրյա ջրի մակարդակի բարձրացմանը, աղակալմանը, ճահճացմանը, մասնավորապես Արարատյան դաշտում: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել դրենաժային համակարգին:

Ջրօգտագործողների ընկերությունների կողմից մատակարարված ոռոգման ջրի վերաբերյալ ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Հայաստանի ջրային հատվածի խնդիրները կարելի է բաժանել երկու հիմնական խմբերի. ջրային ռեսուրսների կառավարման հետ կապված խնդիրներ և ջրամատակարարման և ջրահեռացման քաղաքային ենթակառուցվածքների կառավարման հետ կապված խնդիրներ: Առաջին խմբին են դասվում ջրի ցածր որակի հետ կապված խնդիրները, արդյունաբերական աղտոտվածությունը և գյուղատնտեսական արտանետումները (ռեկրեացիոն գոտիների (Սևանա լիճ) ձևավորման ժամանակ էկոհամակարգերի պահպանության անտեսումը, այս խմբին են դասվում նաև ջրհեղեղների հետ կապված խնդիրները, հողերի էրոզիան, ջրի բաշխման հետ կապված ջրօգտագործողների միջև եղած հակասությունները: Երկրորդ խմբին են դասվում պահանջարկի անարդյունավետ կարգավորման հետևանքով ջրային ռեսուրսների ոչ ռացիոնալ օգտագործումը, ենթակառուցվածքների վիճակի վատացումը և մեծ կորուստները¹: Ոռոգման ոլորտից հետո երկրորդ ամենախոշոր ջրօգտագործող հատվածը տնային տնտեսություններն են : Այստեղ նույնպես առկա են խնդիրներ.

- Կեղտաջրերի հավաքման և մշակման համակարգերը թերի են և լավ չեն գործում, հաճախ կեղտաջրերը հեռացվում են անմիջապես ջրավազան կամ հողատարածքներ, առաջացնելով ծանր սանիտարահիգիենիկ հետեվանքներ և ջրի որակի վատթարացում:

- Կեղտաջրերի մաքրման գործարանները կառուցվել են 1990-ական թվականներին և գտնվում են ոչ բարվոք վիճակում՝ մասամբ են գործում, ապահովում են ջրի մասնակի մաքրում: Ջրահեռացման համակարգի արդիականացումը ոլորտի առաջնահերթություններից է:

«Կարևորագույն ջրի պաշարը Սևանա լիճն է, որը ունի բնապահպանական, տնտեսական և սոցիալական մեծ կարևորություն, այն հանդիսանում

¹ Ե. Հակոբյան, Նույն աղբյուրը, էջ 147

է կարևոր բազմանպատակային ջրամբար ոռոգման, հիդրոէներգետիկայի և ռեկրեացիոն օգտագործումների համար: Սևանա լճի մակարդակի զգալի իջեցումը կհանգեցնի լուրջ բնապահպանական և էկոլոգիական խնդիրների, այդ թվում՝ ջրի որակի վատթարացմանը, բնական միջավայրի ոչնչացմանը և կենսաբազմազանության կորստի, ինչը տեղի ունեցավ 1930-1970թթ.: Մինչ օրս էլ շարունակվում են իրականացվել լճի մակարդակի կայունացման և բարձրացման ծրագրեր: Այդ ծրագրերից հատկանշականը Արփա-Սևան թունելով Արփա գետից տարեկան մինչև 250 միլիոն խորանարդ մետր ջրի փոխադրումն է: Այնուամենայնիվ այս ոլորտում նույնպես առկա են դեռ մի շարք հիմնախնդիրներ:

- Ոռոգման նպատակով ջրի բացթողումը Սևանա լճից,
- Ջրի որակի նվազումը՝ կախված չմաքրված կամ անբավարար մաքրված կեղտաջրերի արտանետումներից: Կեղտաջրերի ծավալը գնալով կրկնապատկվում է, ինչի արդյունք է արդեն մի քանի տարի ամռան ամիսների Սեվանի կանաչման պրոցեսը:
- Բոլոր ջրամաքրման գործարանները կառուցվել են խորհրդային ժամանակաշրջանում և ներկայումս հնացած են, կարիք ունեն կապիտալ վերանորոգման, չափազանց էներգատար են և ծախսատար շահագործման համար: Գործարանների մեծ մասը չեն աշխատում, իկ մնացածը կիրառում են միայն մեխանիկական մաքրում:

Վերոնշյալ խնդիրների լուծման համար վերջին տարիների ընթացքում իրականացվել են կարևոր օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումներ ջրային ռեսուրսների կատավարման և պահպանության ոլորտում: Դրանցից կարելի է առանձնացնել 2002թ. լրամշակված Ջրային օրենսգրքը, 2002թ. Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին օրենքը, 2005թ. Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին օրենքը և 2006թ. Ջրի ազգային ծրագրի մասին օրենքը: Այդ միջոցառումները սահմանում են երկրում ջրային ռեսուրսների համալիր կառավարման (ՋՌՀԿ) սկզբունքներն ու կառուցակարգերը: Ընդհանուր առմամբ այդ օրենքները բավականին համապարփակ և ընդգրկուն են և ամուր հիմքեր են ստեղծում ջրային տնտեսության պլանավորման և կառավարման համար:

Այսպիսով՝ ջրի կառավարման և պլանավորման համալիր համակարգի համար անհրաժեշտ է ջրի որակի և քանակի մասին ճշգրիտ տվյալների ձեռքբերում: Ավելին, տարբեր ջրային համակարգերի ամենօրյա աշխատանքը ինչպես արտադրական (օրինակ՝ ոռոգման, քաղաքային ջրամատակարարման, բնապահպանական թողքի), այնպես էլ դիսկի կանխման նպատակով չի կարող օպտիմալացվել առանց արդյունավետ և իրական ժամանակի ռեժիմով գործող մոտ մոնիտորինգային ցանցի: Ի վերջո ընդհանուր ջրի պաշարի կայունության կառավարումը և զանազան լարվածությունների մեղմացումը հնարավոր է միայն տվյալների մշտադիտարկման և պաշարների գնահատման կանոնավոր անցկացման դեպքում:

Մերի ՄՈՒՐԱԴՅԱՆ

Ջրային ռեսուրսների կառավարման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում

Բանալի բառեր. ջրային ռեսուրսներ, ջրօգտագործում, ջրամատակարարում, ջրահեռացման համակարգ, ոռոգում, ջրօգտագործողների ընկերություններ

Ջուրը կարևորագույն բնական ռեսուրս է, որը առկա է երկրագնդի բոլոր թաղանթներում: ՀՀ-ը այն երկրներից է, որը ունի ջրի բավարար պաշարներ, այստեղ գերակա խնդիրը այդ պաշարների ճիշտ բաշխումն ու կառավորումն է: Հայաստանում առկա են նաև զգալի ստորերկրյա ջրային պաշարներ, որոնք կարևոր դեր ունեն ընդհանուր ջրային հաշվեկշռում: Ջրային ռեսուրսների պատշաճ կառավարումը առանցքային դեր է խաղում Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման հարցում: Ջրային ռեսուրսների գերակա խնդիրներից է ջրի կորուստը՝ ջրամատակարարման համակարգում կորցնում ենք ջրի մոտ 80%-ը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ուսումնասիրել և վեր հանել ոլորտի առկա խնդիրները, և տալ դրանց պատշաճ լուծումներ:

Мери МУРАДЯН

Актуальные вопросы управления водными ресурсами в Армении

Ключевые слова: водные ресурсы, водопользование, водоснабжение, дренажная система, орошение, компании-водопользователи

Вода - самый важный природный ресурс, доступный во всех слоях земли. Армения - одна из стран, обладающих достаточными водными ресурсами, приоритетным вопросом здесь является правильное распределение и управление этими ресурсами. Правильное управление водными ресурсами играет ключевую роль в социально-экономическом развитии Армении. В нашей стране мы теряем около 80% воды в системе водоснабжения. Поэтому необходимо изучить, поднять существующие проблемы сферы, найти соответствующие решение.

Mery MURADYAN

Topical Issues of Water Resources Management in Armenia

Key words: water resources, water use, water supply, drainage system, irrigation, water user companies

Water is the most important natural resource available in all layers of the earth. Armenia is one of the countries with sufficient water resources, the priority issue here is the correct distribution and management of these resources. Proper management of water resources plays a key role in the social and economic development of Armenia. In our country, we lose about 80% of the water in the water supply system. Therefore, it is necessary to study, raise the existing problems of the sphere, find appropriate solutions.

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԵՆԱՐԿՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱԿՐՈՏԵՍԵԱԿԱՆ
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈԽՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԵՏ**

Հմայակ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի տնտեսագետ

Հիմնաբառեր. սոցիալական ազդեցություն, շահութաբերություն, պետական ծախսերի փոխարինում, նորարարություն, հանրային բարիքներ

Ներածություն

Հայաստանում ձեռներեցության զարգացումը պետության տնտեսական քաղաքականության զարգացման հեռանկարային ուղիներից մեկն է և ՀՀ Կառավարության գործունեությունը միտված է ձևավորել մրցունակ դինամիկ բիզնես համայնք, որոնք կստեղծեն բարձրտեխնոլոգիական արտադրանք՝ բարձր հավելյալ արժեքով: Պետական ֆինանսական միջոցները այդպիսի ծրագրերի համար բավական սահմանափակ են և շատ նախագծեր հնարավոր է լինում իրագործել օտարերկրյա և միջազգային կազմակերպությունների շնորհիվ¹:

Յուրաքանչյուր ոլորտում և նույնիսկ ենթաօլորտներում ՍՁ-ների գործունեությունը պետության կողմից հանրային բարիքների ստեղծման գործի հետ *փոխազդեցության*, ավելի ճիշտ՝ վերջիններն առողջ կերպով փոխարինման գործի ընդհանուր գնահատման համար պետք է այն մոտեցումը՝ որում հաշվում կամ առնվազն գնահատում ենք որևէ սոցիալական կարիքի (բացառությամբ արտաքին վտանգների) լիակատար հագեցման համար որևէ քանակական տեսքի բերված ընդհանրական գնահատական:

Հեղազոտության մեթոդը

Ուսումնասիրությունն իրականացվել է տվյալների ուսումնասիրության, ինչպես նաև սեփական ուսումնասիրությունների արդյունքում ձեռք բերված տվյալների հիման վրա կատարվել է «*սոցիալական ձեռնարկություններ-պե-րություն*» *փոխհարաբերությունների* համակողմանի վերլուծություն՝ կիրառելով գիտական հետազոտության համակարգային, պատճառա-հետևանքային,

¹Даллакян С.А.,Малый и средний бизнес и инновационное предпринимательство в РА, Научно-практический электронный журнал «Аллея Науки», №3(19) (том 2) 2018, стр 241

միջազգային փորձի գնահատումները, հաշվարկային, տրամաբանական վերլուծությունների մեթոդները:

Վերլուծություն և արդյունքներ

Որպես կանոն, պետական համակարգը լիակատար չի ապահովում այդ կարիքը և ՍՁ-ը բավարարում է պետության կողմից բաց թողնվածը: Ստացվում է հետևյալ գծապատկերը՝




Գծապատկեր 1. Հանրային բարիքների ստեղծման գործի բաժանումը

Գծապատկեր 1-ում պարզ երևում է, որ որևէ հանրային կարիքի սպասարկումը կարող է իրականանալ ոչ միայն պետության, այլև ՍՁ-ների կողմից: Հետևաբար, մի մասը սպասարկում են ՍՁ-ները, և պետությանը մնում է սպասարկել մնացած մասը: Ստացվում է, որ ՍՁ-ը խնայում է պետության միջոցները այնքանով՝ ինչքանով, որ մասնակցում է «ընդհանուր» գործին: Այլ հարց է, թե ինչ որակով են իրականացվում աշխատանքները և ինչպես են ձևավորվում երկու մասնակիցներին բաժին ընկնող մասերը: Այս հարցին պատասխանելու համար հաշվի կառնենք այն փաստը, որ պետությունն ինչ-որ կերպ գնահատելով կարիքի չափը, տրամադրում է որոշ գումար, որը որպես կանոն (մանավանդ զարգացող երկրներում) չի բավարարում կարիքն ամբողջովին հագեցնելու համար, ինչը «կանաչ լույս է վառում» ՍՁ-ների ներգործության համար: Այսպիսով եթե նշանակենք տրամադրվող գումարը P-ով, շահառուների քանակը՝ Q-ով և կարիքների բավարարման մակարդակը Lq (Level of quality)-ով, ապա պետության հնարավորությունների համար կունենանք հետևյալ բանաձևը՝


$$f(P) = f(QLq)$$

Հաշվի առնելով այն փաստը, որ պետական բյուջեից տրամադրվող գումարը ($P = \text{constant}$) փոփոխական չէ, ապա կստանանք, որ շահառուների քանակի (Q) փոփոխության դեպքում փոփոխվում է սպասարկման որակը (Lq) և իրար հետ ստանում են բացասական կապ: Հետևաբար ստացվում է հետևյալ պատկերը՝




Գծապատկեր 2. Պետության կողմից հանրային բարիքներով բավարարման մակարդակը հաստատուն ծախսով

Պետական համակարգը կարող է բավարարել բնակիչների կարիքները, սակայն երբ աճում է շահառուների թիվը, բավարարման որակն իջնում է: ԱՁ-ները «օգտվելով» այս իրավիճակից, մշակում են սեփական՝ իրենց գործունեությանը համապատասխանող մոտեցում, որի շնորհիվ բավարարում են այն շահառուների կարիքը, որոնք նախընտրում են կամ ստիպված են ընդունել մասնավոր հատվածի ծառայությունները: Բնականաբար ձևավորվում է այդ ծառայությունների պահանջարկը, որը ելնելով շուկայի տրամաբանությունից, ունենում է բացասական կապ քանակի ու գնի միջև:



Գծանկար 3. ԱՁ կողմից տրամադրվող ծառայությունների պահանջարկը

Հաշվի առնելով այն փաստը, որ ԱՁ-ը «սպասարկում» է շահառուների այն մասը, որը նախընտրում է այդ մոտեցումը կամ դուրս է մնացել պետական «սպասարկումից», ստացվում է հետևյալ պատկերը՝




Գծապատկեր 4. Շուկայի բաժանումը և հավասարակշռության կետը

Այսպիսով, ԱԶ-ների ներգործության արդյունքում բավարարվում են այն շահառուները, որոնք «դուրս էին մնացել» պետական սպասարկումից: Շ կետը ցույց է տալիս այն հավասարակշռության կետը, որում որոշվում է շահառուների բաժանումն ըստ հատվածների՝ պետական և մասնավոր:

Այնուամենայնիվ, հավասարակշռությունը որպես կանոն, ժամանակ առ ժամանակ կարող է փոխվել: Դրան կարող են նպաստել երկու կողմերը՝ պետությունը կարող է փոխել քաղաքականությունը, որը հիմնական պատճառն է ձախ կողմի հատվածի փոփոխության, և մասնավոր հատվածը, որը շատ ավելի հակված է ձգտել տեխնոլոգիական ու մենեջմենթի նորարարությունների և «շուկայի» գրավման հակառակ կողմից: Մյուս կողմից չպետք է մոռանալ նաև արտաքին գործոնների մասին, որոնք կարող են ազդել շուկայի վրա:

Պետական գործունեության մասով, առաջին հերթին կարևոր է նշել այն կարևոր նախապայմանը, որում կարող է արդյունավետ գործել նկարագրվող երևույթը՝ իրական ժողովրդավարությունը: Երկրորդ հերթին, պետք է առանձնացնել կոռուպցիայի ազդեցությունը 4-րդ գծապատկերի երևույթների վրա: Մասնավորապես, այն լինում է հիմնական երկու ձևերի: Առաջինը դա ծառայությունների տրամադրման ոլորտում է, ինչի արդյունքում հատվածը տեղափոխվում է դեպի ձախ և հավասարակշռության կետը խախտվում է կարճաժամկետ առումով և հանրության որոշ մասը կամ ամբողջությունը կորցնում է կարիքների բավարարման որակը կամ դուրս է մնում (գծ. 5):



Գծապատկեր 5. Հավասարակշռության կետի փոփոխությունը պետական ծախսերի կրճատման դեպքում

Մյուս դեպքն է, երբ կոռուպցիան գործում է ձեռնարկությունների հետ տարվող աշխատանքների ոլորտում, որի ժամանակ ԱԶ-ների ուղիղն է տեղափոխվում աջ և ունենում ենք նույն արդյունքը: Երկու դեպքերի տարբերու-

թյունն այն է, որ առաջին դեպքում երկարաժամկետ ժամանակահատվածում ՍՁ-ներն ունենում են հնարավորություն սպասարկել տուժած շահառուներին, ավելացնելով առաջարկը և Շ հավասարակշռության կետը տեղափոխվում է դեպի ձախ, սակայն ոչ միշտ կարող է ուղեկցվել որակի բարձրացմամբ:

Այսպիսով ապացուցվում է, որ ՍՁ-ների գործունեությունը բարձրացնում է կյանքի մակարդակը և միջոցներ է խնայում բյուջեի համար այլ ծախսերի կամ ներդրումների իրականացման համար:

Պետական քաղաքականության ձեռքում ավելանում է ևս մեկ գործիք, որի միջոցով իրականացվում է ՍՁ-ների հետ կապված քաղաքականությունը:

1. Առաջինը, դա աջակցության քաղաքականությունն է ՍՁ-ներին, իրավաբանական, կազմակերպչական, անգամ մինչև ֆինանսական միջոցներով:


2. Երկրորդ քաղաքականությունը, որը որպես կանոն, կարող է արդյունավետ իրականացվել զարգացած ՍՁ-ների գոյություն ունենալու ժամանակ, դա չմիջամտելու քաղաքականությունն է, երբ ՍՁ-ներին պետությունը վերաբերում է որպես ավանդական ձեռնարկություն:

3. Երրորդ՝ հավասարակշռված քաղաքականության ժամանակ պետությունը ներդնում է ՍՁ-ների ոլորտում այն միջոցները, որոնք ստացվել են վերջիններիս գործունեության արդյունքում:

Բացի այս ամենից, պետության այլ քաղաքականություններ կարող են ազդել ՍՁ-ների վրա, սակայն ի տարբերություն նշված քաղաքականությունների, այդ ազդեցությունները լինում է ոչ անմիջական: Այնուամենայնիվ, քանի որ ՍՁ-ները հանդիսանում են շահույթ հետապնդող կառույցներ, կան պետական գործառույթներ, որտեղ չի կարող գործել որևէ ՍՁ և բնակիչներին հանրային բարիքներով ապահովելու պարտականությունը մնում է պետական համակարգի վրա. թոշակների և այլ սոցիալական վճարների ապահովումը, զինված ուժերը և այլն:

ՍՁ-ները բավականաչափ զարգանալուց հետո, ինչ-որ առումով դառնում են մրցակից պետական համակարգի համար: Այստեղ գործ ունենք պետական ազդեցության չափի հետ այն ոլորտներում, որտեղ ՍՁ-ները կարող են ազդեցություն ունենալ: Հետևաբար եթե նշված չափը, որը հանդիսանում է պետական ծախսը, նվազում է, ապա հավելյալ ճակատ է բացվում ՍՁ-ների համար բացը լրացնելու գործում: Նման քաղաքականություն վարելու համար

պետությունը պետք է գնահատի ԱՁ-ների կարողությունները «բացը լրացնելու» վերաբերյալ, քանի որ այն կպահանջի ժամանակ և երաշխավորված չի լինի, որ շահառուների կարիքների բավարարման մակարդակը կլինի ավելի բարձր կամ առնվազն կմնա նույնը: Մյուս կողմից, եթե իրականացվի հակառակ քաղաքականությունը, ապա պետք է լինի դրա հանրային պահանջը, ինչը հակազդեցությունն է այն իրավիճակի, որում ԱՁ-ներն ընդունելի մակարդակով չեն բավարարում շահառուների կարիքները: Այսպես ձևավորվում է պետության և ԱՁ-ների համագործակցային մրցակցությունը, սակայն դրա իրականացման և այս ամենի գործելու համար կա նախապայման՝ իրական ժողովրդավարություն, որի հիմնական ցուցիչն է արդար ընտրությունները: Այսինքն, առանց արդար ընտրությունների և ժողովրդավարության ԱՁ-ներն ի վիճակի չեն լինի ազդել շահառուների կյանքի մակարդակի վրա և չեն լինի արդյունավետ:



Գծապատկեր 6. Հավասարակշռության կետի հնարավոր փոփոխությունները ըստ սցենարների

Այսպիսով, 6-րդ գծապատկերում նկարագրվում է «ԱՁ-ներ-պետություն» փոխհարաբերություններն ընդհանուր գործունեության շուկաներում: Մասնավորապես, C_1 հավասարակշռության կետում պատկերված է այն իրավիճակը, որտեղ նախնական հավասարակշռության վիճակն է: Պետության կողմից շուկայի զիջման կամ այլ խոսքերով, ծախսերի նվազեցման դեպքում ձևավորվում է C_3 կարճաժամկետ հավասարակշռության կետը: Այնուհետև լինում է երկու սցենարներից մեկը՝ կամ ԱՁ-ները կարողանում են փոխհատուցել պետական ծախսերի նվազեցումը և ձևավորվում է C_2 հավասարակշռության կետը, կամ չեն կարողանում փոխհատուցել և ձևավորվում է C_3 հավասարակշռության կետը, որի արդյունքում նվազում է շահառուների սպասարկման որակը: Մեկ այլ սցենար կարող է լինել, երբ ԱՁ-ներում լինում է որևէ նորա-

րարություն, լինի դա տեխնիկական թե մենեջմենթի, ինչը թույլ է տալիս սպասարկել շահառուների ավելի մեծ քանակ: 6-րդ գծապատկերում դա նկարագրվում է A₁-ի տեղափոխմամբ դեպի ծախ՝ A₂-ի ձևավորումով: Արդյունքում ունենում ենք C₄ նոր հավասարակշռության կետի ձևավորումը, ինչի արդյունքում ոչ միայն նվազում է պետական ծախսերի բեռը, այլ նաև բարելավում է սպասարկման որակը [3]:

Եզրակացություններ և առաջարկություններ

ՍՁ-ները գործունեություն են ծավալում զարգացած երկրներում, որտեղ կառավարությունները լավ են հասկանում դրանց ազդեցությունը և օգտակարությունը: Մեկ այլ պատճառ է զարգացած պետություններում գործունեություն ծավալելու համար գործող ժողովրդավարությունը, ինչը հանդիսանում է կարևոր նախապայման: ՍՁ-ների ազդեցությունը պետական ծախսերի վրա հսկայական է: Այն թույլ է տալիս սահմանափակել պետական ծախսերը մեծ չափերով: Կախված ՍՁ ոլորտից, ենթաոլորտից որում այն գործում է և տեսակից, այն կարող է ունենալ տարբեր չափի դրական ազդեցություն պետական ծախսերի նվազեցման և շահառուների սպասարկման մակարդակի վրա: Կարող են հանդիպել ձեռնարկություններ, որոնք ազդում են իրենց հումքի արժեքի չափով, շահառու աշխատակիցների քանակի և նրանց աշխատավարձերի չափով և նույնիսկ շրջանառության չափով, ինչը բոլոր դեպքերում բազմակի գերազանցում է վճարվող հարկերի չափը, և նույնիսկ շրջանառության չափով ազդեցության դեպքում կարելի է համարել, որ տվյալ ձեռնարկությունը հարկվում է 100 %-ով և ավելին: Սա է ՍՁ-ների փոքրիկ հրաշքը, որն ավանդական մոտեցումով կարելի է ասել, թե ձեռնարկությունը վճարում է ահռելի հարկեր և դրա հետ միաժամանակ մնում է շահութաբեր:

Հայաստանը մտնելով կամ վերադառնալով ժողովրդավության ուղի, սրտեղծում է պարարտ հող ՍՁ-ների զարգացման և գործունեության ծավալները մեծացնելու համար, այնուամենայնիվ ժողովրդավարությունը կարևոր, սակայն ընդամենը նախապայման է: Սկզբնական կամ ինկուբացիոն շրջանում ՍՁ-ներին պետք է աջակցություն պետությունից կամ այլ կառույցներից: Հայաստանի տարածքում 2018թ. գրանցվել են 17010 անհատ ձեռնարկատերեր և 6136 սահմանափակ պատասխամատվությամբ ընկերություն¹: 2019թ. ա-

¹ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018թ. հունվ.-դեկտ.: Երևան 2019թ., էջ 112:

միսներին գրանցումների միջին քանակներն ունեն որոշակի աճի միտում: Կատարված հետազոտությունը¹ ցույց է տվել, որ գրանցված ու իրավական դաշտում մնացած տնտեսվարողների ճնշող մասն ի վերջո չեն մասնակցում տնտեսական ընդհանուր գործընթացներին և չեն դառնում ակտիվ հարկ վճարող ՓՄՁ սուբյեկտներ²:

Բացի բանկային վարկերից, որոնք ընկերություններին առաջարկվում են անհրաժեշտ ռեսուրսներ ընդունելի պայմաններով, շուկայում գոյություն ունեն այլ գործիքներ: Նման գործիքներից է ֆինանսական վարձակալությունը կամ լիզինգը: Ներդրումայինաղբյուրների կազմում լիզինգի մասնաբաժինը համաշխարհային մասշտաբով կազմել է 30%, իսկ վերջին տարիներին ՀՀ առևտրային բանկերի այլ վարկային գործառնությունների գործիքակազմի մեջ ֆինանսականվարձակալության մասնաբաժինը՝ բանկերի ընդհանուր ակտիվներում վերջին տարիներին կազմել է 0.1% [1]: Այսպիսով, Հայաստանի տնտեսության պայմաններում լիզինգի կիրառումը չափազանց քիչ է օգտագործվում:³

Գոյություն ունեն որոշ կազմակերպություններ, որոնք աջակցում են, սակայն սա բավարար չէ լուրջ արդյունքների հասնելու համար: Անհրաժեշտ է նաև ինստիտուցիոնալ աջակցություն, ինչպիսին է՝

1. ՍՁ-ների մասին օրենքի ընդունում,
2. գործադիր մարմիններում համապատասխան վարչությունների և այլ աջակցող մարմինների ստեղծում,
3. արդյունավետ աջակցության կազմակերպում,
4. ՍՁ-ների զարգացման ու անխափան գործունեությանը միտված ճիշտ քաղաքականություն իրականացում,
5. Որպես ՍՁ գրանցված ձեռնարկատիրություններին համար վարկերի ձեռքբերման աջակցություն և/կամ սուփսիդավորում.
6. Լիզինգի մատչելիության հնարավորությունների ստեղծում:

¹ Սուքիասյան Ա.Ա., «ՓՄՁ» «ֆինանսական գրագիտության» աստիճանի բարձրացմանն ուղղված միջոցառման հիմնավորում», Ե., 2019թ., էջերի քանակը՝ 39:
² Ա.Սուքիասյան, «Միջնաժամկետ ծախսերի ծրագրի մեջ կանխատեսումների առանձին հարցերի մասին», «Սոց.-տնտ. զարգ. արդի հիմնախնդ. ՀՀ-ում» 2019, էջ 151-159:
³ Պողոսյան Շ., Լիզինգի ներդրման անհրաժեշտությունը և խոչընդոտները ՀՀ ՓՄՁ ոլորտում, Սոց.-տնտ. զարգ. արդի հիմնախնդիրները ՀՀ-ում, մաս 2, 2018. էջ, էջ 135:

Հմայակ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Սոցիալական ձեռնարկությունների մակրոտնտեսական ազդեցությունը և փոխհարաբերությունները պետական համակարգի հետ

Բանալի բառեր. սոցիալական ազդեցություն, շահութաբերություն, պետական ծախսերի փոխարինում, նորարարություն, հանրային բարիքներ

Սույն հոդվածի շրջանակներում ուսումնասիրվել է սոցիալական ձեռնարկատիրությունը որպես գործունեության տեսակ, ինչպես նաև վերլուծվել են «սոցիալական ձեռնարկություններ-պետություն» փոխհարաբերությունները հանրային բարիքների շուկայում: Հոդվածի շրջանակներում նաև անդրադարձ է կատարվել ժողովրդավարության և կոռուպցիայի ազդեցություններին սոցիալական ձեռնարկությունների գործունեության վրա: Բացահայտել ենք նոր տնտեսական գործիք, որը կարող է օգտագործվել յուրաքանչյուր երկրի գործադիր իշխանության կողմից տնտեսական ճգնաժամների կայուն հաղթահարման համար:

Амаяк НАЛБАНДЯН

Макроэкономическое воздействие социальных предприятий и отношения с государственной системой

Ключевые слова: социальное воздействие, прибыльность, замещение государственных расходов, инновации, общественные блага

В статье мы описали социальное предпринимательство как вид деятельности, а так же решили отношения между социальным предприятием и государством на рынке общественные блага. В статье также затрагивается влияние демократии и коррупции на деятельность социальных предприятий. В этой статье мы исследуем новый экономический инструмент, который может использоваться исполнительной властью каждой. Основываясь на выводах статьи, мы поймем, почему развитые страны мира придают большое значение и способствуют развитию социальных предприятий, каковы их ожидания от этого.

Hmayak NALBANDYAN

Macroeconomic impact of social enterprises and relations with the state system

Key words: social impact, profitability, replacement of public spending, innovation, public goods.

In the article we have described social entrepreneurship as a type of activity, we have deciphered and evaluated their social impact, how we have solved the social enterprise-state relations in the market of public goods. The article also touches upon the effects of democracy and corruption on the activities of social enterprises. In this article, we explore a new economic instrument that can be used by the executive authority of each country to sustainably overcome economic crises. Based on the findings of the article, we will understand why the developed countries of the world attach great importance and contribute to the development of social enterprises, what are their expectations from that.

ՆՈՐԱՄՈՒԾԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ . ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Արմինե ԱԼՈՅԱՆ

ՀՊՏՀ Տնտեսագիտության տեսության ամբիոնի ասպիրանտ

Բանալի բառեր. նորամուծական տնտեսություն, ինստիտուտներ, ինստիտուցիոնալ հիմնախնդիրներ, արտոնագրային ակտիվություն

Ներածություն

Նախկինում զարգացող երկրներում գործող կազմակերպությունները գործունեություն էին ծավալում համեմատաբար «պաշտպանված» միջավայրում, բայց ներկայումս, շուկաների գլոբալիզացիայի գործընթացներով պայմանավորված՝ ընկերությունները ստիպված են դիմակայել գլոբալ մրցակցության մարտահրավերներին, իսկ այս պայմաններում գոյատևելու միակ տարբերակը շուկայում մրցունակ դիրք գրավելն է: Նորամուծությունները և նորամուծական գործունեությունը դիտարկվում են որպես մրցունակության ապահովման կարևորագույն ռազմավարական նախադրյալները¹: Այն ընկերությունները, որոնց գործունեությունը չի պարունակում նորամուծական տարր, իրենց վրա են վերցնում անմրցունակ դառնալու ռիսկը՝ իրենց հնացած արտադրանքների և/կամ գործընթացների պատճառով:

Նորամուծական տնտեսության զարգացում ասելով՝ կհասկանանք նորամուծությունների ներդրման համար կատարված ծախսերի արդյունավետության բարձրացում, այսինքն նորամուծությունների ելքային ցուցանիշների ավելի բարձր մակարդակ՝ դրանց մուտքային ցուցանիշների համեմատությամբ, ինչպես նաև նորարարական ներուժի օգտագործման հնարավորինս բարձր մակարդակի ապահովում: Այսպիսի մոտեցումը ենթադրում է նորարարական գործունեության ելակետային պայմանների վրա ազդեցություն՝ դրանց արդյունքային ցուցանիշների բարձրացման նպատակով: Ըստ բազմաթիվ տեսաբանների՝ նորարարությունների համար հինարար նախապայման է հանդիսանում նորարարական գործունեությունը կարգավորող իրավաօրենսդրական ճիշտ հիմքի առկայությունը, ինչպես նաև նորարարական

¹ Madrid-Guijarro, Garcia & Auken, 2009; Oyelaran-Oyeyinka, Laditan & Esubiyi, 1996; Tulus, 2011
Иванова Н. Наука и иннов., 2013, 1, с.84, Роуэн Г. Ваш президент понимает важность законов. Ин. тренды. 2011, 8

զարգացած ենթակառուցվածքները և նորարարական մշակույթը¹: Նորամուծական տնտեսության զարգացման ինստիտուցիոնալ հիմնախնդիրները այն խոչընդոտներն են, որոնք որոշում են կազմակերպության, տարածաշրջանի կամ պետության նորամուծական զարգացման սահմանները՝ այդպիսով սահմանափակելով առկա ներուժի լիարժեք իրացման հնարավորությունները:

Մեթոդաբանություն

Տնտեսական վերլուծությունները իրականացվել են Համաշխարհային բանկի, Freedom house, Heritage foundation, Fraser institute, Prs Group, Transparency International կազմակերպությունների, Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից հրապարակվող վիճակագրական տվյալների հիման վրա: Հետազոտությանն անհրաժեշտ տեղեկատվական հիմքերն են նաև ԱՎԿ-ի, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պաշտոնական տվյալներն ու հրապարակումները, ՀԲ-ի տարեկան զեկույցները, ԵԱՏՄ երկրների տարեկան հաշվետվությունները, «Doing Business» տարեկան զեկույցները, ՏՀԶԿ-ի կողմից հրապարակված զեկույցներն ու պաշտոնական վիճակագրությունը: Հետազոտության ընթացքում կիրառվել են գործոնային համեմատական, վիճակագրական, մաթեմատիկական, ինդուկցիայի և դեդուկցիայի մեթոդներն ու գործիքները առավել օբյեկտիվ պատկեր սրտանալու համար:

Գրականության ակնարկ

Տնտեսագիտական գրականությունում բազմաթիվ են հետազոտությունները նվիրված նորամուծական գործունեության ակտիվության վրա տարբեր գործոնների ունեցած ազդեցությանը: Այսպես, օրինակ Շումպետերը նշում է, որ նորամուծությունների և մրցակցության միջև առկա է բացասական գծային կախվածություն, քանի որ բարձր մրցակցության մակարդակի պայմաններում փոքրանում է մոնոպոլ դիրքի ռենտան, հետևաբար և այն միջոցները, որոնք ուղղվում էին նորամուծական գործունեությանը: Սակայն 1967 թվականին Շերերը² հետազոտելով ավելի քան 500 ընկերությունների գործունեությունը՝ նկատեց, որ մրցակցության մակարդակի բարձրացմանը զուգընթաց նորամուծական գործունեության ակտիվությունը սկզբնական շրջանում մեծանում

¹ Голиченко О. Основ. факторы разв. нац. иннов. системы, М.: Наука, 2011.

² Frederic M. Scherer "Research and Development Resource Allocation under Rivalry," Quarterly Journal of Economics, August 1967, pp. 359-394. <https://www.hks.harvard.edu/fmscherer>

է, այնուհետև սկսում է նվազել: Սա միայն էմպիրիկ հետզոտության արդյունք էր, հետագայում արդեն 1999 թվականին Բլանդելը, Գրիֆիտը և Վան Ռիինենը¹ վերադարձան այն գաղափարին, որ նորամուծությունների/ նորամուծական ակտիվության և մրցակցության միջև առկա է գծային կախվածություն: Նրանք կարծում էին, որ մրցակցությունը դրական ազդեցություն է ունենում նորամուծական զարգացման վրա, քանի որ բազմաթիվ մրցակիցների առկայությունը ստիպում է շուկա մուտք գործող առանձին կազմակերպությանը նվազեցնել ներքին ծախսերը՝ նոր տեխնոլոգիաների ներդրման հաշվին, որը միակ տարբերակն է ֆինանսավորման այլ աղբյուրների բացակայության պայմաններում: Հեղինակների կողմից կատարված հետազոտություններում շեշտադրումը կատարված է շուկա նոր մուտք գործող կազմակերպությունների նորամուծական գործունեության վրա, սակայն անտեսված է արդեն իսկ շուկայում գործող կազմակերպությունների նորամուծական ակտիվությունը: Նորամուծական գործունեությանը խոչընդոտող գործոնների վերաբերյալ առաջին քանական հետազոտությունների արդյունքները ի վերջո հանգում էին ֆինանսական ռեսուրսների, ֆինանսական ակտիվների սահմանափակության և ֆինանսական շուկաների թերզարգացվածության գաղափարին, այսինքն ֆինանսական ինստիտուտների հիմնախնդիրներին, իսկ որպես ելակետային առանցքային խոչընդոտ դիտարկվում էր գիտահետազոտական և փորձարարական ստրուկտորական աշխատանքների ֆինանսավորման ցածր մակարդակը²: Վերջին տարիներին նորամուծական ակտիվությունը խոչընդոտող գործոնների վերաբերյալ հետազոտություններում հեղինակները բացի ֆինանսական բնույթ ունեցող խնդիրներից անդրադառնում են գործոնների ավելի լայն շրջանակի³:

Չնայած ինստիտուցիոնալ գործոնների՝ նորամուծությունների ձևավորման և տարածման վրա ունեցած ահռելի ազդեցությանը դրանց ուսումնասիրվածության աստիճանը այս համատեքստում դեռևս ցածր է մնում և բավարար ուշադրության չի արժանացել:


¹Richard Blundell , Rachel Griffith and John van Reenen “Market Share, Market Value and Innovation in a Panel of British Manufacturing Firms” 1999, vol. 66, issue 3, 529-554
https://econpapers.repec.org/article/ouprestud/v_3a66_3ay_3a1999_3ai_3a3_3ap_3a529-554..htm

² Bond, Harhoff, and Van Reenen, 2003 ; Czarnitzki, Hottenrott, and Thorwarth, 2011 ; B. H. Hall, 2002; L. A. Hall and Bagchi - Sen, 2002 ; Hottenrott and Peters, 2012

³ Blanchard et al. , 2013

Վերլուծություն

Նախ դիտարկենք նորամուծական գործունեությամբ աչքի ընկնող ամենաակտիվ երկրները, այնուհետև ՀՀ ինստիտուցիոնալ համակարգը բնութագրող ցուցանիշների համեմատություն կիրականացնենք այդ երկրների համապատասխան ցուցանիշների հետ, որպեսզի բացահայտենք առկա տարբերությունները և դրանք պայմանավորող գործոնները: Համաշխարհային արտոնագրային ակտիվությունը շարունակում է կենտրոնացած մնալ 5 երկրներում (գծապատկեր 1):



Գծապատկեր 1- Արտոնագրային ակտիվությունը աշխարհում 2020թ.¹:

Եթե զարգացած երկրների դեպքում նորամուծություններին նպաստող "որակյալ ինստիտուցիոնալ միջավայրը" հետազոտություններում որպես տրրված² էնդոգեն գործոն է դիտարկվում, ապա ՀՀ-ի պարագայում նման մոտեցումը հետազոտությունը փակուղի կարող է տանել՝ հաշվի առնելով գործող ինստիտուտների որակը: Նորարարական գործունեությանն առնչվող ինստիտուցիոնալ համակարգի բաղադրիչներն են².


- իրավաօրենսդրական դաշտը, այդ թվում՝ տնտեսական գործունեությունը, աշխատանքային հարաբերությունները կարգավորող, ներդրողների շահերը և մասնավոր սեփականությունը պաշտպանող նորմատիվաիրավական ակտերի և դրանց կատարման երաշխիքների ամբողջությունը,
- պետության վերաբերմունքը գիտության և նորարարական գործունեության նկատմամբ, ինչպես նաև պետական մարմինների կարողությունը՝ նախագծել և իրականացնել համապատասխան տնտեսական քաղաքականություն,

¹ Աղբյուրը՝ <https://www.weforum.org/reports/the-global-competitiveness-report-2020/full/infographics-14b60f7c60>

² <https://upravlenie.guu.ru/jour/article/viewFile/109/107>

- դատական համակարգը և իրավական պաշտպանության պրակտիկան,
- քաղաքական իրադրությունը,
- ժողովրդավարական ազատությունը,
- ձեռնարկատիրական գործունեության իրականացման պայմանները և մրցակցության բնույթը
- անվտանգության պայմանները:

Որպես իրավաօրենսդրական դաշտի փաստացի կիրառման արդյունավետության ցուցանիշ միջազգային պրակտիկայում կիրառվում է օրենքի գերակայության ինդեքսը, որն արտացոլում է հասարակության վստահության մակարդակը՝ օրենքի պահպանման, պայմանագրային պարտավորությունների կատարման որակի, ոստիկանության, սեփականության իրավունքի անձեռնմխելիության նկատմամբ, ինչպես նաև հանցագործության և բռնության հավանականության աստիճանը:




Գծապատկեր 2. Օրենքի գերակայության ինդեքսի դինամիկան 1996-2019 թթ.¹

Դիտարկելով ցուցանիշի դինամիկան (գծապատկեր 2)՝ նկատում ենք, որ ՀՀ-ի դեպքում ցուցանիշը 1996-2019թթ. ընթացքում ընդհատումներով դանդաղ աճի միտում է գրանցել՝ 37,69-ից հասնելով 49,04-ի (աճելով՝ 30 տոկոսով ելակետային ցուցանիշի համեմատ), սակայն շարունակում է անհամեմատ ցածր մնալ դիտարկվող երկրների համապատասխան ցուցանիշների

¹ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից, տվյալների աղբյուրը՝ <http://info.worldbank.org/governance/wgi/>

համեմատությամբ (բացառությամբ Չինաստանի), որոնց թրենդը մոտ է ցուցանիշի առավելագույն մակարդակին: Նորամուծական զարգացման վրա ազդող երկրի ինստիտուցիոնալ միջավայրի որակը կախված է նաև տիրող քաղաքական ռեժիմից: Այդ մասին են վկայում բազմաթիվ տեսաբանների կողմից կատարված հետազոտությունները¹: Այսպես, օրինակ Կ. Փոփփերը նշում է, որ ժողովրդավարական և ազատական սոցիալական ինստիտուտները արագացնում են նորամուծական զարգացումը²: Այս համատեքստում կատարվել են նաև էմպիրիկ հետազոտություններ՝ բացահայտելով ժողովրդավարության մակարդակի և նորամուծական գործունեության ակտիվության փոխազդեցությունները³:



Գծապատկեր 3. Ժողովրդավարության ինդեքսի դինամիկան ՀՀ և դիտարկվող երկրների դեպքում 2006-2020թթ.⁴

Երկրների ժողովրդավարության մակարդակը ներկայումս գնահատվում է ինդեքսների միջոցով, որոնցից է The Economist Intelligence Unit-ի կողմից հրապարակվող ժողովրդավարության ինդեքսը: Դիտարկենք ժողովրդավարության ինդեքսի դինամիկան ՀՀ-ի, վերոնշյալ արտոնագրային ակտիվությամբ աչքի ընկնող երկրների և տարածաշրջանի որոշ երկրների դեպքում: Ինդեքսի ամենաբարձր մակարդակը 10-ն է: Ինդեքսը կազմելիս հաշվի են

¹ Acemoglu et al., 2008; De Haan and Siermann, 1996; Doucouliagos and Ulubaşoğlu, 2008; Gerring et al., 2005; Leblang, 1996

² “The logic of scientific discovery” K Popper - 2005 - books.google.com

³ Bottazzi and Peri, 2003; Guellec and De La Potterie, 2007; Nelson, 1993; Qian, 2007, Bilbao-Osorio and Rodríguez-Pose, 2004

⁴ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից, տվյալների աղբյուրը՝ https://en.wikipedia.org/wiki/Democracy_Index

առնվում մի շարք ցուցանիշներ՝ ընտրություններ, իշխանությունների գործունեություն, քաղաքական մշակույթ, քաղաքացիական ազատություն, բնակչության ազդեցություն քաղաքականության վրա և այլն:

Երկրները բաժանվել են 4 խմբի՝ լիարժեք ժողովրդավարություն (8,01-10), թերի ժողովրդավարություն (6,01-8), հիբրիդ ռեժիմ (4,01-6) և ավտորիտար ռեժիմ (0-4): Ինչպես նկատում ենք գծապատկեր 3-ում՝ ինդեքսի ամենաբարձր մակարդակը դիտարկվող ամբողջ ժամանակահատվածում ապահովել է Գերմանիան, այնուհետև ԱՄՆ-ն, Հվ. Կորեան և Ճապոնիան (ընդհատումներով): ՀՀ-ն այս ինդեքսով տարածաշրջանի երկրներից զիջել է միայն Վրաստանին, իսկ 2020թ. տվյալներով նույնիսկ գերազանցել է: Իհարկե սա պայմանավորված է նաև Թավշյա Հեղափոխությամբ նոր քաղաքական իրավիճակի ձևավորմամբ՝ կարևորելով ժողովրդավարության, ազատ կամարտահայտման, թափանցիկ գործելաոճի և հաշվետվողականության նորմերը:

Նորամուծական տնտեսության զարգացման ինստիտուցիոնալ հիմնախընդիրների տարատեսակներն են.

➤ Ֆորմալ ինստիտուցիոնալ հիմնախնդիրները (օրենսդրական բացերը կամ իրավական ակտերի բարդացվածության բարձր մակարդակը, դրանց կիրառման և մեկնաբանման ոչ միանշանակության հանգամանքը)

➤ Ֆինանսավորման ներգրավման բարդությունները

➤ Անարդյունավետ ենթակառուցվածքները


➤ Ինստիտուցիոնալ ծուղակները (կոռուպցիա, լոբբիստական գործունեություն, հասարակության՝ նորամուծություններն ընդունելու հոգեբանական անպատրաստականությունը)

➤ Ադմինիստրատիվ խոչընդոտներ (օրինակ՝ շուկա մուտք գործելու արգելքները և բարձր գործարքային ծախսերը կամ սահմանափակումները, հակամենաշնորհային քաղաքականության թերությունները)

➤ Ոչ ֆորմալ ինստիտուցիոնալ խորընդոտները:

Հատկապես կարևոր են հիմնական իրավական ինստիտուտները, որոնք ապահովում են անձի իրավունքների և սեփականության անձեռնմխելիությունը: Կենսական երաշխիքների առկայությունը, անձի իրավունքների և մասնավոր սեփականության անձեռնմխելիությունը, խոսքի ազատությունը և այլ բազային իրավական երաշխիքները այն հիմնասյուներն են,

որոնց վրա կառուցվում են տնտեսական համակարգի զարգացմանը միտված մյուս ինստիտուտները:




Գծապատկեր 4. Ինստիտուցիոնալ միջավայրը բնութագրող ինդեքսների դինամիկան ՀՀ-ի դեպքում՝ 2002-2021թթ.¹

Գծապատկեր 3-ից նկատում ենք, որ ամենացածր մակարդակը գրանցել է պետության ներառականության ինդեքսը, որն արտացոլում է կառավարության՝ կոռուպցիայից զերծ լինելու աստիճանը և կառավարման թափանցիկության մակարդակը, որքան ցածր է ինդեքսի մակարդակը, այնքան բարձր է կոռուպցիայի մակարդակը և ցածր կառավարության թափանցիկությունը և հակառակը: Իհարկե նկատում ենք նաև թրեմնդի երկայնքով ինդեքսի աճի միտում 2018թ. սկսած, ինչը պայմանավորված է Թավշյա Հեղափոխության արդյունքում կառավարության փոփոխությամբ և իրականացված բարեփոխումներով: Երկրում ցածր է Սեփականության իրավունքի պաշտպանության մակարդակը, որի երաշխավորման օրենսդրական հիմքերն առկա են:

Տնտեսագիտական գրականությունում առկա են նաև երկրի ինստիտուցիոնալ միջավայրի որակի գնահատման փորձեր՝ հիմնված անուղղակի ցուցանիշների համակարգի վրա: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս վերացարկման մեթոդի կիրառմամբ դիտարկել ու գնահատել միայն այն ինստիտուտները, որոնք ազդում են տնտեսության նորամուծական զարգացման վրա: Այսպես, օրինակ՝ նորամուծական զարգացմանը միտված ինստիտուցիոնալ միջավայրի որակի մասին է վկայում հետևյալ ցուցանիշը՝ տարեկան նոր շուկա մուտք գործած ընկերությունների տեսակարար կշիռը ընկերու-

¹ Գծապատկերը կազմել է հեղինակը, աղբյուրը՝ <http://info.worldbank.org/governance/wgi/>

թյունների ընդհանուր թվաքանակի մեջ: Եթե նոր ընկերությունների թիվը մեծ է լինում, ապա դա վկայում է տվյալ շուկա մուտքի արգելքների բացակայության կամ փոքրաթիվ լինելու և բիզնես գործունեություն սկսելու բարենպաստ պայմանների առկայության մասին: Ֆինանսական շուկաների որակյալ ինստիտուտները հնարավորություն են տալիս իրականացնել կայուն զարգացմանը միտված բարեհաջող ներդրումային քաղաքականություն¹: Այս համատեքստում կարևոր ցուցանիշ է հանդիսանում մասնավոր հատվածի վարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը:



Գծապատկեր 5. Մասնավոր հատվածին տրված վարկեր, տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ 2019թ.²

ՀՀ-ի պարագայում մասնավոր հատվածին տրամադրված վարկերը ՀՆԱ-ի 59,9 տոկոսն են կազմում (2019), ինչը տարածաշրջանի երկրների համեմատությամբ բավականին բարձր ցուցանիշ է և զիջում է միայն Վրաստանին (67,7), սակայն նորամուծական զարգացմամբ աչքի ընկող երկրների համեմատությամբ՝ ՀՀ ցուցանիշը անհամեմատ զիջում է: Հատկանշական է հատկապես ԱՄՆ-ի, Ճապոնիայի, Չինաստանի և Հվ. Կորեայի համապատասխան ցուցանիշների մակարդակը՝ մասնավոր հատվածին տրամադրված վարկերը գերազանցում են ՀՆԱ-ն 1,5 և ավելի անգամ: Սա վկայում է զարգացած ֆինանսական ինստիտուտների առկայության մասին:

Նորամուծական զարգացմանը խոչընդոտող ինստիտուտների որոշակի մասը ոչ ֆորմալ բնույթ է կրում և մասնակի դեպքերում դրանց ազդեցությունը

¹ Prasad Eswar, G. Rajan Raghuram, Subramanian Arvind. Patterns of international capital flows their implications for economic devt, Proceedings, Federal Reserve Bank of Kansas City, 2006.

² Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից, աղբյուրը՝ <https://data.worldbank.org>

նր կարող է որոշիչ լինել տնտեսության հետագա զարգացման տեմպերի և ուղղությունների համար: Ինստիտուտների այս տեսակը ավելի իներտ է, ժամանակի ընթացքում շատ դանդաղ է փոփոխության ենթարկվում, իսկ փոփոխությունների դեպքում կարող է հանդիպել սերունդների միջև տեսակետների և արժեհամակարգերի բախմանը: Ինստիտուցիոնալ համակարգի այս բաղադրիչը հանդես է գալիս սոցիալ-մշակութային և կրոնական գործոնների տեսքով: Տնտեսության մոդեռնիզացման և նորամուծությունների ներդրման գործընթացը կարող է հանդիպել հասարակության դիմադրությանը՝ պայմանավորված վերոնշյալ բնույթի գործոններով, որոնցից են՝ կոռուպցիայի մակարդակը, տնտեսական ազատության մակարդակը, բիզնես գործունեության իրականացնելու նկատմամբ հասարակության նախատրամադրվածությունը և այլն:

Առանձնացնենք սոցիալ-մշակութային գործոնների՝ տնտեսության զարգացման վրա ազդեցության մեխանիզմների 3 հիմնական տարատեսակները՝

➤ Ազդեցություն սոցիալական կապիտալի միջոցով (վերոնշյալ վստահությունը և համագործակցությունը, հեղինակության կարևորությունը, համագործակցության պատրաստակամությունը, կրոնը/ հավատը՝ որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու խթանող կամ խոչընդոտող գործոն)

➤ Ազդեցություն մարդկային կապիտալի միջոցով (խնայողության հակումը, աշխատասիրությունը, ինդիվիդուալիզմի կամ կոլլեկտիվիզմի նկատմամբ տրամադրվածությունը)¹

➤ Ազդեցության մշակութային կապիտալի միջոցով՝ հասարակական արժեքները, աշխարհայացքը, գաղափարախոսությունը, հաջողության վերաբերյալ պատկերացումները և այլն:

¹ Այս թեմայով բազմաթիվ են տնտեսական վերլուծությունները, օրինակ հետևյալ աշխատություններում՝ McCloskey, Deirdre. 2006. *The Bourgeois Virtues: Ethics for an Age of Commerce*. — Chicago: University of Chicago Press; McCloskey, Deirdre. 2010. *Bourgeois Dignity: Why Economics Can't Explain the Modern World*. — Chicago: University of Chicago Press; Doepke, Matthias and Zilibotti, Fabrizio. 2008. «Occupational Choice and the Spirit of Capitalism». *Quarterly Journal of Economics* Vol. 123, No. 2 (May 2008), p. 747–793; Gorodnichenko, Yuriy and Roland, Gerard. 2011. «Culture, Institutions and the Wealth of Nations». Unpublished working paper, University of California, Berkeley.

Եզրակացություններ

Սույն հոդվածում շեշտը դրված է նորամուծական գործունեության արդյունավետ կազմակերպման և խթանման վրա՝ ի շնորհիվ ինստիտուցիոնալ միջավայրի բարելավման և ինստիտուցիոնալ հիմնախնդիրների բացահայտման ու վերացման: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ ուղղված նորարարական գործընթացում ներգրավված բոլոր սուբյեկտների արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ բարենպաստ ինստիտուցիոնալ միջավայրի ձևավորմանը: Նորարարական տնտեսության զարգացման տեսանկյունից առանցքային նշանակություն ունի հետևյալ ինստիտուցիոնալ պայմանների և խթանների ապահովումը՝

Նորարարությունների խթաններ	Նորարարությունների պայմաններ	Համակարգող մարմնի պայմաններ
<ul style="list-style-type: none"> • Նորարարական մշակույթ • Նորարարական մտածելակերպ • Նորարարական գիտակցություն • Տաղանդների կառավարում • Եկամուտների վերաբաշխման նպաստող համակարգ • Եկամուտների կենտրոնացում • Նորարարությունների ստեղծման կենտրոններում • Գիտություն-արտադրություն համագործակցության խթանում ու պարբերական կապի ապահովում 	<ul style="list-style-type: none"> • Օրենքի գերակայություն • Սեփականության իրավունքների պաշտպանվածության և մասնավոր սեփականության անձեռնմխելիության բարձր մակարդակ • Կոռուպցիայի և շուկա մուտքի արգելքների բացառում • Ժողովրդավարություն և ազատ շուկայական տնտեսություն • Նորարարական գործունեության բոլոր հատվածները կարգավորող նորմատիվաիրավական բազայի համակարգվածություն • Ռիսկերի ապահովագրություն • Չարգացած ֆինանսական ինստիտուտներ 	<ul style="list-style-type: none"> • Պրոֆեսիոնալ կադրերի պատրաստման համար նպաստավոր պայմանների ստեղծում • Որոշումների ընդունման նկատմամբ պատասխանատվություն • Նորարարական նախագծերի անկախ փորձաքննություն • Նորարարությունների ռազմավարական կառավարման համակարգային մոտեցումների կիրառում • Նորարարական գործունեության կոորդինացում

Արմինե ԱԼՈՅԱՆ

Նորամուծական տնտեսության զարգացման ինստիտուցիոնալ հիմնախնդիրները ՀՀ-ում. համեմատական վերլուծություն

Բանալի բառեր. նորամուծական փնտրություն, ինստիտուցիոնալ, ինստիտուցիոնալ հիմնախնդիրներ, արտոնագրային ակտիվություն

Միկրոմակարդակում՝ կազմակերպության, իսկ մակրոմակարդակում՝ տնտեսության մեջ նորամուծական բաղադրիչի ցածր լինելու հանգամանքը կարող է պայմանավորված լինել մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներով: Այս համատեքստում կարևոր դերակատարություն ունի այն միջավայրը, որում գործունեություն են ծավալում տնտեսվարող սուբյեկտները, դրանք են՝ երկրի իրավական, քաղաքական, ֆինանսական, տնտեսական և ոչ ֆորմալ ինստիտուտների ամբողջությունը: Հետևաբար, առանցքային նշանակություն ունի համակարգում առկա ինստիտուցիոնալ հիմնախնդիրների բացահայտումը և դրանց լուծմանն ուղղված միջոցառումների ձեռնարկումը:

Armine ALOYAN

Institutional problems and barriers that hinder innovative development of RA economy: comparative analysis

Key words: Innovative economy, institutions, institutional issues, patent activity

The low level of innovation in the organization at the micro level and the low level of the innovative component in the economy at the macro level may be due to a number of objective-subjective circumstances. In this context, an important role is played by the environment in which economic actors operate: a set of legal, political, financial, economic and informal institutions of the country. Therefore, from the point of view of promoting the development of the innovative economy, it is of key importance to identify the institutional problems in the system and to take measures to solve them. In this article, we examined the factors that hinder the innovative development of both an organization and the innovative development of a region or country as institutional problems

Армине АЛОЯН

Институциональные проблемы и барьеры, препятствующие инновационному развитию экономики РА: сравнительный анализ

Ключевые слова: Инновационная экономика, институты, институциональные проблемы, патентная активность

Низкий уровень инноваций в организации на микроуровне и низкий уровень инновационной составляющей в экономике могут быть обусловлены рядом объективно-субъективных обстоятельств. В этом контексте важную роль играет среда, в которой действуют экономические субъекты: совокупность правовых, политических, финансовых, экономических и неформальных институтов страны. Поэтому с точки зрения содействия развитию инновационной экономики ключевое значение имеет выявление институциональных проблем в системе и принятие мер по их решению. В статье рассмотрены факторы, препятствующие инновационному развитию как отдельной организации, так и инновационному развитию страны.

ՀԱՆՐԱՀԱՅՏ ԱՍԻԱԿԱՆ ԿՈՍՄԵՏԻԿ ՄԻՋՈՑՆԵՐ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

Տիգրան ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Տնտ. գիտ. դոկտոր, ԵՊՀ դոցենտ
Դոնարա ԳՐԻԳՈՐՅԱՆ
հայցորդ, ՀՀ ԳԱԱ ՏԻ հայցորդ

Բանալի բառեր. արտադրություն, կոսմետիկ միջոցներ, միջազգային փորձ, ասիական շուկա

Ներածություն

Ասիական կոսմետիկ միջոցներ արտադրողները վերջին շրջանում դարձել են առաջատար խաղացողներից՝ համաշխարհային կոսմետիկ շուկայում: Ասիական կոսմետիկ և խնամքի միջոցները հանրահայտ են իրենց գերզարգացած տեխնոլոգիաներով, բնական բաղադրիչներով և նորարարական մոտեցումներով: Կանանց շրջանում կոսմետիկայի սպառման աճը, որը պայմանավորված է սոցիալական և տնտեսական գործունեության մեջ ներգրավված կանանց թվի աճով, դրական ազդեցություն են ունեցել ասիական գեղեցկության շուկայի վրա:

Գրականության համառոտ վերլուծություն

Ըստ Բունմիի գեղեցկությունը, բնական և նուրբ դիմահարդարումը, կոսմետիկ և խնամքի միջոցների արդյունավետությունը գրավվել են միլիոնավոր կանանց և աղջիկներին: Բացի այդ ասիական կոսմետիկ միջոցներ արտադրողները հաճախորդներին են ներկայացնում մատչելի գներ, և գեղեցիկ փաթեթավորում, որն էլ օգնում է ապրանքներին գրավել սպառողների սրտերը¹: Փորձենք ներկայացնել Պորտերի հինգ ուժերի վերլուծություն կոսմետիկայի համաշխարհային շուկայի համար².

1. Մատակարարների բանակցությունը
2. Գնորդների բանակցությունը
3. Նոր մրցակիցների սպառնալիքը

¹ Nguyen Thanh Lon, Bui Huy Khoi, <<Building a Research Model through the Purchase Behavior of Korean Cosmetics>> March - April 2020 ISSN: 0193-4120 Page No. 520 – 533 URL: https://www.researchgate.net/publication/339940150_Purchase_Behavior_of_Korean_Cosmetics
² Cosmetics Market Report , Global Opportunity Analysis and Industry Forecast, 2020–2027 URL: <https://www.researchdive.com/8336/cosmetics-market>

4. Փոխարինողների սպառնալիք

5. Շուկայի մրցունակությունը

Կորոնավիրուսային համաճարակով պայմանավորված այն իր բացասական հետքը թողեց նաև կոսմետիկ միջոցների շուկայի վրա: Առաջարկի և պահանջարկի խափանումները և աշխատողների պակասը նույնպես բացասական ազդեցություն ունեցան շուկայի վրա: Նույնիսկ, եթե մարդիկ վերադառնան աշխատանքի, նրանք ստիպված կլինեն դիմակներ կրել՝ հետագայում նվազեցնելով դիմահարդարման ապրանքների պահանջարկը: Այս բոլոր գործոնները բացասաբար են ազդում կոսմետիկայի շուկայի վրա: Ճգնաժամը հաղթահարելու համար շատ կոսմետիկ ընկերություններ սկսեցին իրենց կոսմետիկայի արտադրությունից անցնել ձեռքի մաքրող և աղտահանող միջոցների արտադրությանը¹: Ստորև ներկայացնենք ասիական կոսմետիկ միջոցների միջազգային փորձի վերլուծությունը.

Վերլուծություն

Ճապոնական հանրահայտ ապրանքանիշներից, ինչպիսիք են Shiseido-ն, համաշխարհային շուկայում իրենց դիրքերն են պահպանել ավելի քան կես դար: Այս հողվածում ստորև կուսումնասիրենք ասիական մի քանի կոսմետիկ միջոցներ արտադրողների միջազգային փորձը՝ Ճապոնիա- Shiseido և Shu Uemura²: Ճապոնական Shiseido ընկերությունը, որը հիմնադրվել է 1872 թվականին, աշխարհի ամենահին կոսմետիկ ընկերություններից մեկն է: 2019թ. վաճառքը այս ընկերության կազմել է 1,094,8 միլիարդ յեն³ Ճապոնիայում, Չինաստանում և Ասիայում: Ընկերությունն ի սկզբանե եղել է, որպես դեղատուն, որն հիմնադրել է Ճապոնիայի ռազմածովային նավատորմի նախկին գլխավոր դեղագործ Արիհորու Ֆուկուհարան: Shiseido (Շիսեյդո) անունը նշանակում է «ամեն ինչ գալիս է Մայր երկրից»՝ չինական արտահայտություն է, որը փոխառված է Կոնֆուցիոսի «Փոփոխությունների մատյանից»: Արիհորու Ֆուկուհարայի որդին՝ Սինձո Ֆուկուհարան, ստանձնեց բիզ-

¹ Cosmetics Market Report , Global Opportunity Analysis and Industry Forecast, 2020–2027 URL: <https://www.researchdive.com/8336/cosmetics-market>

² Verona Qiancheng Lu, Asian Cosmetics in Global Market: A Comparative Study of Internationalization of Japanese, Korean, and Chinese Companies, Harvard University February 2020, URL: <https://dash.harvard.edu/bitstream/handle/1/37365641/LU-DOCUMENT-2020.pdf?sequence=1&isAllowed=y>

³ Norio Tadakawa , Corporate Executive Officer Shiseido Company, Limited February 8, 2019 URL: https://corp.shiseido.com/en/ir/pdf/ir20190208_594.pdf

ները 1915թ. և ավելի ու ավելի շատ կենտրոնացավ կոսմետիկայի վրա՝ համարելով, որ կոսմետիկան «պետք է արտադրվի նույն խստությամբ և որակով, ինչպես դեղագործությունը»: Shiseido-ն իր կոսմետիկ միջոցներում ներառեց ինչպես արևելյան փիլիսոփայությունը, այնպես էլ արևմտյան դեղագիտությունը կոսմետիկայի արդյունաբերության մեջ: Ընկերությունն իր արտադրանքն արտահանեց Թայվան (որն, այն ժամանակ ճապոնական գաղութ էր) և ԱՄՆ համապատասխանաբար 1929 և 1936 թվականներին¹: Համաշխարհային շուկա մուտք գործելը սկսվեց ԱՄՆ-ից: Ընկերությունն իր արտադրանքը տարածեց Հավայան կղզիներում ճապոնական մեծ բնակչություն ունեցող ամերիկյան նահանգում: 2 տարի անց գրասենյակը բացելուց հետո Shiseido-ն իր ամերիկյան բաժանմունքի միջոցով պաշտոնապես սկսեց վաճառքը ԱՄՆ-ում: Այդ ժամանակ Shiseido-ն արդեն դարձել էր աշխարհի առաջատար կոսմետիկ ընկերությունը՝ ավելի քան 100 միլիոն դոլար տարեկան վաճառքով: Ընկերությունը թիրախավորում է բարձրակարգ ապրանքների շուկան ԱՄՆ-ում՝ վաճառելով ավելի քան 400 տարատեսակ արտադրանք «բացառապես հեղինակավոր հանրախանութներում և գեղեցկության սրահներում»²: Եվրոպայում Shiseido-ն զգալի հաջողությունների չհասավ մինչև 1980թ. Ֆրանսիա հասնելը, չնայած որ ընկերությունը իր արտադրանքը վաճառում էր Իտալիայում 1968-ից: 1980թ. Shiseido-ն ֆրանսիական Laboratoires Pierre Farbre դեղագործական ընկերության հետ համատեղ ստեղծեց ձեռնարկություն՝ իրենց արտադրանքը Ֆրանսիայում վաճառելու համար³: Համագործակցելով հայտնի ֆրանսիացի նորաձեռության դիզայներ Սերժ տենսի հետ՝ Shiseido-ն ձեռք է բերել եվրոպական շուկայում որակապես բարձրակարգ ապրանքանիշի ճանաչում Եվրոպական շուկայում Shiseido-ն ավելի շատ ուշադրություն է դարձնում իր առաջադեմ գեղեցկության տեխնիկային, քան 60-ականների ԱՄՆ-ի շուկայից տարբերվող ճապոնական ոճին: 1983թ. Շիսեյդոն Պեկինի կառավարության հետ կնքեց տեխնոլոգիական հա-

¹ Jones, Geoffrey, Kanno, Akiko and Egawa, Masako. Making China Beautiful: Shiseido and the China Market. Business Case. Boston. Harvard Business Publishing. 14 Oct. 2004. Print.

² The Jewelry: Nippon Cosmetic Giant may Enter U.S. Market." Women's Wear Daily, vol. 108, no. 107, Jun 01, 1964, pp. 58. ProQuest, <https://proxy.library.upenn.edu/login?url=https://search-proquestcom.proxy.library.upenn.edu/docview/1862443208?accountid=14707>.

³ "Shiseido of Japan Planning Venture with French Firm." Wall Street Journal (1923 - Current file), Oct 17, 1979, pp. 10. ProQuest, <https://proxy.library.upenn.edu/login?url=https://search-proquestcom.proxy.library.upenn.edu/docview/134419257?accountid=14707>.

մագործակցության առաջին պայմանագիրը և սկսեց արտադրել մազերի արտադրանք Պեկինի Լիյուան ամենօրյա քիմիական գործարանի միջոցով¹: Կենտրոնանալով բարձրակարգ շուկայի վրա՝ ընկերությունը ստեղծեց Aupres ապրանքանիշը և Չինաստանում վաճառեց տեղական արտադրության կոսմետիկա: Shiseido-ն իր կոսմետիկական տարածեց երեք հիմնական ալիքներով՝ հանրախանութներ, մասնագիտացված խանութներ և դեղատներ: Ընկերությունն ընդգծել է իր էկզոտիկ, արևելյան ծագումը, մասնավորապես ոչ ասիացի գնորդների համար օժանելիքի միջոցով: Երբ 1965թ. Shiseido-ն առաջին անգամ մուտք գործեց ԱՄՆ շուկա, նա կենտրոնացավ իր Zen օժանելիքի գովազդի վրա: Հոտը էկզոտիկ էր, արկածային և ստեղծվել էր «հազվագյուտ ներշնչանքով՝ արտահայտելու ավանդական ճապոնական գեղեցկության մաքրությունը»: Չինական շուկայում առավել ուշագրավ արտադրանքը Aupres-ի տեսականին էր, որը նախատեսված էր հատուկ չինացի գնորդների համար: Ապրանքանիշը կենտրոնացած է 20-30 տարեկան բարձր եկամուտ ունեցող կանանց մաշկի խնամքի միջոցների վաճառքի վրա: Չնայած գնորդները գիտեին, որ արտադրանքը արտադրվում է Չինաստանում, նրանք Aupres-ը ընկալում էին որպես բարձրորակ՝ անկախ արտադրության Shiseido-ի կողմից, ինչը թույլ տվեց ապրանքանիշին հաղթահարել տեղական արտադրության կոսմետիկայի նկատմամբ կողմնակալ վերաբերմունքը²: Aupres ապրանքանիշը ստեղծվել է չինացի սպառողների համար և տարածվում է միայն Չինաստանում: Գովազդի առումով Shiseido-ն ընդգծեց, որ Aupres ապրանքատեսակները հատուկ մշակվել են չինուիների համար: Օրինակ, Aupres-ի գովազդներում ներկայացված էին չինական մոդելներ, մինչդեռ ներկրված Shiseido ապրանքանիշերն օգտագործում էին բացառապես արևմտյան մոդելներ: Բրենդինգի առումով, Shiseido-ի տեղայնացումը ԱՄՆ-ում, որքան էլ պարադոքսալ հնչի, փորձում էր տարբերվել ներքին մրցակիցներից՝ լինելով ոչ տեղական: Արտադրական տեսանկյունից, Shiseido-ն հիմնականում հավատարիմ մնաց իր ճապոնական մոդելին՝ կենտրոնանալով առանցքային գործոնների վրա, ներառյալ բարձրորակ ապրանքներն ու նորաձև դիզայնը: Մի ժամանակ, երբ կոսմետիկայի արտադրողներից շատերը «իրենց ուժերը դը-

¹ "Hair care demand rises in China." *Cosmetics International*, 10 May 1989, p. 8. Gale General OneFile, <https://link.gale.com/apps/doc/A7702233/ITOF?u=upenn>

² Jones, Geoffrey, Kanno, Akiko and Egawa, Masako. *Making China Beautiful: Shiseido and the China Market. Business Case*. Boston. Harvard Business Publishing. 14 Oct. 2004. Print.

նում էին արտադրանքի խթանման և գովազդի վրա», Shiseido-ն շարունակում էր կենտրոնացնել իր ուժերը խանութներին սպասարկելու վրա, ինչպես նաև ներդրումներ է կատարել Կալիֆոռնիայի 1500 քառակուսի ոտնաչափ տարածքային ուսումնական կենտրոնում՝ բարելավելու իր հավաքագրման, խրթանման ծրագրերը և պարզեցնելը¹: Ապրանքի որակի առումով Shiseido-ն 85 միլիոն դոլար է ներդրել Հարվարդի բժշկական դպրոցի հետ համատեղ ձեռնարկության մեջ՝ մաշկի ծերացման գործընթացը ուսումնասիրելու համար²: Այն պայմաններում, երբ Միացյալ Նահանգների և Ճապոնիայի միջև գոյություն ունեին զգալի մշակութային տարբերություններ, Շիսեյդոն ձգտում էր հասկանալ այդ տարբերությունները և այն կիրառել իր արտադրության մեջ: Օրինակ, Shiseido-ն ԱՄՆ շուկայում ավելի շատ կենտրոնացել էր կոսմետիկա և օժանելիք արտաադրելու վրա, հաշվի առնելով, որ ամերիկացի հաճախորդները ավելի շատ զբաղվում են դիմահարդարմամբ, քան իրենց ճապոնացի հաճախորդները: Ամերիկացի գնորդը նախընտրում է դիմահարդարման գույների հսկայական բազմազանությունը: Shiseido-ն ավելի շատ ջանք է գործադրել Չինաստանում տեղայնացման ուղղությամբ՝ համեմատած ԱՄՆ և Եվրոպական շուկաների հետ: Այսպիսով, Shiseido-ն լավ դիրքավորված էր իր արևմտյան մրցակիցների դեմ, և նրա ասիական ծագումը և բարձրակապարանքներն էլ ավելի ամրապնդեցին չինացի հաճախորդների մերձեցումը ասպրանքանիշի նկատմամբ: Այս ասպրանքանիշի հաջողության հիմնական գրավականն այն է, որ լինելով ասիական ծագման արտադրություն, դուրս եկավ արևմտյան շուկաներ: Որպես առավելություն նա օգտագործում էր հեռավոր երկրի միստիկան և աուրան՝ իր արևելյան ավանդույթներով, գույներով, բույրերով և գեղագիտությամբ: Համաշխարհային շուկայի առաջին ասպրանքը, որը կոչվում է Zen, թողարկվել է 1964 թվականին: Շիսեյդոն այն փաթեթավորեց 16-րդ դարի ավանդական Կիոտոյի լաքապատկերներով: Shiseido-ն միշտ արտադրել է այնպիսի արտադրանք, որոնցում օգտագործվել է բժշկական հավելումներ մաշկի տեսքը էլ ավելի բարելավվելու համար: 1981 թ.-ին, երբ նա մուտք գործեց Չինաստան, նա ներկայացրեց Aupres անունով մի ենթաբրենդ և այն ներակայացրեց որպես էլիտար ասպրանքանիշ: Այս աս-

¹ Zimmerman, Peter C. "Shiseido stressing store service." WWD, 14 Mar. 1986, p. S14. Gale General OneFile, https://link.gale.com/apps/doc/A4170376/ITOF?u=upenn_main&sid

² "Shiseido teams up with Harvard for cosmetic research." Cosmetics International, 25 Sept. 1989, p. 6. Gale General OneFile, https://link.gale.com/apps/doc/A7995547/ITOF?u=upenn_main&sid

րանքանիշից սկսեց օգտվել շուկայի միայն 1%-ը: 2011 թ.-ին Shiseido-ն գործարկեց Senka-ն ավելի ցածր գնով՝ նպատակ ունենալով թիրախավորել այն սպառողներին, ովքեր սակարկություններ են անում, բայց չեն ցանկանում հրաժարվել արտադրանքի որակից:

Ճապոնական Shu Uemura կոսմետիկ միջոցների ընկերությունը Տոկիոյում տեղակայված կոսմետիկայի ապրանքանիշ է, որը հիմնադրել է Shu Uemura-ն, ով իր պրոֆեսիոնալ դիմահարդարման կարիերան սկսել է Հոլիվուդում, Max Factor-ի հանրահայտ կոսմետիկ միջոցներ արտադրող ընկերության հետ¹: 1960-ականների վերջին Շու Ուեմուրան Տոկիոյում բացեց իր առաջին բուտիկը: Սակայն 2003 թ.-ին Shu Uemura-ն ձեռք բերեց L'Oréal-ը՝ աշխարհի խոշորագույն կոսմետիկ հսկաներից մեկը: Shu Uemura-ի պատմությունը պատկերում է սահմանափակ ռեսուրսներով և հնարավորություններով առանձին, ձեռնարկատիրական ապրանքանիշի գլոբալիզացիայի եզակի ուղին, որը հիմնովին տարբերվում է նույն ժամանակահատվածում Shiseido-ի նման կոսմետիկ հսկայի ուղուց: 1983-ին Տոկիոյում առաջին խանութը բացելուց ի վեր Shu Uemura-ն արագորեն ընդլայնվեց Ճապոնիայում և, մինչ սկսեց բացել արտերկրյա շուկաները, շահագործեց ավելի քան 50 խանութ: Ապրանքանիշը իր առաջին միջազգային խանութը բացեց Հոնկոնգում 1985 թ., այնուհետև ԱՄՆ՝ Լոս Անջելես նահանգում և 1986 թ.-ին Փարիզում, որից հետո ընդլայնվեց Սինգապուրում, Լոնդոնում, Միլանում, Ամստերդամում և աշխարհի այլ խոշոր քաղաքներում²: Բացի սպառողին ուղղակի վաճառքի անելուց, Shu Uemura-ն ուսումնասիրել է նաև Եվրոպայում ֆրանչայզինգի մոդելը: Օրինակ, Միլանում օժանելիքի այլընտրանքային սեփականատերերը ձեռք են բերել Shu Uemura արտոնությունը 1990 թվականին՝ դառնալով Shu Uemura-ի ընկերության բացառիկ արտոնյալ: Ապրանքանիշը սկսեց գրավել տեղի բնակիչների ուշադրությունը իր ստեղծագործական արտադրանքներով, ինչպիսիք են Ethipital-ը, ոտքերի խնամքի հատուկ ապրանքները, որոնցում օգտագործվում էր բնական բաղադրիչներ՝ երիցուկ և կալենդուլա՝ այտուցը նվա-

¹ Jones, Geoffrey. "Conclusion: The Dream Machine." *Beauty Imagined: A History of the Global Beauty Industry*. Oxford: Oxford University Press, 2010, p. 354. Print.

² Everett, Patty. "Shu Uemura lays out expansion plans." *WWD*, 5 Sept. 1986, p. 9. Gale General OneFile,

https://link.gale.com/apps/doc/A4392352/ITOF?u=upenn_main&sid=ITOF&xid=5257d562.

Accessed 2 Nov. 2019

զեցնելու և արյան շրջանառությունը բարելավելու համար¹: Shu Uemura-ն առաջարկում է ավելի քան 1000 տեսակ մաշկի խնամք, կոսմետիկա և օժանելիքի ապրանքներ, ինչպես նաև վրձինների և աքսեսուարների մեծ հավաքածու, որոնք վաճառվում էին գրեթե ողջ Ճապոնիայի 6000 գեղեցկության սրահներում, բուտիկներում և հանրախանութներում²: Shu Uemura-ի միջազգային ընդլայնման արտադրանքի ասպեկտը կարելի է վերլուծել երեք տեսանկյունից. ապրանքի առաջարկ, բրենդինգ և խանութի փորձ: Եվրոպական շուկա առաջին անգամ ներկայացված ապրանքները, ի տարբերություն ԱՄՆ-ի, ավելի շատ կենտրոնացած էին մաշկի խնամքի վրա: Երբ 1992 թվականին Ֆրանսիայում Shu Uemura- ն բացեց իր արտադրական և շուկայավարման հաստատությունը, նա շեշտը դրեց միայն կանանց համար պրեմիում ապրանքատեսակների խթանման վրա: Հոլիվուդում այս ապրանքանիշը սկսեց համագործակցել հայտնի մարդկանց հետ, ինչպիսիք էին Շիրլի Մաքլեյնը 50-ականների կեսերին, որն էլ որոշ չափով հաջողություն բերեց այս ճապոնական ապրանքանիշի և արևմտյան փոփ մշակույթի միջև³: Ապրանքների առաջարկների տեսանկյունից, ԱՄՆ-ում ընկերությունն ավելի շատ շեշտը դնում էր դիմահարդարման վրա, քան մաշկի խնամքի, մինչդեռ ԱՄՆ-ից դուրս գտնվող շուկաներում, ընդհանուր առմամբ, երկու կատեգորիաներին հավասար ուշադրություն էր դարձվում: Ապրանքի խթանման առումով, Shu Uemura-ն լայնամասշտաբ շուկայավարման արշավներ չի իրականացրել ԱՄՆ շուկա մուտք գործելիս: Հաշվի առնելով ընդլայնման ոչ արդյունավետ պայմանները Shu Uemura-ն 2000 թվականին դաշինք կնքեց L'Oréal- ի հետ: L'Oréal-ը Shu Uemura- ի 35%-ը ձեռք է բերել L'Oréal-ի ճապոնական դուստր ձեռնարկության՝ Nihon L'Oréal K.K.-ի միջոցով⁴: 2003 թ.-ին L'Oréal-ը ավել-

¹ Barone, Amy B. "What's Selling at Alternative Perfumeries?" *Drug & Cosmetic Industry*, vol. 159, no. 2, 1996, pp. ProQuest, <https://proxy.library.upenn.edu/login?url=https://search-proquestcom.proxy.library.upenn.edu/docview/196453652?accountid=14707>.

² Everett, Patty. "Shu Uemura lays out expansion plans." *WWD*, 5 Sept. 1986, p. 9. Gale General OneFile, https://link.gale.com/apps/doc/A4392352/ITOF?u=upenn_main&sid=ITOF&xid=5257d562. Accessed 2 Nov. 2019.

³ Chan, Candy K. H. "Shu Uemura Brings Together Cosmetics and Art." *Asianweek*, Mar 31, 1995, pp. 10. ProQuest, <https://proxy.library.upenn.edu/login?url=https://search-proquestcom.proxy.library.upenn.edu/docview/367258192?accountid=14707>.

⁴ Hirano, Koji. "L'Oréal Gets Stake in Shu Uemura." *WWD*, vol. 180, no. 99, Nov 27, 2000, pp. 22. ProQuest, <https://proxy.library.upenn.edu/login?url=https://search-proquestcom.proxy.library.upenn.edu/docview/1434223362?accountid=14707>

լացրեց իր բաժնեմասը 52,9%-ով, պաշտոնապես դառնալով մեծամասնության սեփականատեր և ձեռք բերեց ընկերության ղեկավարման վերահսկողությունը: L'Oréal-ի բաժնետոմսերի ձեռքբերման հիմնական պատճառաբանություններից մեկը Ճապոնիայում և Ասիայում դիրքի ամրապնդումն էր¹: Չընայած L'Oréal-ի միաձուլումը մեծապես նպաստեց Shu Uemura- ի ընդլայնմանը ամբողջ աշխարհում, այն հաջողություն չբերեց Shu Uemura- ին ԱՄՆում՝ քանի որ Shu Uemura-ն ստիպված էր հաղթահարել ԱՄՆ շուկայում ճապոնական ապրանքանիշի նկատմամբ ձևավորված ժառանգական մարտահրավերների դեմ: Բրենդինգն ուժեղ դեր ունի ասիական գեղեցկության արդյունաբերությունում: Բացի պահանջկոտ լինելուց, ասիացի սպառողը աներևակայելիորեն գիտակցում է բրենդը, երբ հարցը վերաբերվում է գեղեցկության արտադրանք գնելուն: Ասիական կոսմետիկան ավելի ու ավելի մեծ դեր է խաղում համաշխարհային կոսմետիկայի արդյունաբերության մեջ, որի օրինակն են աշխարհում Կորեական ալիքը և Չինաստանը՝ որպես աշխարհի երկրորդ ամենամեծ կոսմետիկայի շուկա:

Եզրակացություն

Այսպիսով, հաշվի առնելով համաշխարհային տուրիստական մանրածախ շուկայի կշիռը, չինացիները սպառման ամենամեծ խումբն են՝ մանրածախ շուկայի 45% -ը: Հաջորդ խոշոր խումբը կորեացիներն են՝ 10%²: Որպես այդպիսին, առցանց վիդեո բլոգերը, խմբագրական բլոգերը, ուսումնական ուղեցույցները, սպառողների կարծիքները և սոցիալական լրատվամիջոցները դարձել են գնորդների որոշումների կայացման կարևոր հարթակ: Հայաստանի պայամաններում, շատ դժվար է ստեղծել և արտադրել ասիական կոսմետիկ միջոցներին համապատասխան արտադրանք, այնուամենայնիվ հաշվի առնելով Հայաստանի աշխարհագրական դիրքն ու կլիման, ունենք հնարավորություն արտադրել բուժական և ոչ միայն կոսմետիկ և խնամքի միջոցներ և այն նաև արտահանել:

¹ Weil, Jennifer. "L'OREAL TO UP UEMURA STAKE." WWD, 20 Nov. 2003, p. 17. Gale General OneFile, https://link.gale.com/apps/doc/A110447884/ITOF?u=upenn_main&sid=ITOF&xid=cd1fe8e9. Accessed 2 Nov. 2019U

² <https://cleanbeautyasia.com/introduction-to-the-asia-pacific-beauty-market>

Տիգրան ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Դոնարա ԳՐԻԳՈՐՅԱՆ
Հանրահայտ ասիական կոսմետիկ միջոցներ արտադրողների
միջազգային փորձը

Բանալի բառեր. արտադրություն, կոսմետիկ միջոցներ, միջազգային փորձ, ասիական շուկա

Ասիական կոսմետիկական վերջին շրջանում դարձել է առաջատար խաղացողներից՝ համաշխարհային կոսմետիկ շուկայում: Բրենդինգն ուժեղ դեր ունի ասիական գեղեցկության արդյունաբերությունում: Բացի պահանջկոտ լինելուց, ասիացի սպառողը աներևակայելիորեն գիտակցում է բրենդը, երբ հարցը վերաբերվում է գեղեցկության արտադրանք գնելուն: Վերը նշված ասիական կոսմետիկ միջոցներ արտադրողները իրենց զարգացման ուղին անցել են ոչ միայն տեղական շուկայում հաստատվելով, այլ նաև մուտք են գործել, ինչպես Եվրոպական, այնպես էլ ԱՄՆ շուկա: Սակայն այս զարգացման ուղին չէր հասնի իր գագաթնակետին, եթե այս արտադրողները չհամագործակցեին սովյալ ժամանակի գերիզուր կոսմետիկ միջոցներ արտադրողների հետ, հատկապես ֆրանսիական L'Oréal ապրանքանիշի հետ:

Тигран АРУТЮНЯН, Донара ГРИГОРЯН

Международный опыт известных азиатских производителей косметики

Ключевые слова. Производство, косметика, международный опыт, азиатский рынок

Азиатская косметика в последнее время стала одним из ведущих игроков на мировом косметическом рынке. Брендинг играет важную роль в азиатской индустрии красоты. Азиатский потребитель не только требователен, но и прекрасно осведомлен о бренде, когда дело доходит до покупки косметических товаров. Вышеупомянутые азиатские производители косметики не только зарекомендовали себя на местном рынке, но и вышли на рынки Европы и США. Однако этот путь развития не достиг бы своего пика, если бы эти производители не сотрудничали с производителями самой мощной косметики того времени, особенно с французским брендом L'Oréal.

Tigran HARUTYUNYAN, Donara GRIGORYAN

International experience of the famous Asian manufacturers of cosmetics

Key words: production, cosmetics, international experience, Asian market

Asian cosmetics have recently become one of the leading players in the global cosmetics market. Branding plays an important role in the Asian beauty industry. The Asian consumer is not only discerning but also brand knowledgeable when it comes to shopping for beauty products. The aforementioned Asian cosmetics manufacturers have not only established themselves in the local market, but also entered the markets of Europe and the United States. However, this path of development would not have reached its peak if these manufacturers did not collaborate with the manufacturers of the most powerful cosmetics of the time, especially the French brand L'Oréal.

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Արմեն ՍԱՖԱՐՅԱՆ

տնտեսագիտության դոկտոր

Ֆիրդուս ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀՊՏՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի ասպիրանտ

Բանալի բառեր. կորոնավիրուս, համավարակ, ճգնաժամ, հակաճգնաժամային քաղաքականություն, տնտեսական ակտիվություն

Ներածություն

Ներկայումս կորոնավիրուսով (COVID-19) պայմանավորված համավարակը նոր մարտահրավերներ է նետում համաշխարհային տնտեսությանը և ազգային տնտեսություններին և բնականաբար, այդ գործընթացից անմասն չի մնացել Հայաստանի Հանրապետությունը: Գտնվելով աշխարհագրական աննպաստ դիրքում և տնտեսական շրջափակման մեջ՝ համավարակի պայմաններում էլ ավելի սահմանափակվեցին տնտեսական կապերը: Սակայն ՀՀ-ն 2020թ. համավարակի ազդեցությանը զուգահեռ ենթարկվեց Արցախյան 44-օրյա պատերազմի ազդեցությանը, ինչն էլ իր հերթին մեծ հարված հասցրեց նրա առանց այդ էլ ճգնաժամային տնտեսությանը: Ուստի այս մարտահրավերը մեր երկրի պետական հակաճգնաժամային քաղաքականության արդյունավետության գնահատման կարևոր փուլերից և հնարավորություններից մեկն է, և այս առումով հետաքրքրական է ՀՀ կառավարության կողմից իրականացվող հակաճգնաժամային միջոցառումների ուսումնասիրությունը: Այդ միջոցառումների արդյունավետությունից է կախված տնտեսական քաղաքականության հետագա բնույթը և դրա ուղղությունների ընտրության գործընթացը, հետևապես տնտեսական զարգացման հետագա նախադրյալները:

Մեթոդաբանությունը

Հետազոտության կատարման տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ կառավարության մի շարք ծրագրեր, որոշումներ, ՀՀ և այլ երկրների վիճակագրական կոմիտեների հրապարակումները, ՀՀ պետական բյուջեի մասին օրենքները և այլ տնտեսական վերլուծություններ: Հետազոտության ընթացքում կիրառվել են տվյալների հավաքագրման և խմբավորման մեթոդները՝ օգտագործելով մասնագիտական տարբեր աղբյուրներում ամփոփված

տեղեկատվությունը: Սակայն պետք է նշել, որ կատարված դատողությունները նախնական են և չեն կարող ամբողջովին հիմնավոր լինել, քանի որ համավարակով պայմանավորված որոշ սահմանափակումներ դեռ գործում են, որոնք ճգնաժամի շարունակման հիմքեր են հանդիսանում, և բացի այդ դեռ շատ հակաճգնաժամային միջոցառումներ իրենց վերջնական արդյունքները չեն գրանցել, ինչը պայմանավորված է դրանց ժամանակատարությամբ:

Գրականության ակնարկ

Տնտեսական ճգնաժամերը մշտապես գտնում են տնտեսագետների ուշադրության կենտրոնում: Տնտեսագիտության տեսության մեջ ճգնաժամերի հիմնախնդիրը համարվում է ամենավիճահարույցներից մեկը, և պատահական չէ, որ տնտեսագիտական մտքի տարբեր ուղղություններ տարբեր կերպ են մեկնաբանել այս երևույթները և դրանց հաղթահարման եղանակները: Այսպես, դասական տնտեսագիտության ներկայացուցիչները գտնում էին, որ ճգնաժամային իրավիճակներ տնտեսական համակարգում առաջանում են արտաքին (էկզոգեն) գործոնների ազդեցությամբ, սակայն այդ իրավիճակները շուկայական ինքնակարգավորման սկզբունքի միջոցով արագ կարգավորվում էին, և տնտեսական համակարգը կրկին գտնում էր հավասարակշռության վիճակում: Մարքսյան տեսությունը, ի տարբերություն դասական տեսության, տնտեսական ճգնաժամերը համարում է կապիտալիստական տնտեսական հասարակարգին բնորոշ երևույթ և ճգնաժամերի առաջացման պատճառ է դիտարկում այդ հասարակարգում եղած ներքին հակասությունները, մասնավորապես, արտադրության հասարակական բնույթի և դրա արդյունքների մասնավոր յուրացման միջև եղած հակասությունները: Քեյնսյան տեսությունը, քննադատելով դասական տեսության կանխադրությունները, Մեծ դեպրեսիայից (1929-1933թթ.) առաջ քաշեց պետության կարգավորիչ դերի անհրաժեշտությունը տնտեսական համակարգում: Ըստ այս տեսության՝ ճգնաժամեր առաջանում են տնտեսությունում արդյունավետ ամբողջական պահանջարկի փոփոխության արդյունքում, ինչը ձևավորվում է սպառման և ներդրման ֆունկցիաների միջոցով և շուկայական համակարգի ինքնակարգավորման միջոցով արդյունավետ չի կարգավորվում: Ուստի պետությունը պետք է արդյունավետ պահանջարկի ձևավորման և կարգավորման միջոցառումներ իրականացնի: Քեյնսյան տեսությունը այս առումով հանդիսացավ պետության հակաճգնաժամային քաղաքականության մշակման և իրակա-

նացման հիմք: Սակայն հետագայում տնտեսությունում պետության ակտիվ միջամտությունը հանգեցրեց անցանկալի երևույթների, մասնավորապես՝ փողի առաջարկով պայմանավորված ինֆլյացիոն երևույթների, որոնք կասկածի տակ դրեցին այս տեսության գաղափարները: Արդյունքում ի հայտ եկան այլ տեսություններ՝ նորդասական, մոնետարիստական, նեոքեյնսյան, ինստիտուցիոնալ և այլն, որոնք փորձեցին նորովի բացատրել այս երևույթները և դրանք հաղթահարելու ուղիները: Այս բոլոր տեսությունները, այնուամենայնիվ, ցույց են տալիս, որ անկախ նրանից, թե ճգնաժամը առաջացել է արտաքին թե ներքին գործոնների ազդեցությունից, առանց պետության հակաճգնաժամային կարգավորման ճգնաժամերի հետևանքները կարող են կործանարար լինել տնտեսական համակարգի համար: Ուստի այդ կարգավորման նախկին փորձի ուսումնասիրությունը կարող է հիմք հանդիսանալ ներկայիս ճգնաժամերի հաղթահարման գործում նախկինում դրսևորված բացասական երևույթներից խուսափելու համար:

Վերլուծություն

ՀՀ-ը բնութագրվում է մի շարք ոչ նպաստավոր գործոններով, որոնք տնտեսական զարգացման համար լուրջ դժվարություններ են ստեղծում: Դրանցից կարող ենք առանձնացնել հետևյալ հիմնականները՝ աշխարհագրական ոչ նպաստավոր դիրքը, տնտեսական շրջափակումը, Արցախյան հիմնախնդիրը, դեպի ծով ելք չունենալը, տնտեսության բնույթը, երկրի տարածական չափերը, ռեսուրսների սահմանափակությունը և այլն: Այժմ այս գործոններին ավելացել է ևս մեկ ոչ պակաս խնդրահարույց գործոն, այն է՝ կորոնավիրուսով (COVID-19) պայմանավորված համավարակը, որի ազդեցությունը ՀՀ-ում սկսվել է 2020թ. մարտից: Սակայն, նախքան այժմ դրսևորվող ճգնաժամի բնույթին և պատճառներին անդրադառնալով՝ փորձենք ներկայացնել ՀՀ մակրոտնտեսական քաղաքականության ցուցանիշները, որոնք գրանցվել են նախորդ տարվա ընթացքում, և 2020թ.-ի համար կանխատեսումները նախքան համավարակի բռնկվելը, որպեսզի կարողանանք որոշակի համեմատություններ անել: 2019 թվականը «հետհեղափոխական» կառավարության գործունեության առաջին լիարժեք տարին էր, և Կառավարությանը հաջողվել է գրանցել 2008 թվականից ի վեր ամենաբարձր տնտեսա-

կան աճի մակարդակը՝ 7.6%¹, որն ամենաբարձրն է նաև ԵԱՏՄ անդամ երկրների, հարևան բոլոր երկրների և եվրոպական տարածաշրջանի երկրների համեմատ: Հաշվետու տարում Հայաստանի տնտեսական աճն ուղեկցվել է տնտեսության ճյուղային կառուցվածքի բարելավմամբ, ցածր գնաճով, ֆինանսական կայուն ցուցանիշներով: Անհերքելի է, որ 2019թ. արձանագրված կայուն և բարձր տնտեսական աճը Կառավարությանը հնարավորություն էր տվել առավել վստահ իրականացնելու բարեփոխումներին ուղղված քայլերը՝ կյանքի կոչելով Կառավարության ծրագրով սահմանված հավասարակշռված և ներառական² տնտեսական աճի, աղքատության կրճատման ու գործազրկության նվազեցման նպատակները: Տնտեսության առանձին ճյուղերում՝ արդյունաբերություն, զբոսաշրջություն, առևտուր, ծառայություններ, գրանցված աշխուժացումը մի կողմից, զբաղվածության, միջին աշխատավարձի, կենսաթոշակների ու նպաստների մակարդակների բարձրացումը՝ մյուս կողմից, վկայում են, որ 2019թ.-ին տնտեսական աճն ուղեկցվել է բնակչության կենսամակարդակի աճով և ունեցել է առավել ներառական բնույթ: Մասնավորապես³.

- Հայաստանի տնտեսությունը հաշվետու 2019թ. դրսևորել է 7.6% աճի տեմպ: Ընդ որում, Հայաստանը տնտեսական աճի 2019թ. ցուցանիշով առաջատար է ԵԱՏՄ գործընկեր-երկրների, Վրաստանի և Ադրբեջանի հետ համեմատ: Մասնավորապես, ՀՀ-ում ՀՆԱ-ի 7.6% իրական աճի պարագայում, ՌԴ-ում արձանագրվել է ՀՆԱ-ի 1.3 % իրական աճ, Բելառուսում՝ ՀՆԱ-ի 1.2% իրական աճ, Ղազախստանում՝ ՀՆԱ-ի 4.5 % իրական աճ, Ղրղզստանում՝ ՀՆԱ-ի 4.5 % իրական աճ, Ադրբեջանում՝ ՀՆԱ-ի 2.3% իրական աճ և Վրաստանում՝ ՀՆԱ-ի 5.1 % իրական աճ:

- Հաշվետու ժամանակաշրջանում հաջողվել է բարձրացնել Հայաստանի արդյունաբերականացման մակարդակը, որի շնորհիվ 2019թ. ՀՆԱ-ի կա-

¹ ՀՀ Վիճակագրական կոմիտե՝ https://www.armstat.am/file/article/sv_03_21a_112.pdf

² Ներառական աճը տնտեսական աճի համընդգրկունությունն է, որը ենթադրում է հանրային արդյունքի ստեղծմանը երկրի տնտեսության բոլոր ոլորտների և տնտեսվարողների ազատ գործարարության սկզբունքով ներառվածություն, և ստեղծված հանրային արդյունքի բաշխմանը բոլոր խավերի մասնակցություն և բարեկեցության աճի հնարավորություն:

³ Տվյալների հիմքը ՀՀ վիճակագրական կոմիտեի, ԿԲ և ՀԲ հրապարակումներն են: <https://armstat.am>, <https://cba.am>, <https://data.worldbank.org>

նուցվածքում 2000թ. ի վեր առաջին անգամ մշակող արդյունաբերության ճյուղն առաջինն է տնտեսության մյուս բոլոր ոլորտների համեմատ:

- Տեղի է ունեցել Եվրապարտատոմսերի 3-րդ թողարկումը՝ 500 մլն ԱՄՆ-ի դոլար ծավալով և 10 տարի մարման ժամկետով: Նոր թողարկման պարտատոմսերի արժեկտրոնի եկամտաբերությունն ընդամենը 3.95% է՝ հետգնված պարտատոմսերի 6%-ի փոխարեն, ինչը նշանակում է, որ Հայաստանի համար էականորեն նվազել են պարտատոմսերի սպասարկման ծախսերը: Միայն այս գործողության շնորհիվ Հայաստանը արտաքին պարտքի սպասարկման ընթացքում տարեկան կիսնայի շուրջ 10 միլիոն դոլար:

- 2019թ. ԿԲ-ն գնել է 565 մլն դոլար և վաճառք չի իրականացրել: Սա բացառիկ ցուցանիշ է Երրորդ հանրապետության պատմության մեջ, որն ապահովում է Հայաստանի ֆինանսական համակարգի հուսալիությունն ու կայունությունը: Միջազգային ֆինանսատնտեսական կառույցներն արձանագրված տպավորիչ տնտեսական ցուցանիշների ֆոնին բարձրացրել էին ինչպես երկրի սուվերեն վարկանիշը, այնպես էլ Հայաստանի տնտեսական աճի գնահատականները և կանխատեսումները 2020թ. և 2021թ. համար, այն դեպքում, երբ համաշխարհային տնտեսության և տարածաշրջանի երկրների համար այդ կանխատեսումները հիմնականում նվազեցվել էին:

- Մշակվել է Արդյունաբերության քաղաքականության 5-ամյա ռազմավարություն, որով նախատեսվում է միջնաժամկետում նպաստել Հայաստանում արդյունաբերության զարգացմանը, արտադրողականության բարձրացմանը, մրցունակության աճին, ներքին և միջազգային թիրախային շուկաներում մասնավոր նախաձեռնողականությանը, առավել արտադրողական տեխնոլոգիաների ներդրմանն ու նորարարական գաղափարների ընդլայնմանը: Միայն սարքավորումների ներմուծումը խթանելու նպատակով 2019թ. Կառավարության կողմից արտոնություն է տրվել 18 ներդրումային ծրագրերի, որի արդյունքում պետք է կատարվեին 95 մլրդ դրամի ներդրումներ, ստեղծվեին մոտ 1226 աշխատատեղեր:

- Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման վերաբերյալ 2019թ. մշակվել է փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2020-2024թթ. ռազմավարությունը: Ռազմավարական փաստաթուղթը նախատեսում է ֆինանսական ռեսուրսների հասանելիության ավելացում, ՓՄՁ սուբյեկտների կարողությունների և ձեռնարկատիրական մշակույթի զարգացում, ՓՄՁ

սուբյեկտների համար շուկաների հասանելիության ապահովում, զարգացման բարենպաստ ինստիտուցիոնալ և իրավական միջավայրի ապահովում:

- Հարկային օրենսգրքում կատարված փոփոխություններով 2019թ. հունիսի 29-ից ԱԱՀ-ի շեմը սահմանվել է 115 մլն դրամ՝ նախկինում գործող 58.35 մլն դրամի փոխարեն:

- 2019թ. մշակող արդյունաբերությունը Հայաստանում արձանագրել է 7.6% աճ, այդ թվում՝ խմիչքի արտադրությունն ավելացել է 15.4%-ով, հագուստի արտադրությունը՝ 20.1%-ով, ծխախոտային արտադրատեսակների արտադրությունը՝ 6.8%-ով, սննդամթերքի արտադրությունը՝ 4.1%-ով:

- Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրերին տրվող արտոնությունների շրջականում 2019-ի ընթացքում հավանության է արժանացել 57 ծրագիր, որոնց ընդհանուր արժեքը 212 մլրդ դրամ է: Տրամադրվել է 14.8 մլրդ դրամի մաքսատուրքից ազատման արտոնություն: Արտոնությունների միջոցով նախատեսված է եղել 3,320 աշխատատեղերի ստեղծում: Ավելին, 13 ծրագրերի տրվել է նաև ավելացված արժեքի հարկը հետաձգելու արտոնություն, ԱԱՀ-ի հետաձգման գումարները կազմել են 10.1 մլրդ դրամ: Ծրագրերի շրջանակում նախատեսված է եղել իրականացնել 222.7 մլրդ դրամի ընդհանուր ներդրումներ և ստեղծել 1333 աշխատատեղ:

- Զբաղվածների թվի աճը շարունակվել է նաև 2019թ.: 2019թ. առաջին եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ զբաղվածների թիվն աճել է 1.2%-ով: Նույն ժամանակահատվածում գործազրկության մակարդակն աճել է՝ 21.0%-ից հասնելով 21.9%-ի՝ պայմանավորված գործազուրկների թվի 6.7% աճով:

Այս ամենը իր տրամաբանական շարունակությունը պետք է ունենար 2020թ. և ի սկզբանե «ՀՀ 2020թ. պետական բյուջեի մասին» օրենքով նախատեսված էր հետևյալ հիմնական կանխատեսումները 2020թ. համար՝

- բյուջեի դեֆիցիտը ՀՆԱ-ի նկատմամբ՝ 2,3% (թույլատրելին՝ 3%),
- 2020 թվականին կանխատեսվում էր 2019 թվականի համեմատ ՀՆԱ-ի 4.9% իրական աճ:

- 2020թ. կանխատեսվում էր արդյունաբերության շուրջ 5.0% աճ, գյուղատնտեսության շուրջ 0.5% աճ, պետական և մասնավոր ներդրումների աճով պայմանավորված շինարարության 4.0% աճ, ծառայությունների 6.0% աճ:

- գնաճի կանխատեսումը՝ 2,5%, ինչը թույլատրելի (2,5-5,5%) միջակայքում է,
- բյուջեի հարկային մուտքերը պետք է կազմեին եկամուտների 94,5%-ը,
- բյուջեի ծախսերի 44%-ը նախատեսված էր հատկացնելու սոցիալ-մըշակութային ոլորտին,
- պաշտպանության, անվտանգության, հասարակական կարգի պահպանման համար՝ բյուջեի ծախսերի 24%-ը:

Սակայն այս պատկերը կտրուկ փոփոխվեց 2020թ. հենց 1-ին եռամսյակից սկսած: Կորոնավիրուսի ՀՀ-ում առաջին դեպքի մասին հայտնի դարձավ մարտի 1-ի վաղ առավոտյան. վարակվածը 29-ամյա տղամարդ էր, որն Իրանից Հայաստան էր ժամանել փետրվարի 28-ին: Հաշվի առնելով աշխարհում և Հայաստանում նոր կորոնավիրուսային հիվանդության տարածման դեպքերը և այդ վարակն Առողջապահության համաշխարհային կազմակերպության գլխավոր տնօրենի՝ 2020թ. մարտի 13-ի հայտարարությամբ որպես պանդեմիա որակելու հանգամանքը՝ ՀՀ Կառավարությունը 2020թ. մարտի 16-ին կայացրեց «ՀՀ-ում արտակարգ դրություն հայտարարելու մասին» որոշում: Այս որոշմամբ տնտեսական գործունեության առանձին տեսակների իրականացումը արգելվեց, սահմանափակվեց մարդկանց ազատ տեղաշարժը և ՀՀ պետական սահմանի բոլոր անցակետերում սահմանվեց անձանց, տրանսպորտային միջոցների մուտքի (ելքի), բեռների, այլ գույքի, կենդանիների տեղափոխման, անձանց ու տրանսպորտային միջոցների գտնվելու և տեղաշարժվելու հատուկ կարգ: ՀՀ տնտեսության վրա կորոնավիրուսի ազդեցությունը գնահատվեց բացասական: ՀՀ Կենտրոնական բանկի այդ ժամանակվա կանխատեսումներով՝ 2020թ. տնտեսական աճը պետք է կազմեր 0,7%՝ նախկին 5,3%-ի փոխարեն: ԱՄՀ-ը նույն ժամանակահատվածի՝ 2020թ. համար կանխատեսում էր ՀՀ տնտեսության անկում՝ 1,5%-ով¹:

Համաշխարհային բանկն իր գարնանային «Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տնտեսության տեսության» մեջ (ECA) կանխատեսում էր, որ Հայաստանի տնտեսական աճը, լավատեսական սցենարով, 2020թ. կկազմի 1,7%, իսկ գնաճը՝ 3%: Զեկույցում կանխատեսվում է, որ 2021թ. Հայաստանի

¹ Արժույթի միջազգային հիմնադրամի զեկույց (IMF) - World Economic Outlook, April 2020 - <https://www.imf.org/en/Publications/WEO/Issues/2020/04/14/weo-april-2020>

ՀՆԱ-ն կաճի 4,5%, իսկ գնաճը՝ 3,5%: իսկ 2022թ.՝ 4,7% և 4% Ստեղծված պայմաններում ՀՀ կառավարությունն ընդունել է տնտեսական և սոցիալական բնույթի հակաճգնաժամային 22 միջոցառումների փաթեթներ¹: Այդ միջոցառումներից նշենք հետևյալները.

1. բարվոք վարկային և հարկային պատմություն ունեցող ռեզիդենտ տնտեսավարողների վարկային տոկոսադրույքի սուբսիդավորում

2. գյուղատնտեսության ոլորտ - ՀՀ տարածքում գյուղատնտեսության բարվոք վարկային և հարկային պատմություն ունեցող տնտեսավարողներին նպատակային վարկերի/լիզինգի համաֆինանսավորում և (կամ) վարկի/լիզինգի տոկոսադրույքի սուբսիդավորում

3. ՓՄՁ-ներին (ռեզիդենտ տնտեսավարող, որն ունի բարվոք վարկային և հարկային պատմություն) վարկերի տրամադրում՝ շրջանառության չափից կախված առավելագույնը 50 մլն ՀՀ դրամի չափով առաջին երկու տարիների համար՝ 0% տոկոսադրույքով, երրորդ տարում՝ 12%:

4. միկրոձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսացող տնտեսավարողներ - միանվագ աջակցություն 2020թ. առաջին եռամսյակում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների իրացման շրջանառության 10 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան նվազագույն աշխատավարձի կրկնապատիկի չափով

5. բարձր տեխնոլոգիաների ոլորտ - միանվագ դրամաշնորհ մրցույթի արդյունքներով հաղթող տնտեսավարողներին, ովքեր համապատասխանում են «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքում նշված չափանիշներին

6. արտոնյալ վարկավորման նպատակով երաշխիքների տրամադրում մրցունակ գործարար ծրագրերի իրագործման համար՝ «գրոյից» բիզնես ստեղծելու ձգտում ունեցող շահառուների ձեռնարկատիրական գաղափարների իրագործմանը և շահառուների գործարար ծրագրերի նորարարական զարգացմանը նպաստելու միջոցով

7. արդյունավետ աշխատատեղերի պահպանման աջակցության 3 միջոցառում

8. ՀՀ բարձրագույն և հետբուհական (կլինիկական օրդինատուրա) կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ՀՀ քա-

¹ ՀՀ Կառավարության պաշտոնական կայքէջ - <https://www.gov.am/am/covid19/>

ղաքացի հանդիսացող սովորողների ուսման վարձի փոխհատուցում կամ ուսանողական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում

9. սոցիալապես անապահով ընտանիքներին միանվագ աջակցություն


10. համավարակի պատճառով աշխատանքը կորցրած քաղաքացիներին միանվագ աջակցության ծրագրեր

11. և այլն:

«Հենտրոնական բանկը իր հերթին իրականացրեց որոշ հակաճրգնաժամային միջոցառումներ, որոնցից թերևս նշենք հետևյալները՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքի մինչև 4.25%-ի նվազումը (այժմ՝ 6%), հիմնական կապիտալի համարժեքության նորմատիվը 10%-ից 9%-ի իջեցնելը և այլն: Չնայած իրականացվող հակաճնաժամային միջոցառումներին «Հ տնտեսությունը մարտ ամսից գրանցեց տնտեսական ակտիվության կտրուկ անկում:

2020 թ.												2021թ.			
Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ
10	10.6	-4.5	16.7	13.2	-7.7	10.5	11.4	-7.7	-9.2	10.1	-8	-8.4	-6.3	3.9	23.2

Աղյուսակ 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը ըստ ամիսների, նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ¹, %




«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թվականի հունվար-դեկտեմբերին»² հրապարակման համաձայն՝

¹ Տվյալները վերցված են «Հ Վիճակագրական կոմիտեի հրապարակումներից:

² «Հ Վիճակագրական կոմիտեի - <https://armstat.am/am/?nid=82&id=2359>


• 2020թ. արդյունաբերական արտադրանքի ծավալը նախորդ տարվա նկատմամբ կազմել է 99,1%

• 2020թ. գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը նախորդ տարվա նկատմամբ կազմել է 101,4%




• Շինարարության ոլորտում (2020թ.)՝

Շինարարության և շինմոնտաժային աշխատանքների ինդեքսները, 2020թ. նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ, %



• 2020թ. առևտրի շրջանառությունը փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ կազմել է 86,0 %



Սեպտեմբերին ՀՀ տնտեսությունը կանգնեց նոր մարտահրավերի առջև. սկսվեց արցախյան պատերազմը, երկրում մտցվեց ռազմական դրություն, ավելացան պաշպանության ծախսերը, որը ուղեկցվեց կորոնավիրուսով վարակվածների թվաքանակի աճով և այս ֆոնին էլ ավելի սահմանափակվեցին հակաճգնաժամային միջոցառումներ իրականացվելու հնարավորությունները և տնտեսության անկումը խորացավ հոկտեմբերին և նոյեմբերին: 2020թ. ՀՀ ՀՆԱ-ն կազմել է 6181664.1 մլն դրամ, որը նախորդ տարվա համեմատ կազմում էր 92.6%, այսինքն՝ 7,4% տնտեսական անկում¹: Սա գերազանցեց տարեսկզբի բոլոր կանխատեսումները, և ինքնին հակաճգնաժամային միջոցառումների ոչ արդյունավետ լինելու ցուցանիշ է, եթե պատերազմի օբյեկտիվ դերն անտեսենք: Այս համատեքստում, զերծ մնալով կենսամակարդակի ցուցանիշների դինամիկային և հակաճգնաժամային միջոցառումների արդունավետության գնահատման չափանիշներին անդրադառնալուց², նշենք, որ մարտից տնտեսության ակտիվության ցուցանիշը դրական է, և քաղաքական ճգնաժամի հանգուցալուծումից է կախված տնտեսական առաջընթացը:

Եզրակացություններ

Այսպիսով, Հայաստանը գտնվում է տնտեսական ճգնաժամի պայթյունի փուլում, որը հիմքերը սկիզբ են առնում կորոնավիրուսային համավարակով պայմանավորված առողջապահական համակարգի ճգնաժամից, որին հետագայում ավելացան Արցախյան 44-օրյա պատերազմը, իսկ այժմ՝ երկրում տիրող քաղաքական ճգնաժամը: Չնայած ճգնաժամերը զարգացման անբաժանելի մասն են, դրանք կարող են կործանարար լինել տնտեսական համակարգի համար, եթե չկարգավորվեն պետական հակաճգնաժամային քաղաքականությամբ, իսկ եթե պետությունը քաղաքական ճգնաժամի մեջ է, վտանգված է հակաճգնաժամային քաղաքականության արդյունավետությունը: Պետությունը պետք է իրականացնի հարկաբյուջետային և դրամավարկային կորդինացված քաղաքականություն՝ նպաստելու գործարար ակտիվությանը: Զարգացման հիմք հանդիսացող ներդրումային միջավայրի գրավչության համար մեկ պայմանը կայունությունն է և արդյունավետ պետական տնտեսական քաղաքականությունը:

¹ ՀՀ Վիճակագրական կոմիտե - https://www.armstat.am/file/article/sv_03_21a_112.pdf

² Հակաճգնաժամային միջոցառումների արդյունավետության գնահատման և դրա բարձրացման հիմնախնդիրներին կանդադառնանք հետագա հոդվածներում:

Արմեն ՍԱՖԱՐՅԱՆ, Ֆիրդուս ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ
ՀՀ պետական հակաճգնաժամային կարգավորումը կորոնավիրուսային համավարակի պայմաններում

Բանալի բառեր. կորոնավիրուս, համավարակ, ճգնաժամ, հակաճգնաժամային քաղաքականություն, փնտրեսական ակտիվություն

Այսօր, կորոնավիրուսային համավարակով պայմանավորված Հայաստանը տնտեսական ճգնաժամ է ապրում: Առողջապահական համակարգի ճգնաժամին զուգահեռ, արցախյան նոր պատերազմը և դրան հաջորդող քաղաքական համակարգի անկայունությունը տնտեսական ճգնաժամը հաղթահարելու ճանապարհին հակաճգնաժամային կարգավորման լուրջ խոչընդոտներ են ստեղծում: Քաղաքական համակարգի կայունության, անվտանգության ապահովման և լուրջ ու թիրախավորված հակաճգնաժամային միջոցառումների կիրառման միջոցով է հնարավոր հասնել հետագա տնտեսական առաջընթացի: Ուստի ՀՀ արդի իրավիճակի համակողմանի ուսումնասիրությունը անհրաժեշտ է և արդիական:

Армен САФАРЯН, Фирдус БАГДАСАРЯН
Государственное антикризисное поселение РА в условиях коронавируса

Ключевые слова. коронавирус, эпидемия, кризис, антикризисная политика, экономическая активность

Сегодня Армения переживает экономический кризис из-за коронавируса. Наряду с кризисом системы здравоохранения, новая война в Арцахе и нестабильность последующей политической системы создают серьезные препятствия для антикризисного урегулирования на пути к выходу из экономического кризиса. Достичь дальнейшего экономического прогресса можно за счет стабильности политической системы, обеспечения безопасности и применения серьезных и целенаправленных антикризисных мер. И в этом контексте показатели эпидемии и формирование политической стабильности в результате внеочередных парламентских выборов могут создать новые возможности для реализации антикризисных мер.

Armen SAFARYAN, Firdus BAGHDASARYAN
State anti-crisis regulation of RA in conditions of coronavirus

Keywords. Coronavirus, epidemic, crisis, anti-crisis policy, economic activity

Today, the Republic of Armenia is experiencing an economic crisis due to the coronavirus. Along with the crisis of the healthcare system, the new war in Artsakh and the instability of the subsequent political system create serious obstacles to the anti-crisis settlement on the way to overcoming the economic crisis. It is possible to achieve further economic progress by ensuring the stability of the political system, ensuring security, and applying serious and targeted anti-crisis measures. And in this context, the indicators of the epidemic and the formation of political stability as a result of the extraordinary parliamentary elections, in general, can create new opportunities for the implementation of anti-crisis measures. Therefore, a comprehensive study of the current situation in Armenia is necessary and urgent.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Ֆիրդուս ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀՊՏՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի ասպիրանտ

Բանալի բառեր. ճգնաժամ, հակաճգնաժամային քաղաքականություն, պետական կարգավորում

Ներածություն

Ժամանակակից աշխարհում գիտատեխնիկական բուռն նվաճումների և համաշխարհային տնտեսությունում պետությունների ավելի սերտ և խորացող տնտեսական կապերի ազդեցության պայմաններում հրատապ մարտահրավերներից է առաջացած անկայուն կամ ճգնաժամային իրավիճակների հաղթահարումը: Ներկայումս կորոնավիրուսով պայմանավորված համավարակը այդպիսի մարտահրավեր է նետել համաշխարհային տնտեսությանը և նրա պետություններին (ՀՀ դեպքում նաև Արցախյան 44-օրյա պատերազմը): Սա բոլոր երկրների հակաճգնաժամային քաղաքականության կարևորության և արդյունավետության գնահատման կարևոր փուլերից մեկն է, և պետության կողմից ճգնաժամի պատճառների խորքային ուսումնասիրությամբ և դրան համապատասխան արդյունավետ հակաճգնաժամային միջոցառումների իրականացմամբ է պայմանավորված հետագա տնտեսական առաջընթացը: Ուստի ներկա պայմաններում պետությունների տնտեսական քաղաքականության բնույթը և դրա հետագա ուղղությունների ընտրության գործընթացը մեծապես կախված է իրականացվող հակաճգնաժամային կարգավորման արդյունքներից: Հոդվածի հիմքում ճգնաժամերի և հակաճգնաժամային կարգավորման էության ներկայացումն ու կարևորության ընդգծումն է հետագա տնտեսական առաջընթաց ապահովելու տեսանկյունից:

Մեթոդաբանությունը

Հետազոտության կատարման տեղեկատվական հիմք են հանդիսացել հայրենական և արտասահմանյան մի քանի հեղինակների աշխատությունները: Հետազոտության ընթացքում կիրառվել են տվյալների հավաքագրման և խմբավորման մեթոդները՝ օգտագործելով մասնագիտական տարբեր աղբյուրներում ամփոփված տեղեկատվությունը: Հոդվածում ներկայացված են ճգնաժամերի և պետական հակաճգնաժամային կարգավորման վերաբերյալ

տեսական բնույթի վերլուծություն, որը որոշակի հիմք կհանդիսանա հետագա հողվածներում գործնական բնույթի վերլուծություններ իրականացնելիս:

Գրականության ակնարկ

«Ճգնաժամ» բառը լատիներեն «crisis» բառի թարգմանությունն է, որը փոխառվել է հունարեն «krisis» (բառացիորոն՝ որոշում) բառից, և լատիներենում բառացիորեն նշանակում է «անցումային կամ կրիտիկական կետ»¹: Առհասարակ, ցանկացած համակարգ (ոչ միայն տնտեսականը) իր գոյության որոշակի փուլում հայտնվում է այնպիսի իրավիճակներում (անցումային), որոնք կարող են հանգեցնել նրա բնականոն գործունեության խաթարմանը, և որի արդյունքում այն կամ կարող է փլուզվել, կամ, վերապրելով ճգնաժամը, շարունակել իր գոյատևման և նոր որակով զարգացման ընթացքը:

Տնտեսական ճգնաժամը հասարակական արտադրության չափերի և տնտեսավարող սուբյեկտների վճարունակ պահանջարկների մեծության բռնի համապատասխանեցման շուկայական մեխանիզմ է: Դա տնտեսության գերարտադրության վիճակ է, որը խորապես ցնցում է ամբողջ տնտեսական համակարգը թե՛ հորիզոնական, և թե՛ ուղղահայաց՝ վերևից ներքև²: Տնտեսական ճգնաժամն իրենից ներկայացնում է սոցիալ-տնտեսական համակարգում հակասությունների ծայրաստիճան սրացում, որը սպառնալիքներ է ստեղծում արտաքին միջավայրում դրա կենսագործունեության համար³:

Տնտեսական ճգնաժամը երկրի տնտեսական իրավիճակի կտրուկ վատթարացումն է, որն ի հայտ է գալիս արտադրության զգալի անկմամբ, ստեղծված արտադրական կապերի խաթարմամբ, ընկերությունների զանգվածային սնանկացմամբ, գործազրկության աճով և որպես նշվածների տրամաբանական հետևանք՝ կյանքի կենսամակարդակի և բարեկեցության անկմամբ⁴: Ընդհանրացնելով վերոգրյալը՝ կարող ենք եզրակացնել, որ տնտեսական ճգնաժամերը տարբեր գործոնների ազդեցությամբ ամբողջական պահանջարկի կամ ամբողջական առաջարկի միջև ձևավորված հավասարա-

¹ Օքսֆորդի բառարան՝ www.oxfordlearnersdictionaries.com

² Տնտեսագիտության տեսություն, խմբ. Գ. Կիրակոսյանի և Ի. Խլիլայանի, Եր., «Տնտեսագետ», 2007, էջ 601-603:

³ Эндрю Абель, Бен Бернанке - Макроэкономика. - М.: Питер. 2008. - с. 111

⁴ Экономика: Учебник /Под ред. А.И. Архипова, А.Н. Нестеренко, А.К. Большакова. - М.: «ПРОСПЕКТ», 1999 – 800с.

կշռության խախտման դեպքերն են: Վերջին 150 տարիների ընթացքում Եվրասիայում և Ամերիկայում ընդհանուր առմամբ գրանցվել են 20 տնտեսական խոշոր ճգնաժամ: Դրանցից հիշարժան են հատկապես 1825թ. Անգլիայում սկիզբ առած ճգնաժամը, որը համարվում է նաև առաջին միջազգային բնույթի ճգնաժամը, ԱՄՆ-ում երկաթուղային ընկերությունների սնանկացման պատճառով 1857թ. սկսված ճգնաժամը, Ավստրիայում և Գերմանիայում 1873թ. ծագած ճգնաժամը, Առաջին համաշխարհային պատերազմի հետ կապված ճգնաժամը (1914թ.), Ամերիկյան Մեծ ճգնաժամը (1929-1933թթ.), Մեքսիկայի (1994-1995թթ.), Հարավարևելյան Ասիայի երկրների (1997-1998թթ.) ֆինանսական ճգնաժամերը, Ռուսաստանի պարտատոմսերի շուկայի անվճարունակությունը հետևանքով առաջացած ճգնաժամը (1998թ.), 2007-2009թթ. գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամը և 2020թ. կորոնավիրուսային հիվանդության համավարակի ազդեցությամբ սկիզբ առած ճգնաժամը, որը դեռևս շարունակվում է և հետևանքները հստակ գնահատելը դեռևս բարդ է: Վերոնշյալները, ինչպես նաև համաշխարհային տնտեսական ցնցումների պատմությունը վկայում են, որ հնարավոր չէ ճիշտ կանխատեսել, առավել ևս՝ խուսափել, այսպես կոչված, համընդհանուր «կոլապսներից»: Ուստի, անհրաժեշտ է, որ մարդկությունը դասեր և օգուտներ քաղի, ճգնաժամային երևույթներն ինչ-որ առումով հնարավորություններ են ստեղծում հետճգնաժամային զարգացումների համար: Եվ պատահական չէ, որ Աբել Ադանբեկյանն իր «Ճգնաժամ, աղետ և շանս Ռուսաստանի համար» (2009թ.) մենագրության մեջ նշում է, որ ֆինանսատնտեսական ներկա համաշխարհային ճգնաժամը ողջ աշխարհի և առանձին երկրների համար իսկապես աղետ է՝ համոզված լինելով, որ ճգնաժամը կունենա նաև դրական հետևյալներ և երկրի կայուն զարգացման երկարաժամկետ ռազմավարության ընդունմամբ ու իրականացմամբ Ռուսաստանի ժողովրդին կհասցնի համաշխարհային քաղաքակրթության բարձունքներին, որի իրականացման գործընթացում հեղինակը կարևորում ու արժևորում է գիտության աճող դերը¹: Հեղինակը նշում է, որ գրքի այս անունն ինքը փոխառել է չինարենից, և այս կապակցությամբ Ջոն Ֆիցջերալդ Քենեդին նշել է. «Ճգնաժամ բառը՝ չինարեն գրված, բաղկացած է երկու հիերոգլիֆներից, առաջինի իմաստն աղետն

¹Аганбегян Абел, Кризис: беда и шанс для России, 2009 www.litmir.me/br/?b=105320&p=51

է, իսկ երկրորդին՝ բարենպաստ հնարավորություն: Ճգնաժամում զգուշացեք վտանգներից և աղետներից, բայց տեսեք նաև հնարավորությունները¹»:

Վերլուծություն

Ճգնաժամերը տնտեսական հարաբերություններում երկակի բնույթ ունեն. մի կողմից դրանք առաջացնում են այնպիսի բացասական երևույթներ, ինչպիսիք են համաշխարհային ՀՆԱ-ի, միջազգային առևտրի ծավալների կրճատումը, ֆոնդային ու ֆինանսական շուկաների անկայունությունը, տարբեր երկրների տնտեսությունների մրցունակության անկումը և ՀՆԱ-ի կրճատումը, զանգվածային գործազրկությունը, կենսամակարդակի և բարեկեցության անկումը, իսկ առանձին կազմակերպություններում առաջացող ճգնաժամերը կարող են հանգեցնել շահույթի ծավալների կրճատմանը, նույնիսկ սնանկացման: Մյուս կողմից, ճգնաժամերը հնարավորություն են ընձեռում բացահայտել տնտեսական համակարգում առկա թերությունները, շտկել դրանք, իսկ ճգնաժամը վերապրած կազմակերպություններն էլ արդյունքում դառնում են առավել կենսունակ և կարողանում են արագ հարմարվել արտաքին միջավայրի փոփոխություններին: Այս ամենի հետ մեկտեղ, ճգնաժամերը պրոգրեսիվ են և ունեն երեք կարևորագույն գործառույթ.

➤ *Ապակառուցողական գործառույթ.* գերակայող, բայց արդեն իրենց պոտենցիալը կորցրած տարրերի թուլացում և օտարում տվյալ համակարգից:

➤ *Սրտեղծագործական գործառույթ.* նոր համակարգի դեռևս թույլ տարրերի համար ուղու հարթում:

➤ *Ժառանգականության գործառույթ.* տվյալ համակարգի այն տարրերի կայունության ստուգումը, որոնք կուտակվում են, հավաքվում են, և ժառանգաբար փոխանցվում են ապագա համակարգին:

Հետևաբար ճգնաժամը ողջ դժվարության հետ միասին զարգացման անհրաժեշտ տարր է: Ճգնաժամերն իրենց զարգացման ընթացքում ապրում են մի քանի փուլեր².

➤ *Հատկանշալի փուլի շրջան,* երբ նրա նախահիմքերը ձևավորվում են, բայց դեռևս արտաքին աշխարհում չկան. այդ փուլը համընկնում է հեռացող

¹ «Քննադատական վերլուծությունը անհրաժեշտ է» www.changefactory.com.au

² Պետական հակաճգնաժամային քաղաքականության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները / Կ. Սարգսյան. Եր.: «Գիտություն» 2016, էջ 18-19

պարբերաշրջանի կայուն զարգացման ավարտուն մասի հետ և նրա հիքմերի վրա հաջորդող պարբերաշրջանի զարգացման միջև:

➤ *Փլուզման, պայթյունի փուլ.* բոլոր հակասությունների արագընթաց սրում, քանակապես գերակայող գործոնների դինամիկայի կտրուկ վատթարացում: Այդ շրջանում ուժ են ձեռք բերում, բացահայտ հայտնվում են և պայքարի մեջ են մտնում հաջորդ համակարգի տարրերը, որոնք ներկայացնում են ապագան: Խախտվում է կայունությունը և մեծանում է նոր համակարգի զարգացման այլընտրանքային տարբերակների քանակները:

➤ *Ճգնաժամի մեղմացման շրջան,* նախահիմքերի ստեղծում նրա կանխարգելման համար, անցումը դեպրեսիայի փուլին, որն ապահովում է ժամանակավոր կայունություն իր ուժը կորցրած հին համակարգի և նոր ձևավորվողի միջև:

Տնտեսական հարաբերություններում տեղի ունեցող ճգնաժամերը կարելի է դասակարգել մի քանի հատկանիշերով¹, այդ թվում՝

➤ ըստ պարբերականության՝ պարբերական և ոչ պարբերական, Պարբերական ճգնաժամերը տնտեսական պարբերաշրջանի բաղկացուցիչ տարր են և ըստ էության՝ տնտեսական կյանքի անբաժանելի մասն են կազմում, իսկ ոչ պարբերական ճգնաժամերը կարող են դրսևորվել տնտեսական պարբերաշրջանի ցանկացած փուլում՝ պայմանավորված տարբեր պատճառներով՝ բնական աղետներ, տեխնաժիհն աղետներ, քաղաքական դրդապատճառներ, պատերազմներ, համաճարակներ, ահաբեկչական գործողություններ, ԳՏԱ, էներգակիրների գների տատանումներ եւ այլն:

➤ ըստ ընդգրկման ծավալների՝ համաշխարհային, տարածաշրջանային, մեկ երկրի տնտեսություն ընդգրկող, ճյուղային, մեկ կազմակերպության շրջանակներում,

➤ ըստ տևողության՝ սեզոնային, կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ,

➤ ըստ տնտեսության տարբեր հատվածների ընդգրկվածության՝ տընտեսական, սոցիալական, ֆինանսական, սոցիալ-տնտեսական

➤ ըստ տնտեսության իրական հատվածի տարբեր ոլորտների ընդգրկվածության՝ ճյուղային, միջճյուղային և համընդհանուր

¹ Տնտեսական ճգնաժամերի առաջացման պատճառներին, տեսակներին և գործնական դրսևորումներին ավելի մանրամասն կանդրադառնանք հաջորդ հոդվածներում:

➤ ըստ հաղթահարման հնարավորությունների և ձևերի՝ ներքին ռեսուրսներով հաղթահարվող, արտաքին ռեսուրսներով հաղթահարվող և անհաղթահարելի

- ըստ արտահայտման բնույթի և ազդեցության՝ մեղմ և ուժգին
- և այլն:

Ճգնաժամային երևույթները հատուկ են տնտեսական համակարգի բոլոր սուբյեկտների գործունեությանը: Այսպես, տարբեր կազմակերպությունների գործունեությունը դիտարկելիս կտեսնենք, որ կազմակերպությունը գործունեության որոշակի փուլում հանդիպում է բացասական երևույթների կուտակումների, ինչն էլ ժամանակի ընթացքում կազմակերպությանը կարող է կանգնեցնել ճգնաժամի առջև:

Տարբերում են կազմակերպությունների ճգնաժամերի 4 տեսակ.

➤ *Իրացման ճգնաժամ*, երբ կազմակերպությունը չի կարողանում իրացնել իր արտադրանքը անվնասաբերության կետին հասնելու համար անհրաժեշտ ծավալներով

➤ *Ծախսերի ճգնաժամ*, երբ արտադրանքի ինքնարժեքը հին տեխնոլոգիական գործընթացներով, աշխատանքի ցածր արտադրողականությամբ և այլ գործոններով պայմանավորված բարձր է միջին շուկայական գնից:

➤ *Ֆինանսական ճգնաժամ*, երբ կազմակերպությունը չունի անհրաժեշտ ֆինանսական միջոցներ՝ հարկերի, աշխատավարձի և այլ ծախսերի կատարման դիմաց վճարման համար:

➤ *Մարդկային ռեսուրսների կառավարման ճգնաժամ*, որի դեպքում կազմակերպությունն ունի բարձր որակավորմամբ անձնակազմի պակաս: Սրա պատճառն այն է, որ ճգնաժամի առաջացման ժամանակ կազմակերպությունն առաջին հերթին լքում են բարձր որակավորում ունեցող կադրերը, ովքեր յուրահատուկ տեղ ունեն:

Ճգնաժամին նախորդում է լճացման փուլը: Այս փուլից հետո կազմակերպության գործունեությունը կարող է ընթանալ երկու հնարավոր տարբերակներով՝ կա՛մ կազմակերպությունը կձեռնարկի անհրաժեշտ գործողություններ և դուրս կգա ճգնաժամից՝ հաղթահարելով այն, կա՛մ կդադարեցնի իր գործունեությունը և դուրս կգա շուկայից: Դա, իհարկե, պայմանավորված է կազմակերպության հակաճգնաժամային կառավարման արդյունավետու-

թյունից: Ճգնաժամերը հատուկ են նաև պետական կառավարման համակարգերին: Համակարգային ճգնաժամը հասարակության քաղաքական համակարգի, պետական իշխանության մարմիններին յուրահատուկ իրավիճակ է, որն ուղեկցվում է անկայունությամբ, սոցիալ-տնտեսական գործընթացների կառավարելիության անկմամբ, քաղաքական ինստիտուտների անկայունությամբ, քաղաքական տարաձայնությունների ու հասարակության ներսում հակասությունների սրմամբ և մի շարք այլ բացասական գործընթացներով¹:

Այսպիսով, ճգնաժամերը համարվում են սոցիալ-տնտեսական համակարգերի զարգացման գործընթացի անբաժան մասը և այդ համակարգերի կառավարման արդյունավետությունը մեծապես կախված է դրանց ճգնաժամային իրավիճակները պետության կողմից արդյունավետ կառավարելու կարողությունից, կամ այլ կերպ ասած՝ պետական հակաճգնաժամային քաղաքականությունից:

Հակաճգնաժամային եզրն հաճախ օգտագործվում է բնորոշելու կառավարչական գործունեությունը, որն ուղղված է համակարգի կայունության ապահովմանը ճգնաժամային իրավիճակներում կամ բնականոն գործունեության վերականգնմանը և հետևանքների վերացմանը:

Հակաճգնաժամային կարգավորումն իրենից ներկայացնում է պետական կառավարման ձևերի, մեթոդների և գործիքակազմի մի համակարգ, որն ուղղված է տնտեսության մեջ ճգնաժամային երևույթների ու զարգացումների վերլուծությանը և կանխատեսմանը, ճգնաժամերի բացասական ազդեցությունների մեղմմանը, հիշյալ ոլորտում առկա փորձի ներկայացմանը, կատարելագործմանը և դրա հետագա կիրառմանը: Այն իր մեջ ներառում է պետության և հասարակության զարգացման ռազմավարության մշակման ու իրականացման ոլորտում պետական նպատակաուղղված քաղաքականությունը, որը միտված է ճգնաժամային երևույթների հաղթահարմանը և տնտեսական համակարգի հավասարակշռության հաստատմանը²:

¹ <http://www.kargavorum.nkr.am/static/2796>

² Պետական հակաճգնաժամային քաղաքականության միջազգային փորձը և դրա վերլուծությունը /

Վ. Հարությունյան, Կ. Սարգսյան: Եր.: «Գիտություն» հրատ., 2015, 176 էջ: էջ 10

Հակաճգնաժամային կառավարումը կարելի է բնորոշել որպես երեք բաղկացուցիչ տարրերի ամբողջություն՝

➤ **նախաճգնաժամային կառավարում**, երբ իրականացվող գործընթացներն ուղղված են ճգնաժամերի առաջացման կանխմանը, այսինքն՝ ներառում են կանխարգելիչ գործողությունների համախումբ, որոնք ուղղված են ճգնաժամային երևույթների առաջացման հավանականության նվազեցմանը կամ կանխարգելմանը:

➤ **ճգնաժամային կառավարում**, որը արդեն իսկ տեղ գտած ճգնաժամի պայմաններում՝ դրա առաջացման պատճառների և տարատեսակ դրսևորումների դեմ իրականացվող գործընթացն է:

➤ **հետճգնաժամային կառավարում**, որը ենթադրում է գործողությունների ամբողջություն, որոնք ուղղված են համակարգի նորմալ կենսագործունեության վերականգնմանը և զարգացման ապահովմանը:

Հակաճգնաժամային միջոցառումները բազմազան են ու տարաբնույթ, սակայն ընդհանրական է նպատակը՝ նվազագույն կորուստներով ապահովել տնտեսական կայունություն՝ հիմք նախապատրաստելով զարգացման համար: Այդուհանդերձ, կարելի է պայմանականորեն հակաճգնաժամային միջոցառումները ներկայացնել 3 խոշոր խմբերով.

1. **Ազգային տնտեսության աջակցությանն ու խթանմանն ուղղված միջոցառումների ամբողջություն:** Այս առումով առաջին հերթին կարևորվում են ֆինանսական միջոցառումները բանկային համակարգի և ձեռնարկությունների ռեկապիտալիզացիա (կապիտալի վերակառուցում) կազմակերպելու համար:

2. **Ճգնաժամի սոցիալական հետևանքների դեմ միտված միջոցառումների ամբողջություն**, որոնք սովորաբար դրական արձագանք են առաջացնում: Այդպիսի միջոցառումների թվին կարելի է դասել պետական տարատեսակ ֆինանսական օգնությունները, սուբսիդիաները, հարկերի կրճատումը, և այլն:

3. **Միջոցառումներ, որոնք միտված են ստեղծելու հետճգնաժամային պայմաններ՝** ենթակառուցվածքների ստեղծում (բարելավում), էներգախնայող տեխնոլոգիաների ստեղծում, բնապահպանական անվտանգ միջավայրի ստեղծում, կրթության, գիտության բնագավառների ֆինանսավորում:

Առանձնացվում են պետական հակաճգնաժամային կարգավորման հետևյալ կոնկրետ ձևերը.

➤ Նորմատիվափրավական կարգավորում, որն արտահայտվում է անհրաժեշտ օրենսդրական բազայի ստեղծմամբ՝ հակաճգնաժամային միջոցառումները իրականացնելու համար:

➤ Ֆինանսական կարգավորում, որն ընդգրկում է պետության ֆինանսական լծակների և ռեսուրսների կենտրոնացումն ու մանիպուլյացիան՝ ճրգնաժամների հաղթահարման ուղղությամբ: Այն իր մեջ ներառում է հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների գործիքակազմը.

Հարկաբյուջետային քաղաքականության հիմնական խնդիրները	Դրամավարկային քաղաքականության հիմնական խնդիրներ
տնտեսության կառավարելիության ապահովումը	ազգային արժույթի փոխարժեքի կայունացումը
տնտեսության զարգացվածության համաչափության ապահովումը	ինֆլյացիայի տեմպերի վերահսկումը
տնտեսության կառուցվածքային փոփոխությունները	ֆինանսական համակարգի կայունացումը
եկամուտների արդյունավետ վերաբաշխումը	ֆինանսական համակարգի իրացվելիության ապահովումը
բնակչության սոցիալական նվազագույն պահանջմունքների բավարարումը, սոցիալական լարվածության թուլացումը և այլն	տնտեսության առաջնահերթ ռազմավարական ճյուղերին ֆինանսական ռեսուրսների հասանելիության ապահովումը և այլն

➤ Արդյունաբերական կարգավորում: Այն իր մեջ ներառում է արդյունաբերության գերակա զարգացման ուղղությունների պլանավորումը և անհրաժեշտ միջոցառումների համալիրի մշակումը այդ ոլորտների արագ զարգացման և մրցունակության ապահովման ուղղությամբ:

➤ Տնտեսության մեջ սպասումների ձևավորմանն ուղղված կարգավորում, որն իրենից ներկայացնում է յուրօրինակ կարգավորիչ քաղաքականություն՝ արտահայտվելով, հիմնականում, պետական տարբեր կառույցների պատասխանատուների, մասնավորապես, կառավարության, նախարարությունների, ԿԲ-ի՝ զանգվածային լրատվության միջոցներով և այլ կերպ արվող հայտարարությունները՝ տնտեսական միջավայրում վիճակի կայունացման միտումների և լավատեսական սպասումների վերաբերյալ, ինչն ուղղորդիչ

դեր է կատարում և տնտեսական հարաբերությունների մասնակիցների գործողությունները ուղղորդում է պետության հակաճգնաժամային ծրագրի դրույթներից բխող ցանկալի ուղղությամբ¹:

Անկախ միջոցառումների որոշակի ուղղվածությունից և ձևերից՝ ընդհանրականն այն է, որ տնտեսական ճգնաժամերը հաղթահարելու պետական քաղաքականությունը ուղղվում է ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի կարգավորմանը:²

Եզրակացություններ

Այսպիսով, տնտեսական ճգնաժամերը սոցիալ-տնտեսական համակարգերի զարգացման անհրաժեշտ և անբաժան մասն են: Այդ է վկայում այդ համակարգերի զարգացման պատմությունը: Սակայն ճգնաժամային իրավիճակները կարող են կործանարար լինել այդ համակարգերի համար, եթե չկարգավորվեն պետական հակաճգնաժամային քաղաքականության միջոցով: Ուստի, ճգնաժամերի բնույթի, տեսակների, առաջացման պատճառների խորքային իմացությունը, դրանցից քաղած դասերը հնարավորություն կտան ընտրել ճիշտ, թիրախավորված և արդյունավետ հակաճգնաժամային քաղաքականություն իրականացնելու ուղղություններ և միջոցառումներ: Այս քաղաքականության արդյունքներից են կախված տնտեսական և այլ համակարգերի հետագա զարգացման հնարավորությունները:

¹ Պետական հակաճգնաժամային քաղաքականության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները / Կ. Սարգսյան. - Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016., էջ 138-140

² Տնտեսագիտության տեսություն: Ուսումնական ձեռնարկ / Հ. Աղաջանյան - Եր.: Հեղ. հրատ., 2015. Մաս II 488 էջ - էջ 392-393

Ֆիրդուս ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ

Տնտեսական ճգնաժամերը և պետության հակաճգնաժամային կարգավորումը

Բանալի բառեր. ճգնաժամ, հակաճգնաժամային քաղաքականություն, պետական կարգավորում

Արդի պայմաններում կորոնավիրուսով պայմանավորված համավարակը մարտահրավեր է նետել համաշխարհային տնտեսությանը և ազգային տնտեսություններին՝ կանգնեցնելով տնտեսական ճգնաժամի փաստի առջև: Ուստի ճգնաժամի հաղթահարումը պետական հակաճգնաժամային կարգավորման նոր և արդիական մոտեցումներ է պահանջում, որոնք պետք է հիմնավորված լինեն նախկինում տեղի ունեցած ճգնաժամերի հաղթահարման փորձով: Պետական հակաճգնաժամային կարգավորման գլխավոր նպատակը պետք է լինի պետության և տնտեսության միջև այնպիսի արդյունավետ համակարգի ձևավորումը, որը կապահովի երկրում մակրո և միկրո մակարդակներում առաջացող ճգնաժամերի արագ ու հեշտ հաղթահարումը:

Фирдус БАГДАСАРЯН

Экономические кризисы и антикризисное регулирование государства

Ключевые слова. кризис, антикризисная политика, государственное регулирование

В нынешних условиях эпидемия коронавируса бросила вызов мировой экономике и национальной экономике, столкнувшись с фактом экономического кризиса. Поэтому преодоление кризиса требует новых и современных подходов к государственному антикризисному регулированию, которые должны основываться на опыте преодоления предыдущих кризисов. Основной целью государственного антикризисного урегулирования должно стать создание эффективной системы между государством и экономикой, которая обеспечит быстрое и легкое преодоление кризисов в стране на макро-микроуровне. И в этом контексте очень актуально всестороннее и глубокое изучение сути кризисов.

Firdus BAGHDASARYAN

Economic crises and anti-crisis regulation of government

Key words. crisis, anti-crisis policy, state regulation

In the current context, the coronavirus epidemic has challenged the world economy and national economies, confronting the fact of an economic crisis. Therefore, overcoming the crisis requires new and modern approaches to state anti-crisis regulation, which must be based on the experience of overcoming previous crises. The main goal of the state anti-crisis regulation should be the establishment of an effective system between the state and the economy, which will ensure the rapid and easy overcoming of the crises arising in the country at the macro and micro levels. And in this context, the comprehensive and in-depth study of the essence of crises and effective state anti-crisis regulation is very relevant.

**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Միհրան ՍԻՍԱԿՅԱՆ

ԵՊՀ ՏԿՖ ֆինանսների մասնագիտության ուսանող

Հայկ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ԵՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ, տ. գ. դ., պրոֆեսոր

Բանալի բառեր. արտաքին պետական պարտք, պարտք-ՀՆԱ հարաբերակցություն, երկարաժամկետ ռազմավարական ծրագիր, պարտքային գործակալություն, պետական պարտքի կառավարման գործիքակազմեր

Ներածություն

Հայաստանի 3-րդ Հանրապետությունը կազմավորվել է 1991թ. : Պետության առաջին նշանավոր հաջողություններից էր հաղթանակը Արցախյան պատերազմում: Պատերազմից հետո այդ հաղթանակը ամրագրելու և ապագա սերունդներին դրա արդյունքերը փոխանցելու համար երկիրը պետք է հաղթանակն արդեն տեղափոխեր տնտեսական-քաղաքական դաշտ և փորձեր նորանոր հաղթանակներ տանել արդեն այդ ոլորտում, որը նույնքան ջանք ու նվիրվածություն էր պահանջում, որքան պատերազմում: Առաջնահերթ խնդիրներից էր ֆինանսական միջոցների ներգրավումը տնտեսություն և դրանց արդյունավետ կառավարումը, որպեսզի հնարավոր լիներ զարգացնել շուկայական տնտեսությունը և դիմակայել արդի մարտահրավերներին: Այս պարագայում առաջնային խնդիր էր դառնում պետական պարտքի ներգրավման նպատակայնության և արդյունավետության գնահատումը, դրա համար նախատեսված ճիշտ գործիքակազմերի ընտրությունը:

Պետական պարտքի կառավարումը տնտեսագետների շրջանակում համարվում է լայնորեն տարածված և լուրջ հակասությունների բերող խնդիր: Գլոբալ անկայունության աճի և դրա մշտական սպառնալիքի պայմաններում պետական պարտքի կառավարման էլ ավելի արդյունավետ մեթոդների և գործիքակազմերի ընտրությունը համաշխարհային պրակտիկայում դառնում է բավականին ակտուալ: Ուստի պետական պարտքի կառավարման վերլուծությունը միշտ մնում է տնտեսագետների ուշադրության կենտրոնում:

Պետական պարտքը ֆինանսական համակարգի բաղկացուցիչ մասն է այն մեծաթիվ պետությունների համար, որոնք ունեն ֆինանսական ռեսուրս-

ների մեծ սակավություն: Արտաքին պետական պարտքի չափազանց մեծ ծավալները կառավարությունից պահանջում են մեծ հետևողականություն դրսևորել համաշխարհային ֆինանսական շուկաների իրադարձությունների զարգացմանը, դրանց փոփոխություններին և այնպիսի հանգամանքներին, որոնք կարող են ազդել պետության պարտքային անվտանգության վրա, քանի որ մեծ արտաքին պետական պարտքը երկրին դարձնում է խոցելի արտաքին մարտահրավերների նկատմամբ: Այս հոդվածի նպատակն է, ուսումնասիրելով պետական պարտքի կառավարման տարբեր երկրների փորձը, առաջարկել Հայաստանի Հանրապետության պետական պարտքի կառավարման այնպիսի մոտեցումներ, որոնք հնարավորինս կկայունացնեն տնտեսությունը, թույլ կտան հաղթահարել վերջին իրադարձություններով (պատերազմով և կորոնավիրուսով) պայմանավորված ճգնաժամը, և որ շատ կարևոր է, փոքր պարտքային բեռ կթողնեն ապագա սերունդների համար:

Մեթոդաբանություն

Մեթոդաբանությունը, որը կիրառվել է տվյալ գիտական հոդվածում, հիմնված է տվյալների հավաքագրման, ուսումնասիրման, ինչպես նաև պետական պարտքի կառավարման ոլորտում միջազգային փորձի վերլուծության համատեքստում ստացված արդյունքների հնարավոր կիրառման վրա:

Գրականության ակնարկ

Համաշխարհային պրակտիկայում պարտքային կայունության վերականգնման ամենանատարածված մեթոդներից է հարկաբյուջետային քաղաքականությունը, որն ուղղված է կրճատելու բյուջեի դեֆիցիտը պետական բյուջեի եկամուտների մեծացման և ծախսերի նվազեցման ճանապարհով: ԱՄՀ փորձագետների հետազոտությունների համաձայն՝ պարտքային քաղաքականության հիմնական գործիքները, որոնք կիրառվում են տարբեր երկրներում ճգնաժամերի ժամանակ, կարելի է բաժանել՝

- Նոր արժեթղթերի թողարկում և շուկային առաջարկվող արժեթղթերի կազմի փոփոխություն

- Վարկերի տեղաբաշխման ընթացակարգերի և մեխանիզմների փոփոխություններ

- Բաց շուկայական գործառնություններ¹:

¹ Гиндес Е., “Мировой опыт управления государственным долгом”, 2019, стр.125

Վերոնշյալ գործիքակազմերը համարվում են արդյունավետ ճգնաժամային ժամանակաշրջանում, սակայն ունեն կարճաժամկետ բնույթ: Հաջողության հասնելու գաղտնիքը համարվում է պետական պարտքի կառավարման ավելի բարդ և ավելի կատարյալ մոդելի ստեղծումը: Մասնավորապես՝ այնպիսի երկրներում, ինչպիսիք են Դանիան և Շվեդիան, կիրառվում է արտաքին պետական պարտքի կառավարման առանձնահատուկ մոտեցում, որը կապված է արժեթղթերի պորտֆելի կառավարման փորձի հետ: Այդ մոտեցման գլխավոր խնդիրը համարվում է պարտքի մարման և սպասարկման ծախսերի կրճատումը, որի համար կառուցվում է պարտքային պարտավորությունների պորտֆելի տեսական բազային մոդել՝ ըստ արժույթի, մարման ժամկետների, պարտքի սպասարկման արժեքի, որոշակի երկրի համար օպտիմալ պարտքային վճարումների գրաֆիկի: Այնուհետև խնդիր է դրվում մոտեցնելու փաստացի մոդելը բազային մոդելին պետական պարտքի կառավարման տարբեր գործիքակազմների օգտագործմամբ: Դրա հետ մեկտեղ գնահատվում է համաշխարհային շուկայում վարկային կապիտալի ներկայիս իրավիճակը, երկրի՝ այս կամ այն պարտքային գործիքակազմերը օգտագործելու հնարավորությունները և հրաժարվում են բազային մոդելի որոշակի կետերից: Այդ գործողությունների իրականացման համար ստեղծվում է պետական պարտքի կառավարման գործակալություն, որի կարևոր խնդիրներից մեկն է ընտրել վարկատուների հետ փոխհարաբերությունների բոլոր հնարավոր սխեմաներից ամենալավը, իսկ գլխավոր նպատակն է՝ պետական պարտքի արդյունավետ կառավարումը՝ սպասարկման նվազագույն ծախսերով: Պարտքային գործակալության բարձր որակավորում ունեցող մասնագետները հաշվարկների հիման վրա որոշում են երկրի համար առավել շահավետ վճարումների մարման գրաֆիկները, ֆինանսավորման աղբյուրները, օգտագործվող վճարման միջոցները: Իրականացնում են արտաքին պարտքի կառավարման հնարավոր տարբերակների համեմատական վերլուծություն և առավելագույն արդյունքի հասնելու ու ծախսերի նվազեցման նպատակով պատրաստում են առաջարկություններ տվյալ հավաքածուներից լավագույնի ընտրության վերաբերյալ: Տվյալ գործակալության աշխատակիցների աշխատավարձը կախված է լինում իրենց գործունեության արդյունավետությունից:

Սակայն պարտքային գործակալության ստեղծումը կրում է երկարաժամկետ բնույթ: Միջինում այդ պրոցեսը տևում է 3-6 տարի: Այնուամենայնիվ

վերջին հաշվով այն գրանցել է լավ արդյունքներ այնպիսի երկրներում, ինչպիսիք են Մեծ Բրիտանիան, Գերմանիան, Դանիան, Շվեդիան, Իռլանդիան, Ավստրիան, Վենգրիան և շատ այլ երկրներ: Պետական պարտքի գործակալությունը պետք է համագործակցի Ֆինանսների նախարարության, Էկոնոմիկայի նախարարության և Կենտրոնական Բանկի հետ: Այդպիսի համագործակցությունն իրենից ենթադրում է պետական մարմինների կողմից տեղեկատվության օպերատիվ ստացում և որոշումների համաձայնեցված ընդունում: Միևնույն ժամանակ պետական մարմինների կողմից գործառույթների կրկնօրինակումը բացառելու նպատակով անհրաժեշտ է առանձնացնել պետական պարտքի կառավարման լիազորությունները պետական մարմինների և պարտքային գործակալության միջև՝

- Ֆինանսների նախարարության հիմնական գործառույթները. հարկաբյուջետային քաղաքականության պարամետրերի սահմանում, պլանավորվող բյուջեի ֆինանսավորման համար արտաքին և ներքին պարտքերի պահանջի գնահատում, մասնակցություն՝ պարտքի կառավարման ռազմավարության և տարեկան ծրագրերի մշակման հարցում, վերահսկողություն՝ պարտքային գործակալության նկատմամբ,

- Կենտրոնական բանկի հիմնական գործառույթները. պարտքային և դրամավարկային քաղաքականության համաձայնեցում, ոսկու և արժույթի պաշարների կառուցվածքի ձևավորում, ֆինանսական շուկայի իրավիճակի մոնիտորինգ և այլն,

- Էկոնոմիկայի նախարարության հիմնական գործառույթները. Էկոնոմիկայի նախարարությունը պետք է տա տնտեսական գնահատական այն ծրագրերի արդյունավետության վերաբերյալ, որոնց ֆինանսավորման համար ներգրավվում է պետական պարտք և տրամադրվում են պետական երաշխիքներ,

- Պետական պարտքի գործակալության հիմնական գործառույթները. պարտքային քաղաքականության իրականացման արդյունքում ստեղծված ռիսկերի վերլուծություն և գնահատում, ինչպես նաև դրանց հեջավորման վերաբերյալ առաջարկությունների մշակում: Պետական և պետության կողմից երաշխավորված պարտքային պարտավորությունների սպասարկման և մարման գործառույթների իրականացում, պարտքային պարտավորությունների կառավարման սխեմաների մշակում, պարտքային պորտֆելի օպտիմալ կառուցվածքի ձևավորում՝ ըստ ժամկետների, տոկոսադրույքների և արժույթի

տեսակների, համաշխարհային շուկայի միտումների մոնիտորինգ, պարտքային բեռի տարբերակների հաշվարկում՝ կախված տնտեսության զարգացման սցենարներից և այլն:¹

Վերլուծություն

ՀՀ պետական պարտքը դարձել է բուռն քննարկումների առարկա և լուրջ մտահոգությունների տեղիք է տալիս: Պատճառն այն է, որ 2008-2020թթ. բացարձակ մեծությամբ այն ավելի քան 4 անգամ աճել է՝ 1906,0 միլիոն ԱՄՆ դոլարից դառնալով 7968,5 միլիոն ԱՄՆ դոլար, իսկ ՀՆԱ-ի հետ հարաբերական մեծությամբ՝ 16,4%-ից աճել է 67,3% (Գծապատկեր 1)՝ արդեն իսկ գերազանցելով պետական պարտքի մասին ՀՀ օրենքում սահմանված 5-րդ հոդվածի վեց և յոթ կետերը, որոնցով ասվում է՝


«6. Պետական պարտքը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ չպետք է գերազանցի Հայաստանի Հանրապետության նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի 60 տոկոսը:

7. Եթե պետական պարտքը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ գերազանցում է Հայաստանի Հանրապետության նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի 50 տոկոսը, ապա հաջորդ տարվա պետական բյուջեի դեֆիցիտը չպետք է գերազանցի Հայաստանի Հանրապետության համախառն ներքին արդյունքի վերջին երեք տարիների ծավալների միջին ցուցանիշի 3 տոկոսը»:²

ՀՀ պետական պարտքի դինամիկան ներկայացված է ստորև բերված գծապատկերում՝

¹ Попкова А.С., “Мировой опыт функционирования агентств по управлению государственным долгом”, стр.17

² ՀՀ օրենքը պետական պարտքի մասին, ՀՀՊՏ 2008.06.25/39(629) Հոդ.627, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=49156>



Գծապատկեր 1. ՀՀ պետական պարտք-ՀՆԱ հարաբերակցության դինամիկան (տվյալների գնահատման աղբյուր են հանդիսացել ՀՀ վիճակագրական կոմիտեի¹ եվ ՀՀ ֆինանսների նախարարության² կողմից հրապարակված ցուցանիշները)

Իսկ 2021թ. ապրիլ ամսվա դրությամբ պետական պարտքը աճել է շուրջ 10 տոկոսով՝ 7968,5 մլն ԱՄՆ դոլարից դառնալով 8772,8 մլն ԱՄՆ դոլար:³

Պետական պարտքի նմանատիպ աճը ունի իր պատճառները. 2020թ. կորոնավիրուսային համավարակը, որը չափազանց մեծ ազդեցություն ունեցավ համաշխարհային տնտեսության վրա, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դեմ Ադրբեջանի կողմից սանձազերծված 44-օրյա պատերազմը: Չնայած որ վերոնշյալ պատճառների դեպքում օրենսդրորեն թույլատրվում է պետական պարտքի լրացուցիչ ներգրավումը, այնուամենայնիվ երկիրը կանգնած է մեծ ճգնաժամի առջև: Պետական պարտքի մեծությունը պակաս մտահոգիչ կլիներ, եթե չուղեկցվեր նախկինում ներգրավված պարտքի համեմատ վերջին տարիներին ներգրավված պարտքի պայմանների վատթարացմամբ, ինչը մեծացրել է ՀՀ պետական բյուջեի և տնտեսության բեռը⁴:


¹ ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՆԱ, 2021, www.armstat.am/am/?nid=12&id=01001

² ՀՀ ՖՆ, Պետական պարտքի հաշվետվություններ, 2020թ, <https://minfin.am>

³ ՀՀ ՖՆ, ՀՀ պետական պարտքի ամսական վիճակագրական տեղեկագրեր, 2021թթ ապրիլ, https://minfin.am/hy/page/amsakan_vichakagrakan_teghekagrer/

⁴ Արտակ Բյուրումյան, «ՀՀ պետական պարտքի ազդեցությունը տնտեսության և պետական բյուջեի վրա», 2016, էջ 3

Միաժամանակ նվազել են տնտեսական աճի տեմպերը: Պետական պարտքով պայմանավորված վճարումներն արդեն իսկ ծանր բեռ են հանդիսանում պետական բյուջեի համար: Տնտեսական աճը նոր պարտքերի օգնությամբ խթանելու փորձերը կարող են վտանգել հարկաբյուջետային և պարտքային կայունությանը: Պետական պարտքի դիմաց տոկոսավճարները թռիչքաձև աճում են խոշոր ծավալներով միջոցներ ներգրավելուց հետո: Մասնավորապես՝ պետական պարտքի գծով տոկոսավճարներն այժմ կլանում են պետական եկամուտների ավելի քան 10 տոկոսը՝ 2007-2008թթ. 1,9-2 տոկոսի համեմատ: Հատկանշական է ուսումնասիրել նաև ՀՀ արտաքին և ներքին պարտքի հարաբերակցության դինամիկան, որը բնորոշում է տվյալ երկրի արտաքին ֆինանսավորումից կախվածության աստիճանը (Գծապատկեր 2):



Գծապատկեր 2. ՀՀ արտաքին և ներքին պարտքի հարաբերակցության դինամիկան¹

Այստեղ դրական միտում է նկատվում, քանի որ համախառն պարտքի մեջ ներքին պարտքին բաժին ընկնող մասը մեծանում է: Սակայն կա նաև խնդրի հակառակ կողմը. որքան մեծ է ներքին պարտքի մեծությունը, այնքան ավելի շատ է խնայողությունների մակարդակը, և այն պոտենցիալ գումարները, որոնք կարող էին ներդրվել տարբեր ծրագրերում, կամա թե ակամա ներ են դրվում, օրինակ, պետական պարտատոմսերում: Խոսելով պետական պարտքի կառավարման արդյունավետության մասին՝ նախ և առաջ անհրաժեշտ է հասկանալ՝ որքանով է արդյոք յուրաքանչյուր ներգրավված պարտք համա-

¹ ՀՀ ՖՆ, Պետական պարտքի հաշվետվություններ, 2020թ, <https://minfin.am>

պատասխանում տվյալ պետության երկարաժամկետ ռազմավարական ծրագրին: Հայաստանը չունի հստակ ամրագրված երկարաժամկետ ռազմավարություն, ուստի տալ մեկնաբանություններ, թե որքանով է որոշակի ներգրավված պարտք եղել արդյունավետ տնտեսության համար, սխալ կլինի: Աշխարհի գրեթե բոլոր երկրները շուկայական վերափոխումներ իրականացնելիս ներգրավում են արտաքին և ներքին պարտքեր: Բարձր մուլտիպլիկատիվ էֆեկտ ունեցող ծրագրերի վրա պարտքային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը հանգեցնում է տնտեսական աճի տեմպերի բարձրացման, ձևավորվում են նախընտրելի ներդրումային օբյեկտներ, լուծվում են սոցիալ-տնտեսական խնդիրներ: Իսկ դրանց ոչ արդյունավետ օգտագործման դեպքում տեղի է ունենում պարտքային բեռի աճ, որը կհանգեցնի բյուջեի լրացուցիչ ծախսերի, պետական ծախսերի կրճատման, ազգային արժույթի վրա ճնշման և լարվածության՝ դրամավարկային ոլորտում: Հենց այս պատճառով է, որ երկարաժամկետ ռազմավարական ծրագիրը ունի չափազանց մեծ կարևորություն պետության զարգացման համար:

Եզրակացություններ

Տվյալ ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ պետական պարտքի կառավարման մոտեցումները առանձնահատուկ են տարբեր երկրների համար, այսինքն՝ մի երկրի պետական պարտքի կառավարման մեխանիզմների արդյունավետ լինելը անպայմանորեն արդյունավետ չի կարող լինել այլ երկրի համար: Հետևաբար, առաջնահերթ խնդիր է մանրակրկիտ ուսումնասիրել տվյալ երկրի ինստիտուցիոնալ առանձնահատկությունները, հասկանալ տնտեսության բնականոն զարգացմանը խոչընդոտող գլխավոր պատճառները, գնահատել տվյալ երկրի տնտեսական պոտենցիալը, այնուհետև կազմել երկարաժամկետ ռազմավարական ծրագիր, և բացառապես առաջնորդվել դրանով: Երկարաժամկետ ծրագրերի իրագործումը ստեղծում է վստահության և որոշակիության մթնոլորտ նաև միկրո մակարդակում: Որքան քիչ անորոշություններ կան ներդնողի համար, այնքան նա ավելի շահագրգիռ է լինում ներդնելու:

Պետությունն առաջնապես պետք է հակված լինի կառուցվածքային խնդիրների լուծմանը, այլ ոչ թե կարճաժամկետ միջոցառումների իրականացմանը: Պարտքային ռազմավարությունների ձևավորումը պետք է հնարավորինս համապատասխանի տվյալ երկրի կառուցվածքային առանձնահատ-

կույթյուններին: ՀՀ կառավարությունը պետք է ձեռնպահ մնա առանց կոնկրետ ծրագրերի խոշոր ծավալներով նոր պարտք ներգրավելուց: Պարտքի տոկոսավճարներն արդեն մեծ ծավալով ռեսուրսներ են կլանում պետական բյուջեից: Յուրաքանչյուր խոշորածավալ նոր պարտք կմեծացնի այդ բեռը:

Առաջարկվում է նաև Հայաստանի Հանրապետությունում ստեղծել պետական պարտքի գործակալություն: Պետական պարտքի կառավարման ոլորտում համաշխարհային փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ մի շարք առաջատար պետություններ, որոնք ստեղծել են պետական պարտքի գործակալություններ, գրանցել են դրական արդյունքներ այդ բնագավառում: Այդպիսի գործակալության ստեղծման համար անհրաժեշտ է համապատասխան նորմատիվային իրավական բազայի մշակում, փոխառությունների վերաբերյալ միասնական բազայի ձևավորում, որը կապահովի մուտք դեպի տվյալների բազա պետական մարմինների, միջազգային տեղեկատվական գործակալությունների և ֆինանսական կազմակերպությունների համար, ինչպես նաև կադրերի պատրաստում և վերապատրաստում:

Պարտքային գործակալության արդյունավետությունը շատ դեպքերում կախված է անձնակազմի որակավորումից, պետական պարտքի կառուցվածքից և պարտքային բեռի փոփոխման վրա գործակալության աշխատակիցների ազդեցության աստիճանից: Ինչպես նաև արդյունավետության հասնելու համար գործակալությունը պետք է ունենա ինքնուրույնության որոշակի աստիճան և միևնույն ժամանակ ակտիվորեն համագործակցի պետական մարմինների հետ:

Գրականության ցանկ

1. «ՀՀ պետական պարտքի ազդեցությունը տնտեսության և պետական բյուջեի վրա» Արտակ Քյուրումյան 2016
2. “Мировой опыт управления государственным долгом” 2019 (Гиндес Елена Григорьевна)
3. “Мировой опыт функционирования агентств по управлению государственным долгом” Попкова А.С.
4. “Государственный долг Японии: анализ особенностей и оценка перспектив”, Р.Б. Ноздрева 2019
5. “Внешний долг Беларуси: опыт постсоциалистических стран” Глеб Шиманович
6. “Руководящие принципы управления государственным долгом” Подготовлен сотрудниками Международного Валютного Фонда и Всемирного банка

Մհիրան ՍԻՍԱԿՅԱՆ, Հայկ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՀՀ պետական պարտքի կառավարման որոշ խնդիրները միջազգային փորձի վերլուծության համատեքստում

Բանալի բառեր. արտաքին պետական պարտք, պարտք-ՀՆԱ հարաբերակցություն, երկարաժամկետ որակավարական ծրագիր, պարտքային գործակալություն,

ՀՀ տնտեսությունը կանգնած է լուրջ ճգնաժամի առջև, որը հիմնականում պայմանավորված է համավարակով և 44-օրյա պատերազմով: Ճգնաժամային իրավիճակում ի հայտ է գալիս ֆինանսական միջոցների սակավության խնդիր: Այդ խնդրի լուծման համար ՀՀ կառավարությունը ապավինում է նոր պետական պարտքեր ներգրավելուն՝ դրանով էլ ավելի մեծացնելով երկրի պարտքային բեռը, որը 2008թ. ի վեր թռիչքաձև աճել է՝ պարտք-ՀՆԱ հարաբերակցությամբ 16,4%-ից դառնալով 67,3%: Այս հոդվածում փորձ է արվում նկարագրել ՀՀ պետական պարտքի ներկա վիճակը, դրա որոշ խնդիրները :

Мигран СИСАКЯН, Айк МНАЦАКАНЯН

Некоторые проблемы управления государственным долгом РА в контексте анализа мирового опыта

Ключевые слова: внешний государственный долг, соотношение долг-ВВП, долгосрочный стратегический план, долговое агентство, инструменты управления гос. долгом

Экономика РА стоит перед серьезным кризисом, который обусловлен в основном пандемией и 44-дневной войной. Во время кризиса появляется проблема недостатка финансовых средств. Для решения этой проблемы правительство РА полагается на вовлечение новых государственных долгов, тем самым еще больше увеличивая долговую нагрузку страны, которая с 2008г. многократно росла, увеличиваясь с 16,4% до 67,3% по соотношению долг-ВВП. В этой статье сделана попытка описывать текущее положение и некоторые проблемы государственного долга и в контексте анализа мирового опыта представлять возможность создания долгового агентства для увеличения эффективности управления госдолга.

Mihran SISAKYAN, Hayk MNATSAKANYAN

Some problems of public debt management in the RA in the context of the analysis of world experience

Key words: external government debt, debt-to-GDP ratio, long-term strategic plan, debt agency, instruments of the management of government debt

The economy of RA faces a serious crisis, which is mostly conditioned by the pandemic and the recent 44-days war. There is a problem of lack of financial resources during the crisis. To solve this problem, the government of the RA relies on the involvement of new government debt, thereby further increasing the debt load of the country, which has grown many times since 2008, increasing from 16.4% to 67.3% by debt-to-GDP ratio. This article attempts to describe the current situation and some problems of the government debt of the RA, and in the context of the analysis of world experience, present the possibility of creating a debt agency to increase the efficiency of public debt management.

ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՅՈՒՄԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Սամսոն ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՊՏՀ կառավարման ամբիոնի ասպիրանտ

Բանալի բառեր. ապակենտրոնացում, վարչատարածքային բարեփոխումներ, տեղական ինքնակառավարում, բյուջետային եկամուտներ

Ներածություն

Արդյունավետ հանրային կառավարման համակարգը ենթադրում է ապակենտրոնացման սկզբունքի վրա հիմնված տեղական ինքնակառավարում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ամուր փոխհարաբերություններ, որոնք հիմնված են ինքնավարության, օրինականության և համագործակցության սկզբունքների վրա: Ապակենտրոնացման լավագույն ձևը հանրային կառավարման գործառույթների հստակ բաշխումն է կենտրոնական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների միջև՝ կիրառելով փոխլրացման սկզբունքը, համաձայն որի՝ հանրային կառավարման համակարգի վերին օղակին պետք չէ հանձնարարել այն, ինչն ավելի լավ կարող է կատարել ստորին օղակը¹:

Մեթոդաբանություն և գրականության ակնարկ

ՀՀ-ում կառավարման ապակենտրոնացման գործընթացների վերաբերյալ հետազոտություններ են կատարել Յու. Սուվարյանը, Օրոյանը, Ռ. Հայրապետյան Դ. Մարգարյանը, Վ. Շահբազյանը և այլք: Ոլորտի մասնագետները կարևորելով ապակենտրոնացման դերը գործուն և կայացած հանրային կառավարման համակարգ ունենալու գործում, ուսումնասիրել են առկա հիմնախնդիրները և առաջարկել դրանց լուծման ուղիներ: Այս ուսումնասիրության ընթացքում փորձել ենք ներկայացնել կառավարման ապակենտրոնացված համակարգ ունենալու անհերքելի ապացույցներ, ինչպես նաև գրնահատել ապակենտրոնացման աստիճանը ՀՀ-ում:

Վերլուծություն

Հետազոտության նպատակն է ներկայացնել ապակենտրոնացված կառավարման համակարգի արդյունավետությունը, ինչպես նաև գնահատել

¹ Տեղական ժողովրդավարության դարոց, «Կառավարման ապակենտրոնացում մ, վարչատարածքային բարեփոխումներ, Միջհամայնքային ինքնագործակցություն և», 2019թթ Էջ 6, անցանց: <http://celog.am>

դրա աստիճանը ՀՀ-ում: Հետազոտության տեսական հատվածի համար հիմք է հանդիսացել հայրենական և օտարերկրյա հեղինակների կատարած հետազոտությունները: Վերլուծության համար օգտագործվել են ՀՀ Ազգային վիճակագրական կոմիտեի, ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ համայնքների պաշտոնական կայքէջերի տվյալները: Ապակենտրոնացման աստիճանը գնահատելու համար հաշվարկվել են ՀՀ համայնքների բյուջեների եկամուտների տեսակարար կշիռը ՀՀ բյուջեի եկամուտներում, ՀՀ համայնքների բյուջեների ծախսերի տեսակարար կշիռը հանրային ծախսերում, ՀՀ համայնքների բյուջեների ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում ցուցանիշները, որոնք հնարավորություն են տալիս համեմատական մեթոդի կիրառմամբ գնահատել ապակենտրոնացման աստիճանը ՀՀ-ում: Կառավարման համակարգի ապակենտրոնացումը կատարվում է կենտրոնական կառավարության որոշումների կայացման մենաշնորհը վիճարկելու համար և նպատակ ունի¹.

- Ստեղծել ավելի կայուն ժողովրդավարական համակարգ.
- Բարձրացնել կառավարության արդյունավետությունը
- Խթանել տեղական և պետական մակարդակով տնտեսական աճը
- Նպաստել առավել թափանցիկ կառավարմանը
- Ապահովել քաղաքացիների մասնակցությունը որոշումների կայացմանը

Կենտրոնական կառավարման ապարատից տեղական ինքնակառավարման մարմիններին լիազորությունների պատվիրակման գործընթացը պետք է խիստ կշռադատված և հաշվենկատ լինի, քանի որ մի կողմից անհրաժեշտ է կառավարման վերին մակարդակի մարմինների վերահսկողությունը, իսկ մյուս կողմից՝ ստորին մակարդակի կառավարման մարմինները պետք է որոշակի ինքնուրույնություն ունենան: Առաջին հայացքից էլ պարզ է, որ ինչքան մոտ են համայնքային իշխանությունները բնակիչներին, այնքան վառ են արտահայտվում տեղերում ինքնակառավարման ընդհանուր գաղափարն ու սկզբունքները. իշխանություն, որն առավել մոտ է կանգնած բնակիչներին՝ դրանից բխող ժողովրդավարության բոլոր դրսևորումներով²: ՀՀ անկախության երեսուն տարիների ընթացքում հանրային կառավարման

¹ Mentor Isufaj, Decentralization and the Increased autonomy in Local Governments, WCBEM 2013, pg 460. <https://www.sciencedirect.com/science/article/pii/S1877042813051227>

² Տեղ. ժողովրդ. Դարոց.Կառավարման ասպեկտրոնացում. Վարչ. Բարեփո. միջհամ. համագ., 2019. Էջ 14

համակարգին բնորոշ է եղել կենտրոնացված կառավարման համակարգը, ինչը և խթան հանդիսացավ որ քայլեր ձեռնարկվեին ապակենտրոնացված կառավարման համակարգ ստեղծելու և լիազորությունները տեղական ինքնակառավարման հարթություն տեղափոխելու համար: Հայաստանի անկախացումից հետո՝ 1995թ. Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին ՀՀ օրենքով սկիզբ դրվեց վարչատարածքային համակարգի ձևավորմանը: Սույն օրենքով, ՀՀ-ը բաժանվեց տասնմեկ մարզի՝ ներառյալ Երևանը: Խորհրդային տարիներին ՀՀ տարածքը բաժանված էր երեսունյոթ շրջանների: Նախկին մի քանի վարչական շրջանների միացումով ձևավորվեցին մարզերը, որոնք ընդգրկում էին իրենց կազմի մեջ մտնող համայնքների տարածքները, պետական սեփականության հանդիսացող հողային և ջրային ռեսուրսները¹: 1995թ. ընդունված օրենքով նախկին 48 քաղաքներից և 952 գյուղերից ձևավորվեցին 930 քաղաքային, գյուղական և թաղային համայնքներ: Շարունակելով բարեփոխումները, 1995թ. հուլիսի 5-ին հանրաքվեի միջոցով հիմք դրվեց տեղական ինքնակառավարման համակարգին: 1996թ. ընդունվեց Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքը: 2002թ. վավերացվեց Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիան, իսկ նույն թվականի մայիսի 7-ին ընդունվեց «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ նոր օրենքը: 2005թ. սահմանդրական բարեփոխումներով Երևանը ստացավ համայնքի կարգավիճակ², իսկ 2008թ.-ին ընդունվեց «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը և սահմանդրությամբ ամրագրվեց, որ համայնքները հանրության շահերից ելնելով, կարող են օրենքով միացվել միմյանց կամ առանձնացվել³: Սույն բարեփոխումները միտված էին անկախացումից հետո հանրային կառավարման համակարգի ձևավորմանը և ապակենտրոնացման գործընթացների խորացմանը: Ընդհանուր առմամբ, ապակենտրոնացման գործընթացները հանրապետությունում կարելի է բաժանել չորս փուլի.

- 1995-1996թթ. - սահմանադրական բարեփոխումներ և հանրային կառավարման համակարգի ձևավորում
- 1997-2001թթ. - ՏԻՄ համակարգի ձևավորում

¹ Դավիթ Թու մանյ անի խմբարու թյ ամբ «Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (2004-2006թթ.)», Ազգային կոնֆերանսի կողմից Երևանում, էջ 30, Երևան, 2008թ.

² ՀՀ Սահմանադրություն, հոդ. 108, ՏԻՄ-ը, 2005թ., առցանց. president.am

³ ՀՀ Սահմանադրություն, հոդ. 110, ՏԻՄ, 2005թ., առցանց. president.am

- 2002-2010թթ. - տեղական ինքնակառավարման համակարգի կայացում և զարգացում


- 2011թ. -ից վարչատարածքային բարեփոխումներ, ապակենտրոնացման գործընթաց խորացում, տեղական ինքնակառավարման նոր համակարգ

Արդյունավետ տեղական ինքնակառավարման համակարգով պայմանավորված է տարածքային համաչափ զարգացումը, ինչը ՀՀ ՏԻ 26 տարիների ընթացքում այդպես էլ չկայացավ, այլ ընդհակառակը, համայնքների անհամաչափ զարգացումը խորացրել էր սոցիալ-տնտեսական զարգացման տարբերությունները: Տարածքային անհամաչափ զարգացումը նպաստում է տարբեր մարզերում բնակչության աղքատության խորացմանը, տնտեսական ակտիվության նվազմանը և ի վերջո բնակչության արտագաղթին: Տարածքային անհամաչափ զարգացման գործում առանցքային գործոնների թվին են դասվում. բնակչության թվաքանակը, ենթակառուցվածքների առկայությունը, բնակլիմայական պայմանները, ֆինանսական պայմանները և այլն: Ըստ տարբեր հետազոտությունների արդյունքների, համայնքի բնակչության թիվը դրա աղքատության հետ խիստ կոռելացված ցուցանիշ է. փոքր համայնքների աղքատության հավանականությունն ավելի մեծ է, իսկ հանրապետությունում առկա 915 համայնքներից 440-ը կամ 48%-ը (438 գյուղական և 2 քաղաքային) ունեին 1000-ից պակաս բնակչություն, ինչը նպաստում էր տնտեսական զարգացման անհամաչափությունների խորացմանը¹: Այս և նման այլ խնդիրները հաշվի առնելով, ՀՀ կառավարությունը 2014թ. հավանության արժանացրեց «ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր»-ը, որտեղ նախանշեց տարածքային անհամաչափ զարգացման վերացմանը միտված գերակայությունները և առաջնահերթությունները: Ռազմավարական ծրագիրը նպատակադրված էր տարածքային զարգացման նպատակային քաղաքականության միջոցով նպաստել մարզերում ու համայնքներում տնտեսական աճի խրախուսմանը և սոցիալական զարգացմանը, տնտեսական, արտադրական ու սոցիալական ենթակառուցվածքների վերականգնմանը և ձևավորմանը, ինչպես նաև հիմնարար ծառայությունների հավասար հասանելիությունն ու մատչելիությանը՝ առաջնահերթությունը տալով այն համայնքներին ու տարածքներին, որոնք առավել հետ են ընկնում իրենց զարգացման տեմպերով և առավել խոցելի են, և վեր-

¹ «ՀՀ 2014-2025թթ. ՀՁԴԾ», ՀՀ կառ. 2014 թ. մարտի 27 N 442 - Ն որոշում, էջ 100, www.gov.am

ջապես խրախուսել տարածքային “աճի բևեռների ձևավորմանը որոնք ուղղված կլինեն ՀՀ տարածքների համալիր զարգացմանը: Սույն նպատակների իրականացմանը ձեռնամուխ լինելով ՀՀ կառավարությունը 2015թ. մեկնարկեց համայնքների խոշորացման գործընթացը, ինչը պայմանավորված էր 2011թ. հավանության արժանացած “Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ”-ով, որով ընտրվեց համայնքների խոշորացման փնջային մոդելը: 2016-2017թթ. խոշորացան 465 համայնքներ, որոնք ձևավորեցին 52 նոր համայնքներ: Այսօր համայնքների թիվը 502 է, չխոշորացված համայնքների թիվը՝ 450, որոնցում ըստ պլանավորվածի խոշորացման գործընթացը պետք է ավարտվեր 2019 թվականին:

Տեղական ինքնակառավարման ապակենտրոնացման աստիճանը գնահատելու համար նպատակահարմար է դիտարկել երկու ցուցանիշ՝ համայնքների բյուջեների եկամուտների տեսակարար կշիռը ՀՀ բյուջեի եկամուտներում և համայնքային բյուջեների ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում:



Գծապատկեր 1: ՀՀ համայնքների 2015-2019թթ. -ի համայնքների բյուջեների եկամուտների տեսակարար կշիռը ՀՀ բյուջեի եկամուտներում, ծախսերի տեսակարար կշիռը հանրային ծախսերում և ՀՆԱ-ում²

Վերը նշված գծապատկերից ակնհայտ է, որ 2015-2019թթ. համայնքների բյուջեների եկամուտների տեսակարար կշիռը ՀՀ բյուջեի եկամուտներում տատանվել է 10.1-10.4%-ի սահմաններում, ընդ որում ընդհանուր առ-

¹ «ՀՀ 2014-2025թթ. ՀՁՌԾ», ՀՀ կառ. 2014 թ. մարտի 27 N 442 - Ն որոշում, էջ 102, www.gov.am

² Աղյուսակը կազմել է հեղինակը: Համայնքների բյուջ. եկ. և ծախս. Տվյալները՝ ՀՀ ՏԿԱԶՆ. <http://www.mtad.am/hy/budgetary-expenditure/> <http://www.mtad.am/hy/budgetary-incomes/>

մամբ նկատվում է դրական դինամիկա: ՀՀ համայնքների բյուջեների ծախսերի տեսակարար կշիռը հանրային ծախսերում տատանվել է 8.1-8.7%-ի սահմաններում, 2015թ.-ից ծախսերի տեսակարար կշիռը նվազել է մինչև 8.2%: ՀՀ համայնքների բյուջեների ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում փոխության չի ենթարկվել և պահպանվել է 2.3% ցուցանիշը: Համեմատության համար նշենք, որ ԵՄ երկրներում տեղական բյուջեների ծախսերի տեսակարար կշիռների միջինը հանրային ծախսերում եղել է 23.4%, իսկ ՀՆԱ-ում 10.9%:

Ամփոփելով, նշենք, որ ՀՀ կառավարման ապակենտրոնացման աստիճանը դեռևս հեռու է ԵՄ երկրների միջին ցուցանիշներից, ինչը վկայում է կառավարման համակարգի բարեփոխման անհրաժեշտության մասին, քանի որ կենտրոնացված կառավարումը նվազեցնում է համակարգի կառավարելիությունը իսկ ապակենտրոնացումը կառավարման մարմիններին մոտեցնում է հասարակությանը: Երկրի տարածքային անհամաչափ զարգացումը հրամայական է դարձրել տեղական ինքնակառավարման համակարգի զարգացումը և ապակենտրոնացման գործընթացի խորացումը: Կառավարման համակարգի ապակենտրոնացումը երկար և խրթին գործընթաց է ենթադրում, ինչը պայմանավորված է ինչպես իրավա-օրենսդրական խոչընդոտներով, այնպես էլ մասնակցային կառավարման թույլ կառուցակարգերով: Գործընթացն ինքնին դժվարին է, և անհրաժեշտ է փոլ առ փոլ իրականացել՝ հանրությանը պատրաստելով նոր, առավել մասնակցային և «բաց» կառավարման համակարգի: Ապակենտրոնացման գործընթացում ծանրակշիռ գործոն է ՏԻՄ-երի որոշումների կայացման անկախության աստիճանը, ուստի խիստ կարևոր է պատվիրակված լիազորությունների աստիճանի ճիշտ որոշումը, ինչը նույնպես երկար ժամկետ է պահանջում, արմատացած մոտեցումներից հրաժարում և նոր մեթոդների ինտեգրում: Հետևաբար՝ ապակենտրոնացման գործող մոդելն անհրաժեշտ է հասարակության զարգացմանը զուգահեռ կատարելագործել՝ համապատասխանեցնելով ժամանակի պահանջներին: Ապակենտրոնացումն այնքանով է հաջողված, որքանով կառավարումը դառնում է առավել ժողովրդավարական և արդյունավետ¹:

¹ Տեղական ժողովրդավարության դպրոց, «Կառավարման ապակենտրոնացում, Վարչատար. բարեփոխումներ, Միջհամ. Համագործ.», 2019թ. էջ 8, <http://celog.am>

Սամսոն ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ապակենտրոնացումը տեղական ինքնակառավարման համակարգում

Բանալի բառեր. ապակենտրոնացում, վարչափարածքային բարեփոխումներ, տեղական ինքնակառավարում, բյուջեարային եկամուտներ, հանրային կառավարում, հանրային ծախսեր, համայնքների խոշորացում

Խորհրդային Միության փլուզումից հետո, Հայաստանի Հանրապետությունը լծվեց նոր հանրային կառավարման համակարգ ստեղծելու գործին, ինչը ենթադրում էր մի շարք բարեփոխումների իրականացում՝ ներառյալ տեղական ինքնակառավարման ոլորտում: Հետագա տարիներին, ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում իրականացվել են բազմաթիվ օրենսդրաիրավական և կառուցվածքային փոփոխություններ, որոնք միտված էին էլ ավելի բարձրացել տեղական ինքնակառավարման որակը, ինչը պայմանավորում էր լիազորությունների փոխանցում տեղական մարմիններին:

Samson PETROSYAN

Decentralization in the local self-government system

Key words: decentralization, administrative reforms, local self-government, budget revenues, public administration, public expenditures, community enlargement

After the collapse of the Soviet Union, the Republic of Armenia set about creating a new system of public administration, which required a number of reforms, including in the field of local self-government. In the following years, numerous legislative and structural changes were implemented in the system of local self-government of the Republic of Armenia, which were aimed at further increasing the quality of local self-government, which conditioned the transfer of powers from the central government to local bodies. However, the system of local self-government of the Republic of Armenia had reached a point where the process of further deepening of decentralization was impossible, therefore, it was necessary to form a new system of local self-government.

Самсон ПЕТРОСЯН

Децентрализация в системе местного самоуправления

Ключевые слова: децентрализация, административные реформы, местное самоуправление, доходы бюджета, государственное управление, государственные расходы, укрупнение сообщества

После распада Советского Союза Республика Армения приступила к созданию новой системы государственного управления, что потребовало ряда реформ, в том числе в области местного самоуправления. В последующие годы в систему местного самоуправления Республики Армения были внесены многочисленные законодательные и структурные изменения, направленные на дальнейшее повышение качества местного самоуправления, что обусловило передачу полномочий от центрального правительства в местные органы. Однако система местного самоуправления Республики Армения достигла точки, когда дальнейшее углубление децентрализации стало невозможным.

**ԱԳՐԵԳԱՑՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ
ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ**

Կարեն ԳՐԻԳՈՐՅԱՆ

Տ.գ.թւ, դոցենտ, ՀՊՏՀ Մակրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչ

Դավիթ ՄԻՆԱՍՅԱՆ

ՀՊՏՀ Մակրոտնտեսական վերլուծության մագիստրանտ

Բանալի բառեր. ֆինանսական կայունություն, խոցելիություն, զարգացում, թափանցիկություն, միջազգային տնտեսական իրադրություն

Ներածություն

Ինչպես հայտնի է, տնտեսությունը բաժանված է 4 հիմնական հատվածների, որոնցից մեկն է ֆինանսական և դրամավարային հատվածը: Այն իր մեջ ներառում է պետական ֆինանսների և դրամավարկային ու ֆինանսական վիճակագրությունը: Ֆինանսական վիճակագրության մեջ ընդգրկված են պետական կառավարման հատվածի գործառնությունների, ինչպես նաև ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն: Այդ տեղեկատվությունն օգտագործվում է տնտեսությունում պետական հատվածի տեսակարար կշռի գնահատման ու վերլուծության, դրա մասնակցությունը համախառն պահանջարկի, ներդրումների և խնայողությունների ձևավորմանը, դրանց ազդեցությունը ռեսուրսների օգտագործման և մոնետար պայմանների վրա, հարկային բեռի, ինչպես նաև մասնակցությունը եկամուտների վերաբաշխման գործընթացին: Դրամավարկայի ու ֆինանսական վիճակագրության մեջ ներառված է նաև տնտեսության ֆինանսական հատվածի վիճակագրություն: Ֆինանսական համակարգի առողջ գործունեության համար շատ կարևոր է, որպեսզի այն կայուն լինի ներքին և արտաքին ցրնցումների նկատմամբ, այդ իսկ պատճառով ֆինանսական կայունությունը հանդիսանում է ֆինանսական համակարգի հուսալիության գրավականը: Ըստ ԱՄՀ ֆիսկալ թափանցիկության կանոնագրքի (ՖԹԿ), ֆիսկալ թափանցիկության գնահատման 36 սկզբունքներից ՀՀ-ում միայն 16-ի դեպքում է բավարարում լավ կամ առաջադեմ գործելակերպի չափանիշները, իսկ մնացած 14-ի դեպքում բավարարում է նվազագույն գործելակերպի չափանիշը: Ֆինանսական կայունության ապահովման խնդիրը առավելապես կարևորվել է 2007-2008թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո, երբ պարզ դարձավ, որ առանձին ֆինանսական կազմակերպություններ

րի կարգավորմանն ուղղված քաղաքականությունը դեռևս լիարժեք և բավարար չէ ամբողջ ֆինանսական համակարգի կայունության ապահովման համար: Մինևույն ժամանակ, առանց ֆինանսական համակարգի կայունության հնարավոր չէ ապահովել կայուն մակրոտնտեսական միջավայր: Հաշվի առնելով այս ամենը՝ խիստ անհրաժեշտություն է առաջանում երկրի ու տնտեսության կայունության ապահովումը, և դրան հասնելու համար բազմակողմանի հետազոտությունների ու վերլուծությունների իրականացումը:

Մեթոդաբանություն

Հետազոտության իրականացման համար կիրառվել է վերլուծության և մաթեմատիկական մեթոդներ, օգտագործվել է excel ծրագրային հավելվածը՝ տվյալների հավաքագրման ու հաշվարկների իրականացման համար: Տվյալները հավաքագրվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի, Համաշխարհային Բանկի և ՀՀ ԿԲ տվյալների բազաներից: Տվյալների նորմալացման համար իրականացվել է ցուցանիշների նորմալիզացում՝ Min-Max feature scaling մեթոդի օգնությամբ: Հետազոտության իրականացման համար ուսումնասիրվել է միջազգային գրականության մեջ կիրառվող հիմնական ցուցանիշները և ընտրվել են ամենանպատակահարմար ու բազմակողմանի կիրառություն ունեցողները՝ ՀՀ տնտեսության մեջ կիրառելու համար:

Գրականության ակնարկ

Ֆինանսական կայունությունը հանդիսանում է բազմագործոն տնտեսական երևույթ, և տնտեսագիտական շատ հետազոտողներ դիմել են սինթետիկ ինդեքսների օգնությանը այդ նպատակի իրականացման համար: Սինթետիկ ինդեքսները ստացվում են տարբեր հիմնական ցուցանիշների միացման արդյունքում: Այդպիսի օրինակ է Լյանգի և Լիուի կողմից ստեղծված սթրես ինդեքսը, որը կոչվում է ֆինանսական ցնցումների ինդեքս (F.S.I): Ֆինանսական կայունության ինդեքսի հաջորդ օրինակը Ֆելլի և Աչինասի կողմից է առաջադրվել, որոնք գտնում էին, որ ֆինանսական կայունությունը կարելի է ներկայացնել որպես նրա բաղկացուցիչ մասերի տարբեր իրավիճակների կոմբինացիա՝ Այս գաղափարի հիման վրա Վան դեն Էնդը 2006թ. ստեղծեց ֆինանսական կայունության պայմանական ինդեքսը, որը իր մեջ պարունակում է Դրամավարկային իրավիճակների ինդեքսը (monetary condi-

¹ Measuring and Forecasting Financial Stability: The Composition of an Aggregate Financial Stability Index for Jamaica Verlis C. Morris¹ Fin. Stability Dep.t Bank of Jamaica August 2010

tions index) և ֆինանսական իրավիճակների ինդեքսը (financial conditions index): Ինդեքսի ներքին սահմանը վկայում է ֆինանսական սթրեսի մասին, իսկ վերին սահմանը վկայում է տնտեսության մեջ նպաստավոր դրության մասին, սակայն երբեմն կարող է նաև վկայել ֆինանսական անկայունությունների կուտակման մասին: Ստացվում է, որ ինդեքսի ծայրամասային արժեքների դեպքում ֆինանսական համակարգը գործում է ոչ արդյունավետ, իսկ միջին արժեքները վկայում են ֆինանսական կայունության մասին:

«Վ ֆինանսական հարվածի վերլուծություն»

Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական կայունության ապահովման պատասխանատու մարմինը «Վ Կենտրոնական բանկն է, ինչն ամրագրված է «Վ Սահմանադրության 200.2-րդ հոդվածով և «Վ Կենտրոնական բանկի» մասին «Վ օրենքի 4-րդ հոդվածով: Համաձայն վերոնշյալ հոդվածների, կենտրոնական բանկի հիմնական նպատակներն են Հայաստանում գների կայունության և ֆինանսական կայունության ապահովումը: Կենտրոնական Բանկի բնորոշմամբ ֆինանսական կայունությունը ֆինանսական համակարգի՝ ֆինանսական հաստատությունների, շուկաների և շուկայի ենթակառուցվածքների կողմից հավանական ցնցումներին ու անհավասարակշռություններին դիմակայելու ունակությունն է՝ այդ կերպ նվազեցնելով ֆինանսական միջնորդության գործառույթների խաթարման հավանականությունը: Ֆինանսական կայունության նպատակը ոչ թե մեկ առանձին ֆինանսական հաստատության կայունությունն է, այլ ամբողջ ֆինանսական համակարգի կայունությունը: Ֆինանսական կայունության ապահովման նպատակով «Վ Կենտրոնական բանկը իրականացնում է մակրոպրոդեկցիալ քաղաքականություն: Կենտրոնական բանկը շարունակաբար մշտադիտարկման է ենթարկում ֆինանսական համակարգում ռիսկերի կուտակումը նախանշող վաղ ահազանգման տարատեսակ ցուցանիշները, դրանց համախմբման արդյունքում կառուցված ինդեքսները, ինչպես նաև կիրառում է ռիսկերի գնահատման տարբեր մոդելներ և մակրո սթրես թեստավորման համակարգեր: Իրականացված վերլուծությունները, ինչպես նաև դրանց արդյունքում կատարված եզրահանգումները/առաջարկությունները ներկայացվում և քննարկվում են "Կենտրոնական բանկի ֆինանսական կայունության և հատուկ կարգավորման հանձնաժողովի" նիստերին: Վերջնական որոշումները կապված մակրոպրոդեկցիալ քաղաքականության գործիքների կիրառման հետ

կայացնում է ՀՀ Կենտրոնական բանկի խորհուրդը: Մակրոպրոդեւնցիալ քաղաքականությունը գործնականում ենթադրում է համակարգային ռիսկերի բացահայտում, ինչպես նաև այդ ռիսկերի զսպման կամ չեզոքացման համար անհրաժեշտ մակրոպրոդեւնցիալ գործիքակազմի ընտրություն և կիրառություն, որոնք կնպաստեն ֆինանսական կայունության ամրապնդմանը:

Մակրոպրոդեւնցիալ գործիքների արդյունավետ ընտրության հիմքում ընկած են մակրոպրոդեւնցիալ քաղաքականության միջանկյալ նպատակները, որոնք, ըստ էության, բնութագրում են համակարգային ռիսկի դրսևորման հնարավոր աղբյուրները: Այսինքն, նախ գնահատվում են ռիսկերի հավանական աղբյուրները, դրանց հարաբերական ուժգնությունը, որից ածանցված թիրախավորվում է մակրոպրոդեւնցիալ քաղաքականության կոնկրետ միջանկյալ նպատակներ և ընտրվում է համապատասխան մակրոպրոդեւնցիալ գործիքներ՝ կապիտալի հակացիկլիկ բուֆեր, կապիտալի պահպանման բուֆեր, փոխառության սահմանափակումներ անշարժ գույքի գրավով ապահովված վարկերի համար, համակարգային նշանակության ֆինանսական հաստատությունների նկատմամբ կապիտալի պահանջ:

ՀՀ ԿԲ-ն ֆինանսական կայունության վերաբերյալ վերլուծությունների արդյունքները հրապարակում է սկսած 2007թ.ից ֆինանսական կայունության հաշվետվություններում: Ֆինանսական կայունության հաշվետվության հիմնական նպատակն է կարճաժամկետ հեռանկարում իրական և ֆինանսական հատվածներում նախկին և սպասվող զարգացումների համատեքստում երկրի ֆինանսական կայունությանը սպառնացող հավանական ռիսկերի նկարագրումը: Հաշվետվությունում ներկայացվում է որոշակի ժամանակահատվածի համար ֆինանսական կայունության վերաբերյալ ՀՀ ԿԲ գնահատականը, առկա ռիսկերը և դրանց կանխարգելման կամ չեզոքացմանն ուղղված միջոցառումները: Հայաստանի Հանրապետության ֆինանսական կայունության վրա ազդող ռիսկերը կարող են ծագել Հայաստանի ներքին տնտեսությունում, երկրից դուրս՝ արտաքին տնտեսությունում և բուն ֆինանսական համակարգում: Ելնելով վերոնշյալից՝ ՀՀ ԿԲ ֆինանսական կայունության հաշվետվությունում անդրադարձ է կատարվում ռիսկերին՝ հետևյալ հիմնական ուղղություններով.

1. Համաշխարհային տնտեսության զարգացումների ածանցվող ռիսկեր
2. ՀՀ մակրոմիջավայրի զարգացումներով պայմանավորված ռիսկեր

3. ՀՀ ֆինանսական շուկայի զարգացումներից ածանցվող ռիսկեր
4. ՀՀ ֆինանսական հաստատություններից ածանցվող ռիսկեր
5. ՀՀ ֆինանսական ենթակառուցվածքներից ածանցվող ռիսկեր

Նշված ռիսկերի զսպման կամ չեզոքացման համար անհրաժեշտ մակրոպրոդեսնցիալ քաղաքականության իրականացում¹: ՀՀ-ում որպես ֆինանսական կայունության գնահատման ցուցանիշներ մշտադիտարկվում են

1. նորմատիվային ընդհանուր կապիտալի հարաբերությունը ռիսկով կշռված ակտիվներին,
2. նորմատիվային հիմնական կապիտալի հարաբերությունը ռիսկով կշռված ակտիվներին,
3. չաշխատող վարկերի հարաբերությունը ընդհանուր վարկերին,
4. շահութաբերությունն ըստ ակտիվների,
5. շահութաբերությունն ըստ կապիտալի,
6. բարձր իրացվելի ակտիվների հարաբերությունն ընդհանուր ակտիվներին,
7. բարձր իրացվելի ակտիվների հարաբերությունը ցպահանջ պարտավորություններին:

Այս ցուցանիշների ամբողջացման համար նպատակահարմար է կիրառել ավելի համակցված ինդեքս:

Ագրեգացված ֆինանսական կայունության ինդեքս

Ագրեգացված ֆինանսական կայունության ինդեքսը բնութագրում է ֆինանսական կայունությունը դիտարկված տնտեսության տարբեր հատվածներից: Այս իսկ նպատակով այն բաղկացած է մի քանի ենթաինդեքսներից՝ Ֆինանսական զարգացման ենթաինդեքս, ֆինանսական խոցելիության ինդեքս, ֆինանսական աղմուկի ինդեքս և միջազգային տնտեսական իրադրության ինդեքս:

Ֆինանսական զարգացման ենթաինդեքսը տալիս է ֆինանսական համակարգի զարգացման վերաբերյալ գնահատական:

Ֆինանսական խոցելիության ենթաինդեքսը ներառում է մակրոտնտեսական ցուցանիշները, ինչպես նաև բանկային հաստատությունների ֆինանսավորման կառուցվածքը:

¹ <https://www.cba.am/am/SitePages/fsreport.aspx>

Ֆինանսական աղմուկի ենթահինդեքսը որոշում է վարկային հաստատությունների վճարունակությունը ֆինանսական համակարգում: Այն ցույց է տալիս, թե ինչպես են ֆինանսական հաստատությունները արձագանքում շուկերին:

Միջազգային փնտրեսական իրադրության ենթահինդեքսը մատնանրշում է ինչպես տեղի, այնպես էլ արտասահմանյան ներդնողների վճարունակությունը, որտեղ համաշխարհային գնաճի մակարդակը << հետ առևտրաշրջանառության ամենամեծ ծավալն ունեցող երկրների հետ իրականացրած առևտրի չափն է: Դիտարկենք ինդեքսի մեջ ընդգրկված ցուցանիշները ըստ ենթախմբերի:

Ազդեացված ֆինանսական կայունության ինդեքսի կառուցվածքը

Շուկայի կապիտալացում/ ՀՆԱ	Ֆինանսական զարգացման ենթահինդեքս (D)
Ընդհանուր վարկեր/ՀՆԱ	
Տոկոսադրույքի սփրեդ	
Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքս	
Ինֆլյացիայի տեմպ	Ֆինանսական խոցելիության ենթահինդեքս (V)
Բյուջեի պակասուրդ/ավելցուկ(ՀՆԱ%)	
Ընթացիկ հաշվի պակասուրդ/ավելցուկ(ՀՆԱ%)	
Իրական արդյունավետ տոկոսադրույքի փոփոխություն	
Ոչ պետական վարկեր/ընդհանուր վարկեր	
Վարկեր (ավանդների %)	Ֆինանսական աղմուկի ենթահինդեքս (S)
(Պահուստներ/ավանդներ)/(կանխիկ/M2)	
Չգործող ավանդներ/ընդհանուր ավանդներ	
Կապիտալներ/ակտիվներ	
Z-ինդեքս	Միջազգային տնտեսական իրադրության ինդեքս (W)
Իրացվելիության գործակից	
Համաշխարհային տնտեսական աճ	
Համաշխարհային գնաճի մակարդակ	
Տնտեսական իրադրության ինդեքս	

$$Z = (ROA + C/A) / STD DEV(ROA)$$

Այս ենթահինդեքսներից յուրաքանչյուրը ունի իր կշիռը, որոնցից ամենամեծը բաժին է ընկնում ֆինանսական խոցելիության ենթահինդեքսին, ամենափոքրը՝ միջազգային տնտեսական իրադրության ենթահինդեքսին՝ մյուս 2 ին-

դեքսներին տալով հավասար կշիռներ: Խոցելիության ենթահինդեքսը ստանում է ամենամեծ կշիռը, քանի որ այն իր մեջ կրում է շատ ռիսկեր՝ այդ թվում մակրոտնտեսական և բանկերին հատուկ ռիսկեր:

Ինդեքսների հաշվարկման համար օգտվենք հետևյալ բանաձևերից .

$$\overline{D}_t = \frac{\sum_{i=1}^4 D_{it}}{4}$$

$$\overline{V}_t = \frac{\sum_{i=1}^8 V_{it}}{8}$$

$$\overline{S}_t = \frac{\sum_{i=1}^4 S_{it}}{4}$$

$$\text{Միջազգային տնտեսական իրադրության ինդեքս} \quad \overline{W}_t = \frac{\sum_{i=1}^3 W_{it}}{3}$$

$$AFSI = (\overline{D}_t + 8\overline{V}_t + 4\overline{S}_t + 3\overline{W}_t) / 19$$

ՀՀ Ֆինանսական կայունության ինդեքսի հաշվարկն՝ ըստ բաղադրիչների

Ցուցանիշներ/տարի	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019
Շուկայի կապիտալացում/ ՀՆԱ	-0.08	0.00	0.17	0.54	1.00	0.95	0.83	0.71
Ընդհանուր վարկեր/ՀՆԱ	-0.22	0.00	0.17	0.31	0.47	0.55	0.80	1.00
Տոկոսադրույքի սփրեդ	1.00	0.57	0.6	0.0	0.54	0.46	0.16	0.05
Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքս	0.67	1.00	0.67	0.33	0.0	0.12	0.08	0.07
Ինֆլյացիայի տեմպ	0.55	1.00	0.61	0.71	0.0	0.33	0.55	0.40
Բյուջեի պակասուրդ/ավելցուկ (ՀՆԱ%)	0.90	0.87	0.8	0.16	0.0	0.15	0.83	1.00
Ընթացիկ հաշվի պակասուրդ/ավելցուկ(ՀՆԱ%)	-0.37	0.05	0.0	0.79	1.00	0.94	0.26	0.22
Իրական արդյունավետ փոխարժեքի փոփոխություն	-0.09	0.00	0.43	0.86	0.80	0.49	0.76	1.00
Ոչ պետական վարկեր/ընդհանուր վարկեր	0.23	0.00	0.27	0.26	0.45	0.58	0.89	1.00
Վարկեր (ավանդների %)	-0.11	0.00	0.44	0.9	0.82	0.48	0.75	1.00
(Պահուստներ/ավանդներ)/ (կանխիկ/M2)	-0.06	0.00	1.00	0.77	0.52	0.48	0.65	0.27
Զգործող վարկեր/ընդհանուր վարկեր	-0.13	0.03	0.23	0.79	1.00	0.38	0.23	0.00
Կապիտալներ/ակտիվներ	1.00	0.61	0.59	0.0	0.57	0.75	0.63	0.15
Z-ինդեքս	1.00	0.67	0.69	0.0	0.32	0.59	0.82	0.80
Իրացվելիության գործակից	0.69	0.60	0.6	0.0	0.32	0.56	0.92	1.00
Համաշխարհային տնտեսական աճ	0.62	0.54	0.82	0.0	0.37	0.69	1.00	0.11
Համաշխարհային գնաճի մակարդակ	-0.40	0.09	0.47	1.00	0.0	0.41	0.32	0.52
Տնտեսական իրադրության ինդեքս	0.30	0.67	0.94	0.64	0.29	1.00	0.96	0.00

Սույն ինդեքսի հաշվարկը մեզ հնարավորություն կտա խորը վերլուծություններ իրականացնել ՀՀ ֆինանսական կայունության վերաբերյալ, որը մինչև այդ հաշվարկվել էր ուղղակի առանձին ինդեքսների միջոցով: Այս եղանակով կհաշվարկվի ՀՀ ֆինանսական կայունությունը 2012-ից սկսած (որոշ տվյալների բացակայություն պատճառով այն չի հաշվարկվի ավելի վաղ ժամկետից) և կհամեմատվի գործող ցուցանիշների հետ, որը ԿԲ-ն հրապարակում է: Դրանց արդյունավետությունը կարելի է որոշել ֆինանսական ճգնաժամի տարիներին ունեցած իր վարքագծով:

Ինդեքսի գնահատման համար կիրառվում է վերոնշյալ ցուցանիշների նորմալացված գնահատականներ, որոնք ընդունում են 0-1 արժեքներ: Նորմալիզացնելու համար կիրառվում են էկոնոմետրիկ և մաթեմատիկական մեթոդներ, որոնցից կօգտվենք հետևյալ բանաձևից՝

$$nI_{it} = \frac{I_{it} - \min(I_{it})}{\max(I_{it}) - \min(I_{it})}$$

Ինդեքսի վերոնշյալ արժեքները հաշվարկելուց հետո դրանք տեղադրենք ենթահինդեքսների հաշվարկման բանաձևերի մեջ և ստանում ենք ենթահինդեքսների գնահատականները: Վերջնական բանաձևի մեջ արդեն տեղադրենք համապատասխան կշիռներով հաշվարկված ենթահինդեքսները ըստ տարիների, և կունենանք նոր հաշվարկված ֆինանսական կայունության ցուցանիշներ: Հաշվարկված ցուցանիշները ունեն հետևյալ արժեքները՝

Ագրեգացված ֆինանսական կայունության ենթահինդեքսները ՀՀ-ում

D	0.34	0.39	0.40	0.30	0.50	0.52	0.47	0.46
V	0.13	0.24	0.44	0.56	0.45	0.43	0.59	0.61
S	0.64	0.48	0.53	0.20	0.55	0.57	0.65	0.49
W	0.17	0.43	0.74	0.55	0.22	0.0	0.76	0.21

Որտեղ D, V, S, W-ն ենթահինդեքսներն են:

Ֆինանսական կայունության համակցված ցուցանիշի վերջնական արժեքը հաշվարկից հետո կընդունի հետևյալ արժեքները՝ սկսած 2012թ. .


Ագրեգացված ֆինանսական կայունության ինդեքսը ՀՀ-ում

Տարի	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019
AFSI	0.289	0.352	0.499	0.424	0.44	0.521	0.60	0.489


Վերլուծություն

Ֆինանսական կայունության ագրեգացված ինդեքսն ավելի արդյունավետ դիտարկելու համար նպատակահարմար է հաշվարկի արդյունքները ներկայացնել գծապատկերի տեսքով, որը ցույց կտա կայունության տատանումները ժամանակի ընթացքում:

Ագրեգացված ֆինանսական կայունության ինդեքսի դինամիկան ՀՀ-ում



Ինչքան ցուցանիշը մոտ է 1-ի կամ -1-ի, այնքան անկայուն է երկրի ֆինանսական դրությունը, իսկ կենտրոնական արժեքների դեպքում ընդհակառակը՝ առկա է կայուն իրավիճակ: Ինչպես տեսնում ենք, 2018–2019թթ. երկրում ֆինանսական դրությունը համեմատաբար վատթարանում է, ինչը բացատրվում է երկրի անկայուն տնտեսաքաղաքական վիճակով: Համեմատենք տվյալ ցուցանիշն այլ ֆինանսական ցուցանիշների հետ՝ դիտարկելով 2012–2020 թթ. ֆինանսական մյուս ոչ ագրեգացված ցուցանիշների դինամիկան:



Գծանկար 1. ՀՀ ԿԲ ֆինանսական կայունության ցուցանիշներ

https://www.cba.am/am/SitePages/fsindicators_FSI.aspx

Ցուցանիշների ազդեցությունը երկրի իրական ֆինանսական կայունության վրա գնահատուի համար հարմար է 2014–15թթ., քանի որ ԱՄՀ ցուցանիշները ցույց են տալիս անկումային իրավիճակ 2015թ.–ին, իսկ ազդեցացված ցուցանիշը մատնանշում է 2014 թ.: Դա պարզելու համար դիտարկենք երկրի ֆինանսական դրությունը 2014–2015 թթ.–ին և առանձնացնենք ճգնաժամի օգտին հնդես եկող փաստարկները: Էյչենգերի մեթոդաբանությամբ հաշվարկված ցուցանիշով ՀՀ–ում արժույթային ճգնաժամեր գրանցվել են 2013թ.¹, իսկ ճգնաժամային մոտ իրավիճակ 2014թ., որը ցույց է տալիս, որ նոր ցուցանիշը ավելի արագ է արձագանքում երկրում ճգնաժամային իրավիճակներին և ավելի հեշտ կլինի քաղաքականություն մշակել: 2012թ. տնտեսական անկայունությունը նույնպես չի արտահայտվում ներկայումս առկա ցուցանիշներով, այնինքն ազդեցացված ցուցանիշով առկա է ակնհայտ ճգնաժամային իրադրություն՝ պայմանավորված ֆինանսական զարգացման, խոցելիության ու միջազգային ենթաինդեքսների ցածր արժեքներով: Սա խոսում է ցուցանիշի ավելի ընդգրկուն, ստույգ ու արդյունավետ լինելու մասին:

Եզրակացություններ

Սույն աշխատանքի միջոցով ամփոփվեցին ՀՀ ֆինանսական հատվածի հիմնական առանձնահատկությունները, տրվեց ԱՄՀ ֆիսկալ թափանցիկության կանոնագրքի (ՖԹԿ) ֆիսկալ թափանցիկության գնահատման հիմնական ցուցանիշների գնահատականը, հատկապես նրանց համար, որոնք վերաբերում են ՀՀ ֆինանսատնտեսական ցուցանիշների կանխատեսման գործընթացին:

Ինչպես ներկայացվեց ՀՀ Կբ գործունեության ուսումնասիրության արդյունքներից, որպես ՀՀ ֆինանսական կայունության ցուցանիշներ դիտարկվում են ԱՄՀ որոշ ցուցանիշներ, և չկա կոնկրետ ցուցանիշ որը կտա ամբողջական պատկեր: Այդ իսկ նպատակով իրականացվել է հետազոտություն, որի ընթացքում առանձնացվել է Ճամայկայի ֆնանսական կայունության հաշվարկման համար ստեղծված ցուցանիշը, որը բավականին ընդգրկուն է և գրնահատում է ֆինանսական կայունությունը բոլոր կողմերից: Արդյունքում դուրս է բերվել ցուցանիշի հաշվարկման մեթոդաբանությունը և կիրառվել է

¹ Արժույթային Ա ճգնաժամեր, արժույթային ճգնաժամերի ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի վրա, Регион и мир, 2020, № 5, Պետրոսյան Գ. Ս, Մինասյան Դ. Գ.

ՀՀ ֆինանսական կայունության գնահատման համար: Այս ցուցանիշը կարող է օգտագործվել կանխատեսումային շատ մոդելներում, իրականացնել քաղաքականություն մոդելի արդյունքների հիման վրա՝ հաշվի առնելով ցուցանիշի վրա մակրոտնտեսական ցուցանիշների ազդեցությունը: Միակ խոչնդոտը դա տվյալների սահմանափակությունն է:

Առաջարկվում է, որ ՀՀ ԿԲ-ն սկսի տվյալ ցուցանիշի ավելի խորը ուսումնասիրություն և դիտարկի նրա կիրառելիությունը ֆինանսական կայունության գնահատման համար:

Գրականության ցանկ

1. “Macroeconomic forecasting and structural change” by Antonello D’Agostino, Luca Gambetti and Domenico Giannone, Working Paper Serie s No 1167 / A Pri L 2010, European Central Bank
2. “The Past, Present, and Future of Macroeconomic Forecasting” Francis X. Diebold, University of Pennsylvania and NBER, October 22, 1997
3. Albulescu, Claudiu Tiberiu. 2008. “Assessing Romanian Financial Sector Stability by Means of an Aggregate Index.” *Oeconomica*, 17(2): 67-87
4. Fell, J. and G. Schinasi. 2005. “Assessing Financial Stability: Exploring the Boundaries
5. Financial Sector Assessment A Handbook, Chapter 2, Indicators of Financial Structure, Development, and Soundness World Bank, 2005
6. Grigoryan K., Petrosyan G., Vardanyan K., Assessment of the effects of domestic economic shocks caused by COVID-19 and the effectiveness of fiscal policy measures, *Danish Scientific Journal*, №42, VOLUME 3, 2020, Copenhagen, Denmark, pp. 3-7, http://www.danish-science.org/wpcontent/uploads/2020/12/DSJ_42_3.pdf
7. Fuleky, Peter (Ed.), *Macroeconomic Forecasting in the Era of Big Data: Theory and Practice*
8. Measuring And Forecasting Financial Stability The Composition Of An Aggregate Financial Stability Index For Jamaica Verlis C. Morrisof Analysis.” *National Institute Economic Review*, 192:102-117.
9. ՀՀ ԿԲ Ֆինանսական կայունության հաշվետվություն, 2020 թ. –ի 1-ին կիսամյակ
10. Յոհան Սայվալդ, Ֆազիր Շեյք Ռահիմ, Վիերա Կառլոլվա, Ջոն Զոհրաբ, Վահրամ Զանվելյան, Էյվինդ Թանբերգ, «ՀՀ պետական ներդրումների կառավարման գնահատում», ԱՄՀ երկրի զեկույց թիվ 19/134, 01. 2019
11. Պետրոսյան Գ. Ս, Մինասյան Դ. Գ., Արժութային ճգնաժամերի ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի վրա, *Регион и мир*, 2020, № 5

Կարեն ԳՐԻԳՈՐՅԱՆ, Դավիթ ՄԻՆԱՍՅԱՆ

Ագրեգացված ֆինանսական կայունության ինդեքսի գնահատումը ՀՀում
Բանալի բառեր. ֆինանսական կայունություն, խոցելիություն, զարգացում, թափանցիկություն, միջազգային տնտեսական իրադրություն

Աշխատանքում որպես հիմնական ցուցանիշ դիտարկվել ու խորությամբ գրնահատվել է ֆինանսական կայունությունը, որի համար բացահայտվել է նրա ներկայիս հաշվարկման համակարգը, դիտարկման սկզբունքը, օգտագործվող գործիքները: Իրականացվել է ցուցանիշի հաշվարկ՝ օգտվելով միջազգային գրականությունից վերցված հաշվարկման մեթոդաբանությունից: Աշխատանքի արժեքը կայանում է նրանում, որ իրականացվել է տվյալների հավաքագրման և վերլուծական-հետազոտական ընդգրկուն աշխատանք, որի արդյունքում հնարավոր է եղել excel ծրագրի կիրառման միջոցով հաշվարկել ու ստանալ ֆինանսական կայունության գնահատման նոր ցուցանիշ՝ 2012–2019թթ. համար: Ցուցանիշը կազմված է 18 բաղկացուցիչներից, որոնք ցույց են տալիս տնտեսության առանձին հատվածի նկարագիր:

Karen GRIGORYAN, Davit MINASYAN

Evaluation of the aggregate financial stability index for the RA

Key words: Financial stability, aggregate index, development, transparency, world economic climate

In this research as the key indicator was discussed and analyzed in depth financial stability, for which is revealed current calculation system, and tools for viewing it. Apart from that a new indicator is calculated, using international literature and methodology. The value of the research is that it contains an inclusive analytical-research work, based on which with a use of excel tools a new indicator for measuring financial stability in Armenia for 2012-2019 period was calculated. The indicator consists of 18 components, and each of them is describing separate part of economy. The objective of the research is to find out the relevance of the current indicators of financial stability and implementation of the more efficient index.

Карен ГРИГОРЯН, Давид МИНАСЯН

Оценка агрегированного индекса финансового стабильности для Армении

Ключевые слова: Финансовая стабильность, прозрачность, уязвимость, развитие, международное экономическое положение

В статье как основной индекс финансово сектора была рассмотрено и детально изучено индекс финансовой стабильности, для чего была раскрыта текущая методика калькуляции индекса финансовой стабильности и методы для его мониторинга. На основе исследования международной литературы представлена новая методика калькуляции финансового стабильности. Ценность работы исключается в том, что в результате обширной исследовательско-аналитической работы и с помощью excel составлена новый индикатор для оценивание финансового стабильности в Армении для периода 2012-2019. Индикатор составлен из 18 компонентов, каждый из которых характеризует отдельный часть экономики.

ՈՐԱԿՅԱԼ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԸ ՈՐՊԵՍ ԲԱՐՁՐ ՏԵՆՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՆ

Հայկազ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Սեֆ ինտերնեյշնլ ՈւՎԿ ՍՊԸ - ներքին աուդիտոր
ՀՊՏՀ Կառավարման ամբիոնի ասպիրանտ

Բանալի բառեր. բարձր տեխնոլոգիական արդյունաբերություն, կլաստեր, մարդկային կապիտալ, բարձրագույն կրթություն, ԵԱՏՄ համագործակցություն:

Ներածություն

21-րդ դարը զարգացման և գիտատեխնիկական առաջընթացի դար է, որտեղ տեխնիկական և տեխնոլոգիաները զարգանում են շատ արագ տեմպերով, ուղղորդելով զարգացած և զարգացող երկրների տնտեսությունները զարգացման նոր մակարդակների: Այս գործընթացի գլխավոր կրողը մարդկային կապիտալն է, որը հանդիսանում է ամենաթանկարժեք ռեսուրսը աշխարհում: Այն որոշիչ դեր է խաղում ինչպես երկրների մրցակցային առավելությունների ձեռքբերման, այնպես էլ տնտեսական աճի ապահովման գործընթացում: Այդ է պատճառը, որ ժամանակակից պետությունների տնտեսության զարգացման արդյունավետությունը էապես կախված է նրանց կարևորագույն ռեսուրսի՝ մարդկային կապիտալի որակից, որը ոչ միայն ժամանակակից հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման գլխավոր շարժիչ ուժն է, այլև նոր տնտեսության կառուցման հիմքը: Մարդկային կապիտալի որակը որոշող կարևորագույն գործոններն են կրթությունը և առողջապահությունը: Ուստի առաջընթացի և զարգացման համար պետությունները պարտավոր են անդադար բարելավել կրթությունը և առողջապահությունը ապահովելով դրանց բարձր որակը և հասանելիությունը բնակչության շրջանում: Սակայն որակյալ մարդկային կապիտալի ձևավորումը ինքնանպատակ գործընթաց չէ և անհրաժեշտ է այն ճիշտ կառավարել և օգտագործել ի շահ պետության և հասարակության: Այս առումով սույն աշխատանքի նպատակն է բացահայտել ուղիներ ՀՀ-ում բարձրագույն կրթությունը հասանելի դարձնելու և այն օպտիմալ կառավարելու համար: Նպատակն իրականացնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

➤ ուսումնասիրել ՀՀ բարձրագույն կրթության համակարգը, առկա հիմնախնդիրները, մասնավորապես հասանելիությունը բնակչության շրջանում,

- բացահայտել կրթությունը հասանելի դարձնելու և որակյալ մարդկային կապիտալի ձևավորման ուղիները,
- գտնել ուղիներ այն արդյունավետ օգտագործելու համար:

Մեթոդաբանություն

Աշխատությունում կիրառվել են հետազոտության տեսական մեթոդներ՝ վերլուծության, սինթեզի և դուրսբերման (դեդուկցիայի) մեթոդներ, ինչպես նաև նկարագրության և ընդհանրացումների մեթոդները:

Գրականության ակնարկ

«Մարդկային կապիտալ» եզրույթը գիտական շրջանակներում սկսել է լայնորեն կիրառվել 1950-ական թթ. վերջերին, երբ լույս տեսավ Յ. Մինսերի «Ներդրումները մարդկային կապիտալում և անձնական եկամուտների բաշխումը» հոդվածը (1958թ.)¹, թեև այդ խնդրին, դեռևս 1776թ., իր աշխատության մեջ անդրադարձել էր Ադամ Սմիթը: Կապիտալի չորրորդ բնորոշման մեջ նա նշում էր, որ տաղանդների ձևավորման գործում, նրանց կրթությունը, ուսումը կամ վերապատրաստումը պահանջում են մեծ գումարներ, և այդ գումարները անհրաժեշտ է դիտարկել որպես անհատի կապիտալ: Այդ տաղանդները կազմակերպության, ինչպես նաև հասարակության ներուժի մասն են կազմում²: Սակայն մարդկային կապիտալի տեսության հիմնադիր համարվում է Գարի Բեկերը, քանի որ նախկին տեսաբանները իրենց աշխատություններում ավելի շատ հետազոտություններ է կատարել, քան փորձել է մեկնաբանել և բնորոշել այդ եզրույթը: Գ. Բեկերը զարգացրեց այդ գաղափարները, բնորոշել է մարդկային կապիտալ եզրույթը: Այսպես, «Տեսական և փորձարարական վերլուծություններ կրթության հատուկ շեշտադրմամբ» աշխատությունում (1964թ.) Գ. Բեկերը նշում է, որ «մարդկանց մեծամասնության համար «կապիտալ» բառը նույնացվում է բանկային հաշիվների, կազմակերպությունների բաժնետոմսերի, հոսքային գծերի.....հետ, որոնք կապիտալի տարատեսակ են այն իմաստով, որ ակտիվներ են, որոնց միջոցով եկամուտ կամ այլ օգտակար արդյունքներ են ստացվում: Սակայն ուսուցումը դպրոցում, վերապատրաստման ծրագրերը, առողջապահությանն ուղղված ծախսերը, ինչպես նաև դասախոսությունները վեհ արժեքների մասին նույնպես

¹ Jacob Mince “Investment in Human Capital and Personal Income Distribution”, 1958, The University of Chicago Press, Journal of Political Economy, Vol. 66, No. 4, pp. 281-302.

² A.Smith “An Inquiry into the Nature and Causes of the Wealth of Nations”, 1776, London, 743p.

հանդիսանում են կապիտալ և կոչվում են «մարդկային կապիտալ», քանի որ մարդիկ չեն կարող առանձնանալ իրենց գիտելիքներից, կարողություններից, հմտություններից կամ այլ արժեքներից այն կերպ, ինչպես կարող են ձերբազատվել ֆինանսական և ֆիզիկական ակտիվներից»¹:

ՀՀ-ում մարդկային կապիտալի կառավարման հիմնախնդիրները դեռևս ոչ բավարար չափով են հետազոտված: Թերևս առանցքային կարելի է համարել 2018թ. լույս տեսած Ֆիրուզա Մայիլյանի «Մարդկային կապիտալի իրացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» աշխատությունը, որում ներկայացվել են մարդկային կապիտալի իրացման տեսական հիմնախնդիրները, մարդկային կապիտալի իրացման և տնտեսական աճի փոխազդեցության մեխանիզմը, մարդկային կապիտալի իրացման մակարդակի և տնտեսական աճի փոխազդեցության քանակական գնահատման արդյունքները ՀՀ-ում²:

Վերլուծություն

Պատմության ընթացքում, մեծ մասամբ, մարդկանց եկամուտների մակարդակը ցածր է եղել, կյանքը՝ կարճ, իսկ տնտեսական աճը՝ չնչին: Սակայն ներկայումս մարդիկ ավելի առողջ են, բարեկեցիկ և երջանիկ: Այս փոփոխությունն պայմանավորված է գիտության ընդլայնմամբ ու զարգացումով, մասնագիտական պատրաստվածության և կրթության մակարդակի բարձրացմամբ, առողջության բարելավմամբ, ժողովրդագրական փոփոխություններով և այլն: Այս գործընթացը իրենից ներկայացնում է մարդկային կապիտալի զարգացում³: Օքսֆորդի բառարանում մարդկային կապիտալը բնորոշվում է որպես անձի կամ մարդկանց խմբի գիտելքը, փորձը և հմտությունները, որոնք արժեք են համարվում կազմակերպության կամ պետության համար և կարող են օգտագործվել⁴: Այս ամենին, թերևս, կարելի է ավելացնել մարդու ստեղծագործական միտքը, սոցիալական և անհատական հատկանիշները, որոնք իրենց մեջ ներառում են տնտեսական արժեք ստանալու համար աշխատանք կատարելու ունակություն: Կազմակերպության մակարդակում մար-

¹ <http://www.econlib.org/library/Enc/HumanCapital.html>

² Մայիլյան Ֆ. «Մարդկային կապիտալի իրացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», 2018 թ., Երևան, Հեղ. Հրատ., 381 էջ:

³ Claudia Goldin, Michael Haupt, "Human Capital", 2014, Department of Economics Harvard University and National Bureau of Economic Research, page 1.

⁴ <https://www.oxfordlearnersdictionaries.com/definition/english/human-capital>

դրկային կապիտալը կարող է սահմանվել որպես արտադրության մեջ օգտագործվող հմտությունների և կարողությունների հանրագումար¹: Այս առումով, Ս. Ջոնսոնը նշում էր, որ բոլոր նորարարությունները մարդկային նորարարություններ են, քանի որ տնտեսությունը և բիզնեսը մարդկանց կողմից ստեղծված համակարգեր են, և հետևաբար չի կարող գոյություն ունենալ կառուցվածքային կապիտալ՝ առանց մտավոր կապիտալի և մտավոր կապիտալ՝ առանց մարդկային կապիտալի²: Համաշխարհային բանկի 2018թ. կատարած ուսումնասիրություններում բացահայտվել է, որ 2014թ. գլոբալ բարեկեցությունը պայմանավորող գործոնների 64%-ը հանգում է մարդկային կապիտալին³:

Մարդկային կապիտալի որակը պայմանավորող կարևորագույն գործոններից է որակյալ և հասանելի բարձրագույն կրթության առկայությունը բնակչության շրջանում, որը պետք է հիմք հանդիսանա գիտության ոլորտում հանճարների ձևավորմանը: Այս առումով ՀՀ-ում գործում է անվճար և վճարովի ուսումնառության համակարգեր: Անվճար ուսումնառության համակարգը կարգավորվում է ՀՀ կառավարության 2006թ. հուլիսի 27-ի 1183-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն: Ըստ այդմ՝ ՀՀ կառավարությունը յուրաքանչյուր տարի տվյալ տարվա պետական բյուջեով բարձրագույն ուսումնական հաստատությունների համար նախատեսված միջոցների սահմաններում, ըստ բուհերի և մասնագիտությունների, բաշխում է պետության կողմից տրվող ուսանողական նպաստների քանակը՝ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներին համապատասխան, ըստ որի՝ ուսման վճարի փոխհատուցում նպաստի ձևով տրվում է մրցույթի արդյունքներով բուհ ընդունված, ուսումնական տարվա արդյունքներով բարձր առաջադիմություն ունեցող, սոցիալապես անապահով, նպատակային ուսուցմամբ ուսանողներին, այդ թրվում՝ սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի ուսանողներին՝ անկախ տվյալ ուսումնառության համակարգից (անվճար, վճարովի), օրենքներով սահմանված կարգով, Հայաստանի կառավարության հաստատած

¹ J. Winterton, K. Cafferkey “Revisiting Human Capital Theory: Progress and Prospects”, 2019, London, Elgar Publishing, p. 13.

² D. Johnson, H. Neave, B. Pazderka “Knowledge, Innovation and Share Value”, 2002, International Journal of Management Reviews, 4(2), pp. 101-134.


³ Glenn-Marie Lange, Quentin Wodon, Kevin Carey "The Changing Wealth of Nations 2018, Building a Sustainable Future", 2018, World Bank Group, 235 pages.

տեղերի քանակին և կարգին համապատասխան¹: Դիտարկենք ՀՀ բարձրագույն պետական ուսումնական հաստատություններում անվճար և վճարովի ուսուցման համակարգերում սովորողների թվաքանակը 2019/2020 ուս. տարում (աղյուսակ 1).

Աղյուսակ 1. Բարձրագույն պետական ուսումնական հաստատություններ սովորող ուսանողների թվաքանակն անվճար և վճարովի ուսուցման համակարգերում 2019/2020 ուս. տարի²

Կրթական Աստիճան	Ուսանողների թվաքանակը	այդ թվում ³	
		անվճար	վճարովի
Առաջին աստիճան	55,244	9,438	45,806
Երկրորդ աստիճան	9,860	2,659	7,201
Ընդամենը	65,104	12,097	53,007

Ըստ աղյուսակ 1-ի տվյալների ՀՀ պետական հաստատություններում սովորում են 65,104 ուսանող, որոնց միայն 12,097-ն է սովորում անվճար ուսուցման համակարգում: Այսինքն միայն 18,5% է սովորում պետական աջակցությամբ, իսկ մնացածը՝ սեփական միջոցների հաշվին: Դիտարկենք անվճար ուսուցման համակարգում սովորող ուսանողների տեսակարար կշիռը տարբեր թվականներին (գծապատկեր 1).




Գծապատկեր 1. ՀՀ անվճար ուսուցման համակարգում սովորող ուսանողների տեսակարար կշիռը 2016-2020թթ. ուսումնական տարիներին, մարդ¹

¹ <https://www.e-draft.am/en/projects/2981/justification>

² ՀՀ Սոցիալ-տնտես. վիճակը 2020 թ. հունվ.-մարտին, 2020թ., ՀՀ ՎԿ, էջ 243-259:

Ըստ գծապատկեր 1-ի տվյալների, թեև անվճար ուսուցման համակարգում սովորող ուսանողների տեսակարար կշիռը շարունակաբար աճում է, ուսանողների ընդհանուր թիվը նվազում է: Այսպես, 2019/2020 ուս. տարում սովորող ուսանողների թիվը նվազել է 21.4%-ով ի համեմատություն 2016/2017 ուս. տարվա: 2017/2018 ուս. տարուց սկսած նվազել է նաև անվճար ուսուցման համակարգում սովորող ուսանողների թիվը: Ստացվում է, որ պետական ուսումնական հաստատություններում սովորող ուսանողների 81,5%-ը ստիպված են ինքնուրույն հոգալ կրթական ծախսերը: Այսպիսով, վերոնշյալից պարզվում է, որ պետական աջակցությունը հասանելի է ուսանողների շատ չնչին տոկոսին: Այժմ պարզենք, թե որքանով են տնային տնտեսությունները պատրաստ հոգալ կրթական ծախսերը: Նախևառաջ դիտարկենք ՀՀ-ում աղքատության մակարդակի դինամիկան (գծապատկեր 2):



Գծապատկեր 2*. Աղքատության մակարդակի ցուցանիշների դինամիկան, 2009-2019 թթ.²

Ինչպես երևում է գծապատկերից ՀՀ-ում աղքատության մակարդակի ցուցանիշը սկսած 2010թ. շարունակաբար նվազել և 2018թ. այն կազմել է 23.5%: 2019թ. ցուցանիշը կազմել է 43.8%: Հատկանշական է, որ ՀՀ-ում աղքատության ցուցանիշի հաշվարկման մեթոդաբանությունը վերանայվել է և

¹ Գծապատկերը կառուցվել է ելնելով ներքոնշյալ հրապարակումների տվյալներից:

ՀՀ Սոցիալ-տնտես. վիճակը 2017 թ. հունվ.-մարտին, 2017թ., ՀՀ ՎԿ:

ՀՀ Սոցիալ-տնտես. վիճակը 2018 թ. հունվ.-մարտին, 2018թ., ՀՀ ՎԿ::


ՀՀ Սոցիալ-տնտես. վիճակը 2019 թ. հունվ.-մարտին, 2019թ., ՀՀ ՎԿ:

ՀՀ Սոցիալ-տնտես. վիճակը 2020 թ. հունվ.-մարտին, 2020թ., ՀՀ ՎԿ:

2019թ. ցուցանիշը համադրելի չէ նախորդ ժամանակահատվածների ցուցանիշների հետ, կապված հաշվարկման մեթոդաբանության փոփոխությունների հետ:

² «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը», 2020 թ., ՀՀ ՎԿ, էջ 31:

2019թ. աղքատության վերին գիծը, հաշվարկված է ըստ աղքատության միջին գծի: Այժմ դիտարկենք ՀՀ-ում միջին անվանական աշխատավարձի չափի դինամիկան (գծապատկեր 3):



Գծապատկեր 3. Միջին անվանական աշխատավարձի չափի դինամիկան ՀՀ-ում 2009-2020 թթ., ՀՀ դրամ¹

Ըստ գծապատկեր 3-ի տվյալների 2020 թ. միջին անվանական աշխատավարձը կազմել է 189,716 դրամ, իսկ իրական աշխատավարձը՝ մոտ 140 հազ. դրամ և սա այն պարագայում, երբ նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը, ըստ ՀՀ Վիճակագրական կոմիտեի տվյալների, 2020թ. 4-րդ եռամսյակում միջին ընթացիկ գներով կազմել է 60,305.7 դրամ²: Հատկանշական է, որ նվազագույն սպառողական զամբյուղի հաշվարկում ներառված են նաև կրթության և առողջապահության ծախսերը, սակայն դրանց տեսակարար կշիռները շատ աննշան են և չեն կարող անհատին իրապես ապահովել որակյալ կրթությամբ և առողջապահությամբ: Հետևաբար 4 անդամից բաղկացած միջին վիճակագրական ընտանիքում, եթե պայմանականորեն աշխատեն երկուսը (ծնողները), ապա ընտանիքը կարող է իր տրամադրության տակ ունենալ մոտ 38,000 դրամ այլ կարիքները (ներառյալ կրթական և առողջապահական) հոգալու համար: Վերոնշյալ հաշվարկում հաշվի չեն առնվել ՀՀ եկամտային հարկի, սոցիալական վճարի և դրոշմանիշային վճարի դրոյքաչափերի փոփոխությունները, որը հաշվի առնելու դեպքում իրական աշխատավարձը չափը նվազելու է մոտ 2,000 դրամով: Այս ամենից պարզ է

¹ <https://www.armstat.am/am/?nid=12&id=08001&submit=Փնտրել>

² ՀՀ Սոցիալ-տնտես. վիճակը 2020 թ. հունվ.-դեկտ., 2021թ., ՀՀ ՎԿ, էջ 275:

դառնում, որ ՀՀ տնային տնտեսությունների գերակշիռ մասը չի կարող հոգալ իրենց երեխաների կրթական ծախսերը: Այս պարագայում, որոշ դեպքերում, ուսանողներն աշխատում են, որպեսզի ինչ-որ չափ հոգան իրենց կրթական ծախսերը, որը բնականաբար, բացասաբար է անդրադառնում ուսանողի առաջադիմության վրա, որն էլ հանգեցնում է ցածրորակ մարդկային կապիտալի ձևավորմանը: Ստացվում է, որ ՀՀ-ում առկա է իրավիճակ, որում մի շարք տաղանդներ ի զորու չեն լինի իրենց արժանավայել տեղը գտել աշխատաշուկայում և ստեղծել նոր արժեքներ, քանի որ չեն կարողացել վճարել որակյալ կրթություն ձեռք բերելու համար:

Այս խնդրի լուծումը մենք տեսնում ենք ԵԱՏՄ ներուժի և հնարավորությունների օգտագործման մեջ, որի անդամ է Հայաստանը 2015թ. հունվարի 2-ից: Իսկ ի՞նչ է իրենից ներկայացնում Եվրասիական տնտեսական միությունը: Այն տարածաշրջանային տնտեսական ինտեգրման միջազգային կազմակերպություն է, որն ունի միջազգային իրավասություն և հիմնադրվել է Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրով: ԵԱՏՄ-ում ապահովում է ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի տեղաշարժի ազատությունը, ինչպես նաև տնտեսության ճյուղերում համակարգված, համաձայնեցված կամ միասնական քաղաքականության իրականացումը: ԵԱՏՄ անդամ են հանդիսանում Հայաստանը, Բելառուսը, Ղազախստանը, Ղրղստանը և Ռուսաստանը: ԵԱՏՄ-ն ստեղծվել է ազգային տնտեսությունների համակողմանի արդիականացման, կոոպերացիայի և մրցունակության բարձրացման և կայուն զարգացման համար պայմանների ստեղծման նպատակով՝ ի շահ անդամ պետությունների բնակչության կենսամակարդակի բարձրացման¹: Հայաստանը, որը ԵԱՏՄ-ի փոքր տնտեսություն ունեցող երկրներից է, ունի գրեթե բոլոր հնարավորությունները մեծ օգուտներ քաղելու ԵԱՏՄ-ում, մասնավորապես ՌԴ հետ համագործակցությամբ:

Մեր կարծիքով՝ արդյունավետ համագործակցություն կարելի է իրականացնել կլաստերի շրջանակում, որն իր մեջ կներառի երկու ուղղություն՝ գիտություն և կրթություն ու բարձր տեխնոլոգիական արդյունաբերություն, ներառյալ ռազմական արդյունաբերության ոլորտը:

¹ <http://www.eaeunion.org/#about>

Իսկ ի՞նչ է իրենից ներկայացնում կլաստերը: Ըստ Քեմբրիջի բառարանի այն իրենից ներկայացնում է նմանատիպ իրերի խումբ, որոնք մոտ են միմանց, երբեմն շրջապատում են ինչ-որ բան¹: Ընդհանուր առմամբ կլաստերը (անգլ. cluster-կուտակում, փունջ) մի քանի միասեռ տարրերի միավորում է, որը կարելի է դիտարկել որպես որոշակի հատկություններով ինքնուրույն միավոր: Առաջին անգամ «կլաստեր» եզրույթը օգտագործվել է մաթեմատիկայում, երբ 1930-ականներին ձևավորվեց բազմակողմանի տվյալների կլաստերային վերլուծության ապարատը:

Տարբեր աղբյուրների տվյալներով՝ այս պահին Ռուսաստանում SS կադրերի պակաս է առաջացել: Ըստ տարբեր հաշվարկների՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում պակասում են 500 հազարից մինչև 1 մլն մասնագետներ²: Այդ կապակցությամբ Հայաստանը կարող է իր ներուժն առաջարկել ընդհանուր շահի համար: Կլաստերը հիմնված է հայկական և ռուսական համալսարանների, ինչպես նաև գիտահետազոտական ինստիտուտների համագործակցության վրա՝ Ռուսաստանի և Հայաստանի կրթության և գիտության համար պատասխանատու նախարարությունների աջակցությամբ, որի նպատակը պետք է լինի կրթության ընդհանուր չափորոշիչների մշակումը, որոնց օգնությամբ հայ շրջանավարտների գիտելիքները պահանջված կլինեն ռուսական աշխատաշուկայում: Թերևս գաղտնիք չեն, որ ռուսական բուհերը ԱՊՀ տարածաշրջանում լավագույն են և տարբեր կրթական վարկանիշային աղյուսակներում պատկառելի տեղ են զբաղեցնում: Ուստի այս համագործակցության շնորհիվ ՀՀ բուհերը հնարավորություն կստանան բարելավել կրթության որակը և ապագայում նույնպես զբաղեցնել բարձր հորիզոնականներ կրթական վարկանիշային աղյուսակներում: Այս համագործակցությունը իրենց ենթադրելու է նաև համատեղ գիտական նախագծերի իրականացում, պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի և ուսանողների և փոխանակման ծրագրերի իրականացում և ավարտական վկայականների փոխադարձ ճանաչում ու ընդունում: Այս կլաստերի շրջանակներում Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը կից ստեղծվում է մարմին, որը միավորում և համակարգում է հայկական գիտահետազոտական ինստի-

¹<https://dictionary.cambridge.org/ru/%D1%81%D0%BB%D0%BE%D0%B2%D0%B0%D1%80%D1%8C/%D0%B0%D0%BD%D0%B3%D0%BB%D0%B8%D0%B9%D1%81%D0%BA%D0%B8%D0%B9/cluster>

² https://www.cnews.ru/news/top/2021-02-17_v_rossii_katastroficheskiy

տուտները, բուիերը, ինչպես նաև բարձր տեխնոլոգիական արտադրությամբ զբաղվող պետական ու մասնավոր կազմակերպությունները: Այնուհետև ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը՝ համագործակցելով ռուսական բարձր տեխնոլոգիական ձեռնարկությունների հետ (հիմնականում պետական, ներառյալ ՌԴ ՊՆ-ին պատկանող ձեռնարկությունները) և հայ-ռուսական համագործակցության համատեքստում, պատվերներ ընդունում հետազոտությունների, բարձր տեխնոլոգիական արտադրանքի մշակման և արտադրության համար:

Այնուհետև անհրաժեշտ է ձեռնամուխ լինել կլաստերի կազմակերպությունների աշխատուժի ձևավորմանը, այսինքն՝ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտում որակյալ մարդկային կապիտալի ձևավորմանը: Սկզբնական փուլում կազմակերպությունները ստիպված կլինեն օգտագործել առկա ներուժը մինչև նոր ձևավորվող մարդկային կապիտալը կհամալրի իրենց շարքերը: Որակյալ մարդկային կապիտալի ձևավորումը պետք է սկսել դպրոցներից: Ըստ ՀՀ կառավարության 2004թ. հունիսի 17-ի 900-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշման ավագ դպրոցում երաշխավորվում են հոսքերի հետևյալ խմբերը՝ ընդհանուր, հիմնական (հումանիտար, բնագիտամաթեմատիկական, արհեստագործական) և լրացուցիչ (արվեստի, մարզական, ռազմական)¹: Այս առումով պայմանագիր է կնքվում մի քանի դպրոցի հետ, որտեղ բնագիտամաթեմատիկական հոսքի աշակերտների առաջադիմությունը ամենաբարձրն է և մրցույթի արդյունքում անհրաժեշտ քանակի լավագույն աշակերտների հետ, կնքվում է պայմանագիր, որով իրենք ստանում են անվճար կրթություն ստանալու հնարավորությունը նշված մասնագիտություններով ՀՀ բուիերում 650,000 ՀՀ դրամ ուսման վարձի չափով (ԵՊՀ-ում ամենաբարձր ուսման վարձն այդքան է, բացառությամբ իրավագիտության, և այն ներկայումս բավարար է որակյալ կրթություն ստանալու համար): Ուսումնառության ընթացքում ուսանողը կստանա ՀՀ նվազագույն աշխատավարձի կեսի չափով կրթաթոշակ, որը ներկայումս կազմում է 34,000 ՀՀ դրամ: Կրթության ընթացքում, յուրաքանչյուր տարի նրանք մասնագիտական փորձառություն կանցնեն կլաստերում առկա բարձր տեխնոլոգիական կազմակերպություններում, որի ընթացքում նրանք կամրապնդեն իրենց տեսական գիտելիքները. անհրաժեշտ է պահպանել սահմանված ա-

¹ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=52170>

ռաջադիմության չափորոշիչները, օրինակ՝ միջին որական գնահատականը 60%-ից ոչ պակաս լինելը /հակառակ դեպքում մասնակիցը դուրս է մնում ծրարագրից և ստիպված է վերադարձնել պետության՝ ծախսված գումարը: Առաջին աստիճանի կրթություն ստանալուց հետո, հարցազրույցների արդյունքում, շրջանավարտները բաշխվում են կլաստերում առկա կառույցներ, որում նրանք պարտավորվում են մոտակա 7 տարին աշխատել: Ուսման վարձերը և կրթաթոշակների ծախսը ամբողջությամբ հոգում է պետությունը: Ընդ որում անհատը կարող է վաղաժամկետ չեղարկել պայմանագիրը և այդ պարագայում անհատի հետ կնքվում է փոխառության պայմանագիր, որում նա պարտավորվում է վճարել պետության կողմից ծախսված գումարները որոշակի ժամկետներում: Միննույն ժամանակ, եթե համագործակցությունը ձախողվել է կազմակերպության պատճառով, ապա ծախսերը փոխհատուցում է կազմակերպությունը: Շահառուները իրենց հերթին պարտավորվում են .

- Ապահովել ընդունված շրջանավարտներին անհրաժեշտ պայմաններով և միջոցներով աշխատանքը արդյունավետ իրականացնելու համար:

- Իրականացնել վերապատրաստումներ և նեղ մասնագիտական դասընթացներ կադրերի զարգացման համար:

- Կազմակերպություններում ներդնել աշխատանքի օբյեկտիվ գնահատման կառուցակարգեր և կազմակերպության ներքին կանոնակարգերով երաշխավորել աշխատակիցների իրավունքների պաշտպանությունը:

- Ապահով աշխատակիցներին առողջության ապահովագրությամբ:

- Ապահովել ծրագրի շրջանակում աշխատավարձերի նվազագույն սահմանաչափերը: Ըստ այդմ աշխատակցի բազային մաքուր աշխատավարձը սահմանվում է նվազագույնը 120,000 ՀՀ դրամ և յուրքանայուր տարի այն աճում է առնվազն 60,000 ՀՀ դրամով: Այսինքն իր 7-րդ տարում աշխատակրցի մաքուր աշխատավարձը կհասնի նվազագույնը 480,000 ՀՀ դրամի: 7-րդ տարվա ավարտին պես պայմանագրի ժամկետը լրանում է և հետագա համագործակցությունը տեղի է ունենում կազմակերպության ղեկավարության և անհատի պայմանավորվածության հիման վրա:

Վերոնշյալ պայմանները նվազագույն են և կազմակերպությունը ազատ է այլ արտոնություններում: Կրթաթոշակի և աշխատավարձի չափերը պետք է փոփոխվեն ՀՀ ԿԲ հաստատած գնաճի ցուցանիշին համապատասխան:

Իսկ որն է պետության շահը բացի որակյալ մարդկային կապիտալ ձևավորելուց և նոր արժեքների ստեղծելուց: Պետությունը հարկային մուտքերի ավելացման հաշվին, ի զորու է 7 տարվա ընթացքում ոչ միայն հետ բերել ծախսված գումարները, այլապես ստանալ գրեթե նույն եկամուտը, ինչը առանց վերոնշյալ ծախսերի կատարման դեպքում կստանար և ստանալ հավելյալ մեծ եկամուտ անձի հետագա ամբողջ կյանքի ընթացքում, ի հաշիվ բարձր աշխատավարձից գանձաց հարկերի: Այժմ դիտարկենք պետական ծախսի և ակնկալվող եկամուտների հաշվարկը (Աղյուսակ 2 և 3):

Աղյուսակ 2. Ծրագրի շրջանակներում մեկ ուսանողի վրա պետության կողմից իրականացվող ծախսի չափը, ՀՀ դրամ

	Ամսական	Տարեկան	4 տարվա ընթացքում
Կրթաթոշակ	34,000	408,000	1,632,000
Ուսման վարձ	-	650,000	2,600,000
Ընդամենը			4,232,000

Աղյուսակ 3. Ծրագրի արդյունքում մեկ ուսանողից ստացվող հարկային մուտքերի չափը, ՀՀ դրամ

Տարի	Մաքուր աշխատավարձի չափ	Ամսական հարկի չափ	Տարեկան հարկի չափ
1	120,000	36,322	435,864
2	180,000	54,778	657,336
3	240,000	72,496	869,952
4	300,000	90,215	1,082,580
5	360,000	107,933	1,295,196
6	420,000	128,118	1,537,416
7	480,000	147,529	1,770,348
Ընդամենը			7,648,692

Ըստ աղյուսակ 2-ի և 3-ի տվյալների ՀՀ պետական եկամուտը 7 տարում կկազմի 7,648,692 ՀՀ դրամ, իսկ կատարված ծախսերը 4,232,000 ՀՀ դրամ, որի արդյունքում պետությունը կունենա 3,416,692 ՀՀ դրամ հավելյալ եկամուտ: Այս համատեքստում, եթե անհատը չմասնակցեր այս ծրագրին, ապա, հաշվի առնելով ՀՀ ՎԿ-ի կողմից գրանցված միջին աշխատավարձի չափը, 7

տարվա ընթացքում կվճարեր 3,505,992 ՀՀ դրամ հարկ: Այսինքն, պետությունը այս ծրագրի արդյունքում.

1. Ստեղծում է որակյալ մարդկային կապիտալ;
2. Մեղմում է գործազրկության վիճակը ՀՀ-ում;
3. Չարկ է տալիս հզոր բարձր տեխնոլոգիական արդյունաբերության ձևավորմանը, որը հիմք կլինի տնտեսական աճի և զարգացման համար;
4. Ամրապնդում է հայ-ռուսական կապերը ԵԱՏՄ համատեքստում;
5. Ավելացնում է հարկային մուտքերը, որը շարունական աճելու է:

Այս ամենի արդյունքում պետությունը ի զորու կլինի տարեց տարի ավելացնել շահառուների ցանկը և գուցե մեկ օր ՀՀ-ում կրթությունը դարձնել անվճար:

Եզրակացություններ

Այսպիսով, Հայաստանում առկա է բարձագույն կրթության հասանելիության խնդիր, որը չի նպաստում որակյալ մարդկային կապիտալի ձևավորմանը: ՀՀ հարուստ չէ հանքային ռեսուրսներով, ուստի իր զարգացման հիմքը որակյալ մարդկային կապիտալն է: ՀՀ-ն հանդիսանում է ԵԱՏՄ անդամ և, լինելով փոքր տնտեսություն ունեցող երկիր, կարող է արդյունավետ համագործակցության արդյունքում շահեկան դիրքում հայտնվել: Վերջերս բարձր ամբիոններիոց շատ է խոսվում բարձր տեխնոլոգիական արդյունաբերությունը դարձնել գերակա ճյուղ: ԵԱՏՄ համագործակցությունը ստեղծում է բարենպաստ պայմաններ այն իրականացնելու համար: Անհրաժեշտ է Ռուսաստանի հետ համատեղ ձևավորել կլաստեր կրթական ու գիտական և բարձր տեխնոլոգիական արդյունաբերության համատեքստում, որով ՀՀ-ն ի զորու կլինի բարձրացնել կրթության որակը, ձևավորել որակյալ մարդկային կապիտալ և կատարելով ռուսական պատվերները ստեղծել հզոր բարձր տեխնոլոգիական արդյունաբերությունը: Այն մեծ եկամուտներ կապահովի թե՛ Հայաստանին, և թե՛ Ռուսաստանին:

Հայկազ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Որակյալ մարդկային կապիտալը որպես բարձր տեխնոլոգիական արդյունաբերության ձևավորման գործոն

Բանալի բառեր. բարձր տեխնոլոգիական արդյունաբերություն, կլաստեր, մարդկային կապիտալ, բարձրագույն կրթություն, ԵԱՏՄ համագործակցություն

Հոդվածում ուսումնասիրվել են «մարդկային կապիտալ» եզրույթի էությունը և առանձնահատկությունները, ինչպես նաև դրա կարևոր բաղկացուցիչներից մեկը հանդիսացող կրթության հիմնահարցերը: Այս առումով ուսումնասիրվել է ՀՀ կրթական համակարգի առանձնահատկությունները, ուսումնառության համակարգերը, ՀՀ բարձրագույն կրթության հասանելիության հիմնախնդիրները, մասնավորապես դիտարկվել է ՀՀ պետական բուհերի անվճար ուսումնառության համակարգի շահառուների թիվը և այն համեմատվել տարբեր թվականների ցուցանիշների հետ: Այնուհետև վերլուծվել են բնակչության կենսամակարդակին վերաբերող ցուցանիշները և առաջարկվել ստեղծել ռուս-հայկական կլաստեր:

Айказ ШАХНАЗАРЯН

Качественный человеческий капитал как фактор формирования высокотехнологичной промышленности

Ключевые слова: высокотехнологичная промышленность, кластер, человеческий капитал, высшее образование, сотрудничество ЕАЭС

В статье изучены сущность и особенности термина "человеческий капитал", а также основные проблемы образования РА, являющегося одной из его важных составляющих. В этом плане были изучены особенности образовательной системы РА, системы обучения, проблемы доступности высшего образования РА, в частности, рассматривалось число бенефициаров системы бесплатного обучения государственных вузов РА и сравнивалось с показателями разных лет. Затем были проанализированы показатели, касающиеся уровня жизни населения РА, и предложено создать российско-армянский кластер, который включит в себя связь между армянским и российским университетами, научно-исследовательскими институтами и компаниями сферы высоких технологий.

Haykaz SHAHNAZARYAN

High-Quality Human Capital as a Factor in the Formation of High-Tech Industry

Key words: High-tech industry, cluster, human capital, higher education, cooperation

The article examines the essence and features of the term "human capital", as well as the main problems of RA education, which is one of its important components. In this plan, the features of the RA educational system, the educational system, the problems of accessibility of higher education in the Republic of Armenia were studied, in particular, the number of beneficiaries of the free education system of RA state universities was considered and compared with the indicators of different years. Then the analysis of indicators related to the standard of living of the population of the Republic of Armenia was carried out, and proposed to create a Russian-Armenian cluster.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2020Թ. ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

Թաթուլ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Բանալի բառեր. ազգային տնտեսություն, թագա-տնտեսական ճգնաժամ, Արցախյան պատերազմ, համավարակ, տնտեսական սպառնալիքներ

Ներածություն

2020 թվականը կհիշվի ոչ միայն երկրի տնտեսության անկմամբ, այլև հակասական միտումներով ու իրադարձություններով, որոնց դասերը պետք է հաշվի առնել զարգացման հեռանկարային ծրագրեր կազմելիս, ինչպես նաև ապագայի կանխատեսումների համար: Հայաստանի և Արցախի տնտեսություններին հիմնական վնաս է հասցրել պատերազմը և դրա հետևանքները: Ստորում և Արցախի տարբեր շրջաններում դադարեցվել է բնական ռեսուրսների արդյունահանումը (ոսկի, պղինձ, մոլիբդեն և այլն), կտրուկ նվազել են ներդրումները տարածաշրջանում: Պատերազմի ծախսերը Հայաստանի տնտեսության համար ծանր հետևանքներ կունենան ապագայում, իսկ բանակի վերազինման համար մեծ ֆինանսական ներդրումներ կպահանջվեն: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա պատերազմի ամեն օրը այդ երկրի բյուջեի վրա 50-80 մլն դոլար է արժեցել: Սակայն հաշվի առնելով Ադրբեջանի ռազմավարական պահուստները 50 մլրդ դոլարի սահմաններում, կարելի է նշել, որ երկիրը չի զգացել և չի զգա ուժեղ տնտեսական ցնցումներ: Ավելի շատ նա կորցնում է համաճարակի եւ նավթի ցածր գների պատճառով: Կարևոր է նշել, որ նույնիսկ առանց հաշվի առնելու թագա-տնտեսական ճրգնաժամի բացասական հետևանքները և Արցախում պատերազմի ծանր հետևանքները, կարելի էր ակնկալել տնտեսության աճի տեմպերի էական դանդաղում և անկում նրա առանձին ոլորտներում: Նշվածի պատճառներից մեկը տնտեսության կառավարման նկատմամբ ոչ կոմպետենտ վերաբերմունքն է և կառավարության տնտեսական անարդյունավետ քաղաքականությունը:

Մեթոդաբանություն և գրականության ակնարկ

Ուսումնասիրության հիմքում դրված են ՀՀ ԿԱ ՎԿ տվյալները, պետական կառույցների զեկույցներն ու հաշվետվությունները: Օգտագործվել են

վիճակագրական շարքեր և դրանց համեմատական վերլուծություններ, գիտական ընդհանրացումների և այլ մեթոդներ: Արժարժվող միտումների վերաբերյալ տվյալ ժամանակահատվածին առնչվող մենագրությունների բացակայության պայմաններում, այնուամենայնիվ, հաշվի են առնվել հայ և արտերկրի տնտեսագետների, միջազգային կառույցների դիրքորոշումներ¹:

Վերլուծություն

Արդյունքում, Հայաստանի արդյունաբերական արտադրանքի ծավալը 2020թ. ընթացիկ գներով կազմել է 2 տրլն 70 մլրդ 286.5 մլն դրամ (ավելի քան 4 մլրդ 233 մլն 628 001 ԱՄՆ դոլար): 2019թ. նույն ժամանակահատվածի համեմատ այդ ծավալը նվազել է 0.9%-ով: 2020թ. դեկտեմբերին արտադրության ծավալը կազմել է 238 մլրդ 183,4 մլն դրամ, 2019թ. նույն ժամանակահատվածի համեմատ այդ ծավալը նվազել է 5,8%-ով, իսկ անցյալ տարվա նոյեմբերի համեմատ՝ 14,4%-ով: Նախորդ տարվա 12 ամիսների ընթացքում լեռնահանքային արդյունաբերության և հանքերի շահագործման արտադրությունը կազմել է 403 մլրդ 95.6 մլն դրամ և 2019թ. նույն ժամանակահատվածի ցուցանիշը գերազանցել է 11.6-ով (աճի ամենամեծ ցուցանիշը): 2020թ. դեկտեմբերին տվյալ ոլորտում արտադրությունը հասել է 39 մլրդ 935.9 մլն դրամի: Մշակող արդյունաբերությունը 2020թ. տվել է 1 տրլն 387 մլրդ 923.7 մլն դրամի արտադրանք՝ 3.9%-ով պակաս, քան 2019թ. նույն ժամանակահատվածում, նախորդ տարվա դեկտեմբերին այդ ցուցանիշը հասել է 170 մլրդ 320.9 մլն դրամի՝ 7.3%-ով պակաս, քան 2019թ. նույն ամսում, և 17.7%-ով ավելի, քան 2020թ. նոյեմբերին: Նախորդ տարի էլեկտրաէներգիայի և գազի մատակարարման ոլորտում արտադրվել է 257 մլրդ 843,1 մլն դրամի արտադրանք: Նախորդ տարվա համեմատ աճը կազմել է 0,1 տոկոս: 2020թ. դեկտեմբերին ոլորտի արտադրանքը կազմել է 26 մլրդ 273.6 մլն դրամ և 2019թ. դեկտեմբերի համեմատ կրճատվել է 3.0%-ով²:

Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2020թ. 7.8% անկում է գրանցել, ինչը հիմնականում պայմանավորված է ծառայությունների ոլորտում և շինարարության ոլորտում տարվա ընթացքում արձանագրված զգալի անկմամբ: Թույլ ներքին պահանջարկի ձևավորման վրա հիմնականում ազդել է

¹ ՀՀ ԿԱ ՎԿ տվյալները՝ www.armstat.am, Համաշխարհային բանկի տվյալները՝ www.Worldbank.org, ՀՀ Կառավարության գործունեության ծրագիրը՝ www.gov.am

² ՀՀ ԿԱ ՎԿ տվյալները՝ www.armstat.am

մասնավոր սպառման զգալի անկումը, ինչն էլ իր հերթին պայմանավորված էր առկա անորոշության պայմաններում բնակչության զգուշավոր վարքագծով, ինչպես նաև վարկավորման աճի տեմպերի դանդաղմամբ, հատկապես վերջին ամիսներին: «ՀՀ-ում սպառողական գների ինդեքսը 2021թ.» հաշվետվության համաձայն, 2020թ. հունվարի համեմատ, օրինակ, արեւածաղկի ձեթի միջին գինն աճել է 44,3 տոկոսով, շաքարավազի եւ շաքարավազի միջին գինը՝ 40,7 տոկոսով, ձվի՝ 26,4 տոկոսով: Ընդհանուր առմամբ, պարենային ապրանքների, խմիչքների և ծխախոտի գներն այս տարվա հունվարին նախորդ տարվա հունվարի համեմատ աճել են 6,8%-ով, ոչ պարենային ապրանքներինը՝ 5,5%-ով: Պարենային ապրանքների գների աճը նկատում են նաև հասարակ քաղաքացիները: Նշենք, որ էական փոփոխություններ կան արժույթային շուկայում. 2021թ. հունվարին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 521.2 դրամ, ինչը 8.8%-ով գերազանցել է 2020թ. հունվարի ցուցանիշը՝ 479.2 դրամ, 2021թ. հունիսի վերջին՝ 498 դրամ¹: Մեր գնահատականներով՝ 2020թ. գործազրկության մակարդակը (ավելի քան 20%) Հայաստանում աճել է ոչ միայն տնտեսական իրավիճակի վատթարացման և պատերազմի ծանր հետևանքների հաշվին, այլ նաև լոբդաունի և գործարար ակտիվության անկման պատճառով: Աշխատուժի ավելցուկը պահանջարկ է գտնում տարբեր երկրներում՝ արդեն 2021թ. սկզբին համաճարակի հետ կապված իրավիճակի աստիճանական բարելավմամբ, որի արդյունքում կտրուկ նվազել են նաև ներդրումները Հայաստանի տնտեսության մեջ: 2020թ. վերջին ՀՀ պետական պարտքը կազմել է 7 մլրդ 968,5 մլն դոլար՝ անցած տարվա համեմատ աճելով 647,2 մլն դոլարով: Չնայած տնտեսության ընդհանուր անկմանը, 2020թ. գյուղատնտեսության ոլորտում ՀՆԱ-ն աճել է 1,4 տոկոսով: Համաշխարհային բանկի 2020-2021թթ. վարկերի պայմանագրեր են կնքվել 57 վերամշակող ընկերությունների հետ՝ արտադրական հզորությունների արդիականացման և սննդամթերքի անվտանգության համակարգերի ներդրման համար:

Ինչ վերաբերում է ԵԱՏՄ-ում Հայաստանի ցուցանիշներին, ապա նրա մանրաձախ առևտրի շրջանառությունը կրճատվել է 16,6 տոկոսով. Հայաստանում գյուղատնտեսական մթերքների արտադրությունն աճել է 1,5 տոկոսով, ինչը 2,3 տոկոսով ավելի է ԵԱՏՄ-ում գրանցված աճից: Ընդհանուր առ-

¹ ՀՀ Կենտրոնական Բանկի պաշտոնական կայք՝ www.cba.am

մամբ կորոնավիրուսի պանդեմիան և դրա հետևանքով առաջացած գործընթացները բացասաբար են ազդել Միության տնտեսության վրա: ԵԱՏՄ-ում 2020թ. նկատվել է հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշների նվազում, բացառությամբ գյուղատնտեսության արտադրանքի արտադրության¹:

Միակ երկիրն աշխարհում, որը կարողացել է ապահովել փոքր աճ Չինաստանն է: Այլ պետություններում արձանագրվել է ՀՆԱ-ի ծավալների անկում: Ինչ վերաբերում է ԵԱՏՄ երկրներին, ապա ամենամեծ վնասն արձանագրվել է ծառայությունների և զբոսաշրջության ոլորտներում: Այն բանին, որ ԵԱՏՄ-ի երկրները ճգնաժամից դուրս են եկել նվազագույն կորուստներով, փոքր չափով նպաստել են կառավարությունների կողմից ընդունված բիզնեսի ֆինանսական աջակցության միջոցները: Ընթացիկ տարում սպասվում է ԵԱՏՄ երկրների տնտեսությունների աճ, սակայն հստակ կանխատեսումներ անելը դժվար է: Տնտեսական ակտիվությունն նկատելի է նաև այն բանից, թե ինչպես է աճել ԵԱՏՄ-ում, հատկապես ՌԴ-ում աշխատուժի պահանջը:

Կայուն է նաև հայկական արտահանումը Ռուսաստան՝ կրճատվելով ընդամենը 11%-ով, այն դեպքում, երբ արտահանումը դեպի ԵԱՏՄ նվազել է գրեթե մեկ երրորդով: Չափավոր էր նաև դրամի արժեզրկումը: Կարելի է կանխատեսել գործազրկության աճ տնտեսական անկման ֆոնին՝ 19 տոկոսից մինչև 24 տոկոս: Ընդհանուր առմամբ արտահանումը նվազել է 5,2 տոկոսով, իսկ ներմուծումը՝ 15,9 տոկոսով: Արտահանողների արտադրանքի գների նը-վազումը մասամբ փոխհատուցվել է մատակարարման ֆիզիկական ծավալների, առաջին հերթին ֆրուտոցիտային մետաղների խտանյութի ավելացմամբ: Կայունացում մտցնելու համար կարևոր է շեշտը դնել արտահանման զարգացման վրա՝ նախ և առաջ ԵԱՏՄ ուղղությամբ: Այդ կապակցությամբ Հայաստանի անդամակցությունը դրական ազդեցություն ունեցավ նրա արտահանման հոսքերի դինամիկայի վրա: 2015-2019թթ. տվյալներով՝ Հայաստանն առավել մեծ օգուտ է ստացել ԵԱՏՄ-ին մասնակցությունից, նրա ներ-տարածաշրջանային արտահանման ծավալն աճել է 2,4 անգամ՝ կազմելով ա-վելի քան 1,3 մլրդ դոլար կամ ՀՆԱ-ի գրեթե 10 տոկոսը: Ինչպես ցույց է տալիս երկու երկրների փորձը, շուկայական տնտեսության մեջ ազգային տնտեսությունների վերափոխմանը զուգահեռ աճում են

¹ ԵԱՏՄ պաշտոնական տվյալները՝ <http://www.eurasiancommission.org>

տնտեսական անվտանգության բազմաթիվ սպառնալիքներ¹: Հայաստանի, ինչպես նաև Ռուսաստանի համար կենսական նշանակություն ունեն ժողովրդագրական, սննդամթերքի, էներգիայի, տեղեկատվության և շրջակա միջավայրի անվտանգության ապահովման միջոցառումները: Ֆինանսական սպառնալիքները նույնպես կարևոր են երկու երկրների համար: Մասնավորապես, արագ աճող վճարների և ֆինանսական ծառայությունների տեխնոլոգիական արդյունաբերության մեջ կան բազմաթիվ ռիսկեր: Բանկերը, վճարային և տեխնոլոգիական ընկերությունները արագացնում են ջանքերը նորարարության և հարմարեցնելու ֆինանսական ծառայությունների այլընտրանքները՝ սպառողների աճող պահանջարկը բավարարելու համար: Շուկայական այս առաջխաղացումների շնորհիվ նոր ապրանքները, ծառայությունները և գործընկերությունները ստեղծում են փողերի լվացման և ռիսկերի կառավարման դեմ պայքարի մարտահրավերներ, որոնք գրավում են պետությունների կարգավորող մարմինների ուշադրությունը:

Եզրակացություն

Մեր խնդիրն է խորապես և բազմակողմանիորեն ուսումնասիրել առաջացող ռիսկերը և մշակել գործնական լուծումներ, ինչպես նաև այդ ռիսկերը վերացնելու մեթոդներ: Մեր կարծիքով, հատուկ ուշադրություն պետք է դարձնել հետևյալ խնդիրներին.

- Ուսումնասիրել ֆինանսական ծառայությունների նորամուծության հետ կապված վերջին միտումները և առաջացող ռիսկերը.
- Կարգավորող ուժեղացված վերահսկողության ոլորտների քննարկում;
- Կարգավորող պահանջների մշակման և դրանց համապատասխանության գործնական մոտեցումների բացահայտում:

Կառավարման տարբեր մշակույթները կարևոր դեր են խաղում համագործակցության տեսության և համագործակցության սկզբունքների արդյունավետ իրականացման գործում: Ի վերջո, մշակութային խոչընդոտները չեն կարող անտեսվել՝ նպատակադրված նպատակներին հասնելու համար մի շարք սցենարների շուրջ համաձայնության գալու համար:

Բիզնեսի հաջողությունը կարելի է տեսնել միկրո մակարդակում (համատեղ արտոնությունների օգտագործումը սկսվում է որոշակի ընկերություն-

¹ Մանասերյան Թ.Ն. Տնտեսակա անվտանգություն. Ռեազմավարության ուրվագծեր, ՀՀ ԳԱԱ "Գիտություն" հրատարակչություն, Երևան, 2014թ. 836 էջ:

ներից և ուղղված է մասնավոր շահերի սպասարկմանը՝ հաշվի առնելով պետության և բնակչության շահերը): մակրո մակարդակ՝ արտացոլելով մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի բարելավումը, ինչպես նաև ընդհանուր առևտրի և տնտեսական այլ ցուցանիշները: Տարածաշրջանային մակարդակում դա բարելավում է երկրների միջև առևտրային համագործակցությունը: Մրցակցային առավելությունները վերաձվում են համատեղ առավելությունների, որոնք լրացնում են միմյանց ուժեղ կողմերը՝ հասնելով սիներգետիկ արդյունքների ազգային տնտեսության բոլոր հնարավոր ճյուղերում: Գլոբալ մակարդակով, համագործակցության օգուտների գիտակցումը կարող է զգալի ներդրում ունենալ խաղաղության, կայունության և ներառական զարգացման գործում:

Ընդհանուր առմամբ, տնտեսական ռիսկերի վերլուծությունը շարունակական գործընթաց է: Ռիսկերի ուսումնասիրության և բացահայտման մոտեցումները նույնպես պետք է բարելավվեն՝ առկա մեխանիզմների արդյունավետությունը ռեալ գնահատելու և նոր սպառնալիքներ դիտարկելու համար:

Մենք նպատակահարմար ենք գտնում ստեղծել տնտեսական սպառնալիքների դեմ պայքարի համակարգող խումբ՝ ռազմավարական գործընկերության և (կամ) միության պետության շրջանակներում ընդհանուր մոտեցումներ և սկզբունքներ մշակելու համար, և բացի մեր երկրների փորձագիտական համայնքից՝ ներգրավելու նաև նախարարությունների ներկայացուցիչներ. ֆինանսներ, արտաքին գործեր, պաշտպանություն, արդարադատություն, ոստիկանություն, հարկային և մաքսային ծառայություններ, Գլխավոր դատախազություն և այլն: Առաջարկվող խումբը կարող է համակարգել փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցառումները մեր երկրների կառավարությունների և կենտրոնական բանկերի հետ: Այս համատեքստում այն պետք է ապահովի ռիսկերի շարունակական գնահատում, մասնավորապես՝ հայտնաբերելու նոր սպառնալիքներ և առաջարկելու հնարավոր մեղմացնող միջոցառումներ: Վերջապես, ռիսկերի վերլուծություն անցկացնելու համար անհրաժեշտ է համախմբված ջանքեր գործադրել, որպեսզի տնտեսական անվտանգության միջոցառումներն ավելի լավ ճշգրտվեն՝ իրական ռիսկերը արտացոլելու համար:

Թաթուլ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ

Հայաստանի տնտեսության զարգացման առանձնահատկությունները 2020թ. հայ-ռուսական ռազմավարական դաշնակցության շրջանակներում
Բանալի բառեր. ազգային տնտեսություն, թագա-տնտեսական ճգնաժամ, Արցախյան պատերազմ, համավարակ, տնտեսական սպառնալիքներ

Հայ-ռուսական ռազմավարական համագործակցության զարգացման միտումների վերլուծությունը, հաշվի առնելով նաև ԵԱՏՄ շրջանակներում այդ կապերի հիմնական միտումները, հիմք է տալիս ենթադրելու, որ տեսանելի ապագայում դրանք բնույթը էապես չի փոխվի, և միջնաժամկետ հեռանկարները կարող է նույնիսկ ավելի լավատես լինել, եթե հաշվի առնվեն հետևյալ հիմնական ասպեկտները. ներքին և ոչ տնտեսական անվտանգության սր-պառնալիքներ, փոփոխված պայմաններին և նոր մարտահրավերներին ճկուն արձագանքելու ունակություն, փորձագիտական համայնքի ներգրավում զարգացման սցենարի մշակման և իրականացման համար, ինչպես նաև համագործակցության օգուտները զարգացնելու պայմանների ձևավորումը:

Татул МАНАСЕРЯН

Особенности экономического развития Армении в 2020 году в рамках армяно-российского стратегического альянса

Ключевые слова. Национальная экономика, королевский экономический кризис, арцахская война, эпидемия, экономические угрозы

Анализ тенденций развития армяно-российского стратегического сотрудничества с учетом основных тенденций этих связей в рамках ЕАЭС дает основание предполагать, что их характер существенно не изменится в обозримом будущем. Следует обратить особое внимание на следующие аспекты: внутренние и внешние экономические угрозы, способность гибко реагировать на меняющиеся условия и новые вызовы, привлечение экспертного сообщества к разработке и реализации сценария развития в зависимости от изменения региональных, мировых, геополитических и геоэкономических реалий.

Tatul MANASERYAN

Features of Armenia's Economic Development in 2020 within the Framework of the Armenian-Russian Strategic Alliance

Key words: national economy, corona- economic crisis, Artsakh war, epidemic, economic threats

An analysis of the development trends of the Armenian-Russian strategic cooperation, taking into account the main trends of these ties within the EAEU, suggests that their nature will not change significantly in the foreseeable future, particularly, if the following factors be taken into careful consideration: internal & non-economic security threats; ability to respond flexibly to changing conditions and new challenges; involvement of the expert community of the two countries in the development and implementation of a development scenario depending on changes in regional, world, geopolitical and geo-economic realities; creating conditions for identifying and developing the benefits of cooperation.

COVID-19-Ի ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎՐԱ

Վլադիմիր ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տ.գ.դ., պրոֆեսոր

Տաթևիկ ՇԱՀԻՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ՏԻ գիտաշխատող, ասպիրանտ

Բանալի բառեր. Համավարակ, բանկային համակարգ, թվային տեխնոլոգիաներ, հեռավար բանկային ծառայություններ, անկանխիկ գործարքներ:

Ներածություն

Համավարակի (COVID-19) տարածումն արդեն իսկ լուրջ ռիսկեր և խնդիրներ է ստեղծել ամբողջ աշխարհում: Այն խաթարել է համաշխարհային տնտեսության բնականոն ընթացքը՝ վտանգելով աշխարհի երկրների մեծ մասի ներքին և արտաքին տնտեսական կայունությունը: Բնական է՝ տնտեսական ակտիվության նվազումը չէր կարող իր ազդեցությունը չունենալ նաև ՀՀ բանկային համակարգի վրա:

Մեթոդաբանություն

Հոդվածի համար տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել ուսումնասիրվող հիմնահարցին վերաբերող հայրենական և միջազգային գրականությունը, ոլորտը կարգավորող ՀՀ օրենքներն ու կառավարության որոշումները, ինչես նաև համապատասխան կազմակերպությունների հաշվետվությունների ու վիճակագրական տվյալների համակարգային ու համեմատական վերլուծություններից ստացված արդյունքները:

Գրականության ակնարկ

Աշխարհի գրեթե բոլոր երկրներին սպառնացող ֆորս-մաժորային իրավիճակները հիմնականում երկու տեսակի են՝ տնտեսական ճգնաժամեր և համավարակներ: Տնտեսական ճգնաժամերի պայմաններում պետության առջև ծառայած է միայն մեկ հարց՝ ինչպես անել, որ երկրի տնտեսությունը դուրս գա ճգնաժամից նվազագույն տնտեսական և սոցիալական կորուստներով: Իսկ ահա համաճարակը հանգեցնում է երկրի առողջապահական համակարգի փլուզմանը՝ տնտեսական և սոցիալական ոլորտում կորուստների հետ մեկտեղ: Հենց այս պատճառով է, որ շատ երկրներ պատրաստ չէին պայքարել COVID-19-ի դեմ՝ համարելով հերթական վիրուս, որն էական

ազդեցություն չի կարող ունենալ երկրի տնտեսության վրա¹: Կորոնավիրուսի վնասակար հետևանքները փոքրիշատե համեմատելի կարող են լինել միայն համաշխարհային պատերազմի վնասակար հետևանքների հետ՝ չհաշված մարդկային կորուստները: Ճիշտ է, այն իսկական փոթորիկ է համաշխարհային տնտեսության համար, և երկրագունդը հայտնվել է կիսամեռ վիճակում, այդուհանդերձ համաշխարհային պատերազմի համեմատությամբ կորոնավիրուսը չարիքի փոքրագույն է: Եվ որքան էլ մարդկությունը ուշ հայտնաբերի արդյունավետ դեղամիջոցը, պարտավոր ենք սովորել և ապրել կորոնավիրուսի հետ կողք կողքի՝ հետևելով նրա զարգացումներին և մեր առողջությանը՝ փորձելով առավելագույն օգուտներ քաղել ստեղծված իրավիճակից²:

Վերլուծություն

Անցնող տարին հերթական փորձությունն էր ինչպես ՀՀ տնտեսության, այնպես էլ բանկային համակարգի համար: ՀՀ կառավարությունը կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման նպատակով մըշակեց խոշորամասշտաբ ու ոչ ստանդարտ հակաճգնաժամային միջոցառումների ու կարգավորումների բազմաթիվ փաթեթներ, որոնք ՀՀ պետական բյուջեի առկա պայմաններում կարելի է գնահատել աննախադեպ: Միևնույն ժամանակ, բանկերն իրենց գործունեությամբ ապացուցեցին, որ շատ ավելի պատրաստ են ժամանակի մարտահրավերներին: Բանկերը արագ ու ժամանակին համագործակցեցին ՀՀ կառավարության և Կենտրոնական Բանկի հետ: Արդյունքում, հայտարարված վարկային արձակուրդների շրջանակներում բանկերը վերակառուցեցին ավելի քան 550 հազար ֆիզիկական անձ և 17,4 հազար իրավաբանական անձ հաճախորդների վարկեր՝ ընդհանուր 1,3 տրիլիոն ծավալով: Միաժամանակ, բանկային համակարգն ակտիվ ներգրավվել է ՀՀ կառավարության կողմից մշակված և համավարակի սոցիալական և տնտեսական հետևանքների չեզոքացմանն ուղղված պետական ծրագրերին, որի շրջանակում բավարարվել է ավելի քան 25000 վարկային հայտ՝ 119 միլիարդ դրամ գումարի չափով: Հայաստանի բանկերը այսպես կոչված

¹ Л. Саргсян, Влияние пандемии на экономику стран мира, В 26 Вектор развития современной науки: сборник статей Международной научно-практической конференции. – Саратов: НОО “Цифровая наука”. 2020. 56-59

² Վլադիմիր Հարությունյան, Կորոնավիրուսը որպես Հայաստանի Հանրապետության համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ –ի) բևեռացման միջոց, «Տնտեսական հրաշքները». Գործարկման ուղիները Հայաստանում, ՀՀ ԳԱԱ ՏԻ., Երևան 2020, էջ՝ 443

առողջացման միջոցառումների կարիք չունեցան՝ շնորհիվ նաև հայ ժողովրդի այն հսկայական ավանդների, որոնք ցածր տոկոսադրույքներով տեղաբաշխված են բանկերում, կամ ավելի ճիշտ կլինի ասել, ի պահ են տրված բանկերին: Բավական է նշել, որ վերջին տասնամյակում (2008-2018 թթ.) միջին տարեկան ավանդները ՀՀ մասնավոր բանկերում կազմել են 10288 միլիոն ամերիկյան դոլար, իսկ ՀՀ դրամով՝ 784,8 միլիոն դրամ, և դա այն դեպքում, երբ Հայաստանի միջին տարեկան ՀՆԱ-ն այդ նույն ժամանակաշրջանում կազմել է 2912,2 միլիարդ դրամ, իսկ ավանդներ/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է շուրջ 27%¹: Համավարակը՝ ՀՀ բանկային համակարգի համար բիզնեսը նոր իրականությանը հարմարեցնելու բարդ և մրցակցային փորձարկման սկիզբն էր: 2020թ. բանկերը սկսեցին ակտիվորեն զարգացնել սպասարկման հեռավար ուղիներն ու հաճախորդների առաջարկեցին նոր ու կատարելագործված լուծումներ՝ սկսած օնլայն բանկինգի ծառայություններից՝ վերջացրած անհպում բանկումատների ներդրմամբ:

Ըստ ՀՀ կենտրոնական բանկի 2020 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ունեցել ենք ոչ միայն անկանխիկ գործարքների ծավալի և քանակի աճի տեմպ, այլև առաջին անգամ Հայաստանում անկանխիկ գործարքների քանակը գերազանցել է կանխիկ գործարքների քանակը: Անկանխիկ գործարքների մշակույթի ամրապնդման մասին է վկայում է նաև POS-տերմինալներով գործարքների քանակական և ծավալային աճը, հնտերնետ միջավայրը: 2020թ. առաջին եռամսյակում անկանխիկ գործարքների քանակը նախորդ տարվա համեմատ աճել է 73,6% -ով, իսկ ծավալը՝ 53,4% -ով²: Անդրադառնալով 2021թ.՝ կարելի է նկատել, որ առաջին եռամսյակում բանկերի թողարկված քարտերի քանակն ավելացել է 50,918-ով՝ կազմելով 2547519: Նույն ժամանակ վճարային քարտերով կատարվել է 28440226 գործարք, որը 2020թ. նույն ժամանակի համեմատ աճել է 44,6 %-ով: 2020թ. համեմատ 15,9%-ով ավելացել է նաև վճարային քարտերով գործարքների ծավալը՝ կազմելով 746668 միլիոն դրամ³: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ անկանխիկ գործարքների քանակը գերազանցել է կանխիկ գոր-

¹ Վ. Հարությունյան, Կորոնավիրուսը որպես ՀՀ ՀՆԱ –ի բևեռացման միջոց, «Տնտեսական հրաշքները» . Գործարկման ուղիները ՀՀ-ում, ՀՀ ԳԱԱ ՏԻ., Երևան 2020, էջ՝ 447

² Шагинян Т., Безналичные операции как мера в борьбе с коронавирусом., Экономика предприятий, регионов, стран: акт. вопросы и совр. аспекты. Сб.конф.,15 авг.2020г., Пенза, с.33.

³ Տվյալները՝ ՀՀ Կենտրոնական Բանկ, Central Bank of Armenia (cba.am)

ծարքներին: Մասնավորապես, անկանխիկ գործարքների քանակը կազմել է 17995639, որը 2020թ. առաջին եռամսյակի համեմատ աճել է 73,5 %-ով: Իսկ ահա անկանխիկ գործարքների ծավալը կազմել է 232324 միլիոն դրամ, որը 2020թ. առաջին եռամսյակի համեմատ աճել է 55740 մլն դրամով՝ 31,6%¹:

Այնուամենայնիվ, համավարակն արմատապես չփոխեց բանկային ոլորտի զարգացման ուղղությունը: ՀՀ բանկերն արդեն իսկ անցում էին կատարել թվային տեխնոլոգիաներին, իսկ համավարակն ուղղակի արագացրեց այդ գործընթացը: ՀՀ բանկային շուկան բավականին մրցակցային է: Բանկային ակտիվների և վարկերի համապատասխանաբար 56 %-ը և 60,6%-ը բաժին են ընկնում 5 խոշորագույն բանկերին, որոնցից առաջատարը Ամերիաբանկն է, որին է պատկանում ընդհանուր բանկային համակարգի ակտիվների 14,8 %-ը²: Բանկն արդեն իսկ ընդլայնել է թվայնացման ծավալները՝ դառնալով հեռահար բանկային ծառայություններ մատուցող առաջատար բանկերից մեկը: Բանկում հնարավորինս ավտոմատացվել են բոլոր գործընթացները, ներդրվել է սպասարկման բազմաֆունկցիոնալ հարթակ՝ թվային լուծումների լայն կիրառմամբ: Ապագայում նախատեսվում է իրականացնել մի շարք նախագծեր, որոնք մեծապես կնպաստեն թվային կապուղիների ընդլայնմանը: Նախատեսվում է նաև վճարման նոր տեխնոլոգիաների կիրառում, որոնք նպատակ ունեն ավելացնել թվայնացման ծավալները, ինչն էլ իր հերթին կհանգեցնի բնակչության փորձառության բարելավմանն ու կձևավորեն նոր սովորություններ: Իսկ ահա մտածողության փոփոխությանը կարելի է հասնել ինչպես Երևանում, այնպես էլ մարզկենտրոններում մասնագիտական խմբերի ձևավորմամբ, որոնք, շրջելով մարդաշատ կոլեկտիվներով, կփորձեն փոխել հայ ժողովրդի մտածողությունը³: Յունիբանկը, չլինելով ակտիվների մեծությամբ առաջատար բանկերի հնգյակում, արդեն մեկ տարի է ներդրել է արհեստական բանականության տեխնոլոգիան⁴: Արհեստական բանականության տեխնոլոգիան հնարավորություն է տալիս ավելի արագ և որակյալ մշակել մեծ ծավալի տեղեկատվություն, վերլուծել հաճախորդների տվյալները և ավելի մեծ ճշգրտությամբ կառուցել նրանց պրոֆիլը: Արդյունքում բանկը, խնայելով ժամանակը և միջոցները, կարողացել է ավելի կատարելագործել

¹ Տվյալները ՀՀ Կենտրոնական Բանկ, Central Bank of Armenia (cba.am)

² Տվյալները՝ Ամերիաբանկ ՓԲԸ, Ամհատներին (ameriabank.am)

³ Վ. Հարությունյան, Նույն տեղը՝ էջ 451:

⁴ Յունիբանկ, Յունիբանկ (unibank.am) Modern African Studies, 1973. № 1.

վարկերի գծով որոշումների ընդունման գործընթացը, բարձրացնել ռիսկերի գնահատման որակը և բարելավել բարեխիղճ հաճախորդների սպասարկումը՝ նրանց առաջարկելով վարկավորման ավելի լավ պայմաններ:

Եզրակացություններ

Այսպիսով, բանկային համակարգում տիրող իրավիճակից, վերոնշյալ բանկերի օրինակներից ելնելով, կարելի է փաստել, բանկերը արդյունավետ անցում կատարեցին հեռավար աշխատանքային ձևաչափին: Արդյունքում հայտնաբերել ենք հիմնական գործոններ, որոնք օգնել են շարունակել արդյունավետ գործել նոր իրականության մեջ: Այդ գործոնները վերաբերում են ինչպես բանկերի ներքին գործառնական միջավայրին, այնպես էլ արտաքին միջավայրին: Ներքին գործոններից առավել հատկանշական են.

- ✓ Հաճախորդների հետ փոխգործակցության բարձր մակարդակը,
- ✓ Բանկերում թվային տեխնոլոգիաների ներդրվածության բարձր մակարդակը:

Իսկ արտաքին գործոններից ամենանշանակալին կառավարության ճըրագրերին բանկերի մասնակցության հանգամանքն է, որով որպես գործատուներ, աջակցում էին տնտեսական գործունեությանը: Ամփոփելով կարելի է եզրակացնել, որ բանկերն իրենց գործունեությունն արդյունավետորեն շարունակելու նպատակով պետք է կարողանան ճիշտ գնահատել ստեղծված իրավիճակի դրական և բացասական կողմերն ու շարունակեն վերանայել ու վերափոխել իրենց գործունեությունը: Հաշվի առնելով միջազգային բանկերի փորձն առավել նպատակահարմար է զարգացնել թվային սպասարկումն ու ներդրումներն ուղղել նորարարական տեխնոլոգիաների մշակմանն ու զարգացմանը: Կիրառելով նորարարական տեխնոլոգիաներ, կարելի է հնարավորինս արդյունավետ կերպով կազմակերպել երկու կողմերի (բանկ-հաճախորդներ) միջև հաղորդակցությունը: Միաժամանակ, չկրճատելով մասնաճյուղային ցանցը պետք է ձգտել անցում կատարել ինքնասպասարկման բարձր մակարդակով մասնաճյուղերին՝ ներդնելով որակյալ ծառայությունների դիմաց վճարելու գործիքակազմը:

Վլադիմիր ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Տաթևիկ ՇԱՀԻՆՅԱՆ
COVID-19-ի ազդեցությունը ՀՀ բանկային համակարգի վրա

Բանալի բառեր. համավարակ, բանկային համակարգ, թվային տեխնոլոգիաներ, հեռավար բանկային ծառայություններ, անկանխիկ գործարքներ

Նախորդ տարին հերթական փորձություններ էր նախապատրաստել ՀՀ բանկային համակարգի համար: Ընդհանուր առմամբ, պարզվեց, որ բանկերը շատ ավելի պատրաստված էին ժամանակի մարտահրավերներին: Իրավիճակով պայմանավորված էականորեն փոխվեցին նաև բնակչության պահանջունքներն ու սովորությունները: Համավարակն ուղղակի լրացուցիչ խրթան հանդիսացավ բանկերում թվայնացման մակարդակի բարձրացման, բանկային ծառայությունները նոր պայմաններին հարմարեցնելու ու փոխակերպելու համար: Հոդվածում ներկայացվել է ՀՀ բանկային համակարգում տիրող իրավիճակը համավարակից ի վեր: Ուսումնասիրվել են բանկերում ներդրված հեռավար սպասարկման գործիքակազմերը:

Владимир АРУТЮНЯН, Татевик ШАГИНЯН
Влияние COVID-19 на банковскую систему Армении

Ключевые слова: Пандемия, банковская система, цифровые технологии, дистанционные банковские услуги, безналичные операции.

Прошлый год подготовил очередное испытание для банковской системы Армении. В целом оказалось, что банки гораздо лучше подготовлены к вызовам времени. В связи с ситуацией существенно изменились потребности и привычки населения. Пандемия стала лишь дополнительным толчком к повышению уровня цифровизации банков, адаптации и трансформации банковских услуг к новым условиям. В статье представлена ситуация в банковской системе Армении после вспышки пандемии. Были изучены дистанционные сервисные инструменты, представленные в банках, а также были сделаны прогнозы будущей ситуации в банковской системе и рекомендации по повышению качества предоставляемых услуг.

Vladimir HARUTYUNYAN, Tatevik SHAHINYAN
Impact of COVID-19 on the banking system of Armenia

Key words: Pandemic, banking system, digital technologies, remote banking services, non-cash transactions.

Last year prepared another test for the banking system of Armenia. On the whole, it turned out that banks are much better prepared for the challenges of the time. In connection with the situation, the needs and habits of the population have changed significantly. The pandemic has become only an additional impetus to an increase in the level of digitalization of banks, adaptation and transformation of banking services to new conditions. The article presents the situation in the banking system of Armenia after the outbreak of the pandemic. Remote service tools presented in banks were studied, and forecasts of the future situation in the banking system and recommendations for improving the quality of services were made.

ՈՉ ՖՈՐՄԱԼ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Էրիկա ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՀՊՏՀ Կառավարման ամբիոնի ասպիրանտ

Բանալի բառեր. զբաղվածություն, ոչ ֆորմալ զբաղվածություն, աշխատունակ բնակչություն, տնտեսություն

Ներածություն

Ներկայումս ստեղծվել է մի իրավիճակ, երբ փաստացի գործունեություն իրականացնող որոշակի թվով քաղաքացիներ գործատուի հետ աշխատանքային կամ քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ չեն մտնում: Գաղտնիք չէ, որ որոշ գործատուներ հարկային և այլ պարտադիր վճարներից խուսափելու և խնայելու նպատակով, ընդունելով աշխատողին չեն ձևակերպում աշխատանքային հարաբերություններ: Եվ շատ աշխատողներ նախընտրում են աշխատել առանց պաշտոնական ձևակերպման: Այստեղ հարց է առաջանում թե ինչու են աշխատակիցները համաձայնում լինել ոչ ֆորմալ զբաղվածներ: Դա հիմնականում պայմանավորված է մի շարք հանգամանքներով. պայմանագրային ձևով աշխատանքի ընդունվելու անկարողությունը, որի պատճառ կարող է լինել մեծ մրցակցությունը, ճկուն աշխատանքային գրաֆիկը, լրացուցիչ եկամուտ ստանալու հնարավորությունը: Թեման արդիական է, քանի որ ՀՀ-ում պաշտոնական վիճակագրությունը փաստում է, որ ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակը բավականին բարձր է:

Գրականության ակնարկ

Գոյություն ունեն ոչ ֆորմալ զբաղվածության վերաբերյալ երկու հիմնական մոտեցումներ՝ արտադրական և օրինական: Արտադրական մոտեցումը հիմնված է բրիտանացի սոցիոլոգ Կ. Հարտի գիտական աշխատանքների վրա: Նրա կարծիքով. "Ոչ ֆորմալ զբաղվածությունը-զարգացող երկրների քաղաքային աղքատ բնակիչներին բնորոշ պարզունակ և բազմազան ինքնազբաղվածությունն է": Կ.Հարտը ուսումնասիրում էր աշխատաշուկան. Աղքատներին, միգրանտներին, ոչ հմուտ աշխատողներին: Նրանց համար ինքնազբաղվածությունը ծառայում էր որպես գործազրկության այլընտրանք, քանի որ պաշտոնական աշխատաշուկան նրանց առաջարկելու ոչինչ չուներ:

1 Hart K. Informal-Income Opportunities and Urban Employment in Ghana // Journal of Modern African Studies, 1973. – № 1.

Հաջորդ մոտեցումը օրինականն է՝ հիմնված պերուացի տնտեսագետ Հերնանդո դու Սոտոյի գիտական աշխատանքների վրա: Այս մոտեցումը սահմանվում է այն առումով, թե որքանով են իրավաբանական և ֆիզիկական անձինք հետևում սահմանված կանոններին և կանոնակարգերին: Այլ կերպ ասած, աշխատանքների դասակարգումը ֆորմալ կամ ոչ ֆորմալի կախված է գործող կարգավորման ռեժիմից: Այս մոտեցման կողմնակիցները կարծում են, որ ոչ ֆորմալ զբաղվածությունը ծանր բեռ չէ հասարակության համար, այլ, ընդհակառակը, զարգացման հիմքն է¹: Տնտեսագիտական գրականության մեջ «սովերային տնտեսություն» կամ «ոչ ֆորմալ զբաղվածություն» հասկացությունների տարբեր բնորոշումներ կան: Առավել ընդունված է այն որ սովերային տնտեսությունը չգրանցված տնտեսական գործունեությունն է, որն ընդգրկում է վիճակագրության հաշվի չառած և չհարկվող տնտեսական, հակաօրինական, թաքցվող տնտեսական գործունեությունը:

Ոչ ֆորմալ զբաղվածությունը դիտարկվող ժամանակահատվածում ոչ ֆորմալ աշխատատեղերի հանրագումարն է, անկախ այն հանգամանքից եղել են դրանք ֆորմալ, թե ոչ ֆորմալ հատվածի կազմակերպություններում կամ տնային տնտեսություններում: Ոչ ֆորմալ զբաղվածության մեջ ներառվում են. գործատուի հետ բանավոր համաձայնությամբ վարձու աշխատողները, չգրանցված կազմակերպությունների սեփականատեր գործատուները և ինքնազբաղվածները, առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամները և չգրանցված արտադրական կոոպերատիվների անդամները²: Ոչ ֆորմալ զբաղվածներ են համարվում նաև տնային տնտեսությունում բացառապես սեփական վերջնական սպառման համար ապրանք արտադրող առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամները, եթե արտադրված արտադրանքը նշանակալի մասնաբաժին է ունեցել տնային տնտեսության ընդհանուր սպառման մեջ³: Ոչ ֆորմալ զբաղվածության վերլուծությունը հիմնված է աշխատատեղերի թվի և ոչ թե անձանց թվաքանակի վրա: Հետևաբար, ընդամենը զբաղվածությունն ըստ աշխատանքի բնույթի (ֆորմալ, ոչ ֆորմալ) կլինի ավելի մեծ, քան զբաղվածների թվաքանակը⁴:

¹ Сото Э. де Иной путь. Невидимая революция в Третьем мире. – М.: Catallaxy, 1995.

² ՀՀ ՎԿ "Աշխատանքի շուկան Հայաստանում 2015թ.", էջ 78

³ ՀՀ ՎԿ "Աշխատանքի շուկան Հայաստանում 2020թ." www.armstat.am/file/article


⁴ ՀՀ ՎԿ, "Աշխատանքի շուկան Հայաստանում, 2020թ.", էջ 78

Հետազոտության մեթոդաբանություն

Հետազոտությունն առավել ամբողջական դարձնելու նպատակով կիրառվել են համեմատության, վերլուծության մեթոդները: Հոդվածի համար տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմք են ծառայել ՀՀ պետական մարմինների հաշվետվությունները, ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալները, մասնավորապես. Աշխատանքի շուկան ՀՀ-ում 2020թ., Աշխատանքի միջազգային կազմակերպության հրապարակած մի շարք զեկույցներ:

Վերլուծություն

Ինչպես վկայում են ՀՀ ՎԿ տվյալները, ըստ տնային տնտեսություններում աշխատուժի ընտրանքային հետազոտության արդյունքների 2015թ. զբաղվածների 47.7 տոկոսը տնտեսական գործունեությունն իրականացրել է բացառապես տնտեսության ոչ ֆորմալ հատվածում, որտեղ կազմել է շուրջ 526.3 հազ. մարդ, այդ թվում դրանց գերակշիռ մասը 401.5 հազ. մարդ (76%) զբաղված էր գյուղատնտեսական գործունեությամբ, իսկ 124.8 հազ. մարդ (24%)՝ ոչ գյուղատնտեսական գործունեությամբ¹:



Գծապատկեր 1. Ոչ ֆորմալ զբաղվածությունը ՀՀ-ում 2015-2019թթ.,%

2016թ. զբաղվածների 46.4%-ն է տնտեսական գործունեություն իրականացրել տնտեսության ոչ ֆորմալ հատվածում, որտեղ զբաղվածությունը կազմել է 485.4 հազար մարդ, որից 363.3 հազար մարդ (74.8%) զբաղված է եղել գյուղատնտեսական գործունեությամբ, իսկ 122 հազար մարդ (25.2%)՝ ոչ գյուղատնտեսական: Իսկ 2019թ. ոչ ֆորմալ հատվածում զբաղվածների թիվը նախորդ տարվա համեմատ նվազել է 8.7%-ով և կազմել է 403.5 հազ. մարդ, որից 259,4 հազ. մարդ (64.3 %)՝ զբաղված է եղել գյուղատնտեսությամբ:


¹ <https://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/>

Գյուղատնտեսության ոլորտում աշխատանքը հիմնականում ոչ ֆորմալ է, զբաղվածությունը խոցելի է, քանի որ այս ոլորտում զբաղվածների մեծ մասն ինքնազբաղված է, ինչը ենթադրում է, որ աշխատանքը ժամանակավոր բնույթ է կրում, ու սոցիալական ապահովության որևէ միջոց երաշխավորված չէ: Գյուղատնտեսությունը ոչ ֆորմալ զբաղվածության ամենամեծ մասնաբաժին է կազմում, որը աշխարհում գնահատվում է ավելի քան 90 տոկոս:

Աղյուսակ 1. Ոչ ֆորմալ զբաղվածությունն ըստ տնտեսական գործունեության, հազար մարդ

	Ընդամենը		Տղամարդ		Կին	
	2018	2019	2018	2019	2018	2019
Ընդամենը	441,8	403,4	261,9	239,4	179,9	163,9
Գյուղատնտեսական	289,6	259,3	154,9	139,3	134,7	120,0
Ոչ գյուղատնտեսական	152,2	144,0	107,0	100,1	45,2	43,9
Արդյունաբերություն	23,4	20,6	13,9	11,3	9,5	9,3
Շինարարություն	31,2	34,5	31,0	34,4	0,2	0,1
Ծառայություններ	97,6	89,0	62,1	54,4	35,5	34,6

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 1-ից, ոչ գյուղատնտեսական հատվածում մեծ քանակով ոչ ֆորմալ զբաղվածներ արձանագրվել են ծառայությունների ոլորտում: Սակայն 2019թ. այս ցուցանիշը նվազել է նախորդ տարվա նկատմամբ 8.8%-ով: 2019թ. ոչ ֆորմալ զբաղվածների աճ է նկատվել շինարարության ոլորտում 9.6%-ով: Նկատելի է նաև, որ ոչ ֆորմալ զբաղվածությունն ավելի տարածված է տղամարդկանց շրջանում:



Գծապատկեր 2. Ոչ ֆորմալ զբաղվածությունն <<-ում ըստ սեռի 2015-2019թթ., հազար մարդ

Գծապատկերից տեսնում ենք, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում ոչ ֆորմալ զբաղվածների մեջ տղամարդկանց տեսակարար կշիռը մեծ է եղել: 2019թ. ոչ ֆորմալ զբաղվածների 59.4 %-ը եղել են տղամարդիկ: Աղյուսակ 2-ում ներկայացված են 2020թ. համար հասանելի մի շարք երկրների ոչ ֆորմալ զբաղվածության ցուցանիշները:

Աղյուսակ 2. Ոչ ֆորմալ զբաղվածության ցուցանիշները աշխարհում¹

	Տղամարդ	Կին	Գյուղատնտեսական	Ոչ գյուղատնտեսական
Բրազիլիա	22433,5	17486,4	6246,0	33673,8
Վրաստան	311,5	181,4	492,9	240,4
Չինի	1129,6	821,6	204,1	1735,8
Սերբիա	261,8	229,8	189,0	302,6
Մոնղոլիա	284,2	197,2	271,5	209,8

Տվյալները փաստում են, որ աշխարհի մի շարք երկրներում նույնպես ոչ ֆորմալ զբաղվածների գերակշռող մասը տղամարդիկ են: Ոչ ֆորմալ զբաղվածության տարածման վրա ազդող ամենակարևոր գործոններից մեկը կրթական մակարդակն է: Ընդհանուր առմամբ, որքան բարձր է կրթական մակարդակը, այնքան ցածր է ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակը: Միջնակարգ կրթությամբ մարդիկ ավելի քիչ հավանական է, որ աշխատեն ոչ ֆորմալ զբաղվածության մեջ, քան այն աշխատողները, ովքեր կրթություն չունեն:

Գյուղական բնակավայրերում ապրող մարդիկ գրեթե երկու անգամ ավելի հավանական է, որ ոչ պաշտոնապես աշխատեն, քան քաղաքաբնակները: Կարևոր է նշել այն, որ ոչ բոլոր են համարվում աղքատ, ովքեր աշխատում են ոչ ֆորմալ տնտեսությունում, սակայն աղքատությունը կարելի է ոչ ֆորմալ զբաղվածության պատճառ և հետևանք համարել: Թերզբաղվածության և ոչ մշտական զբաղվածության երկույթը առավել տարածված է երիտասարդների շրջանում, որը հիմնականում արդյունք է երիտասարդների զբաղվածության ճյուղային կառուցվածքի: Երիտասարդների զգալի հատվածը կենտրոնացված է առևտրի, շինարարության և գյուղատնտեսության ոլորտներում: Թերզբաղվածությունը բացատրվում է նաև այն հանգամանքով, որ երիտասարդների մի մասը աշխատում է սովորելուն զուգահեռ: Բացի դրանից աշխատատեղերի սակավության պատճառով շատ հաճախ երիտասարդները հայտվում են ոչ ֆորմալ դաշտում: Երիտասարդների 38.3%-ը գործում է

¹ International labour organization, Statistics on the informal economy, <https://ilostat.ilo.org/topics>

ոչ ֆորմալ դաշտում (12.4%-ը՝ բացառապես սեփական սպառման համար արտադրողներ են)¹: Անդրադառնալով երիտասարդների ոչ ֆորմալ զբաղվածությանը, պետք է նշել, որ հիմնականում մասնագիտություն և աշխատանքային փորձ չունենալը հանգեցնում է նրան, որ երիտասարդները առավել հաճախ են հայտնվում ոչ ֆորմալ դաշտում, քան մեծահասակները: Որպես հետևանք այս երևույթը բացասաբար է անդրադառնում ոչ միայն աշխատավարձի չափի, պաշտպանվածության, այլ նաև ֆորմալ աշխատանքային ստաժի բացակայության պատճառով երիտասարդների հետագա առաջխաղացման վրա, միաժամանակ մեծացնելով նաև հետագայում գործազուրկ դառնալու ռիսկը: Սակայն վերջին տարիներին նկատելիորեն անցում է կատարվել ոչ ֆորմալ դաշտից ֆորմալին, ինչի մասին վկայում է ՀՀ ՎԿ-ի կողմից արձանագրված ցուցանիշները: Եթե 2014թ. զբաղված երիտասարդների 46.7%-ն էր աշխատում ոչ ֆորմալ դաշտում, ապա 2017թ.՝ 38.3%-ը: Պատճառը հիմնականում գյուղատնտեսության ոլորտում երիտասարդների զբաղվածության զգալի նվազումն է:

Եզրակացություններ

Ոչ ֆորմալ զբաղվածների առկայությունը կազմակերպություններում ձեռնդնտու է թվում, քանի որ այն հանգեցնում է ծախսերի կրճատմանը և շահույթի ավելացմանը: Սակայն պետք է հաշվի առնվի այն փաստը, որ կարող են կիրառվել պատժամիջոցներ, որոնց ազդեցությունը կարող է էլ ավելի բացասական լինել: Աշխատանքային հարաբերությունների օրինականացումն այսօր առանձնահատուկ նշանակություն է ստանում, քանի որ այն նշանակալի աղբյուր է բյուջեի եկամուտները համալրելու համար: Բյուջեի ոչ բավարար ֆինանսական միջոցները հանգեցնում են աշխատավարձի բարձրացման և աշխատողների իրավունքների հնարավորության սահմանափակմանը: Այսպիսով՝ ոչ ֆորմալ զբաղվածության կրճատման կամ վերացման համար պետության կողմից պետք է մշակվի հատուկ քաղաքականություն ուղղված իրավական դաշտի կատարելագործմանը և հարկային համակարգի բարելավմանը: Անրիաժեշտ է, որ ստեղծվեն միջգերատեսչական հանձնաժողովներ՝ աշխատանքները համակարգելու և իրավիճակը վերահսկելու համար:

¹ Ուսումնասիրություն ԶՊԳ-ում հաշվառված երիտասարդների շրջանում, էջ 3

Էրիկա ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Ոչ ֆորմալ զբաղվածության միտումները ՀՀ-ում

Բանալի բառեր. զբաղվածություն, ոչ ֆորմալ զբաղվածություն, աշխատունակ բնակչություն, տնտեսություն

Ժամանակակից պայմաններում կարևորագույն խնդիր է հանդիսանում բնակչության արդյունավետ զբաղվածության ապահովումը: Ոչ ֆորմալ զբաղվածությունը ոչ ցանկալի երևույթ է և դրա կրճատումը ցանկացած երկրի տնտեսության կարգավորման կարևորագույն հիմնախնդիրներից մեկն է հանդիսանում: Ոչ ֆորմալ զբաղվածության առաջացման հիմնական պատճառ են հանդիսանում բարձր գործազրկությունը, էժան աշխատուժի առկայությունը, հարկերից խուսափումը: Աշխարհի աշխատունակ բնակչության 60 տոկոսը (2 միլիարդ մարդ) զբաղված է ոչ ֆորմալ տնտեսությունում: Ամենից հաճախ այդ մարդիկ զրկված են սոցիալական պաշտպանությունից, աշխատանքային պատշաճ պայմաններից և իրավունքներից:

Эрика КИРАКОСЯН

Тенденции неформальной занятости в Армении

Ключевые слова. занятость, неформальная занятость, трудоспособное население, экономика

Обеспечение эффективной занятости населения - ключевой вопрос в современных условиях. Неформальная занятость - явление нежелательное, ее сокращение – один из ключевых вопросов регулирования экономики любой страны. Основные причины появления неформальной занятости - высокая безработица, дешевая рабочая сила, уклонение от уплаты налогов. 60% работающего населения мира (2 миллиарда человек) занято в неформальной экономике. Чаще всего эти люди лишены социальной защиты, надлежащих условий труда и прав. Незарегистрированные работают без договора, только по устной договоренности, что искусственно снижает фонд оплаты труда и соответствующие социальные выплаты. В связи с этим обеспечение устойчивой занятости для годовых программ государственного регулирования рынка труда следует рассматривать как ключевую задачу.

Erika KIRAKOSYAN

Trends in informal employment in Armenia

Key words. employment, informal employment, able-bodied population, economy

Ensuring effective employment of the population is a key issue in modern conditions. Informal employment is an undesirable phenomenon; its reduction is one of the key issues in regulating the economy of any country. The main reasons for the emergence of informal employment are high unemployment, cheap labor, tax evasion. 60% of the world's working population (2 billion people) are employed in the informal economy. Most often, these people are deprived of social protection, proper working conditions and rights. Unregistered workers work, only by verbal agreement, which artificially reduces the salary fund and the corresponding social payments. Due to all this, ensuring sustainable employment should be a key goal for labor market regulation programs.

**ԱՌՑԱՆՑ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀՀ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՆՈՐ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ ԵՎ ԱՅՆ
ԱԿՏԻՎԱՑՆԵԼՈՒ ԱՌԱՆՑՔՆԵՐԸ**

Սմբատ ԴԱՎԹՅԱՆ

Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի հայցորդ

Բանալի բառեր՝ «P2P» «հավասարից հավասարին» վարկավորում («Peer-to-peer»), «P2P» վարկային հարթակ, ֆինտեխ, ներդրումների դիվերսիֆիկացում, ակտիվների՝ եկամտաբերություն, անվտանգություն, մատչելիություն, իրացվելիություն

Ներածություն

ՀՀ ֆինանսական շուկայի կապիտալի (կամ ֆոնդային) հատվածը ՀՀ-ում լիարժեք չի կայացել, ինչը տնտեսության իրական հատվածի զարգացման խիստ սահմանափակումներից է: Մինչդեռ, 21-րդ դարում հեռահաղորդակցությունն ու թվային տեխնոլոգիաները առաջ են բերել բոլորովին նոր հնարավորություններ, այդ թվում՝ ֆինանսական շուկայում: Դրանցից է առցանց (ինտերնետային) հարթակներում իրականացվող «P2P» վարկավորումը: Համացանցի հարթակներում յուրաքանչյուր ոք կարող է գրավիչ տոկոսներով փող վերցնել բոլորովին անծանոթ մարդկանցից: Այդ տիպի գործարքները անվանում են «P2P» վարկավորում, որը նշանակում է «հավասարից հավասարին» (Peer-to-peer):

Մեթոդաբանություն

Ուսումնասիրության մեթոդաբանությունը հիմնված է միջազգային կառույցների տեղեկատվական աղբյուրների, մասնագիտական մոտեցումների և սկզբունքների վրա: Մասնավորապես, Եվրոպայում այս ձևաչափը ընդունված է անվանել նաև պարտքի կրաուդֆանդինգ: Եվրահանձնաժողովի պաշտոնական կայքում «Peer-to-peer» վարկավորումը (նաև՝ debt-based crowdfunding) սահմանվում է որպես բանկային վարկի ուղղակի այլընտրանք, այն տարբերությամբ, որ մեկ աղբյուրից փոխառություն ստանալու փոխարեն վարկառուն կարող է ուղղակիորեն վարկ վերցնել տասնյակ և երբեմն հարյուրավոր անձանցից¹: Առցանց տեխնոլոգիաները թույլ են տվել անհամեմատ պարզեցնել վարկավորման գործընթացը և բարձրացնել դրա հասանելիու-

¹ Peer-to-peer lending Description, EuropeanCommission, [Electronic resource] - Access mode: https://ec.europa.eu/growth/tools-databases/crowdfunding-guide/types/p2p_en (date of access: 10.02.2021).

թյունը վարկառուների համար: «P2P» կառուցակարգը ենթադրում է, որ կողմերից յուրաքանչյուրը կարող է նախաձեռնել գործարքը, ունենալով հավասար պատասխանատվություն: Բովանդակային առումով «P2P»-ին որոշակիորեն շփոթեցնող տերմին է, քանի որ այն, ըստ էության, բացառում է կենտրոնական համակարգի առկայությունը (որպես կարգավորող և վերահսկող), մինչդեռ «peer-to-peer» վարկավորումը գործնականում երկու օգտվողների համար պահանջվում է երրորդ հարթակ (կամ համակարգիչ), որը մոդերացիա է անում ու վերահսկում է գործընթացը:

Գրականության ակնարկ

«P2P» առաջին հարթակը հայտնվել է 2005 թ. Մեծ Բրիտանիայում «Zoopa» (Zone of Possible Agreement) անվամբ և այն շարունակում է մնալ այդ երկրի ամենամեծ «P2P» հարթակը. ավելի քան 500 հազ. հաճախորդներ և ավելի քան 469 մլն. ֆունտ ստերլինգ տրամադրված վարկեր: Մեկ տարի անց ԱՄՆ-ում հայտնվեցին «P2P» վարկավորման շուկայի ևս երկու խաղացողներ՝ «Prosper» և «Lending Club»¹: Հենց այս ժամանակներում են ի հայտ եկել առաջին ուսումնասիրությունները, որոնք առնչվում են ուսումնասիրվող խնդիրներին: Ներկայում «P2P» ռեսուրսների հաճախորդները հասնում են տասնյակ հազարների, ընդ որում, դրանք բոլորը տարբեր երկրների քաղաքացիներ են: ԱՄՆ-ում, որպես կանոն, «P2P» վարկավորումը օգտագործվում է նախկինում վերցված բանկային վարկերի վերաֆինանսավորման համար, չնայած որ դրանց նպատակները կարող են լինել շատ տարբեր: Սկզբնական շրջանում P2P» վարկավորումը բնութագրվում էր որպես «անցողիկ», կամ սովորաբար նորաթուփ սեկտոր: Տասնհինգ տարի անց ամբողջ աշխարհում միլիարդավոր դոլարներների վարկավորում է իրականացվում «P2P» հարյուրավոր հարթակներում: Այսօր այդ վարկավորումը որակվում է որպես նորարարական, «այաթեցնող», խաղի կանոնները փոխող ու նմանատիպ ածականներով, որը աննախադեպ բում է առաջացրել: «P2P» վարկային հարթակը, ըստ էության, դասական ֆինանսական միջնորդ չէ (ինչպիսին բանկն է), քանի որ «P2P» հարթակը միջոցներ չի ներգրավում և դրանք իր անունից չի տեղաբաշխում (վարկավորում), այն ուղղակի մի վայր է որտեղ անմիջապես գոր-

¹ P2P-КРЕДИТОВАНИЕ, RMG partners, էջ 11, [էլեկտրոնային ռեսուրս] - Access mode: https://media.rbcdn.ru/media/reports/RMG_Partners_P2PReport_RUS_final.pdf (մուտքի ամսաթիվ: 14.02.2021)

ծարքի մեջ են մտնում վարկառուն ու վարկատուն: Ստորև, ելնելով միջազգային շուկայի միտումներից, հիմնավորվում է այն հիփոթեզը, որ «P2P» վարկավորումը կարող է վերածվել ՀՀ կապիտալի (կամ ֆոնդային) շուկայում բաժնետոմսերի այլընտրանքային ներդրումների հարթակի, հատկապես փոքր և սկսնակ ներդրողների համար: Միանգամից նշենք, որ ՀՀ-ում դեռևս «P2P» հարթակներ չեն գործում: Հարկ է նշել, որ ներդրումների ռազմավարության առումով այդ երկու տիպի ակտիվները բոլորովին տարբեր ներդրումային ակտիվների դասերում են և ունեն կտրուկ տարբերություններ, այդ թվում՝ բիզնես մոտիվացիայի, իրականացման ընթացակարգերի, պատմական հետագծի, օրենսդրական կանոնակարգումների առումով և միմյանց հետ որևէ կերպ փոխկապակցված (կամ կորելացված) չեն: Ըստ այդմ, «P2P» հարթակները կարող են այլընտրանք հանդիսանալ արդյունավետ ներդրումային ռազմավարություն կառուցելու համար: Ներդրումային պորտֆելի բարձր կայունության առումով ողջամիտ կլինի երկարաժամկետ ներդրումները միաժամանակ կատարել ֆոնդային բորսայում՝ բաժնետոմսերում և «P2P» երկարաժամկետ վարկերում: Սկսնակ կամ փոքր ներդրողների համար այն կլուծի ներդրումային սեփական պորտֆելի դիվերսիֆիկացման խնդիրը: Ըստ այդմ, ակտիվների կարևոր հայտանիշների՝ եկամտաբերության, ապահովության, կիրարկման մատչելիության, իրացվելիության, անկայունության (volatility) հիմքով հարկ է բացահայտել «P2P» վարկերի հարաբերական առավելությունները բաժնետոմսերում ներդրումների նկատմամբ:

Վերլուծություն

Հայտնի է, որ բաժնետոմսերում ներդրումները հնարավորություն են տալիս դառնալ ընկերության բաժնետեր (բաժնեմաս ունենալ ընկերության սեփական կապիտալում), իսկ ներդրման հատույցը ակնկալվում է ստանալ ընկերության կողմից շահաբաժիններից և բաժնետոմսերի արժեքի հնարավոր բարձրացումից (երկրորդային շուկայում) դրանց նոմինալ արժեքի նկատմամբ (և հակառակը վնաս դրանց նվազումից): Ներդրումները «P2P» վարկերում, որպես կանոն, իրականացվում են էլեկտրոնային մասնագիտացված հարթակներում՝ վարկառուի հետ վարկային պայմանագրի կնքումով, որն ուղեկցվում է այդ հարթակի կազմակերպչի որոշակի աջակցության կառուցակարգերով: Ըստ այդմ, «P2P» հարթակում ներդրում կատարողը առանց միջնորդության՝ ուղղակի դառնում է պահանջատեր կողմ վարկառուի նկատ-

մամբ: Ակտիվի եկամտաբերության առումով պետք է նկատել, որ բաժնետոմսերն ու «P2P» վարկերը բավականաչափ տարբերվում են: Բաժնետոմսերից եկամտաբերությունը (շահաբաժիններից և կամ ընկերության արժեքի և ըստ այդ բաժնետոմսերի գնի աճը) բարդ կանխատեսելի է: Բաժնետոմսերի արժեքի անկման դեպքում, դրանց վերականգման հավանականությունը խիստ անորոշ է, իսկ իրացումը երկրորդային շուկայում առաջացնում է վնաս:

Ընկերության նկատմամբ բաժնետերը հանդիսանում է վերջին ատյանի պահանջատեր, ըստ այդմ, ընկերության բոլոր պարտատերերի պահանջների կատարումից հետո միայն կբավարարվեն բաժնետերերի նկատմամբ պահանջները: «P2P» վարկերում ներդրումներ կատարելով «P2P» վարկերից հասույթը վաստակում են տոկոսային եկամուտների տեսքով: «P2P» վարկերի եկամտաբերությունը հիմնականում կանխատեսելի է: «P2P» հարթակի վարկատուն վարկառուի նկատմամբ դառնում է առաջի ատյանի պահանջատեր, քանի որ միջազգային օրենսդրական պրակտիկան վկայում է, որ սնանկության դեպքում առաջնահերթ բավարարվում են սնանկ ճանաչվող անձին վարկավորող անձի պարտավորությունները:

Վարկն ունի չվերադարձման (կամ դեֆոլտի) հավանականություն, ըստ այդմ վարկի եկամտաբերությունը մեծապես կախված է պարտքը վերադարձնելու վարկառուի կարողությունից: Պարտքի վերականգնման հավանականությունը մեծ է, եթե վարկը ապահովված է, այդ թվում՝ գրավադրված գույքային կամ այլ ակտիվներով ու երաշխիքներով: Խնդրահարույց և չապահովված վարկային պարտավորությունների ամբողջությամբ վերականգնման հրնարավորությունները, որպես կանոն, դրանք խիստ ցածր են: Միջազգային պրակտիկայում բաժնետոմսերը պոտենցիալ կարող են ապահովել ավելի բարձր եկամտաբերություն, երբեմն ավելի 20 տոկոսից ավելի, մինչդեռ «P2P» վարկերի եկամտաբերությունը կազմում է տարեկան 11-12 տոկոս (զարգացած շուկաներում): Հարկ է նկատել, որ ակտիվի վերադարձի կամ կորստի հնարավորություն երկու դեպքում էլ կախված է կիրառվող ռիսկերի կանխարգելիչ գործիքակազմից: Բաժնետոմսերի դեպքում դրանք են՝ պարտֆելային դիվերսիֆիկացված ներդրումները, «P2P» վարկերի դեպքում առաջնահերթ վարկի ապահովումն ու վարկառուի վարկունակության ճշգրիտ գնահատումն է: Ակտիվների կարևոր բնութագրիչներից է դրանց գների անկայունությունը կամ փոփոխականությունը (Volatility): Բաժնետոմսերի դեպքում դը-

րանց գնի վրա կարող են ազդել բազմաթիվ գործոններ, օրինակ՝ տնտեսական իրավիճակը, հասարակության մոտեցումներն ու սպասումները, քաղաքական զարգացումները, երկրի տնտեսական քաղաքականության փոփոխությունները, ճգնաժամերը: Ֆոնդային շուկան իր էությանը շատ անկայուն է, ինչը մեծացնում է ինչպես եկամտաբերության, այնպես էլ կորուստների հնարավորությունները: «P2P» վարկերը որպես այդպիսին չեն դասվում անկայուն (Volatility) ակտիվների դասին: Դրանց եկամտաբերությունը որոշվում է վարկավորման ժամանակ և կախված է վարկառուի կողմից վարկը սպասարկելու և նաև վարկատուի կողմից պարտքը գանձելու կարողությունից: «P2P» վարկերի եկամտաբերությունը առավել կանխատեսելի է նորմալ շուկայական պայմաններում: «P2P» վարկերի վրա ազդող առավել ազդեցիկ արտաքին գործոններից են հիմնականում ֆինանսական շուկաների տատանումները և դրանց կարգավորումների փոփոխությունները: Մակրոտնտեսական, աշխարհաքաղաքական իրադարձությունները «P2P» վարկերի վրա այդքան մեծ ազդեցություն չեն թողնում, և դրանք բորսայում շրջանառվող բաժնետոմսերի համեմատ նվազ անկայուն են: Ի դեպ, հարկ է նկատել, որ ՀՀ-ի հետպատերազմյան անկայուն իրավիճակում արտաքին ազդեցության գործոնները ավելի են ընդարձակվել ու խորացվել: Խնդրի առումով կարևոր է նաև երկու ակտիվների պաշտպանության վրա ազդող գործոնների համեմատությունը: Ֆոնդային բորսան և բաժնետոմսերում ներդրումները ինստիտուցիոնալ առումով 200 տարուց ավելի կարգավորվում են որոշակի սկզբունքներով ու չափորոշիչներով և դրանց կարգավորման կանոնները դարձել են ունիվերսալ:

«P2P» հարթակներում ներդրումների համար կարևոր գործոններից է հաշվետվողականությունը, խաբեություններից ու կեղծիքներից պաշտպանության ուղղված կարգավորումները: «P2P» վարկերի կարգավորումը ներկայում կատարվում է ոչ թե գլոբալ, այլ ազգային մակարդակով, չկան դրա ունիվերսալ կանոններ («P2P» վարկավորումը ի հայտ է եկել՝ 10-15 տարի): Օրինակ՝ Մեծ Բրիտանիայում «P2P» հարթակները կարգավորվում է «Ֆինանսական կառավարման մարմնի կողմից (FCA- Financial Conduct Authority) կողմից, ԵՄ-ում այն իրականացվում է կրաուդֆանդինգի (Crowdfunding) ծառայությունների իրականացման եվրոպական լիցենզիայի հիման վրա, տեղական իշխանությունների կողմից, Լիտվայում՝ կենտրոնական բանկի կողմից: Պաշտպանական կառուցակարգերի խնդիրը հարկ է դիտարկել նաև ներդրողներին

մատուցվող պրոդուկտների առումով: Մասնավորապես՝ բորսայական ներդրումային ֆոնդերը (ETF- Exchange-traded funds) և փոխադարձ ֆոնդերը (mutual funds) ունեն ներդրումային նպատակներին հասնելու միջոցներ և կորուստները կանխելու ալգորիթմ ու կառուցակարգեր: Դրանք իրենց բնորոշ պաշտպանական կառուցակարգերով հատկապես կարևոր են անհատ ու սկսնակ ներդրողների համար: Ներդրողներին դրանք առաջարկում են միասնական փուլում (կամ ընտրանքում) համախմբված ներդրումներ, ունեն բնույթով (հատկապես փոխադարձ ֆոնդերը) պասիվ և կամ ինդեքսավորված ռազմավարություն միտված՝ ներդրվող թղթերի էտալոնային հենանշային ինդեքսների պահպանմանը: Այդ ձևաչափը ներդրողին առաջարկում է դիվերսիֆիկացված պորտֆել՝ էտալոնային ինդեքսներով, որն ապահովում է նաև մասշտաբի էֆեկտ, և ֆոնդերի կառավարիչներին թույլ է տալիս նվազեցնել գործառնական ծախսերը: Բորսայական ներդրումային ֆոնդերը (ETF) առավել հարմար են պասիվ ներդրումային քաղաքականության համար, ի հաշիվ՝ ներդրումների լայն դիվերսիֆիկացման՝ տասնյակ կամ նույնիսկ հարյուրավոր ընկերությունների միջև: Այս տարբերակը նաև խիստ նվազեցնում է ժամանակատարությունն ու ծախսերը: Ներդրողի նախաձեռնությամբ կոնկրետ բաժնետոմսերում ներդրումները կարող է շատ ժամանակատար ու խնդրահարույց լինել, ելնելով դրանց թերագնահատված կամ գերագնահատված լինելու հանգամանքից:

«P2P» հարթակների պաշտպանիչ մեխանիզմների առումով հարկ է նշել, որ սկսնակ, փոքր ներդրողների կողմից նախքան «P2P» հարթակում ներդրումներ կատարելը և անմիջապես փոխառուի հետ վարկային հարաբերությունների մեջ մտնելը պահանջվում է ուսումնասիրել վարկառուի կառավարման գործելակարգերը և վարկավորման պրակտիկան, հարթակի կողմից մատուցվող ծառայություններն ու տրամադրվող հնարավոր երաշխքները: Հարթակ մուտք գործելիս իրականացվում է վարկ ցանկացող անձի վերաբերյալ տվյալների խիստ հսկողություն: Մասնավորապես՝ վարկառու անձը պետք է մուտքագրի հասցեն, անձնագրի, սոցիալական ապահովագրություն քարտի և այլ տվյալները, նշի բանկային (կամ քարտային) հաշվի համարը: Որպես կանոն, «P2P» հարթակում գործում է վարկառուների ստուգման ավտոմատ համակարգ, որը բացառում է, օրինակ՝ քրոնիկ գործազուրկները կամ ոչ բարվոք վարկային պատմություն ունեցող անձանց վարկավորման հայտերը:

Վարկերի դեֆոլտի ռիսկը նվազեցնելու համար վարկային բյուրոյի տվյալների հիման վրա յուրաքանչյուր վարկառուի ավտոմատ կերպով տրվում է վարկանիշ: «P2P» հարթակները օգտագործում են նաև բանկային գործունեության մեջ կիրառվող վարկառուի սքորինգի գնահատման մեխանիզմները, մատուցում են տրամադրված վարկերի սպասարկման, ժամկետանց պարտքերի հավաքագրման մեխանիզմներ: Վարկառուի վարկանիշից, գնահատված սքորից է կախված նրան տրվող վարկի պայմանները: Այնուամենայնիվ, «P2P» հարթակները հարյուր տոկոսանոց երաշխիքներ չեն տալիս վարկերի վերադարձի առումով: Գործող միջազգային «P2P» հարթակներում վարկի չափը կարող է կազմել մի քանի հազար դոլար, իսկ վարկի միջին ժամկետը կազմում է շուրջ 3 տարի է (կան նաև կարճաժամկետ վարկեր): Առցանց «P2P» հարթակի ծառայությունների համար միջնորդավճարը գանձվում է երկու կողմից: Միջազգային պրակտիկայում «P2P» ծառայություններ մատուցելու համար մասնագիտացված հարթակը, որպես կանոն, վարկառուից գանձում է միջնորդավճար՝ վարկի գումարի 2-5 տոկոսի չափով, իսկ վարկատուների սպասարկման համար, վարկատուից՝ տարեկան մինչև 1 տոկոսի չափով: «P2P» վարկային շուկայի հետագա զարգացման հետ մեկտեղ սպասվում է միջնորդավճարների նվազում, և միաժամանակ արտոնյալ տոկոսադրույքների առաջարկներ: Նույն միտումը կդրսևորվի «P2P» հարթակները ՀՀ-ում ներդնելու ընթացքում: «P2P» վարկավորումը բացառելով դասական միջնորդությունը, հանգեցնում է գործարքի ավելի ցածր ծախսերի և ըստ այդմ գործարքի բոլոր մասնակիցները ստանում են ավելի բարենպաստ պայմաններ, քան ավանդական բանկային վարկավորման դեպքում:

Հարկ է նկատել, որ սկսնակ ներդրողի համար ներդրումային ռազմավարության կառուցումը ժամանակատար է և պահանջում է վերլուծական աշխատանք՝ ներդրման լավագույն գնի ու ժամկետի կանխատեսման համար: Գործնականում սկսնակները հաճախ տրվում են հույզերի և էմոցիոնալ որոշումները գերակայում են ռացիոնալ որոշումների նկատմամբ, արդյունքում նրանք կանգնում են կորուստների առջև: Առաջանում է մոնիթորինգի և դրա արդյունքներով ճշգրտումների իրականացնելու անհրաժեշտության, որն էլ կարող է ժամանակատար ու ծախսատար լինել: «P2P» հարթակներում արդյունավետ գործելու համար սկսնակ ներդրողներից պահանջվում է «P2P» հարթակի վարկերի սպասարկման կառավարման և արդյունավետության ու-

սումնասիրություն, մոնիթորինգի իրականացում: Ընտրված հարթակում սեփական պորտֆելի կանոնավոր վերահսկումը միտված է վարկային պորտֆելում ժամկետանց և անահուսալի վարկերի մշտադիտարկմանը, դրանց վաղ հայտնաբերմանն ու իրականացվող քայլերի ճշգրտմանը և ի վերջո կորուստների նվազմանը: «P2P» հարթակները սկսնակներ ներդրողների համար հրճարավորություն են ստեղծում ավտոմատացնել ներդրումային ռազմավարությունը և կրճատել ժամանակի ծախսը, եկամտաբերության դրական միտում ապահովել: Ներդրողի տեսանկյունից «P2P» հարթակի տարբերակի ընտրությունը առավել ժամանակատար է համեմատած բորսայական առևտրի ֆոնդերի (ETF) հետ, և միաժամանակ առավել նվազ ժամանակատար է սելեկտիվ առանձին բաժնետոմսերում ներդրումների համեմատ:

Վերը նշված ներդրումների բոլոր տարբերակները պահանջում են ժամանակի և ռեսուրսների ծախս: Մինչդեռ այստեղ գործում է նաև վարքագծային տնտեսագիտության (behavioral economics) գործոնը¹, թե ինչքանով է ներդրողը հոգեբանորեն հակված վստահել մի դեպքում՝ ֆոնդային շուկայի կառուցակարգերին ու գործիքներին և մյուս դեպքում՝ «P2P» հարթակին:

Վարքագծային (կամ զգացմունքային) բաղադրիչը հաճախ որոշիչ լինում այս կամ այն ներդրումների դեպքում, ու հանգեցնում ներդրումային վատ որոշումների կայացմանը: Մասնավորապես՝ ֆոնդային շուկայում բաժնետոմսերում ներդրումների դեպքում, առկա է գրավչության հուզական կամ էմոցիոնալ բռնկումը, բարձր գնի բաց թողնելու վախը (FOMO Fear of missing out), հաճախակի դրսևորվող խուճապային վաճառքը, իմպուլսիվ առևտուրը՝ ցածր գնով վաճառքը: «P2P» վարկերի դեպքում վարքագծային բաղադրիչի դրսևորումներից են վատ վարկերի կամ խաբեությունների մեջ ներդրումներ կատարելու վախը և մյուս կողմից ձանձրալի միատարր գործընթացը: Բոլոր դեպքերում զգացմունքային միտումը նվազեցնելու համար ներդրողը պետք է գիտակցի, որ իր փողերը որևէ ներդրման մեջ ցանկացած պահից այլևս իր վերահսկողությունից դուրս են: Ըստ այդմ, ներդրումային արդյունավետ որոշումներ կայացնելու համար պետք է ապավինել ակտիվների ռիսկերի գնահատմանը: Վարքագծային առումով փոքր և հատկապես սկսնակ ներդրողների համար մյուս գործոնը որևէ ներդրումային հարթակների կիրառման

¹ 2017 թ. Ռիչարդ Թալերը (Richard Thaler) ստացավ Նոբելյան մրցնակ ստացավ վարքագիտության տնտեսագիտության մեջ ունեցած ներդրման համար:

մատչելիությունն է: «P2P» հարթակների մատչելիությունը բարձր է, պահանջում է միայն գրանցման և հարթակում «նավիգացիոն» գործընթացի իրականացում: Այն բավականաչափ դյուրին է նույնիսկ սկսնակների համար, փողերի լվացման դեմ պայքարի ընթացակարգերը անցնելուց և միջոցները սեփական հաշվին մուտքագրելուց հետո, ներդրողը կարող է սկսել ներդրումներ կատարել: Այդ գործընթացը որպես կանոն տևում է մինչև երկու օր: Հարթակների մեծ մասը ավտոմատացված է և ներդրողին առաջարկում է ներդրումները վերահսկելու գործիքներ:

Ներդրումային երկու գործիքների համեմատական առավելությունների վերհանման առումով չափազանց կարևոր է իրացվելիության մակարդակի գնահատումը: Ֆոնդային բորսայում, մասնավորապես՝ բաժնետոմսերում ներդրումների իրացվելիությունը խիստ տարբեր է, կախված՝ կիրառվող գործիքակազմից և կառուցակարգերից: Մասնավորապես՝ բորսայական առևտրի ֆոնդերի (ETF), սպերդի կամ «տարբերության պայմանագրերի» (CFD) գործիքները ունեն բավականաչափ բարձր իրացվելիության աստիճան, ի տարբերություն կոնկրետ բաժնետոմսերում կատարվող ներդրումների: «P2P» հարթակների իրացվելիությունը կախված է վարկի տեսակից և յուրաքանչյուր հարթակի առաջարկած գործառույթներից և ամրագրված պայմաններից: Որոշ հարթակներ առաջարկում են միջոցների դուրս բերման ակնթարթային տարբերակ, իսկ մյուսներն առաջարկում են այն իրականացնել երկրորդային շուկայում, հետևապես իրացվելիությունը երաշխավորված չէ: Այն դեպքում երբ «P2P» հարթակներում վարկերը ունեն բարձր վերադարձելիություն, ապա ներդրողի համար միջոցները կարող են արգելափակված լինել ամիսներ կամ առավել երկար, մինչ դրանք հասանելի կդառնան ներդրողին:

Հարկ է նաև նշել, որ ներդրումային ռազմավարությունը ճշգրտելու դեպքում երկու դասերի երկարաժամկետ ակտիվները խնդրահարույց են իրացվելիության առումով: Մինչդեռ կարճաժամկետ ներդրումների դեպքում իրացվելիության տեսանկյունից կշեռքի նժարը փոխվում է դեպի «P2P» վարկավորումը: Կարճաժամկետ «P2P» վարկերը բաժնետոմսերի համեմատ կանխատեսելի եկամտաբերություն են ապահովում, ի հաշիվ ավելի ցածր անկայունության (volatility): Ներդրումային որոշման վերաբերյալ կարևոր բաղադրիչներից է նաև ակտիվների նույն դասում դիվերսիֆիկացումը: Բաժնետոմսերի դեպքում դրա տարբերակներից են ներդրումները, օրինակ՝ բորսայական ա-

ոևտրի ֆոնդերում (ETF) և կամ փոխադարձ ֆոնդերում (mutual fund) կամ ներդրումների անհատական դիվերսիֆիկացումը: «P2P» վարկերի պորտֆելի դիվերսիֆիկացման նպատակով ներդրողը իր միջոցները ներդնում է. ա) ապահովություն ունեցող վարկերում, բ) որոշակի տիպի վարկերում, հաշվի առնելով ժամկետայնությունը, տոկոսադրույքը, վարկավորվող ընկերությունների ֆինանսական վիճակը և նրա խմբի ֆինանսական հոսքերը, գ) ոլորտների բաշխման մոտեցմամբ, դ) լավագույն վարկային հարթակների ընտրությամբ, ե) ըստ երկրների «P2P» հարթակների դիվերսիֆիկացմամբ:

Մյուս խնդիրը ներդրումների աջակցությունն է: Ֆոնդային շուկայում, մասնավորապես՝ բաժնետոմսերում ներդրումների դեպքում, որպես կանոն, աջակցության ակնկալիքները որոշակիորեն սահմանափակված են: «P2P» հարթակների մեծ մասում առկա են արդյունավետ աջակցության կառուցակարգեր: Հնարավոր է տեղեկատվություն ձեռքբերել և դիտարկել վարկառուի վարկային պատմությունը, ֆինանսական հաշվետվությունները, վիճակագրությունը, վարկունակության գնահատումը: Որպես կանոն «P2P» հարթակները սկսնակ ներդրողների համար հակված են ավելի շատ ուսուցողական խորհրդատվություն տրամադրել, քան բորսայական բրոքերային ընկերությունները:

«P2P» վարկերի կայքերը ներդրողներին առաջարկում են հետվճարային բոնուսներ (Cashback), որոնք գրավչությունից բացի շատերի մոտ հարցեր է առաջացնում: Միջազգային պրակտիկայում կախված «P2P» հարթակից սկսնակ ներդրողներին առաջարկվում է 0,5% - 5% հետվճարային բոնուս: Այն սովորաբար վճարվում է. ա) գրանցվելուց անմիջապես հետո, բ) առաջին ներդրումից հետո, գ) գրանցվելուց 90 օր հետո: Բոնուսների ակցիաներից շատերը բացառիկ են, քանի որ դրանք այլ կայքերում հնարավոր չի լինի գտնել¹: ՀՀ-ում այդ շուկան զարգացնելու առումով այդ մոտեցումը ևս կարող է խթանիչ դեր կատարել:

Այսպիսով, կարելի է փաստել, որ այդ երկու դասի ակտիվներն էլ ունեն առավելություններ և խոցելի կողմեր և դրանցում ներդրումները մեծապես

¹ P2P LENDING BONUS OFFERS, Top P2P Lending Cashback Bonus Offers for New Investors, [էլեկտրոնային ռեսուրս] - Access mode: <https://p2pempire.com/en/cashback-bonus>, (մուտքի ամսաթիվ: 10.10.2020)

կախված են փոքր, սկսնակ (ոչ մասնագիտացված) ներդրողների ներդրումային ռազմավարության պատկերացումից:

Եզրակացություններ

Ելնելով վերոհիշյալից կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների: «P2P» հարթակների ուժեղ դիրքերից է՝ վարկառուների համար վարկերի ցանկալի ցածր տոկոսադրույքը և միաժամանակ ցանկալի բարձրը՝ ներդրողների համար: Այդուհանդերձ, գնային լծակի դերը չպետք է գերազնահատվի, քանի որ այդ դեպքում հարկ կլինի հաշվի առնել տարբեր տեսակի միջնորդավճարների ազդեցությունը ևս: Այս առումով հարկ է համաձայնել Միլանի համալսարանի հետազոտող Եվգենիա Օմարինի (Eugenia Omarini A) այն պնդման հետ, որ այս ոլորտում գնային մրցակցությունը շուկայական մրցակցության հիմնական լծակը չէ¹:

Բոլոր դեպքերում նորարարական փոփոխությունները անխուսափելի բախվելու են որոշակի դիմադրողականության հետ: «P2P» հարթակների արդյունավետությունը առավելապես պայմանավորված է լինելու մատչելի վարկավորման հնարավորության և միաժամանակ նրանց կայուն վիճակի ապահովմամբ: Ակնհայտ է, որ ֆինտեխի և «P2P» հարթակների շնորհիվ կձևավորվի ֆինանսական ծառայությունների բաց էկոհամակարգ, որը ենթակա է մասշտաբացման, իսկ փակ համակարգերը դրան ունակ չեն և առավել խոցելի են ճգնաժամերի առումով:

Ֆինանսական շուկաների կարգավորողների համար մարտահրավերները կանխատեսելի են և կապված են՝ գործարար մոդելների կայունության, գործարքների և հաճախորդների թափանցիկություն, շուկայի իրացվելիության հետ: Թվայնացման անխուսափելի փոփոխություններով առցանց վարկավորումը կդառնա համատարած: Առաջիկայում «P2P» հարթակների միջոցով առցանց վարկավորումը կներխուժի ՀՀ ֆինանսական շուկա: Դրանց արդյունավետ մուտքը պայմանավորված կլինի նրանց կողմից ինչպես ներդրողների, այնպես էլ փոխառուների կարիքների ճգրիտ և արդյունավետ բա-

¹ Eugenia Omarini A, Peer-to-Peer Lending: Business Model Analysis and the Platform Dilemma, Department of Finance, Bocconi University, Via Roentegen, Milano, Italy, [Էլեկտրոնային ռեսուրս] - Access mode: https://www.researchgate.net/publication/333167188_Peer-to-Peer_Lending_Business_Model_Analysis_and_the_Platform_Dilemma (մուտքի ամսաթիվ: 14.02.2021)

վարարումը: Այդ հարթակները ու հաջողության գրավականը շահագրգիռ կողմերի հետ բաց երկխոսությունն ու համարժեք տեղեկատվության տրամադրումն է, ինչպես նաև շահառուների շարունակական կրթումն է: P2P» վարկերի պահանջարկի վրա կարող են ազդել բազմաթիվ գործոններ, մասնավորապես՝ բանկերի ռազմավարությունը, վարկային գործընթացների առավել սելեկցիոն բնույթը, բիզնես և մանրածախ հաճախորդների տարբեր դիրքավորումը և որոշ տիպի վարկերի պահանջների ավելացումը կամ կրճատումը:

ՀՀ-ում «P2P» հարթակների վարկանիշի և հաջող զարգացման կարևոր գործոններից են հանդիսանալու ա) հարթակների մասնագիտացումը, բ) նրանց կողմից ռիսկերի կառավարումը, այդ թվում՝ վարկատուների և վարկառուների միջև տեղեկատվության ասիմետրիայի անցանկալի հետևանքների չեզոքացումը, գ) ծախսերի կառուցվածքի պահպանումը (ցածր ծախսատարության), դ) առաջարկվող պրոդուկտների բազմազանությունը: Խնդիրներից մեկն էլ այն է, որ այդ շուկա կմտնեն պոտենցիալ վարկառուներ, որոնք չունեն վարկային պատմություն:

Հիմնախնդիրը դիտարկելով ներդրողների տեսանկյունից հարկ է նկատել, որ նրանց գերխնդիրը իրացվելի և հուսալի ակտիվների պորտֆել ունենալն է: Դրա համար անհրաժեշտ է, որպեսզի կայանա նաև առցանց վարկերի երկրորդային շուկան, որտեղ իրականում կգնահատվի դրանց իրացվելիության մակարդակը:

Կայացած շուկաներում ներդրողները ընտրություն են կատարում «P2P» հարթակների ռազմավարությունների միջև: ՀՀ-ում սկզբնական շրջանում ընտրությունը կամ կոշտ մրցակցությունը կընթանա նորաթուխ «P2P» հարթակների և բանկերի ու վարկային կազմակերպությունների միջև: «P2P» հարթակների առավելություններից են լինելու. ա) գործունեության կարգավորումների ոչ կոշտ բնույթը, բ) ֆինտեխ պրոդուկտների առավել արդյունավետ ներմուծումը այն սեգմենտներում որտեղ բանկերն (վարկային կազմակերպությունները) չունեն բավարար ճկունություն: ՀՀ-ում «P2P» հարթակների հաջողության գրավական կարող է հանդիսանալ առցանց ծառայությունների՝ փաթեթավորումը վարկավորման հաջորդական բլոկների մոտեցմամբ «խողովակի ձեռքբերում» (acquisition pipeline), որը կապահովի շարունակականություն և արդյուավետություն, գ) ավանդական պրոդուկտների նոր փաթե-

թավորումները և կամ հետաքրքիր գաղափարների հիմքով ավելի մատչելի գնային և այլ պայմաններով նորարարական սպառողական և բիզնես վարկավորման պրոդուկտները:

«P2P» հարթակները նոր խնդիրներ են առաջացնում վարկատուների ու վարկառուների քաղաքացիաիրավական հարաբերությունների մասշտաբացման առումով, ներառյալ կիրքեր անվտագության ռիսկերը:

ՀՀ-ում նորաթուխ «P2P» հարթակների զարգացումը կարող է ընթանալ երկու ռազմավարությամբ, մի դեպքում դրանք կարող են լինել մասնագիտացված և մյուս դեպքում բազմապրոֆիլ հարթակներ:

ՀՀ-ում «P2P» հարթակներում ներդրողներ կարող են հանդիսանալ ՀՀ այնպես էլ օտարերկրյա գործունակ՝ 18 տարեկանից բարձր քաղաքացիները, որոնք ունեն վավեր անձնագիր, նոյնականացման քարտ և բանկային հաշիվ: Կազմակերպությունները պետք է լինեն իրավունակ և սնանկության գործընթացում չընդգրկված: «P2P» հարթակում ներդրման նվազագույնը չափը նրպատակահարմար է սահմանել 50 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

ՀՀ-ում «P2P» հարթակում փոխառություն կարող է ստանալ ՀՀ ցանկացած ֆիզիկական անձ և կազմակերպություն: Ֆիզիկական անձանց համար պարտադիր է վավեր անձնագիրը, նոյնականացման քարտը և բանկային հաշիվը: Փոխառության մեծությունը կարող է լինել 300-ից մինչև 3 000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ և տրամադրման ժամկետը՝ 12-ից 60 ամիս: Կազմակերպությունները պետք է լինեն իրավունակ և սնանկության գործընթացում չընդգրկված: Փոխառության մեծությունը 1000-ից մինչև 10 000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ և տրամադրման ժամկետը՝ 12-ից 60 ամիս: Եթե փորձենք գնահատել «P2P» հարթակների վարկավորման ծավալները, ապա զուհառեն անկցացնելով Լիտվայի հետ կարող ենք կանխատեսել, որ այն առաջին տարում կմոտենա շուրջ 50 մլն. ԱՄՆ դոլարին, հետագայում անգամներով բազմապատկվելու միտումով:

Ֆինանսական ծառայությունների նոր սեգմենտի բոլոր զարգացումները հնարավոր չէ կանխատեսել, սակայն այն միտումների առումով կարելի է տեսանելի գնահատել, և անկասկած «P2P» հարթակների զարգացումը կհանգեցնի ֆինանսական ծառայությունների մատուցման չափազանց հետաքրքիր ժամանակահատվածի:

Սմբատ ԴԱՎԹՅԱՆ

Առցանց հարթակներում վարկավորումը որպես ՀՀ ֆինանսական շուկայի նոր այլընտրանք և այն ակտիվացնելու առանցքները

Բանալի բառեր՝ «P2P» «հավասարից հավասարին» վարկավորում («Peer-to-peer»), «P2P» վարկային հարթակ, ֆինտեխ, ներդրումների դիվերսիֆիկացում

Հոդվածում ներկայացվել է հայաստանյան ֆինանսական շուկայում «P2P» պլատֆորմներում վարկավորումը որպես բաժնետոմսերում ներդրումների այլընտրանքի հիփոթեզը, հատկապես՝ փոքր ու սկսնակ ներդրողների համար: Դիտարկվել են «P2P» պլատֆորմներում վարկավորման միջազգային պրակտիկան և ձևաչափերը: Վերլուծվել են բորսայական բաժնետոմսերի և «P2P» վարկային պլատֆորմներում ներդրումների համեմատական առավելություններն ու խոցելի կողմերը, դրանց եկամտաբերության, անվտանգության, մատչելիության, իրացվելիության և անկայունության չափորոշիչներով: Առաջարկվել են վարկային պլատֆորմների ներդրման մեխանիզմներ:

Смбат ДАВТЯН

Кредитование через интернет платформы как альтернатива инвестициям финансового рынка в РА и оси его активизации

Ключевые слова: кредитование «P2P» («Peer-to-peer») - «от равного к равному»; платформа «P2P» кредитования; финтех, диверсификация инвестиций; доходность

В статье поставлена гипотеза о том, что платформы «P2P» кредитования могут стать новой альтернативой инвестированию в акции на армянском финансовом рынке, особенно для небольших начинающих инвесторов. Рассмотрена международная практика и формат кредитования «P2P» платформ. Анализируются сравнительные преимущества и уязвимости акций фондового рынка и инвестиций в платформы «P2P» кредитования по параметрам доходности, безопасности, доступности, ликвидности и волатильности. Предложены механизмы для формирования платформ «P2P» кредитования. Рассмотрены вопросы конкуренции платформ «P2P» кредитования с действующими институтами финансового рынка.

Smbat DAVTYAN

Lending via the Internet platforms as an alternative to investments to the financial market in the RA and the axis of its activation

Key words: «P2P» lending ("Peer-to-peer"); «P2P» lending platform; fintech; diversification of investments; profitability, safety, availability, liquidity, volatility of assets

The article states hipotez that «P2P» lending platforms can become a new alternative to investing in stocks in the Armenian financial market, especially for small novice investors. The international practice and format of lending "P2P" platforms are considered. The comparative advantages and vulnerabilities of stock market shares and investments in P2P lending platforms are analyzed in terms of profitability, security, availability, liquidity and volatility. Separate mechanisms have been proposed to form the «P2P» lending platforms in Armenia. The issue of competition between «P2P» lending platforms with the existing institutions of the financial market was considered.

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԸ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳԼՈՐԱԼԱՑՄԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

Նարինե ԽԱԼԱԹՅԱՆ

ՀՊՏՀ Տնտ. տես. ամբիոնի դոցենտ, տ. գ. թ.

Բանալի բառեր. սոցիալական քաղաքականություն, մոբիլություն, սոցիալական ապահովագրության ինստիտուտ, սոցիալական ռիսկեր, սոցիալական բևեռացում, մարգինալ խմբեր

Ներածություն

Աշխարհում գլոբալացման հետևանքով սոցիալական քաղաքականությունը ենթարկվում է վերափոխման, որը ներառում է սոցիալ-տնտեսական հիմնական համակարգերը և զարգացող ու անցումային տնտեսությունների արդիականացման մոդելները: Քաղաքական համակարգերի, միջազգային առևտրի տեխնոլոգիաների զարգացումը նոր հնարավորություններ է ստեղծում մարդկանց բարօրության բարելավման համար: Տնտեսության գլոբալացումը և տեխնոլոգիական նորարարությունների մշակումը և ներդրումը մեծացնում են տարբեր երկրների աճի ներուժը, ինչը կարող է հանգեցնել սոցիալ-տնտեսական զարգացման աննախադեպ աճի: Այնուամենայնիվ, գլոբալացման ազդեցությունը այնքան էլ միանշանակ չէ, և նույն գործընթացները, որոնք աշխարհում ստեղծում են զարգացման նոր հնարավորություններ, միևնույն ժամանակ մեծացնում են երկրների միջև առավելությունների անհավասարաչափ օգտագործման ռիսկը: Այն կարող է մեծացնել հասարակության զարգացման հնարավորությունները, ինչպես նաև խորացնել առկա տարբերությունները խոցելի սոցիալական, էթնիկական կամ ժողովրդագրական տարբեր խմբերի միջև: Համաշխարհային ճգնաժամը, տնտեսության գլոբալացումը և աճող տնտեսական մոբիլությունը (շարժունություն) մեծացնում են եկամտի մակարդակի տատանումները, որոնք, զուգորդվելով մարգինալացման կամ սոցիալական բևեռացման հետ, կարող են զգալիորեն վատթարացնել բնակչության տարբեր խմբերի վիճակը՝ ավելացնելով սոցիալական ռիսկերը: Ժամանակակից աշխարհում, ազգային պետությունների դերի թուլացումը, որը տեղի է ունենում միջազգային ֆինանսական ինստիտուտների, անդրազգային կորպորացիաների, միջազգային առևտրի և այլ համաձայնա-

գրերի աճող ազդեցության հետևանքով, նվազում է առանձին պետությունների անկախ սոցիալական քաղաքականություն իրականացնելու հնարավորությունները:

Մեթոդաբանություն և գրականության ակնարկ

Սոցիալական պաշտպանության համակարգերի ձևավորման գործընթացը տեղի է ունեցել պատմական և տնտեսական բազմաթիվ գործոնների ազդեցությամբ: Գիտնականներն ու քաղաքագետները եզրակացրել են, որ անհնար է առաջարկել սոցիալական քաղաքականության միասնական օպտիմալ մոդել: Այնուամենայնիվ, բոլոր երկրները պետք է լուծեն այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են սերունդների և տարբեր անցումային խմբերի միջև շահերի հավասարակշռության ձևավորում, կառավարման տարբեր մակարդակների միջև լիազորությունների և պարտականությունների սահմանազատում, կենտրոնացման (սոցիալական իրավունքների, պետականերաշխիքների) և ապակենտրոնացման միջև հավասարակշռության ձեռքբերում, այդ թվում՝ տեղական մակարդակում սոցիալական ծառայությունների փորձարարական ձևերի մշակում, պետական և այլ ոլորտների՝ բարեգործական և հասարակական կազմակերպությունների միջև, ռեսուրսների ճկուն վերաբաշխում և այլն, որոնք ընկած են պետության սոցիալական պաշտպանության համակարգի հիմքում:

Վերլուծություն

Համաշխարհային տնտեսությունում սոցիալական քաղաքականության վերափոխման որոշիչ գործոններն են՝ մասնագիտական կառուցվածքի պայմանականությունն ու շարժունությունը, տեխնոգեն և աշխարհաքաղաքական բնույթի նոր ռիսկերը, կառուցվածքային ժողովրդագրական փոփոխությունները, ընտանեկան կյանքի ձևերի բազմազանեցումը, կանանց ակտիվ ներգրավվածությունը տնտեսական կյանքում, արհեստակցական միությունների և ավանդական սոցիալական գործընկերությունների դերի նվազումը, սոցիալական նոր շարժումների առաջացումը, որոնք ձայնի իրավունք են տալիս ոչ միայն միջին դասին (հարկերի և սոցիալական ապահովագրության ֆոնդերի հիմնական վճարող), այլ նաև մարգինալ խմբերին (քաղաքացիներ, որոնք

ունեն հաշմանդամություն, հասարակության մեջ հայտնվել են լուսանցքային գոտում)¹, նոր արժեքների ինտեգրմանը կոչ անողները և այլն:

Սոցիալական պաշտպանության համակարգում նպատակային ծրագրերի տեղն ու դերը լավ հասկանալու համար անհրաժեշտ է պատկե-րացնել խնդրի մասշտաբայնությունը և բազմազործոն բնույթը: Սոցիալական պաշտպանության համակարգը նախատեսված է հաղթահարելու սոցիալական անապահովությունը՝ աղքատության գծից դուրս հայտնվելու ռիսկը: Դրա համար էլ այն ներառում է մի շարք միջոցառումներ և ռազմավարություններ, որոնք ուղղված են բնակչության բոլոր կատեգորիաների բարեկեցության նը-վազագույն մակարդակի ապահովմանը, եկամտի մակարդակի անկման դեպ-քում հնարավոր բացասական հետևանքների հարթեցմանը (ռեսուրսների վե-րաբաշխում մարդու կենսացիկլի ողջ ընթացքում), ինչպես նաև եկամտի «շո-կային» կորստի՝ օրինակ, անաշխատունակության դեպքում ապահովագրա-կան փոխհատուցումների տրամադրում: Սոցիալական պաշտպանության ար-դյունավետությունը կախված է աղքատության և սոցիալական անապահո-վության դեմ պայքարի համապարփակ մոտեցման առկայությունից: Տարա-ծաշրջանային և տեղական մակարդակներում ծրագրերի իրականացման գործընթացը ներառում է².

1. Աղքատության մասշտաբների և բնույթի որոշումը: Դա անելու հա-մար պետք է պարզել, աղքատությունը ունի քրոնիկ (կառուցվածքային), թե՞ ժամանակավոր բնույթ, ո՞ր սոցիալ-ժողովրդագրական խմբերն են առավել հակված աղքատության ռիսկի, աղքատության խորության և սրության մաս-շտաբը, աշխատանքի շուկայում աղքատների բնութագրիչները, աշխարհա-գրական, էթնիկական կամ աղքատության այլ ձևերի խորացման առկայու-թյունը և այլն:

2. Գոյություն ունեցող ծրագրերը: Թիրախային սոցիալական աջակ-ցության ծրագրերի կազմակերպման միջազգային փորձը կարող է նպաստել տնտեսության վերափոփոխման առավել արդյունավետ ռազմավարության ընտրությանը: Միևնույն ժամանակ, եթե ավանդաբար իշխանությունն աջակ-ցություն է տրամադրել «տարեց» և «արժանի» կատեգորիաներին, ապա ա-ջակցության ծրագրերի վերանայումը հօգուտ հասարակության այլ շերտերի,

¹ Маргинальность в современной России. Московский общественный научный фонд, 2000.

² Лакичевич Д. Введение в социальную политику. – С., 2002.

կարող է ձևավորել բացասական հասարակական կարծիք, ինչը կխոչընդոտի այդ ծրագրերի կյանքի կոչմանը:

3. Երկրի կամ տարածաշրջանի առանձնահատկությունները ներառյալ աճի հեռանկարները, բարեփոխումների ռազմավարությունը, ենթակառուցվածքները, սոցիալ-մշակութային և այլ սահմանափակումները: Իհարկե, այս բոլոր գործոնները անհնար է միանգամից ընդգրկել, բայց այս շարքում կարևորվում են մակրոտնտեսական իրավիճակը (գնաճը, գործազրկությունը), ֆիսկալ սահմանափակումները, օգնության կարիք ունեցողներին բացահայտելու վարչական հնարավորությունները, ծրագրերի մոնիտորինգը, ֆիզիկական և ֆինանսական ենթակառուցվածքի (զարգացած բանկային համակարգի, դպրոցների, սոցիալական սպասարկման հաստատությունների, ճանապարհների, տրանսպորտի և այլն) առկայությունը:

Սոցիալական ենթակառուցվածքների ձևավորման և կարգավորման խնդրի ռացիոնալ լուծման համար ցանկալի է վստահել տեղական և արտասահմանյան գիտնականների կողմից մշակված տարածական քաղաքականության տեսական մեթոդաբանական հիմունքներին: Այնպիսի խոշոր զարգացած երկրներ, ինչպիսիք են ԱՄՆ-ն, Կանադան և Ավստրալիան, առաջարկում են սոցիալական խնդիրների լուծման բազմաթիվ եղանակներ, որոնք արդիական են նաև Հայաստանում առկա սոցիալական խնդիրների լուծման տեսանկյունից: Նմանատիպ գործընթացներից են մարզերի մերձեցումը՝ ըստ սոցիալ-տնտեսական մակարդակի, հին արդյունաբերական և ագրարային մարզերի վերակազմավորումը, ենթակառուցվածքային համակարգերի արդիականացումը և այլն:

Սոցիալական քաղաքականությունը բարդ կառուցվածքային համակարգ է, որը ներառում է ոչ միայն սոցիալական ոլորտի ենթահամակարգերը, այլև աշխատանքի և աշխատանքային հարաբերությունների ոլորտի քաղաքականությունը, ժողովրդագրական քաղաքականությունը, հաշմանդամների և աղքատների սոցիալական պաշտպանությունը և այլն: Սոցիալական քաղաքականության համակարգի վրա մեծ ազդեցություն ունեն հասարակության հիմնարար նորմերը և արժեքները: Սոցիալական քաղաքականությունը արտացոլում է ամբողջ բնակչության խորքային սոցիալական ակնկալիքները, որոնք ձևավորվում են նաև սոցիալական քաղաքականության ֆորմալ կառուցվածքի սահմաններից դուրս՝ հաճախ որոշելով սոցիալական քաղաքականության բը-

նույժը և ներուժը: Հասարակության հիմնական արժեքների նորմատիվային ցուցանիշը հենց սոցիալական քաղաքականության բնույթն է: Որոշ երկրներում, այս համակարգի շրջանակներում մատուցվող սոցիալական ծառայությունները համարվում են հասարակական բարիքներ, որոնցից օգտվում են բոլոր քաղաքացիները: Այստեղ կարևորվում է նաև համերաշխության սկզբունքը, ըստ որի սոցիալական ծառայության ծախսերի հիմնական բեռը տարեցներից, աղքատներից և հիվանդներից տեղափոխվում է երիտասարդ, հարուստ և առողջ հասարակության վրա, որպեսզի անհրաժեշտ սոցիալական օգնություն տրամադրվի հասարակության բոլոր անդամներին: Եվրամիության երկրներում սոցիալական քաղաքականությունը իրականացվել է հետևյալ ուղղություններով¹:

Սոցիալ-ժողովրդավարական մոդելը: Այս մոդելը կարելի է սահմանել որպես «սկանդինավյան» (Դանիա, Շվեդիա, Ֆինլանդիա): Այս երկրներում սոցիալական քաղաքականության իրականացման ուղղությունները որոշվում են ձախ թևի կուսակցությունների աշխատողների քաղաքական միությամբ, որոնք ներկայացնում են փոքր ֆերմերների շահերը և նպատակ ունեն պետության կողմից ապահովել սոցիալական ծառայությունների լայն շրջանակ ամբողջ բնակչությանը՝ լրիվ զբաղվածության պայմաններում: Մոդելում սոցիալական ծառայությունները սահմանվում են որպես քաղաքացիական իրավունք և բոլոր քաղաքացիներն ունեն հավասար սոցիալական ապահովության իրավունք, քանի որ ֆինանսավորումն իրականացվում է պետական միջոցների հաշվին: Վերոնշյալ երկրներում սոցիալական ապահովության մակարդակը բավականին բարձր է, աշխատող բնակչությունը ստանում է լրացուցիչ սոցիալական արտոնություններ և պետական սոցիալական ապահովվածության համակարգից առանձնացված է միայն գործազրկության ապահովագրությունը, որը հենվում է կամավորության սկզբունքի վրա:

Կորպորատիվ մոդել: Այն ենթադրում է սոցիալական ապահովագրության նպաստների համակարգ, որը տարբերվում է ըստ աշխատանքային գործունեության տեսակների: Այս մոդելը նաև կոչվում է «մայրցամաքային» (Գերմանիա, Ավստրիա, Ֆրանսիա և Բենիլյուքսի երկրներ): Կորպորատիվ մոդելը հիմնված է սոցիալական ապահովագրության վրա, այսինքն, սոցիալական ապահովությունը, անմիջականորեն կամ անուղակիորեն (ընտանիքի

¹ П. М. Мансуров Зарубежный опыт формирования и регулирования социальной политики.

անդամների համար), տարածվում է աշխատանքային բնակչության վրա: Սոցիալական ապահովագրության ծառայությունները, որոնք հիմնականում ֆինանսավորվում են վճարների հաշվին, տարբերվում են՝ ըստ մասնագիտական խմբերի պատկանելիությունից:

Լիբերալ մոդել: Այս մոդելը սահմանվում է որպես սոցիալապես անապահով խմբերին նվազագույն պետական աջակցության առաջարկող մոդել: Անգլո-սաքսոնական այս մոդելը լայն տարածում է ստացել Մեծ Բրիտանիայում և Իռլանդիայում և ներառում է սոցիալական ապահովագրությունը, որը գտնվում է բավականին ցածր մակարդակի վրա, իսկ սոցիալական օգնությունը այս մոդելի կարևոր մասն է: Անգլո-սաքսոնական մոդելի ներսում որոշ տարբերություններ կան: Այսպես, Մեծ Բրիտանիայում պետական առողջապահական համակարգը անվճար բուժօգնություն է տրամադրում բոլոր քաղաքացիներին, Իռլանդիայում, միայն ցածր վարձատրվող քաղաքացիները կարող են օգտվել հանրային առողջապահական ծառայություններից:

Ռուդիմեր մոդել, որը տարածված է Հարավային Եվրոպայի երկրներում: Այդ երկրներում, ընդամենը վերջին տասնամյակում, սոցիալ-տնտեսական կառուցվածքային փոփոխությունների ազդեցության ներքո ստեղծվել կամ բարելավվել են ընդհանուր սոցիալական ապահովության համակարգերը: Դրանք ներառում են աշխատանքային և սոցիալական ապահովագրություն: Ընդհանուր առմամբ, այդ երկրներում սոցիալական ապահովության մակարդակը բավականին ցածր է: Այստեղ դեռևս ենթադրվում է, որ քաղաքացիների սոցիալական պաշտպանությունը հիմնականում իրականացվում է ընտանեկան և մասնավոր բարեգործության միջոցով:

Սոցիալական քաղաքականության խորհրդային մոդելը հիմնված էր պետության գերակշռող դերակատարման վրա, գործում էր անվճար բուժօգնության, կրթության և սոցիալական ծառայությունների համակարգը, գործատուների և արհմիությունների նկատմամբ իրականացվում էր կենտրոնացված վերահսկողությունը: Սոցիալական պաշտպանության ինստիտուտը հիմնված էր ոչ թե սոցիալական ապահովագրության, ինչպես զարգացած բոլոր երկրներում, այլ պետական սոցիալական ապահովության համակարգի վրա:

ՀՀ-ում սոցիալական պաշտպանության համակարգում դեռևս առկա են նախկին սոցիալական ապահովության համակարգին բնորոշ տարրերը, կազմակերպչական և ֆինանսական առումով՝ սոցիալական պաշտպանու-

թյան ներքին համակարգն իր մեջ ընդգրկում է նաև եվրոպական տարրեր: Սոցիալական քաղաքականության ցանկացած մոդել չի կարող արդյունավետ լինել առանց ֆինանսական աջակցության: Սոցիալական ծրագրերի քաղաքականության ֆինանսավորումն ուղղակիորեն կախված է ՀՆԱ-ից սոցիալական ծախսերի տեսակարար կշռից: ԵՄ-ի բոլոր երկրներում սոցիալական քաղաքականության համակարգը ֆինանսավորելու միջոցներ են ներգրավվում ինչպես գործատուներից, այնպես էլ աշխատակիցներից և հարկային միջոցներից: Որոշ երկրներում՝ Բելգիա, Ֆրանսիա և Լյուքսեմբուրգ, լրացուցիչ գանձվում են սոցիալական հարկեր, որոնց չափը դեռևս աննշան է:

Աղյուսակ 1. Սոցիալական պաշտպանության ֆինանսավորում 2014-2018 թթ.¹


	2014	2015	2016	2017	2018	2019
Սոցիալական պաշտպանության բյուջեի աճ, %	15.2	12.0	3.4	3.0	-0.1	8.0
Սոցիալական պաշտպանության բյուջեն ՀՆԱ-ի նկատմամբ, %	7.1	7.6	7.8	7.3	6.7	6.7
Սոցիալական պաշտպանության բյուջեի կշիռը պետական բյուջեում, %	27.5	27.9	30.4	30.1	27.9	26.9
Սոցիալական պաշտպանության բյուջեն ընթացիկ գներով, մլրդ դրամ	342.5	383.7	396.9	409	408.7	444.3
Պետական բյուջեի ծախսերի աճ, %	8.1	10.5	-5.2	4.2	7.7	8.7
Պետ. բյուջեի ծախսերը, ՀՆԱ-ի նկատմամբ, %	25.8	27.3	25.8	24.4	25.19	25.1

2019թ. պետական բյուջեից սոցիալական պաշտպանության ոլորտին ուղղվել է 444.3 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 8.7%-ով, որի կշիռը պետական ծախսերում կազմել է 14.7 տոկոս, իսկ ՀՆԱ-ում 7.3 տոկոս: Նախորդ տարվա համեմատությամբ սոցիալական պաշտպանության ծախսերի կշիռը պետական բյուջեում կնվազի 0.3 տոկոսային կետով, իսկ ՀՆԱ-ում կկրճատվի՝ 0.5 տոկոսային կետով: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գծով 2020-2022թթ. ՄԺԾԾ-ում ընդգրկված ծախսային ծրագրերի գումարները կազմում են².

- 2020 թվականի համար՝ 486,225,986.5 հազար դրամ,
- 2021 թվականի համար՝ 489,792,990.8 հազար դրամ,
- 2022 թվականի համար (նախատեսում)՝ 496,417,010.0 հազար դրամ :

¹ Հաշվարկել է հեղինակը ՀՀ 2019թ. պետ. բյուջեի մասին օրենքի, ՀՀ 2019թ. բյուջ. ուղերձի, ՀՀ 2014-2017թթ. պետ. բյուջեի կատարման, ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:

² Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, <https://minfin.am/hy/page/petakan>



Գծապատկեր 1. Սոցիալական պաշտպանության ծախսերի կշիռը պետական բյուջեում և ՀՆԱ-ում, տոկոս¹

Սոցիալական քաղաքականությունը գործունեության թանկ և ծախսատար տեսակ է, և սոցիալական զարգացման ուղղություններից յուրաքանչյուրը պահանջում է ֆինանսական մեծ ներդրումներ, և որքան ծավալուն է սոցիալական քաղաքականությունը, այնքան ավելի ծախսատար նպատակներ է ներառում և ավելի շատ միջոցներ է անհրաժեշտ դրանք իրականացնելու համար, միաժամանակ ակտիվորեն ազդելով տնտեսության, տնտեսական աճի, ՀՆԱ-ի և այլ գործոնների վրա: Առանց արդյունավետ զբաղվածության, կրթության, առողջապահության, մշակույթի և այլ համակարգերի հնարավոր չէ զարգացնել արտադրությունը, մեծացնել ապրանքների ու ծառայությունների ծավալները և այլ միկրո և մակրո ցուցանիշներ, ինչը պահանջում է պետության, օրենսդրական մարմինների, գործատուների, ձեռնարկատերերի և սեփականատերերի կողմից համապատասխան վերաբերմունք սոցիալական քաղաքականությանը:

Եզրակացություն

Սոցիալական պաշտպանության ոլորտը բավականաչափ լայն և ընդգրկուն է, ուստի և այս ոլորտում գործունեություն ծավալող ինստիտուտները բազմազան են: Հաշվի առնելով սոցիալական ոլորտի կարևորությունը և պետական միջոցառումները՝ անհրաժեշտ է նշել, որ այս ոլորտում իրականացվող քաղաքականությունը ուղղված է միաժամանակ և՛ հասարակության

¹ Աղբյուր՝ ՀՀ 2018թ. պետական բյուջեի մասին օրենք, ՀՀ 2018թ. բյուջետային ուղերձ, ՀՀ 2014-2017թթ. պետական բյուջեի կատարման հաշվետվություններ, ՀՀ ԱՎԾ

պահանջմունքների բավարարմանը, և՛ մակրոտնտեսական մի շարք ցուցանիշների աճին: Սոցիալական քաղաքականության ոլորտում նման արդյունավետության հասնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել այս ոլորտի հիմնարար սկզբունքները՝ ապահովելով հավասարություն, մատչելիություն և հասանելիություն սոցիալական քաղաքականության բոլոր ոլորտներում: Բնակչությանը անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովելը կտանի սոցիալական գործընթացներում ներգրավվածության աստիճանի բարձրացմանը, ինչը կապահովի գործընթացների արդյունավետության բարձր աստիճան: Մյուս կողմից, սոցիալական քաղաքականության արդյունավետության բարձրացման տեսանկյունից, կարևոր հանգամանք է ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացիան և այլընտրանքային աղբյուրների բացահայտումը:

Ելնելով վերոնշյալից, Հայաստանում կարևորում ենք սոցիալական պաշտպանության համակարգի արդիականացման հետևյալ ուղղությունները: Նախ, անհրաժեշտ է ավարտել ազգային սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորման գործընթացը, քանի որ միասնական սոցիալական պաշտպանության համակարգի բացակայությունը հանգեցնում է նրա բաղադրիչներից յուրաքանչյուրի ոչ թե՛ ամբողջական, այլ՝ ինքնուրույն բաղադրիչի գործունեությանը: Երկրորդ, անհրաժեշտ է ամրապնդել սոցիալական պաշտպանության ֆինանսավորման կառուցակարգերը, քանի որ սոցիալական պետության կառուցումը կախված է նրանից, թե որքանով կկիրառվեն ապահովագրության գործիքները կենսաթոշակային ապահովության և առողջության ապահովագրության համակարգերում, գործազրկության դեմ պայքարի և սոցիալական պաշտպանության այլ ոլորտներում: Երրորդ, սոցիալական պաշտպանության ներքին մոդելի ձևավորումը պետք է իրականացվի, հաշվի առնելով երկրի առանձնահատկությունները և սոցիալական պաշտպանության հաջողված միջազգային փորձի արդյունքները և օգտագործել գործնականում այդ մոդելների հաջողությամբ կիրառված բաղադրիչները: Չորրորդ, սոցիալական պաշտպանության արդիականացումը ներառում է առկա սոցիալական կառուցակարգերի հարմարեցումը շուկայական հարաբերություններին և նոր պայմաններում դրանց հետագա զարգացումը: Հինգերորդ, սոցիալական պաշտպանության համակարգերի արդիականացում՝ կառուցված առանձին սոցիալական ծրագրերի հասցեականության սկզբունքների վրա:

Նարինե ԽԱԼԱԹՅԱՆ

Սոցիալական քաղաքականության արդիականացման մոդելները համաշխարհային տնտեսության գլոբալացման պայմաններում

Բանալի բառեր. սոցիալական քաղաքականություն, մոբիլություն, սոցիալական ապահովագրության ինստիտուտ, սոցիալական ռիսկեր, սոցիալական բևեռացում, մարգինալ խմբեր

Հոդվածում ուսումնասիրվել են սոցիալական քաղաքականության արդիականացման մոդելները, ինչպես նաև սոցիալական ոլորտի ֆինանսավորման միջազգային փորձը: Ներակայացվել են սոցիալական քաղաքականության արդիականացման ուղղությունները, որոնք պետք է հիմնվեն տարբեր սոցիալական ծրագրերի հասցեականության սկզբունքների վրա: Սոցիալական պաշտպանության համակարգում սոցիալական ծրագրերի հասցեականության դերի և տեղի ընկալումը պետք է հաշվի առնի դրա մասշտաբայնությունն ու բազմագործոնայնությունը: Սոցիալական քաղաքականության յուրաքանչյուր ուղղության արդյունավետությունը կախված է սոցիալական այլ ուղղությունների հետ փոխկապվածությունից, աղքատության դեմ պայքարի առկա մոտեցումների համակարգային բնույթից:

Нарине ХАЛАТЯН

Модели модернизации социальной политики в условиях глобализации мировой экономики

Ключевые слова: социальная политика, мобильность, Институт социального страхования, социальные риски, социальная поляризация, маргинальные группы

В статье изучены модели модернизации социальной политики, международный опыт финансирования социальной сферы. Представлены направления модернизации социальной политики, которые должны основываться на принципах адресности разных социальных програм. Для лучшего понимания места и роли адресных программ в системе социальной защиты необходимо осознавать ее масштабность и разноплановый характер. Эффективность каждого элемента социальной политики во многом зависит от его увязки с другими составляющими, от комплексности подхода к борьбе с бедностью и социальной незащищенностью.

Narine KHALATYAN

Social policy modernization models in globalization of world economy

Key words: social policy, mobility, social insurance institute, social risks, social polarization

The article examines the models of modernization of social policy, international experience in financing the social sphere. The directions of modernization of social policy are presented, which should be based on the principles of targeting of various social programs. For a better understanding of the place and role of targeted programs in the social protection system, it is necessary to be aware of its scale and diverse nature. The effectiveness of each element of social policy depends on its linkage with other components, on the complexity of approach to the fight against poverty and social insecurity.